Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84
U-34

18 NOV 2011

20 APR 2006

84
Ն-34
Ա

ԸՆՏԻՐ

ԱՂՋԻԿ ՄԸ

ԳՐԵՑ

ՕՐ. ՏԸ ՄԱՐԳԻՆԵԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՕՐ. ՄԱՐԻ ԱՐԱՊԵԱՆ

معارف نظارت جلیله‌سنك رخصت نامه‌سیله طبع اولنمشدر

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1895

Printed in Turkey

25 JUN 2013
6581
582

2958
39

ԸՆՏԻՐ
ԱՂՋԻԿ ՄԸ

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԵՎԵՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԲԱՐԻ ԲԱՐԵԿԱՄ

— Արիացիք, սիրելի տիկին, պէտք է որ քիչ մը սիրտ առնէք։ Ձեզ համար զոհողութիւն մ'է, քաջ գիտեմ, ծանր զոհողութիւն մը։ Աւա՜ղ. քանի մը տարիէ ի վեր՝ ձեր զոհողութիւններն միթէ կը համբէք։ Երանի թէ, կարենայի այդ զոհողութիւններն խնայել։»

Այս խօսքերն ընելէն ետք, Մաքսիմ Նաւապետն, որ բարի մարդ մ'ու քաջ նաւավար մ'էր, իր երկայն կիսամօրուսներն կը քաշկրտէր իր այլայլութիւնն ցոյց չտալու համար՝ իր գտնուած սենեկին մէջ վեր վար քալելով։

Շատ պարզ կարասիներ կային այս սրահին մէջ. այն պզտիկ սրահներէն էր, որ կը գտնուին բնակարաններու մէջ, Բարիզի մի հին թաղն, ուր հարուստ պանդոկներուն քով, կ'երևին անշուք տուներ, ուր կ'ապրին քաշուած և շատ անգամ նեղութեան մէջ շատ ազնիւ պատուաւոր ընտանիքներ։

Մաքսիմ Նաւապետն հասուն տարիքի մէջ, ուժեղ մարդ մ'էր, թխամորթ, անուշ աչքերով, խստաձայն և մարտադէմ։

Խօսելէն վերջ, իր պտոյտն դադրեցուց, կանգ տուաւ, թեւերն խաչաձև, բայց քիչ մ'ետք շարունակեց.

—Տիկին . . . խնդրեմ բարեկամուհիս . . . կ'աղաչեմ ձեզ, ձեր խելքն գլուխը բերէք։ Օ՜ն. այս մը շուտ կ'ըսուի։ Եւ ձեզ կը կրկնեմ որ ձեր զաւակներուն լաւութեան համար է։»

Այն կինն՝ որու այս խօսքերն ուղղուած էին, դեռ նորատի էր, աղնուադէմ, տառապանքէ և աւելի ծանր վշտէ դժգունած դիմագծերով, նախ լուռ մնաց։ Ապա, քիչ մը վարանելէ ետք, յանկարծ ոտք ելաւ և արտասուաթոր երեսն սրբելով, սրահէն անցաւ ու դուռ մը բացաւ։ Երկրորդ սենեկի մը սեմին վրայ գտնուեցաւ, որ իբրև սեղանատուն ու դասարան կը գործածուէր։ Չորս տղայք, երեք փոքր աղջիկ ու պզտիկ մանչ մը հոն կը գտնուէին։

Պզտիկ աղջկանց երկուքն կլոր սեղանի մը քով նստած էին. միւսն, անդրանիկն, առակ մ'անոնց տուն կուտար։ Իսկ փոքրիկ տղայն, շատ շատ հինգ տարեկան, բարձի մը վրայ, պատուհանի մը մէջ նստած, կը նայէր մեծ Աստուածաշնչի մը պատկերներն, կարելի է ասել հա՛բիւր անգամ, բայց միշտ հրճուանքով։

Դրան ձայնը լսելով, գլուխն անդամ չի վերցուց, այնչափ ուշադիր էր իր գործին։ Բայց, իր քոյրերէն երկուքն, երկու պզտիկներն, որ քիչ մը ծոյլ և մա-

նաւանդ թարթափուն էին, շուտ մ'իրենց գլուխն վեր վերցուցին։

—Մայրիկ. . . » փոքր մ'ըրին ըսելու իրենց մայրն տեսնելով։

Բայց այս վերջինն անոնց ատեն չի տուաւ իրենց միտքն յայտնելու։

—Յովհ՛աննա. » ըսաւ նա և դուռը գոցեց։

Յովհաննա, երեք քոյրերուն անդրանիկն, այն որ առակ մը տուն կուտար, ելաւ և սեղանատունէն սրահն մտաւ։

Առանց հրաւիրուած լինելու երկու պզտիկներն իրենց պզտիկ եղբայրն մինակ թողլով շուտ մը նոյնն ըրին։

—Նայէ՛. Բարի բարեկամ հոս է, գոչեցին միասին։

—Բարև, բարի բարեկամ, ըսին անմիջապէս նաւապետին վիզէն փաթթուելով։

—Բարև, բարև, զաւակներս, պատասխանեց այս վերջինն, ամեն մէկուն համբոյր մը տալով։ Մի՞թէ խելօք, հնազանդ և ջանասէ՞ր էք։ Այո, այնպէ՞ս չէ՞։ Շատ լաւ է այդ։ Ո՞ր է Կիւյոմ, չեմ տեսներ զայն։

—Կիւյոմ իր Աստուածաշունչին մէջ թաղուած է, պատասխանեց, Ատրիէն, երկու փոքրիկներուն անդրանիկն. (նա իննը տարեկան էր, իսկ իր Ֆիէմանս քոյրն եօթը տարեկան էր.) իր Աստուածաշունչն ամեն բան է իրեն համար, բարի բարեկամ։ Գիտես, որ դու տուիր անոր, և անկից զատ պատկերներն այնքան աղուոր են։ Պատկերներն շատ կը

սիրէ, և ես ալ, և Գլէմանս ալ, և Յովհաննան ալ։ Բայց Աստուածատուր եղբայրս և Մարիամ քոյրս պատկեր չեն սիրեր ալ։ Աստուածատուր կարծէ թէ ապայ մ'է, ինչու որ Ցլեշ կը գտնուի, և Մարիամ կարծէ տիկին մ'եղած է, ինչու որ Սէն — Տընի կը բնակի։ Քիչ մը սպասէ, երթամ Կիւյոմը կանչեմ։ Հոս մոտ է, սեղանատան մէջ։»

Այս ըսելով դուրս ելաւ և քիչ մ'ետք իր փոքրիկ եղբօր հետ նորէն երևցաւ։

Այն ալ իր մօրն հիւրին վիզն ընկաւ, զանի բարի բարեկամ կոչելով։

Եւ այս տղայք իրաւունք ունէին այնքան անուշ անուն մ'ընտիր նաւապետին տալու։ Վասն զի այս վերջինն իր սէրն տուեր էր՝ թէ իրենց և թէ իրենց մօր, սէր՝ որով կապուած էր իրենց հօր հետ։ Մեծ սէր մ'էր, տեսակ մ'եղբայրութիւն, զոր տարիներն նուաղելու տեղ սաստկացուցած էին։ Երկու բարեկամներն մի և նոյն արհեստն ընտրած էին և երբէք չէին զատուած, և երբ մէկն, Տը Լա Լիժէլ տեղակալն մեռաւ, միւսն, Մաքսիմ նաւապետն (որ ամուսնացած չէր և այն տեղն միայն տեղակալ էր) իր սրտին մէջ որդեգրեր էր իր բարեկամին կինն ու զաւակներն։

Չորս տարի անցեր էին այդ ժամանակէն ի վեր, չորս տարի՝ երբ իր պաշտօնին հաւատարիմ, այս լաւ բարեկամն սոյն ընտանիքն կը պահպանէր և կը հոգար։

Զաւակներն անոր մօտ գտան երկրորդ հայր մը, իսկ այրին խորհրդական մը։ Անոնն զինքն կը սիրէ-

ին. և անոր համար ամենն ալ զանի Բարի Բարեկամ կ'անուանէին։

Մաքսիմ նաւապետն քիչ մ'ատեն Ատրիէնն, Գլէմանսն և փոքրիկ Կիւյոմն գգուելէ ետք՝ խօսքն իրենց անդրանիկ քրոջ ուղղեց։

—Եւ դու, Յովհաննա, հարցուց նա. ինչու՞ չես հարբուրեր գիս, պզտիկ աղջիկ։

—Բարի բարեկամ, շատ կը փափաքիմ, բայց չեմ կրնար անոնց տեղը բռնել։»

Եւ ցոյց կ'տար իր եղբայրն ու քոյրերն որ նաւապետն այնպէս գրաւած էին, որ Յովհաննա եթէ զանոնք բռնի հեռացնել չփորձէր, պիտի պարտաւորէր հրաժարիլ նաւապետին գգուածքներէն։

—Միշտ նոյնն ես, ըսաւ Մաքսիմ նաւապետն, միշտ ինք զինքդ մոռնալով ուրիշներն կը խնամես, և դու ինք զինքդ մոռցնելով մութը կը մնաս։ Հօրդ կերպարանն առնելով մօրդ բնաւորութիւնն ժառանգած ես, բոլորովին բարի և անձնուէր ես։ Միթէ լաւ՞ է այդ, միթէ անչ՞ահ է այդ բնաւորութիւնդ։ Հ՞ըմ հըմ. չեմ գիտեր ինչպէս պէտք է դատել։

Յովհաննա տասներեք տարեկան էր. երկայն, նիհար և քնքոյշ կերպարանքով։ Առանց աղուոր լինելու, կ'երևէր որ երբ տարիքն առնէ սքանչելի պիտի լինի, և իր բաց դէմքն զինք համակրելի կընէր։

Իր մօրն տրտմագին կերպարանքն գիտէր էր, և իր հոգածու աչքերն իր մօր աչերուն յառելով կարծես թէ անոր հարցումներ կընէր։

—Հիւանդ ե՞ս, մայրիկ.» հարցուց իր ականջին մօտենալով։

Տիկին Տը Լա Լիժել ձեռքով օ՛չ ըսաւ և իրեն պզտիկ զաւակներուն դառնալով, մրմնջեց.

—Ատրիէն, Ֆլէմանս և դուն ալ Կիւյոմ, մեզ առանձին թողուցէք։

— Եւ Յովհաննան. հարցուց Ատրիէն։

— Հնազանդէ՛, զաւակս, և քրոջդ հոգը մի տա. նիր։»

Ատրիէն սրահէն անմիջապէս ելաւ և Ֆլէմանս ու Կիւյոմ անոր հետևեցան։

Այն ատեն, տիկին Տը Լա Լիժել նաւապետին ըսաւ.

—Բարեկամդ իմ, մոռցեցի թէ պէտք է առաջ առաջարկդ աղջկիս յայտնել և իր կարծիքն այդ մասին իմանալ։

— Անշուշտ, այդ բնական բան է, պատասխանեց նաւապետն։ Յովհաննայի համար բացառութիւն մը ընենք, վասն զի գիտեմ որ խելօք աղջիկ մ՛է։ Իր հնազանդութեան երաշխաւոր եմ։ Եւ դու, պզտիկ մտիկ ըրէ։»

Յովհաննա մտիկ կ՛ընէր և բան մ՛ալ չէր հասկընար։

Այդ միջոցին իր մայրն գորովալի շարժումով մը իր աղջիկն սրտին վրայ սեղմեց։

—Իզմէ չես ուզեր բաժնուիլ. ա՞յնպէս չէ, սիրելիս։»

—Ինչպէ՞ս բաժնուիմ, մայրիկ. ըսաւ Յովհաննա զարմացած։ Ինչպէ՞ս բաժնուիմ. Աստուա՞ծ իմ. ի՞նչ կայ. յարեց նա նաւապետին դառնալով։

— Յովհաննա, պատասխանեց այս վերջինն, բա.

ւական չփոթած այս մայրական սիրոյ խանդէն զոր չէր նախատեսած, քեզ ամեն բան պիտի պատմեմ։ Ինձ լաւ մտիկ ըրէ, քու սրտիդ ու խելքիդ կոչում կ՛ընեմ։ Մանկիկ մը չես ալ, ինչու որ տասներեք տարեկան ես. այդ տարիքին մէջ տղայք լաւ սիրտ կ՛ունենան և կարող են բանակութեան հետևիլ։ Մայրդ, (չեմ գիտեր եթէ քեզ այս տրտմալի գաղտ. նիքն յայտնեց,) մայրդ շատ ժամանակէ ի վեր նեղութեան մէջ է։ Անօգուտ տեղ անդադար կ՛աշխատի ու կը մաքառի. իր հաւատ միջոցներն անբաւական են։ Նա չունի (գիտե՞ս այդ), թէև շատ աղնիւ ընտանիքի զաւակ, անձնական հարստութիւն մը. և չբերաւ, երբ ամուսնացաւ, սպայի կնկան մը չնչին օժիտն անգամ։

Հայրդ միայն պզտիկ հօրենական ժառանգութիւն մ՛ունէր որով կ՛ապրէր։ Այսպէս է. նաւաստւոյն կեանքն չի հարստացներ, այդ գիտես։ Իսկ ես, բան մը չունիմ, կամ գրեթէ ոչինչ. եթէ այսպէս չլինէր, միթէ երբէք բանէ մը պիտի զրկուէ՞ի։ Ուրեմն, լաւ իմացիր, զաւակս, մայրդ սպայի մ՛այրուոյն յատկացած ամսականն ունի. բայց այս չ՛բաւեր իր բազմաթիւ ընտանիքն պահպանելու համար։ Այս պատճառաւ խեղճ մայրդ սկսաւ աշխատիլ, դաշնակի դասեր տալով։ Բայց իր արիութիւնը կարողութենէն աւելի մեծ է. շատ յոգնած է, ծանր աշխատանք մը զանի կը մաշեցնէ։ Յովհաննա, չես ուզե՞ր անոր հանգիստ տալ։

— Ո՜հ, ա՜յո, շատ կը փափաքիմ,— պատասխանեց Յովհաննա աշխուժիւ։

— Լաւ ուրեմն, զաւակս, ահա պատեհ ժամն քեզ կը ներկայանայ, անյուսալի պատեհութիւն մը մօրդ օգնելու. փոքր հասակիդ չնայելով՝ արդիւնապէս օգնելու, ու նաև ստակ վաստկելու։ Բայց պէտք է մեկնիլ, պէտք է բաժնուիլ մօրմէդ, քոյրերէդ, պզտիկ եղբօրմէդ, բարեկամներէդ, սիրած ամեն բաներէդ։

— Պիտի մեկնիմ, ըսաւ Յովհաննա առանց վարանելու, սակայն դողալով։

— Լաւ, աղջիկս, շատ լաւ, ըսաւ Նաւապետն իր երկայն կարմիր կիսամորուսներն սովորականէն աւելի շատ քաշքշելով. արիասիրտ աղջիկ մ'ես, և հայրդ անշուշտ գոհ պիտի լինէր եթէ հոս գտնուէր։

Ապա, քիչ մ'ատեն լուր մնալէն ետք, շարունակեց իր բացատրութիւնն։

— Այս է խնդիրն, վրայ բերաւ նա, արդէն մօրը ըսի, և հիմա քեզ ալ կը յայտնեմ։

Իմ լաւ բարեկամներէս միոյն աղգականն փոքրը, հիւանդ, ապիկար աղջիկ մ'ունի որ չէ կարող իր ոտքերը գործածել։ Խեղճ աղջիկն իր ծաղիկ հասակէն ջղային հիւանդութենէ մը կը տառապի. գրեթէ երբէք քալած չէ, տասներկու տարեկան լինելով։ Միշտ կը տառապի. շատ անգամ տրտում է։ Այն խնամքն որով զայն կը շրջապատեն, անձնուիրական խնամներ թէև, իրեն չեն բաւեր։ Բարեկամուհի մը կ'ուզէ ունենալ որ իրեն դասերուն մասնակից լինի, որ իրեն հետ խաղայ, իրմէ բնաւ չի բաժնուի։ Յովհաննա, այս բարեկամուհին դու պիտի լինիս. և ե-

թէ ատեն ատեն փոքր հասակիդ համար այս պարտիքն դժուարին երևի, մօրդ վրայ մտածէ և արիութիւնը քեզ իսկոյն ոյժ պիտի տայ։

Մաքսիմ Նաւապետը լռեց։

Յովհաննա իր մայրը համբուրեց այնքան երկար ժամանակ որ կարծես թէ իր սիրտն այս համբոյրին մէջ դրաւ և վերջէն իրենց բարեկամին վրայ արտասուաթոր աչքերը վերցնելով, հարցուց.

— Ե՞րբ պէտք է մեկնիլ։

— Այս գիշեր, զաւակս, պատասխանեց Նաւապետն։

— Ա՞յս գիշեր. գոչեց տիկին Տը Լա Լիժէլ։ Ո՜հ, բարեկամս, այդ անկարելի է. անկարելի՛, կը լսէ՞ք։ Պէտք է որ թէ այն և թէ ես այդ բաժանման գաղափարին սովորինք։ Շաբաթներ, ամիսներ բաւական չեն։

— Աւա՜ղ, տիկին, պարտաւոր եմ ձեր խնդիրն մերժել։ Պէտք է որ Յովհաննա այս գիշեր ճամբայ ելնէ, վասն զի հարկ է որ ես զանի տանեմ։ Եւ մինթէ ձեզ արդէն չըսա՞ի որ երկու օրէն պիտի մեկնիմ։

— Ե՞րկու օրէն պիտի մեկնիք, գոչեց նորէն տիկին Տը Լա Լիժէլ։ Բայց, ո՞ւր կ'երթաք։

— Թունգին, տիկին։

Տիկին Տը Լա Լիժէլ պատասխան մը չի գտաւ։ Ցոյս ունեցեր էր որ Նաւապետն մէկ քանի ամիս իր բնիկ երկիրն պիտի անցնէր. և հիմա պէտք էր որ մեկնի։ Այնչափ հեռու տեղեր երթալու համար ծովեր պիտի անցնէր, ինչ մեծ վտանգներ...կարելի էր որ մեռնէր...։ Գլուխը ծռեց այս նոր լուրէն ճնշուած։

Սակայն պահ մ'ետք դլուխը վերցուց։

— Գնա՛, ը՛սաւ կամաց մ'իր աղջկան. դնա՛ քոյրերուդ ու եղբօրդ մօտ։ Պէտք ունիմ մեր բարեկամին հետ առանձին խօսիլ։»

Յովհաննա իր մայրը նորէն համբուրեց, նոյնպէս Նաւապետն և սրահէն դուրս ելաւ։

Երբ դուռը գոցեց, խեղճ մայրն լալով գոչեց.

— Ա՜խ, բարեկամս, սիրտս կը կոտրի մտածելով որ պիտի պարտաւորիմ անորմէ բաժնուիլ։ Արդէն երկու անդրանիկ զաւակներս հարկ եղաւ որ մեկնին, Յովհաննա պզտիկ բարեկամուհիս եղած է։ Եւ փոքրներն որչա՜փ պիտի դրկուին իրմէ։ Անոնց կրթութեան համար ինձ կ'օգնէր։

— Գիտեմ այդ, տիկին, պատասխանեց Նաւապետն, ուստի ձեզ կրնամ խրատ մը տալ։ Սագրէ

— Քէօրը ձեզի շատ մօտ է։ Ատրիէն ու Գլէմանս հոն ցերեկօթիկ դպրոց դրէք։ Իսկ Կիւյիօմի գալով, կը-նաք առանց յոգնութեան անոր նուիրել Յովհաննային տուած ժամանակդ։

Եւ որովհետև տիկին Տը Լա Լիժէլ բան մը չէր ըսեր։

— Ահա ամէն բան կարգադրուած է, ըսաւ գոհութեամբ։ Ձեզմէ կը բաժնուիմ, տիկին։ Դեռ շատ անհրաժեշտ այցեր ունիմ ընելու մեկնելէս առաջ. բայց քիչ ժամանակէ պիտի վերադառնամ։ Եւ կաղաչեմ, ճաշն ժամը հինգ ու կէսին պատրաստ լինի, նոյնպէս Յովհաննա։ Երկաթուղին չի սպասեր։ Բայց այդ խօսքերուս վրայ նորէն գոյնդ կը նետէ, հէ՛ք բարեկամուհիս, խե՜ղճ մայր, արի՛ացէք, Յով-

հաննա ձեզ օրինակ թող լինի։ Նաւավարի մ'աղջիկը է։ Եւ հաւատացէք ինձ որ քիչ ժամանակէն իրմէ շնորհակալ պիտի լինիք։ Յովհաննա Բարիզի մէջ կը տկարանայ. միթէ այդ չի դիտեցի՞ր։ Այս աղջկան՝ որ շատ շուտ կը մեծնայ՝ լաւ օդ ու արև պէտք են։ Ինձ հաւատացէք այն տեղն ո՞ր գայն կը տանեմ այդ բաներն պիտի վայելէ։ Շատ լաւ, արդէն կը մխիթարուիք, այդ գաղափարին վրայ կը տեսնեմ որ ձեր ըրած զոհողութիւնն ձեզ աւելի թեթև կ'երևի։ Այսպէս են մայրերն. անոնց կ'ըսես. «ձեզ համար է.» խուլ և անզգայ կը մնան։ Իսկ երբ ըսես. «ձեր զաւակին համար է.» այն ատեն խնդիրը բոլորովին կը տարբերի։ Մնաք բարև, տիկին, ձեր վրայ կ'զմայլիմ։ Շուտ երթամ, աւելի կանուխ վերադառնալու համար։

Արիասիրտ կնոջ երկու ձեռքերն բռնեց, զանոնք համբուրեց ու դուրս ելաւ։

Տիկին Տը Լա Լիժէլ մինչև սանդուղն անոր հետևեցաւ. իջնելու ժամանակ և առանց դառնալու Մաքսիմ Նաւապետն անոր ըսաւ.

— Ճաշը ժամը հինգ ու կէսին, տիկին, կը խընդրեմ, այնպէս չէ՞։

Տիկին Տը Լա Լիժէլ դուռն գոցեց և իր բնակարանը մտնելով ըսաւ.

— Իրաւունք ունի։ Յովհաննա փափուկ ու դըժգոյն է։ Քաղաքի օդէ աւելի կենսատու օդ մ'անոր օգուտ պիտի բերէ։ Պարտաւոր եմ թողուլ որ նա մեկնի։

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Արիասիրտ պզտիկ Յովհաննան իր մօրմէն, քոյրերէն և պզտիկ եղբօրմէն բաժնուած էր առանց ձայն հանելու, արտասուք թափելու, և կը ջանար ժպտիլ իր վիշտն ծածկելու համար։ Կառաջարն մը-տած էր հաստատ քայլով, և պահ մը պատուհանին կրթնած, անխօսիկ նայած էր Բարիզ, մեծ քաղաքն, Բարիզ՝ ուր իր բոլոր սիրտն կը թողուր և քիչ առենէն այլ ևս չ'պիտի տեսնէր։

Այն առեն միայն բազմոցի մը վրայ նստաւ և սկսաւ լալ։

Մէկ ժամ այսպէս լացաւ, վերջէն քնացաւ, կրթնած ուսին վրայ իր հօր բարեկամին որ գորովալի մօր մը խնամքով բոլոր գիշերն շարժում մը չըրաւ։

Երբ Յովհաննա արթնցաւ, ցորեկ էր։

— Ո՞ւր եմ, հարցուց, աչքը չփելով։ Ո՞ւր է մայրիկը։

— Ինձ հետ երկաթուղւոյն մէջն ես, պզտիկ աղջիկ, պատասխանեց Նաւապետն։ Խե՜ղճ զաւակս, շա՛տ վշտացար։

— Ո՜հ, այո, ըսաւ նա յիշելով։ Հիմա ո՞ւր ենք։

— Լիոնի մօտ։ Եւ նայէ, աղջիկս, հոն է Ֆուրվիէր։

Այս ըսելով, Նաւապետը պատուհանին ապակին վար կ'իջեցնէ։

Յովհաննա այն կողմն ծռեցաւ և իր ճակատն որ կ'այրէր առտուան օդին տուաւ։ Նոյն միջոցին իր ձեռքերն միացնելով, իր աչքերն դարձուց այն սրբավարն ուր ա՜յնչափ շատ վշտակիր մարդիկ կուգան վախթարութիւն փնտռելու, կարճ և ջերմագին աղօթք մ'ըրաւ։ Վերջէն իր բարեկամին դարձաւ, որ նոյնպէս պատուհանն էր։

— Ո՜հ, բարի բարեկամ, ըսաւ անոր, մի՛ըսէք մօրը որ լացի, անմտութիւն ըրի, վասն զի այն առեն շատ ուշատ պիտի վշտանայ։ Գիտէք, երէկ արտասուքը գիս կը խեղդէին, բայց այսօր ամեն բան անցաւ։ Ոչ վիշտս, ո՜հ ոչ։ Բայց պիտի չ'արտասուեմ ալ։

Քիչ ժամանակէ վերջ, կառախումբն Լիոն կը հասնէր, Մաքսիմ Նաւապետն և Յովհաննա իջան։ Ոչ միայն պէտք էր ուրիշ շոգեկառք մը բռնել, այլ և մէկ ժամ սպասել։

Թէև մասնաւոր կառք մը բռնած չէին, Մաքսիմ Նաւապետն և Յովհաննա մինակ էին Բարիզէն մինչև Լիոն։ Լիոնէն մեկնելէն ետք Նոյն բաղդն չունեցան. հապա՛ թէ իրենց նոր կառքն մտած էին որ ճամբորդ մ'իրենց ետևէն ելաւ։

Պզտիկ ծերունի մ'էր, խորշոմերես, անհամոյ և խորամանկ դիմօք, գորշագոյն կրկնոցի մը մէջ փաթթուած և մեծ ակնոցով։ Պարկերով և ծրարներով բեռնաւորուած էր, և իր տեղն ընտրելով զանոնք կը համրէր ու կը չոշափէր, կարծես թէ կ'ուզեր վստահ լինիլ որ բան մը չէ գողցուցած։

— Ինչ ժահ՚դէմ պզտիկ ծերունի, մտածեց Մաքսիմ Նաւապետն, որ սակայն շատ բարեսիրտ էր։ Մեր ագահ մը պիտի լինի։ Այդպիսի մարդու մը տիպարն ունի։

Եւ այն ճամբորդին վրայ չի մտածեց ալ։

Այս վերջինը թաւիշէ և ունկաւոր խոյր մը գըլուխն անցնելէն ետք, իր գրպանները նայելէն ետք, աչքերը դոցեց։

Յովհաննա քիչ մ՚ատեն կայարաններու աղմուկէն մտաթափ եղաւ, ինչու որ այդ աղմուկին սովորած չէր, վերջէն իր տխուր մտմտուքի մէջ ընկաւ։ Խեղճ աղջիկն ո՞րչափ վշտացած էր։

Նաւապետն չի փորձեց անոր միտքն ուրիշ տեղ դարձնել. Յովհաննա ազնիւ սիրտ մ՚ունի, գիտէ իրեն մէջ գտնել կարևոր այժ մը։ Սակայն այդ միջոցին ինքն ալ փափաք չունէր խօսելու։ Ճամբորդն զինք կը նեղէր, կը զայրացնէր։ Աւելի նեղիչ բան չկայ, որքան անծանօթ ճամբորդ մ՚որու համար անմիջապէս հակակրութիւն ի՛զգայ մարդ։ Ուստի յաջորդ կայարանին Նաւապետն կառք փոխեց։ Եւ երբ Յովհաննա, քիչ մը զարմացած, կը հարցնէր պատճառն։

— Ուրիշ տեղ աւելի հանգիստ պիտի լինինք, ըսաւ։

Ժամը տասին օդն՝ որ մինչև այն ատեն շատ աղէոր էր, ամպերով լեցուեցաւ, բարակ անձրև մը ըսկսաւ վազել։

Յովհաննա աւելի տխրեցաւ և իր հօր բարեկամին մտնելով հարցուց.

— Բարի բարեկամ, ինչպէ՞ս է այն տունն ուր դիս կը տանիս։

— Մեծ և հանգիստ տուն մ՚է, պատասխանեց Նաւապետն. բայց նշանակելի բան մը չունի։ Լաստենեաց ծառուղիէ մը հոն կը հասնին. ասկից կուգայ իր անունն Լասթենէ։ Կը ցաւիմ, պզտիկ աղջիկ, որ արև չկայ, կարծեմ թէ առանց արևու Լաստենիք տխուր կ՚երևին և կը վախնամ որ առաջին տըպաւորութիւնդ այնքան հաճելի չ՚պիտի լինի քեզ։

Յովհաննա չ՚պատասխանեց. կարելի է որ կը մըտածէր թէ այս օդն իր զգացումներուն հետ շատ լաւ կը յարմարի։ Քիչ մը վերջ, չ՚գիտնալով թէ ուր կ՚երթար, նորէն հարցուց.

— Շատ մարդ կա՞յ Լաստենիքն։

— Երեք տարեց մարդիկ և երկու պզտիկ աղջիկ, պատասխանեց Նաւապետն, բայց սպասաւորներն չի համրելով։

— Ա՜հ, երկո՞ւ պզտիկ աղջիկ կան։

— Այո, զաւակս։ Ժիւլիէդ, Նորատի հիւանդն, խեղճ ապիկարն և Ֆլորանս, իր փոքր քոյրն։

Եւ տեսնելով որ Յովհաննա այդ խօսքերուն կը հետաքրքրի, Մաքսիմ Նաւապետն շարունակեց.

— Տան հիմակուան գլուխն, Պարոն Ժէրալտ Շերրինեան, երկու Նորատի աղջկանց հայրն, դեռ Նորատի անմ մը մեծ արժանիքի և լաւ բնաւորութեան տէր մարդ մ՚է։ Այրի է քանի մը տարիէ ի վեր։ Իր հայրն հետը կը բնակի, նոյնպէս անգլիացի վարժուհի մը, կամ լաւ ևս բարեկամուհի մը, օրիորդ Մաք Նէյլ անունով, շատ մեծ արժանիքի տէր անձ

29542
39

մը։ Պարոն Ժէրալտի կինն մեծցուցած է, հիմա իր աղջիկներն կը մեծցնէ, և մոր մը պէս անոնց վրայ կը հսկէ։ Դու ալ իրեն պաշտպանութեան տակ պիտի լինիս։ Այդ միջոցին երկաթուղին կեցաւ։

— Հոս պիտի իջնենք, ըսաւ Նաւապետն։

— Ի՞նչ ա՞յսպէս շուտ հասանք։ գոչեց Յովհաննա։

— Ոչ, տակաւին . . . միայն . . . Դէյլն ենք, ուր շոգեկառքն պիտի փոխենք։ Երկաթուղւոյն մեծ գիծը կը թողունք և անոր մէկ ճիւղն կը բռնենք։

Այս ըսելով, Նաւապետն շոգեկառքէն կ'իջնէր և իր նորատի ընկերուհւոյն կ'օգնէր իջնելու։

Դէյլի կայարանին քարափն, ամեն ճիւղի կայարաններուն քարափն պէս, մեծ շարժման մէջ էր։ Ճամբորդներն կուգային կ'երթային և ամեն տեղ կը դառնային։

Յովհաննա հեռուէն տեսաւ պզտիկ ծերունին որու հետ արդէն ճամբորդած էր։ Նա կը քալէր այնքան շուտ որքան կը ներէին իր քիչ մը դողդոջուն ոտքերն. ատեն ատեն կանգ կ'առնէր, չէթէ շունչ առնելու համար, այլ իր բեռներն համբելու համար։ Բայց քիչ ատենէն զայն աչքէ կորսնցուց, վասն զի Նաւապետին կը հետևէր։

Այս վերջինն շուտ մը գտաւ շոգեկառք մ'երկաթուղւոյն մէջ որով պիտի ճամբորդէին։ Շուտ մը Յովհաննա իր տեղն նստեցուց և իջաւ լրագիրներ քննելու համար։

Երբ վերադարձաւ Յովհաննա մինակ չէր, այլ պզտիկ ծերունին հոն կը գտնուէր։ Միշտ իր ուն-

կաւոր խոյրն հագած էր, իր ծրարներն նորէն կը համբէր ու կը չօշափէր։

Նաւապետը զանի տեսնելով նեղացաւ։ Ճամբորդն իրեն շատ անհամոյ կ'երևէր։ Բայց ժամանակ չունէր փոխադրուելու մ'ընելու, ինչպէս որ կ'ըսէր՝ երթալու ժամն եկած էր, գործակատարները դռները կը գոցէին։ Ճամբորդութիւնն առանց ուրիշ դիպուածի վերջացաւ։

Երեք ճամբորդներն նոյն կայարանն, Ռոպիազի կայարանն իջան։ Կառք մը կ'սպասէր կայարանին մօտ, ճամբուն վրայ։

Ընտանիքի հանրակառն էր, հանդիստ բազմոցներ, մետաքսեայ վարագոյրներ և վանդակապատ վերնատուն մ'ունէր։

Այս հանրակառին կառապանն գէր և ուժեղ մարդ մ'էր, բացերես, շատ պարզ և ճաշակաւոր պճնազգեստ մը հագած էր։ Իր նստարանէն իջած և իր ձիերուն առջև կանգուն կեցած, կը խօսէր ա-նոնց հետ, ուրիշ անձ մը չունենալով՝ որու հետ խօսակցէր։ Այս իր սովորութիւնն էր, վասն զի շատախօս էր։

— Է՜հ, Պէպէ՜ և Գոգօ, կ'ըսէր լաւ անասուններ-ը՝ն գգուելով։ — Ի՞նչ ցուրտ և անմրևօտ օդ։

Պէպէ և Գոգօ իրենց մաղերն կը թոթուէին և կարծես թէ կ'ուզէին ըսել.

— Այ՜ո իրաւունք ունիս, մենք ալ կը մտինք։

— Վա՜յ, կը շարունակէր կառապանն, մի գանգատիք զաւակներս։ Միշտ գործ պակաս չէ, և ձեզի համար ալ գարին պակաս չէ։ Արդեօք աշխատան-

քէ կը վախնաք՝ աշխատանքը չի մեռցներ, ընդհակառակն կը գիրցնէ։ Նայեցէք ինձ, Ժէրօմ կառապանն եմ, ահա կենդանի ապացոյց մը միթէ չե՞մ։ Եւ կ'աշխատիմ և դէր եմ. դուք ալ, գոհարներս, դէր չե՞ք։ Նայեցէք, ըսելու համար չէ, բայց մեր երեքնուս տէրն, Լաստենիքի բարի պարոնը մեզ ուտելիքէ չ'զրկեր։

Բարի մարդն լռեց, քիչ մը սուլեց, բոլորտիքը նայեցաւ, և տեսաւ պզտիկ ծերուկին որ Լիոնէն երկու անգամ մտած էր շոգեկառքն ուր Յովհաննա Տը Լա Լիժէլ և իր բարեկամը կը գտնուէին։

— Նայէ, նայէ, ըսաւ կառապանն, խոյրով մարդն որ հետիոտն իրեն տունն կը վերադառնայ։ Որքա՜ն շատ ծրարներ ու պարկեր ունի։ Ե՜հ. Պէպէ և Գոգօ անոր վրայ ի՞նչ կը մտածէք, գոհարներս, որչափ ագահ պիտի լինի որ այս անձրևով երեք ու կէս մղոն ճամբայ պիտի քալէ կառք մը բռնելու տեղ։ Եւ լսեցի որ երբ կը ճամբորդէ (և կ'երևի թէ ստէպ կը ճամբորդէ) միշտ առաջին կարգը կը բռնէ։ Միթէ այդ կը տեսնո՞էք. անշուշտ երկրորդ կարգն կը մերժէ, իսկ երրորդն ալ չի մտներ որպէս զի չ'գողցուի։

Եւ Ժերօմ սկսաւ սրտանց քահ քահ խնդալ։ Վերջէն միշտ Պէպէին ու Գոգօին խօսելով, շարունակեց.

Կը մտածեմ, գոհարներս, որ դուք և ես այսպէս ագահ ծերուկի մը չենք ուզեր մեր կառքին մէջ պատուտցնել։

Այդ միջոցին Մաքսիմ նաւապետն Յովհաննա Տը Լա Լիժէլը տիկնոջ մը կը ներկայացնէր։ Այս տիկնը

նոյն ինք օրիորդ Մաք Նէյլ էր. որ Պարոն Շիրինեանին ընտանիքի հանրակաուին մէջ Ուրպիագ եկած էր։

Կառապանն, որ ամեն բան կը տեսնէր, Յովհաննան դիտեց։

— Անշուշտ մեր պզտիկ օրիորդն է, ըսաւ նա, այս անգամ առանձին խօսելով։ Ճշմարիտը, բոլորովին սիրուն է։ Ինչպէ՞ս իր հայրիկին կը նայի։ Այս երկայն պարոնն կարմիր կիսամօրուսներով. (իր հայրիկն կամ ուրիշ աղգական մը պիտի լինի։) Խե՜ղճ պզտիկ. տրտում է իր ընտանիքէն բաժնուելուն համար. բայց պիտի սովորի. կարծեմ թէ մինչև Լաստենիքը դալը՝ բարի օրիորդ Մաք Նէյլ դայն կիսովին մխիթարած պիտի լինի։

Օրիորդ Մաք Նէյլ յիսուն տարեկան էր, քիչ մը չոր, կէս դեղձան և կէս կարմիր մազերով, վարդագոյն երեսով։ Եթէ սիրուն եղած էր, անշուշտ այնպիսի անցաւոր գեղեցկութիւն ունեցած պիտի լինէր, որ նորատի հասակի հետ կը դադրի և չի մընար ալ հասուն տարիքին մէջ։ Բայց արդի վիճակին մէջ ալ բան մ'ունէր որ կը դրաւէր։ Ինչու որ բարի կիներուն գեղեցկութիւն ունէր, որոց հոգին կը գեղեցկացնէ դէմքն։

Այն ընդունելութիւնն որով Յովաննան հիւրընկալեց, յետին ծայր մայրական էր։ Խե՜ղճ Յովհաննա բարեկամուհիէ մը պէտք ունէր. բաժնուելու վայրկեանն ահա հասած էր։

— Արիացիր, աղջիկս, ըսաւ Մաքսիմ նաւապետն, պահ մ'օրիորդ Մաք Նէյլի հետ խօսելէն ետք,

գիս համբուրէ, այս տեղ պիտի բաժնուինք։

— Ի՞նչ, հո՞ս, գոչեց Յովհաննա գոյնն նետելով։ Մինչ Լաստենիք մեզի չ'պիտի ընկերանա։

— Անկարելի է այդ, պզտիկ աղջիկ։ Երկաթուղին զոր պիտի բռնեմ, քանի մը վայրկենէ վերջ պիտի անցնի։ Մոռցար որ վաղը կը մեկնիմ։

Յովհաննա սաստիկ վշտացած էր։ Իր ընտանիքին բարեկամէն այսպէս բաժնուիլ, յանկա՞ծ բաժնուիլ, առանց անոր ընկերութեան անծանօթ տուն մը ե՞րթալ. հոն մինակ գտնուիլ։ Այս բանս անկարելի երևցաւ իրեն։

Պահ մը լուռ ու մունջ մնաց. ապա կոչեց նաւապետին գիրկն իյնալով և վիզէն փաթթուելով, ինչպէս սովոր էր ընել, երբ դեռևս չատ փոքր էր։

— Ո՛չ, ո՛չ, բարի բարեկամ, անհնար է. մի թողո՛ւր զիս մինակ։

Մաքսիմ նաւապետն չի գիտեր թէ ի՞նչ ընէ. այն կառախումբն որով պիտի ճամբորդէր, արդէն կը հասնէր. կը լսուէր հեռուէն շոգեկառքին աղմուկը. պէտք էր մեկնիլ, փութալ . . . Բայց ի՞նչպէս փութալ, քանի որ Յովհաննա իր վիզէն փաթթուած կ'աղաչէր զայն որ չ'թողու զինք։

— Արիացի՛ր, աղջիկս, ըսաւ իր ձայնն քաղցրացընելով, հանդարտէ, կ'աղաչեմ, քեզ հետ չեմ կըրնար գալ. եթէ կարենայի ուզածդ ընել միթէ կը մերժէ՞ի։

Բայց Յովհաննա աւելի ևս անոր կը փաթթուէր։ Եւ երկաթուղին կը հասնի, կանգ կ'առնու. պիտի երթայ։ Մաքսիմ նաւապետն չի կրնար ալ վարանիլ։ Յովհաննան իր թեերուն մէջ կը սեղմէ, կը համբուրէ ու կ'ըսէ.

— Արիացիր, պզտիկ աղջիկ, պարտքդ հոս է. իմը հոն։ Մնաս բարով, Աստուծոյ կը յանձնեմ քեզ։

Ապա շուտ մը Յովհաննան թողուց կայարանին քարափին վրայ և մեկնեցաւ։ Հաղիւ կարող եղաւ ինք զինքն շոգեկառքին մէջ նետել։

Հոն քրտնալից ճակատն սրբելով ըսաւ.

— Ա՜հ, աւելի տաժանելի բան մը միթէ կա՞յ քան մանկան մ'արտասունքը։ Խե՜ղճ պզտիկ Յովհաննա. ո՞րչափ բարերաղդ է որ օրիորդ Մագ Նէյլ հետն է։

Եւ Մաքսիմ նաւապետն իրաւունք ունէր ընտիր և բարի կնոջ վրայ վստահութիւնը դնելու։

Օրիորդ Մագ Նէյլ շուտ մը Յովհաննա գրաւեց, մեղմիկ խօսեցաւ հետն, ժամանակ չ'տալով անոր որ իր վիճակին վրայ մտածէ. իսկոյն անձնուէր անգլուհին Յովհաննան ընտանեկան հանրակառին մէջ մտցուց. յետոյ անոր հետևելով քանի մը խօսքեր ուղղեց։ Ժէրօմ կառապանն ձիերուն սանձն ձեռք առաւ և Պէպէ ու Գոգօ սկսան վազել։

ԳԼՈՒԽ Գ.

ԼԱՍՏԵՆԻՔ

Լաւ դաստիարակութեան մեկ արդիւնքն է գիտնալ զսպել այլայլութիւններն և զգացումներն՝ անծանօթներուն կամ անտարբերներուն առջև, մինչև իսկ փոքր հասակի մէջ։ Յովհաննա, օրիորդ Մագ Նէյլին հետ մինակ մնալով, ջանաց, իր վշտին չ'նայելով՝ անվրդով երես մը ցոյց տալ՝ եթէ ոչ սիրուն, հանդարտ և բարեկիրթ երևելու համար։

Օրիորդ Մագ Նէյլ հետը խօսելով և իր պատասխանները լսելով՝ ուշադրութեամբ զանի կը քննէր։ Զարմացած և զմայլած էր, որ այս աղջիկն ինքն իր վրայ կ'իշխէր, և կ'մտածէր իրաւամբ որ գտած էին այն բարեկամուհին որմէ պէտք ունէր Ժիւլիէդ, այն խեղճ պղտիկ հիւանդն որ ո՞ինչպէս բարի, զգայուն, սիրուն և գրաւիչ էր, բայց ջղային և դիւրազգաց, և որու ամենէ թեթև խղճերն և քըմայքը կը կատարուէին։

Բայց Պէպէ ու Գօգո, ընտանեկան հանրակառին երկու ձիերն, կը վազէին և քանի վայրկեաններն կ'անցնէին այնքան կը նուազէր այն ճանրան որ Ռոպիագի կայարանէն մինչև Լաստենիք կ'երկննար։

Յովհաննա այդ բաներուն անտարբեր կը մնար և չէր նայեր ճամբուն՝ որմէ կ'անցնէին։ մտահոգութիւնն և մանաւանդ տրտմութիւնն այս արդիւնքն

ունին որ անուշադիր կ'ընեն մարդս տեսարաններուն գեղեցկութեան։ Միւս կողմէ չարունակ կ'անձրևէր և անարև դաշտերն հրապոյր մը չունէին։

Բայց պահ մը Յովհաննա դուրս նայեցաւ։ Կառքը ճամբէն ելած և ուրիշ լայն ճամբու մէջ մտած էր, ուր աքանչելի լաստենիներ տնկուած էին։ «Լաստենիքին կը մօտենանք,» մտածեց Յովհաննա, Մաքսիմ Նաւապետին այս մասին ըրած խօսքն յիշելով։

Քիչ ժամանակէ վերջ նշմարեց ճախ կողմն տան մը տանիքն. բայց այս չէր կրնար Լաստենիքինն լինիլ։ Այս տունը ցած ու փոքր էր։ Վերջէն երկրորդ մը, ապա երրորդ մը, ետքը չորրորդ մը, և որչափ զարմացաւ երբ կարող եղաւ յիսուն հատ համրել։ Իրաւի՝ գիւղ մ'էր, գիւղ մ'որու բնակարաններն միակերպ չիուած էին և մաքուր կարգադրուած և հեշտ կ'երևէին։ Յովհաննա զարմացած դարձաւ օրիորդ Մագ Նէյլին կողմն և աչքը հարցում մ'ըրաւ։

— Լաստենիքի – քաղաքն ենք, պատասխանեց այս վերջինն։ Նայէցէ՞ք, հոն, միշտ նոյն կողմն, սա չէնքն մեծ վառարաններով՝ որմէ քիչ մ'աւելի հեռու կը գտնուի գործատունն. բայց՝ ահա մեր առջևն է Պարոնայք Շիրինեանց բնակարանն՝ որ Լաստենիքի – Տունն կ'անուանուի. քիչ ժամանակէ պայն պիտի տեսնէք։

— Բայց օրիորդ, հարցուց Յովհաննա Տը Լա Լիժէլ, ամեն այս պղտիկ տուներն . . . ։

— Գործաւորներուն տուներն են, պատասխանեց բարի Անգլուհին։

— Որ՞ու գործաւորներն, հարցուց Նորէն Նորատի աղջիկն։

— Պարոն Ժէրալտին, Ժիւլիէդին և Ֆլորանսին հայրն, այն զոր բոլոր տեղացիք Լաոդենէյին Քարէ Պարքն կ'անուանեն։

— Ա՜հ, ըսաւ Յովհաննա որ մինչև այն ասենն չ'գիտէր թէ Պարոն Ժէրալտ ճարտարագէտ մ'էր։

Բայց ուրիշ հարցումներ չ'ըրաւ. և եթէ ուզէր իսկ ընել, ժամանակ չ'պիտի ունենար։ Բնակարանն կը հասնէին և ընտանիքի հանրակառը դրանդին առջև կանգ առաւ։

Յովհաննա տունն նայեցաւ։ Ինչպէս արդէն Մաքսիմ Նաւապետն ըսած էր անսովոր բան մը չունէր, միայն՝ կարծուէր թէ անբնակ էր, այնք'ան մեծ էր լռութիւնն։

Կառքին աղմուկէն սպասաւոր մ'ելաւ և դուռը բացաւ։

— Եկուր զաւակս, ըսաւ այն ատեն Անգլուհին Նորատի աղջկան։

Ապա անոր ձեռքէն բռնելով դրանդին սանդղէն հետը վեր ելաւ։ Վերջէն երկուքն ալ տունն մտան, և մեծ բակի մը մէջ գտնուեցան, ուր բազմոցներ կային և որու վրայ քանի մը դռներ կը բացուէին։

Օրիորդ Մագ Նէյլ այդ դռներուն առջև չ'կեցաւ, այլ սանդղէն վեր ելաւ, ու Յովհաննային կողմը կէս մը դառնալով ըսաւ.

— Պիտի երթանք Ժիւլիէդը տեսնել։ Սիրելի աղջկան խոստացայ որ առաջ իր սենեակն պիտի երթանք։ Իր հայրն ալ հոն է անշուշտ։

Յովհաննա օրիորդ Մագ Նէյլին հետևեցաւ։

Երբ առաջին դստիկոնը կը հասնէին ու երկայն բակ մը կը մտնէին, մանկային ձայն մը, ձայն մ'որ բարկութենէ սուր և կծու չէր մ'ունէր, լսելի եղաւ։

— Լա՜ւ ուրեմն. եթէ այդպէս է, կը պոռաց ձայնն, ե՛ս ալ հիւանդ կ'ուզեմ լինիլ։ Այն ատեն դուք ալ պիտի ստիպուիք ինձ Յովհ՜աննա մը տալու։ Այո, կ'ո՛ւզեմ հիւանդ լինիլ և պիտի լինիմ...։ Պիտի պաղիմ, այ՛ո, դի՛տմամբ։ Ծանր ջերմ մը պիտի ունենամ... կարելի է կուրծքի իջուածք մը... և պիտի մե՛ռնիմ...։

Յովհաննա զարմացած, օրիորդ Մագ Նէյլին նայեցաւ.

— Ֆլորանսն է, ըսաւ այս վերջինն։ Այսպէս շատ անգամ կը բարկանայ։

Եւ ապա ներողամտութեամբ յարեց.

— Բայց տակաւին տասն և մէկ տարեկան չէ։

Յովհաննա չուզեց դիտողութիւն մ'ընել։

— Աստուա՜ծ իմ, մտածեց, եթէ Ժիւլիէդ անոր նման է։

Ապա՝ Գլէմանս ու Ատրիէն, իր բարի և հնազանդ փոքրիկ քոյրերուն մտածելով՝ խեղճ աղջիկն հառաչեց։

Սակայն Ֆլորանս պոռալը կը շարունակէր.

— Այո, հիւա՜նդ պիտի լինիմ, կ'ըսէր։ Այն ատեն ինձ Յովհաննա մը պիտի տաք։

— Վատ աղջիկ, միթէ տակաւին չ'պի՞տի լռես, կը պատասխանէր ուրիշ ձայն մը, տրտում և ծանր

չեշտով։ Միթէ չե՞ս տեսներ որ այդ տեսարանը քրոջդ կը վնասէ։

— Փոյթս չէ, ես ալ Յովհաննա մը կ'ուզեմ, ինձ Յովհաննա մը տուէք, պոռաց Նորէն Ֆլորանս։

— Բանտը պիտի դնեմ քեզ, ըսաւ տրտում և ծանր ձայնն որ յանկարծ խստացաւ. Միէդ, օրիորդ Ֆլորանսը դուրս տար։

Այս խօսքերն Նորատի գիւղացի աղջկան մ'ուզած էին՝ որ շուտ մը յառաջ անցաւ

— Ո՛չ, Միէդ, թող դիս, պոռաց այն ատեն Ֆլորանս, թէ ոչ, քեզ պիտի խածնեմ, կը լսե՞ս։

Այս միջոցին օրիորդ Մագ Նէյլ և Յովհաննա Նրբանցին ծայրը հասեր էին, ձախ կողմն և դրան մ'առջև՝ որու մէկ փեղկն բաց էր, կը դտնուէին։

— Այս տեղն է, ըսաւ Անգլուհին իր դեռատի ընկերուհւոյն, և ներս մտաւ։

Իսկ Յովհաննա դրան սեմին վրայ կանգ առաւ և նայեցաւ։

Առջևն ունէր բաւական մեծկակ սենեակ մը, լայն պատուհանով մը լուսաւոր։ Այդ պատուհանին մօտ դրուած էր անկողին մը որու վրայ պառկած էր տասն երկու տարեկան աղջիկ մը, քիչ մը հեռուն կեցած էր կանգուն դեռևս Նորատի մարդ մը, երկայն, քիչ մը գաղ տեսքով, բայց ազնուագէմ։ Յանքը կը պրստէր և կը նայէր ուրիշ աւելի Նորատի աղջկան մ'որ գետինն, օթոցին վրայ, սուր ձայներ կ'արձակէր և կը կռուէր պզտիկ աղջկան մը դէմ որ Նորատի գիւղացի մ'էր և որ կը ջանար զայն վերցնելու։

Մէկ քանի վայրկեան մաքառելէն և բաւական հիդ թափելէն ետքը յաջողեցաւ զանի զսպել։ Պզտիկ աղջիկն իր թևերուն վրայ առաւ և դրան կողմը դարձաւ։

Գիւղացի աղջիկն Միէդ էր. իսկ պզտիկ անհնազանդն Ֆլորանս։

Յովհաննա այս վերջինն չ'տեսաւ։ Դիտեց միայն աղուոր դէմք մ'որ բարկութենէ կարմիր էր, և շատ մը խառն ի խուռն դանգուր դեղձան մազեր։

Այն ատեն աչքերն արտասուքով լեցուեցան, այս պզտիկ գանգուր գլուխն տեսնելով ուրիշ սիրելի գլուխ մը յիշեց, իր Կիւյոմ փոքրիկ եղբօրը գլուխն։

— Բայց եկէք, զաւակս, ըսաւ այս միջոցին օրիորդ Մագ Նէյլ իր թևը բռնելով։

Եւ վերջին դառնալով ու գտնելով իր եաւն այն մարդն որ քիչ մ'առաջ Յովհաննան կանգուն դիտեր էր, պատուհանին մօտ, բարի օրիորդն մեղմաձայն յարեց.

— Պարոն Ժէրալտ, Ժիւլիէդին և Ֆլորանսին հայրն։

Յովհաննա խոնարհութիւն մ'ընաւ.

— Շնորհակալ եմ որ եկաք, օրիորդ, ըսաւ անոր այն ատեն Պարոն Ժէրալտ ձեռքը բռնելով։ Բայց մօտեցէք, Ժիւլիէդ ձեզ կ'սպասէ։

Հայրական մեղմ կերպով խօսեր էր, բայց Յովհաննա զգաց որ իր արդէն սեղմուած սիրտն աւելի ևս կը սեղմուէր։

Իր Նորածին երևակայութեամբ և իր երեքտասն-

նամեայ անիորձութեամբ այնպէս յուսացած էր որ նախ ընտանեկան սրահ մը պիտի մտնէր, ուր պիտի շրջապատուէր, և եթէ տակաւին չ'պիտի սիրուէր, գէթ իր մօրն և իր սիրելիներուն վրայ պիտի խօսուէր։ Խե՜ղճ աղջիկ· որքա՜ն հաճելի պիտի լինէր իրեն համար այդ տեսակ հիւրընկալութիւն մը· ընդհակառակն այնպիսի ժամանակ մը կը հասնէր երբ անպիտան և անբարեկիրթ աղջկան մ'անշահ տեսարանին ներկայ կը գտնուէր, և անմիջապէս առանց հրաւիրուելու որ հանգչի, կը տարուէր պզտիկ հիւանդին մօտ որու ընկերուհին պիտի լինէր այնուհետև։

Բայց Յովհաննա (արդէն ըսինք) արիասիրտ աղջիկ մ'էր որ ոչ մորմոքիլ և ոչ տկարանալ գիտէր։

— Ժիւլիէդին համար եկայ, մտածեց, և իրաւունքն է որ այժմէն իրեն հետ զբաղիլ սկսիմ։

Եւ պզտիկ աղջկան բազմոցին մօտ դնաց։

Այս վերջինն, տեսնելով որ Յովհաննա իրեն կը մօտենայ, իր գլուխն կէս մը վերցուց, իր թոյլ պզտիկ գլուխն և իր դժգոյն դէմքն ցոյց տուաւ որ երկու սև աչքերով լուսաւորուած էր, ջերմէ փայլուն երկու մեծ աչքեր, որ կապոյտ գծով մը շրջապատուած էին։

— Ժիւլիէդն ե՞ք դուք, հարցուց Յովհաննա, անկողնին վրայ ծռելով։

— Եւ դուք, Յովհաննան ե՞ք· ըսաւ պզտիկ հիւանդն։

— Այո, Յովհաննա Տը Լա Լիժէլ եմ։ Կ'ուզէ՞ք որ ձեզ համբուրեմ։

— Այո, եթէ կամաց համբուրէք գիս։ Գլուխս միշտ ա՜յնքան կը ցաւի որ երբ ինձ դպին կը ցաւցընեն։

— Մի վախնաք, ըսաւ Յովհաննա, որ իր բերանն Ժիւլիէդին ճակտին հպիւ դպցուց։

— Ոհ, ի՜նչ լաւ, ըսաւ այս վերջինն։ Ցլորանսին պէս չէք ըներ որ վրաս կը նետուի։ Կը տեսնեմ որ դուք ինձ հետ շատ բարի և անոյշ պիտի լինիք։ Ես ձեզ պիտի սիրեմ։ Միթէ բոլոր ուղածս պիտի ընէ՞ք։

— Բայց, այո՛, եթէ կարենամ։

— Ի՜նչ լաւ բան· ըսաւ նորէն Ժիւլիէդ· միթէ այդ կը խոստանաք։

— Այո, եթէ ձեր հայրն իր հաւանութիւնն տայ։

— Հայրիկն կ'ուզէ ամեն ինչ որ կ'ուզեմ· այսինքն չուզեր փափաքիս դէմ գալ· նա գիս քիչ մը կ'աւրէ, բայց պատճառն այս է որ հիւանդ եմ։ Խե՜ղճ հայրիկ· կարծէ թէ պիտի բժշկուիմ· ես այդ չեմ կարծեր, և անոր համար շատ կ'լամ։ Միթէ պիտի ճանճրա՞նաք երբ լացս տեսնէք։

— Այդ գիս պիտի վշտացնէ և պիտի ջանամ ձեզ մխիթարել։

— Կարծեմ թէ չ'պիտի յաջողիք, ըսաւ Ժիւլիէդ, գլուխն օրօրելով, տես ոչ ոք յաջողեցաւ։ Բայց կրնա՞ք բարձերս քիչ մը շտկել։ Շնորհակալ եմ, աւելի հանգիստ եմ հիմա։ Հայրիկ, կ'աղաչեմ, եկէ՞ք, բան մ'ունիմ ձեզ ըսելու։

Այս վերջի խօսքերն ուղղուած էին Պարոն Ժէրալտին որ օրիորդ Մագ Նէյլին հետ մեղմաձայն կը խօսէր։

Երբ իր աղջիկն զանի կանչեց, անմիջապէս մօտեցաւ։

— Հայրիկ, ըսաւ այն ատեն Ժիւլիէդ, Յովհաննան շատ բարի է և արդէն կը սիրեմ զինք։ Կ'ուզեմ որ միշտ հետս մնայ։

— Պիտի մնայ, աղջիկս, պատասխանեց Պարոն Ժէրալտ, և մանաւանդ եթէ դու ալ իր օրինակին նայելով բարի լինիս։

Եւ որովհետև Ժիւլիէդ լուռ կը մնար, հայրը յարեց.

— Ուրիշ բան մ'ինձ ըսելիք չունի՞ս, աղջիկս։

— Ո՛չ, հայրիկ։

— Ուրեմն, զաւակներս, քեզ կը թողում, կամ աւելի ճիշտ, ձեզ կը թողունք, ըսաւ Պարոն Ժէրալտ խօսքն երկու աղջկանց ուղղելով։ Աւելի լաւ պիտի լինի որ մինակ մնաք գիրար ճանչելու համար։

Այս խօսքերն ըսելէն ետք, դուրս ելաւ և օրիորդ Մագ Նէյլ անոր հետևեցաւ։

Երբ իր աշխատանոցն հասաւ, նա նստաւ։

— Լա՛ւ ուրեմն, օրիորդ, հարցուց օրիորդ Մագ Նէյլին՝ որ իրեն հետևեր էր. ինչպէս կ'երևի ձեզ Յովհաննա Տը Լա Լիժէլ։

— Ո՜հ, գոչեց բարի օրիորդն խանդագին, ի՜նչ սքանչելի զաւակ, արդէն ծածրարարոյ, արդէն շատ խելացի և չափասէր։ Եւ սիրա՜ մը, զգացութի՜ւն մը։ Եթէ տեսնէ՞ք, ինչպէս իր ընտանիքին բարեկամէն բաժնուեցաւ . . . : Աչքերս լցան։ Ապա, Ժիւլիէդին հետ որչա՜փ բարի և սիրուն վարուեցաւ։ Տարակոյս չ'կայ որ այս սիրելի աղջկան շատ օգուտ պիտի ընէ, Պարոն։

— Թող Աստուած ձեր ձայնը լսէ, օրիորդ։ Հիմա, խնդրեմ, Ֆլորանսի վրայ խօսինք։ Ֆլորանս շատ կը վշտացնէ զիս իր անհնազանդութեամբ, իր բարկութեամբ, և իր ուրիշ հազար տեսակ յանցանքներով։ Հոս ձեր ներկայ չի գտնուած ժամանակը նորէն բարկութեան տեսարան մը ներկայացուց, որմէ իր խեղճ քոյրն այնքան կը վախնայ։ Կ'ուզէր որ իրեն ալ ընկերուհի մը տացուի, կ'ուզէր, ինչպէս պռալով կ'ըսէր, Յովհաննա մը։ Միթէ այսչա՜փ անմիտ բան լսած էք։ Եւ տեսաք որ պարտաւորեցայ խստութեամբ վարուիլ և զինք բանտը դնել։ Դիժբաղդաբար այս միջոցն ալ ուրիշներու պէս հասարակ կը դառնայ։ Ո՞վ պիտի զսպէ այս բուռն բնաւորութիւնն։ Վանքը միայն կարծեմ պիտի կարենայ ընել այդ։ Արդէն այդ միջոցին վրայ մտածեր էի. բայց կը վարանիմ Ժիւլիէդն ընկերուհիէ մը զրկելու։ Եթէ հիմա Ժիւլիէդ Յովհաննային կապուի, այդ արդելքն պիտի վերնայ։

— Իրաւ է որ հօրս դէմ մաքառիլ պէտք է, շարունակեց Պարոն Ժէրալտ, բայց կը յուսամ զանի համոզել։ Միայն, օրիորդ, մտածեցի նախ ձեր կարծիքն խնդրել։

— Ես ալ պատրաստ եմ տալու, Պարոն, վասն զի Ֆլորանսի օգտին համար է, պատասխանեց օրիորդ Մագ Նէյլ։ Միթէ չէ՞ք մտածեր որ եթէ այս աղջկան հետ խստութեամբ վարուիք կը հիւանդանայ և կարելի է որ մեռնի ալ՝ ամեն բան կրակ ու բոց է իր բնութեան մէջ որ միանգամայն բուռն ու վախուկ է. թեթև բանէ մը կ'այլայլի, բառէ մը կը-

ըմբոստի, և այս պատճառաւ պատիժն օգուտ մը չունի։ Թէև ինքնին բարի և ընտիր բնաւորութիւն մ'ունի։

— Այո, բայց կը վշտացնէ այն անձերն որ զինք կը սիրեն։ Ինչո՞ւ այդ չէք ըսեր, օրիորդ, պատասխանեց Պարոն Ժէրալտ, տրտմագին ձայնով։ Ա՛յսպէս աղջկանս պատկերն լրացուցած կ'լինէիք։

— Ֆլօրանս տակաւին տասն և մէկ տարեկան չէ, ըսաւ օրիորդ Մագ Նէյլ։ Թողուցէք որ մեծնայ, Պարոն. թողուցէք որ իր խիղճն զարգանայ, նոյնպէս խելքն, և այն ատեն անոր վրայ փոփոխութիւն մը պիտի նշմարէք։ Ինչու որ այն ատեն, յարեց Անգլուհին, որ Սուրբ Գրոց շատ հմուտ էր, ինքն պիտի քաշէ իր հոգիէն վատ որոմն, լաւ ցորենն թողլու համար, և սքանչելի աղջիկ մը պիտի լինի։

— Բաւական է որ վատ որոմն լաւ ցորենը չի խղդէ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։ Սիրելի օրիորդ Մագ Նէյլ, սրտիդ մէջ ներողամտութեան գանձեր ունիք, շատ ատենէ ի վեր գիտեմ այդ։

— Որոշումս ըրած եմ, շարունակեց Պարոն Ժէրալտ, բայց չեմ ուզեր շուտով գործադրել, պէտք է շատ մեծ խոհեմութեամբ վարուիլ. Ուստի կ'աղաչեմ ձեզ Ֆլօրանս տեսնել և անոր խօսիլ։ Կը վստահիմ ձեզ, անոր հասկցուցէք որ եթէ բոլորովին չի փոխուի, տունէն պիտի մեկնի, երեք ամսէն, վեց ամսէն, կամ տարիէ մը։

Պահ մը լուռ մնաց, ապա իր ժամացոյցին նայեցաւ նա, և իր զրասեղանին առջև նստելով շարունակեց։

— Ներեցէք. բայց ժամը վեցին կը մտենայ և դեռ շատ գործ ունիմ։

— Ձեզմէ կը հեռանամ, Պարոն, պատասխանեց օրիորդ Մագ Նէյլ։ Ես ալ, իմ կողմէս գործ ունիմ։ Ժիւլիէդին քովը կը վերադառնամ, որպէս զի Յովհաննա Տը Լա Լիժէլին հետ զբաղիմ։ Խե՜ղճ աղջիկ, այս երկայն ճամբորդութենէն վերջ պէտք ունի հանդչելու։

— Անշուշտ. վրան հոգ տարէք, օրիորդ։ Նայեցէք որ ժիւլիէդ զանի չի նեղէ։ Այս աղջիկն շատ հետաքրքրաշարժ է և կրցածս պիտի ընեմ որպէս զի հոս երջանիկ լինի։

— Միթէ Ֆլօրանս մեզի հետ սեղան պիտի ճաշէ, հարցուց օրիորդ Մագ Նէյլ։

— Ո՛չ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։ Ֆլօրանս լաւ դասի մը պէտք ունի. թող Միէդ իր սենեկին մէջ պէտք եղածը հոգայ, և այս գիշեր սրահը չ'պիտի ներկայանայ, թէև շատ կը փափաքի։

Այս խօսքերն ըսելէն ետք ելաւ, որպէս զի օրիորդ Մագ Նէյլ մինչև դուռը տանի։

ԳԼՈՒԽ Դ.

ՊԱՐՈՆԱՑԻՆ ԺԻԼԻԼՏ ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ

Օրիորդ Մագ Նէյլ Պարոն Ժէրալտեն բաժնուելէն անմիջապէս ետք Ժիւլիէդին մօտ գնաց։ Գտաւ զինքն իր նոր ընկերուհւոյն հետ խօսակից։

Այս վերջինն միշտ պզտիկ հիւանդին անկողնին քով նստած էր, ոտք ելաւ նա երբ օրիորդ Մագ Նէյլ ներս մտաւ։

— Զաւակս, ըսաւ այն ատեն օրիորդ Մագ Նէյլ, կ'ուզե՞ս ինձ հետ գալ. մեր սենեակն պիտի տանիմ քեզ։ Անշուշտ գոհ պիտի լինիս եթէ քիչ մը հանգչիս։

Յովհաննա ընդունեց առաջարկն։ Բայց Ժիւլիէդ իսկոյն բողոքեց. կը փափաքէր Յովհաննան իր քովը պահել, Յովհաննա որչա՞փ սիրուն էր. բաց աստի՝ իր իրաւունքն ալ չէ՞ր, ինչու որ Յովհաննա իրեն համար եկած էր։ Եւ եթէ Յովհաննա յոգնած էր, կրնար Ժիւլիէդին սենեակն հանգչիլ։ Կային լաւ թեւաթոռներ ուր կրնար քնանալ եթէ ուզէր, և այս տեսակ հաղար խօսքեր։

Բայց Ժիւլիէդ հաւանեցաւ երբ օրիորդ Մագ Նէյլ անոր հասկցուց որ միանակ իր վրան մտածելն (ինչպէս որ Ժիւլիէդ կ'ընէր) ինքնասիրութիւն է և անբարի սրտի մը նշանն։

Յովհաննա այն ատեն փոքր հիւանդէն բաժնուեցաւ անոր ըսելով «շուտ կ'դառնամ» և օրիորդ Մագ Նէյլին հետևեցաւ։

Այս վերջինն բակին մէջ քանի մը քայլ առնելէն ետք սենեկի մը դուռն բացաւ և նորատի աղջիկն հրաւիրեց իրեն հետ ներս մտնելու։

Հոն Յովհաննային ըսաւ.

— Այս քու սենեակդ է, սիրելի զաւակս, և կը յուսամ որ հոս հանգիստ պիտի լինիս։ Սենեակն մեծ չէ, բայց պայծառ ու զուարթ է։ Ապա՝ դրացիս ես։ Եթէ գիշերը բանէ մը պէտք ունենաս, համարձակ զարնես պատին. թեթև քուն ունիմ, կրնամ իսկոյն ելնել։ Յորեկն երկու անգամ զարկ. Միէդ հրամանիդ տակ պիտի գտնուի։ Միէդ Ժիւլիէդին և Ֆլորանսին սպասուհին է. նա ընտիր աղջիկ մ'է որ քեզ պիտի ծառայէ։ Հիմա քեզ կը թողում։ Ա՛հ, կը մոռնայի ըսելու որ ժամն եօթին կը ճաշենք։ Պարոն Ժէրալտ ճշտապահութիւնն կը սիրէ։ Այսօր միայն պիտի գամ քեզ առնելու։

Օրիորդ Մագ Նէյլ Յովհաննային ճակատն համբուրեց և դուրս ելաւ այս խօսքերն ըսելէն ետք։

Երբ Յովհաննա միանակ մնաց, այն տեղն անշարժ կեցաւ, ապա իր սենեակն քննեց։

Օրիորդ Մագ Նէյլ ճշմարիտ խօսած էր. այդ սենեակն պզտիկ, պայծառ և զուարթ էր, շատ ճաշակով և վարդագոյն կահաւորուած։ Եւ սակայն Յովհաննա հառաչեց, վասն զի կարօտագին յիշեց Վանոյ փողոցին սենեակն՝ որ թէև նուազ սիրուն և հաճելի էր, բայց ուր իր սիրելի փոքրիկ քոյրերուն հետ կը պառկէր։

Անմրևն դաղրեր էր։ Նորատի աղջիկն իր պա-տուհանն բացաւ։ Իր առջև կ'երկննար Լաստենիքի ծառուղին՝ որու մէջէն ժամ մ'առաջ անցեր էր։ Ձախ կողմն կ'երևէին այն ճերմակ և մաքուր պզտիկ տուներն զոր տեսեր էր երբ կուգար, միւս կողմն տրտում բնակարան մը, մենաւոր, թէ աղքատիկ և թէ հոյակապ տեսքով, տեսակ մը հին դղեակ։

Աղմուկ մը չեր լսուեր, այլ միայն անորոշ չչուկ մ'որ միշտ լսելի կ'լինի գործարանի մը շուրջն։

Յովհաննա բազմաղիւի մտածումներու մէջ ընկաւ, որ իր գալէն ի վեր բռնապէս ուրիշ մտածումներու տեղի տուած էին։ Մտածեց իր մօր, իր եղբայրներուն և քոյրերուն վրայ. մտածեց իրենց հասարակ բարեկամին, որ Մաքսիմ Նաւապետն էր, ընտանեկան կենաց վրայ՝ որմէ բաժնուած էր, այս նոր կենաց վրայ՝ զոր պիտի վարէր, Ժիւլիէդին ու Ֆլորանսին վրայ։

Այսպէս խորհելով իր աչքերն ասդին անդին կը թափառէին, մերթ տուներուն, մերթ դղեակին, կամ ճամբուն վրայ յառած։

Յանկարծ զանգակ մը լսեց որ ծանր ծանր կը հնչէր։ Աչխատութեան վերջն և գործատան տրամկուրդն էր։

Այս քաջածանօթ նշանին վրայ, կիներ, մանկիկներ, իրենց պզտիկ տուներուն դրան սեմին վրայ երևցան։ Կիներն իրենց գործն կամ իրենց նորածին զաւակները բռնած իրենց ամուսիններուն կ'սպասէին։ Իսկ մանկիկներն, ընդհակառակն, իրենց հայրերուն առջև կ'վազէին։

Այս տեսարանը Յովհաննան այլայլեց. նախանձեցաւ այդ փոքր աղջիկներէն ու տղայներէն որ իրենց հարց համբոյրն կ'ընդունէին։ Սակայն իր ուշադրութիւնն ուրիշ տեղ դարձաւ։

Զանգակին առաջին հնչումները երբ կը լսուէին, մարդ մ'երևցաւ ճամբուն վրայ. անշուշտ, մինչև այդ միջոցին Լաստենիոյ մ'ետև պահուած էր, ինչու որ մինչև այդ ժամանակ զանի դիտած չէր։

Այս մարդն փոքրահասակ էր, ծերութենէ ծռուած, և գորշ թիկնոցի մը մէջ փաթթուած։

Յովհաննա զանի ճանչեց։ Փոքր ծերունին էր, որու հետ երկու անգամ շոգեկառքին մէջ գտնուած էր, իր ճամբորդութեան ժամանակ։

Ծանրաքայլ կը յառաջանար իբրև չրջող մ'որ բնաւ ստիպողական գործ չունի։ Իր թնդուածքն Յովհաննային կասկածելի երևցաւ. քալելու ժամանակ նայելու և մտիկ ընելու յատուկ կերպ մ'ունէր։

Այդ միջոցին գործաւորներն որ գործատունէն ելած էին, փոքրիկ տուներուն կը մօտենային։ Շուտ շուտ կը քալէին և միասին քանի մը խումբ կը կազմէին։ Ոմանք կ'խօսէին, այլք կ'երգէին։

Պզտիկ ծերունին ծառուղիէն ելած էր, և միշտ կամաց քալելով խոտորնակ ճամբայ մը բռնած էր։ Մարդ մը միւս կողմէն կուգար։ Երկայն պատանի մ'էր նա, հպարտութեամբ կը քալէր, գործաւոր մը էր, վասն զի գործի հագուստն ունէր։

Որոշեալ տեղ մ'այն երկու մարդիկ իրարու հանդիպեցան։ Այն ատեն կանգ առին, քիչ մը խօսակցեցան, վերջէն բաժնուեցան։

Յովհաննա անոնց հեռանալն դիտեց, վերջէն այս դիպուածն մոռնալով՝ սկսաւ նորէն խորհիլ։

— Լաւ ուրեմն, սիրելի զաւակս, ըսաւ այդ միջոցին օրիորդ Մագ Նէյլ, սենեակն մտնելով և իր ձեռքն Յովհաննային թևին վրայ դնելով, պատրաստ ես, այնպէս չէ՝ եկայ քեզ առնլու որ ճաշի երթանք։

Յովհաննա դարձաւ։

— Ի՞նչ, ճա՞շը. արդէն պատրա՞ստ է։ ժամը քանի՞ է։

— Ժամը եօթն է, զաւակս։ Բայց, ինչպէ՞ս։ Դեռ հագուած չե՞ս։ Կարծէի թէ քեզ ըսեր էի . . . ։

Յովհաննա քանի մ'երէկոտ խօսքեր կմկմաց։

— Մի՛ վախնար, չեմ ուզեր քեզ սաստել, պատասխանեց ներողամիտ օրիորդն չատ անոյշ կերպով։ Այսօր սեղանն եկուր ինչպէս որ ես։ Շուտ շուտ ձեռքերդ լուայ և մազերդ սանտրէ։

Յովհաննա խիստ հնազանդեցաւ։ Օրիորդ Մագ Նէյլ անոր սպասեց. և երբ դեռատի աղջիկն իր հագուստն քիչ մը կարգի դրաւ, շուտ մ'անոր հետ սենեկէն դուրս ելաւ, արագ քալելով։

Բակին մէջ, սեղանատան դրան առջև կանգ առաւ և հոն իր նորատի ընկերուհւոյն ըսաւ.

— Անշուշտ սեղան նստած են։ Քու տեղդ ժիւլիէդին քովն է. բայց առաջ Պարոն ժէրալտի հօր բարև տուր։ Ուրիշ պատուէր մ'ալ ունիմ. չատ քիչ խօսիր։ ժիւլիէդին հետ քանի մը բառ միայն, այդ կարելի է որ ընես։ Պէտք չունիմ աւելի ևս խօսելու, վասն զի գիտեմ որ լաւ կրթուած ես։ Հիմա, ներս մտիր, զաւակս։

Յովհաննա ներս մտաւ։

— Ա՜հա եկա՜ւ, գոչեց ժիւլիէդ, մեծ հայրիկ, այսէ Յովհաննան։

Մեծ հայրիկն՝ որ այդ միջոցին հոլանտական համեմատով վահանաձուկ մը կուտէր, գլուխն վերցուց և նորատի աղջկան նայեցաւ.

Այս վերջինն զգաց որ կը կարմրի, վասն զի կ'ամչնար։ Բայց առանց անհարակուութեան այլ վայելչութեամբ Պարոն ժէրալտ Շիրինեան հայրը բարևեց։

Պարոն ժէրալտ հայր՝ միջահասակ ծերունի մ'էր, թիկնեղ, կարմիր, գէր, քիչ մը թանձրամիս, ատեն ատեն աչքերն կը դարձնէր, բարձր կը խօսէր, և խօսելու ժամանակ կը շարժէր. ընտիր մարդ մ'էր, բայց կը սիրէր խրտուիլակի կերպեր առնլու։ Իր որդին Պարոն ժէրալտ ամենևին չէր նմաներ անոր։ Որքան որ որդին պաղարիւն, չափասէր, արժանաւոր և հանդարտ էր, նոյնքան հայրն աշխոյժ, վառվռուն, քիչ մը կռուարար և զուարթ էր։

— Բարև, պզտիկ աղջիկ, բարև, ըսաւ նա Յովհաննային։ Շուտ մը նստիր և կորուսած ժամանակդ դարմանէ. (ամեն տղոց հետ դուդելով կը խօսէր,) բայց ամենէ առաջ այս ըսելիքս մտիկ ըրէ. եթէ չես ուզեր որ քեզ յանդիմանեմ, ատենով սեղանն եկուր, քիչ խօսէ և չատ կեր։

Ապա իր բերոնն առաւ և շուտ մը վահանաձուկի կտոր մը կլլեց։ Նշանաւոր ուտան մ'էր, ու այդ մասին կը պարծենար. բարձրաձայն խնդալով կ'ըսէր իր աղուոր ախորժակին վրայ ծիծաղողներուն թէ՝

շատ անգամ լաւ ստամոքսէ մը լաւ բնաւորութիւն մը յառաջ կուգայ։

Երբ օրիորդ Մագ Նէյլ նշան մ'ըրաւ, Յովհաննա Տը Լա Լիժէլ շուտ մը նստաւ, Ժիւլիէդին բազմոցին քով զոր սեղանին մօտ դրեր էին։ Միէդ փոքրիկ աղջկան ետև կանգնուն, անոր կը ծառայէր։

— Միթէ դո՞ւք եք, սիրելի օրիորդ, որ այս իրիկուն զիս Ֆլորանսէն կը զրկէք, հարցուց յանկարծ Պարոն Ժէրալտ հայր, դառնալով օրիորդ Մագ Նէյլի՝ որ իր ձախ կողմն նստած էր։

— Ո՛չ, հայր իմ, ես եմ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։

— Ա՜հ, դո՞ւ ես, բարեկամս։ Լաւ ո՛ւրեմն. ըրածդ չեմ կրնար հաւնիլ։ Աղջիկդ պատժէ, այդ իրաւունքդ է, բայց զիս մի պատժեր։

— Հայր իմ, քաջ զիտցիր . . . ։

—Հո՛. հո՛. հո՛. այդ խօսքերդ արդէն գիտեմ, գոչեց Ծերունին, իր սկաւառակն հրելով։ Ի՞նչ ուներս ինձ տակաւին ըսելու։ Անգութ հարկ մը . . . . սիրտդ կ'արիւնէր, բայց պարտքդ էր պատժել . . . Ֆլորանսի օգտին համար է, վասն զի Ֆլորանս հրէշ մ'է, այնպէս չէ՞։ Լա՜ւ ուրեմն. ես պզտիկ Ֆլորանսը սքանչելի կը գտնեմ, կը լսե՞ս այդ, աղնիւ որդիս. և կարծեմ թէ այդ բաներու համար ընտիր դատաւոր մ'եմ։

— Ընտիր, այո՛. բայց շատ ու շատ ներողամիտ, սիրելի հայր իմ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։

Պարոն Ժէրալտ հայր ուսերը թոթուեց և իր ճաշը շարունակեց ապա, պահ մը ետք, հարցուց.

— Ժէրալտ, ի՞նչ ըրաւ Նորէն այս փոքրիկն։

— Հայր իմ, Ֆլորանս Նորէն իր բարկութեան նոր տեսարան մը ներկայացուց որ . . . ։

—Տեսա՛րան մը, բողոքեց խսկոյն Ծերունին, որդեակ, կը չափազանցես անշուշտ։ Ֆլորանս ատեն ատեն կը բարկանայ. այդ ցոյց կ'տայ որ լաւ բնաւորութիւն մը պիտի ունենայ. բայց Ֆլորանս անկարգութիւններ չ'ըներ։ Արի, բառերով չի խաղանք։

Նորէն լուռ մնաց, կաքաւկի մը կէսն առաւ, և քիչ մ'ետք շարունակեց. — ի՞նչ էր, կ'աղաչեմ, այդ տեսարանին առարկան, քանի որ տեսարան կայ։

— Օրիորդ Տը Լա Լիժէլին գալստեան առթիւ էր. բացատրեց Պարոն Ժէրալտ, Յովհաննան ցոյց տալով։ Ֆլորանս կ'ուզէր որ իրեն համար ալ ընկերուհի մը գտնեմ, ինչպէս իր քրոջ հատ մը տուի։

— Ա՜հ, ա՜հ, ըսաւ Ծերունին խնդալով. բայց այս դաղափարը բաւական տարօրինակ է. ո՜հ, շատ տարօրինակ։ Այս կը բերէ միտքս պատմութիւնն այն պզտիկ աղջկան որ իր հօրն ագարականուհւոյն տունը նորածին մանկիկ մը տեսնելով, ոտքը կը զարնէր, սուր ձայներ կ'արձակէր, ամեն մարդ կը հաւաքէր, ըսելով թէ կ'ուզէր ինքն ալ կենդանի պէպէկ մ'ունենալ։

— Եւ հատ մ'անոր տուի՞ն, մեծ հայրիկ, հարցուց Ժիւլիէդ որ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր։

— Գաւազան տուին անոր, պզտիկս. և արժանի էր անոր, պատասխանեց մեծ հայրն։

— Ուրեմն, հիւանդ չէր, ըսաւ աղջիկն. ինչու որ հայրիկն ինձ Յովհաննան տուաւ։

— Այս կերպով լաւ բան մ'ըրած չէ այն, պատասխանեց ծերունին։ Վերջապէս դու ըսիր, աղջիկը, հիւանդ ես և ատով շատ բան կը ներուի. հոգը տկարութիւնն ու քմայքդ։

Ապա, խօսքն Յովհաննային ուղղելով, յարեց.

— Եւ դու պզտիկ աղջիկ, ջանա իր ամեն ուզածը չընել, նայէ որ Ժիւլիէդ (որ քեզ շատ սիրտ սիրէ,) իր գիտցած կերպով քեզ չի սիրէ. կ'ուզեմ ըսել այնպիսի պզտիկ տղու մը պէս, որու առջև հայր և մայր կը ծռին։

Յովհաննա Տը Լա Լիժէլ շատ անհանդիստ էր։ Սովորած չէր այն այլանդակ, եթէ ոչ կոշտ կերպերուն, որով Պարոն Ժէրալտ հայր իր գաղափարները կը բացատրէր. զարմացած մնաց, եթէ ոչ քիչ մը վիրաւորուած։ Կը կարմրէր, կը դեղնէր, բոլորովին չէր գիտեր ի՞նչ ընելիքն։

Պարոն Ժէրալտ այդ բանը դիտեց. անմիջապէս խօսակցութիւնն փոխեց։

Պարոն Ժէրալտին վրայ խօսած ժամանակ Մաքսիմ Նաւասլետն Յովհաննային ըսեր էր. լաւ բնաւորութեան և մեծ արժանիքի տէր մարդ մ'է։ Այս ըսելով չափազանցութիւն մը չէր ըրած. ընդհակառակն ճշմարտութեան մօտեցած էր։ Ժիւլիէդին ու Ֆլորանին հայրն այն մարդերէն էր որ հազուագիւտ են. ընտանեկան ոգին կրցած էր պահել, նոյնպէս բարի քրիստոնէի մը հաւատն։

Իր երիտասարդութիւնն շատ ծանր ու վաստակաւոր եղած էր և միայն իրեն կը պարտաւորէր իր արդի վիճակն։

Բայց ճիշտը խօսելով, իր գործերուն մարդը չէր։ Իր ընտանիքն որ շատ հին էր, Գաղղիայի ստորին աղնուական ցեղէ կ'իջնէր։ Վայելած էր ճոխութիւն, բայց ճախորդութիւններն յաջորդած էին։ Հասած էին շատ ծախքէր, հարկաւ յառաջ բերած էին փոխառութիւններ, ահա ինչ որ շատ ատենէ վերջ, շատ մարդոց կործանումն կը պատճառէ։ Այսպէս եղաւ կամ այսպէս սկսաւ Ժէրալտի աղքատութիւնը։

Իրենց կալուածոց վաճառումն բոլորովին աւերեց Ժէրալտին մնացած ինչքն (երկու եղբայր էին) իրենց տունն օր մը ամուրդի հանելով ծախուեցաւ, ինչպէս սովորաբար կը ծախուի այս կերպով մարդուս ինչքն, այսինքն իրենց արժէքէն կիսով պակաս։

Երկար ժամանակ խօսեցան այդ բանին վրայ, աւելի ևս խօսեցան, վասն զի աղքատութիւն յառաջ եկած էր երկու եղբայրներու կռիւէն։

Բայց ժամանակաւ շատ սիրով էին այս երկու եղբայրներն, երկուքն ալ ազնիւ բարի, վեհանձն, որ մինչև քսան և հինգ տարեկան եղած ատեն, մէկ սի՛րտ, և մէկ խորհուրդ ունեցած էին։

Ամեն մէկ եղբայր որդի մ'ունեցաւ։ Երբ միայն որդին, անդրանիկը, տասն և ութ տարեկան, գինեւոր կը լինէր, միւսը, պզտիկին որդին, կը մտածէր իր բաղդն շտկել և հարստանալ. այս էր Ժէրալտ Շերինեան։

Իր ուսումն այն ատեն բարեբաղդաբար լմնցած էր, և որովհետև ինք իրեն չէր կրնար գործել, գ-

նէ ժամանակ մը, շատ ասպարէզներ իր առջև գոց էին։ Բայց այս մտին հաստատուն գաղափար մ'ունէր. կ'ուզէր քաղաքային ճարտարագէտ լինիլ։

Եւ այսպէս եղաւ. բայց այդ նպատակին հասնելու համար որչա՛փ ճիգ ու զրկանք պիտի կրէր։ Բոլոր օրուան դասառութենէ վերջ, գիշերն կ'աշխատէր, հագիւ քնանալով, միւս օրուան աշխատութեան համար։

Այսպէս աշխատեցաւ երեք տարուոյ չափ։

Իր հայրն այդ ատենն տունը համեստօրէն կ'ապրէր, պզտիկ ագարակի մը հասոյթով։ Պատանին գնաց անոր միացաւ երբ իր վկայագիրն ստացաւ, վեհանձն բարեկամի մը շնորհիւ, որ փոխատու մ'եղաւ, ճարտարագիտութեան մէջ մտաւ և քիչ ժամանակէ ետք շատ վաստակ ըրաւ։

Քիչ ատենէ վերջ կարգուեցաւ, իր կինն աղուոր օժիտ մը բերաւ իրեն։ Այն ատեն Լաստենիքն չունեց, և իր բնակարանին մօտ այն պզտիկ տուներն կանգնեց ուր գործաւորներն բնակեցուց. աղջկանց ու տղոց համար դպրոցներ և հասուն տղոց գիշերային դասախօսութիւններ հաստատեց։

Զինք երկրին մէջ կը սիրէին՝ որու բարերարն էր և ուր ամեն մարդ զինք Լաստենիքէ Բարէ Պարոն կ'անուանէր։

ԳԼՈՒԽ Ե.

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆՆ

Ֆլորանսին բանտը բնաւ մութ զնտան մը չէր։ Սենեկիկ մ'էր, կամ աւելի լաւ ըսելու համար, ներքնասենեակ մ'էր պահարաններով և դարակներով ուր կը դնէին զանազան հագուստներ եղանակին համեմատ։

Իրաւ է որ այդ սենեկիկն ուրիշ կերպով չէր կրնար ծառայել, վասն զի երդիքով մը լուսաւորուած է։

Ֆլորանս շատ անգամ փորձած էր այդ պատուհանին հասնելու, սեղանին վրայ աթոռ մը դնելով և վրան ելնելով, բայց յաջողած չէր և անոր համար շատ կը բարկանար։

— Գոնէ, կ'ըսէր Ֆլորանս, բոլորովին մութ լինէր աւելի քիչ պիտի ցաւէի՝ բան մը չ'տեսնելով։ Բայց ոչ, երբ օդն աղուոր է, կապոյտ երկինքն այդ սոսկալի պատուհանէն կը տեսնեմ, և այդ է որ ինձ յիմարական փափաքներ կ'տայ վազելու և ցատկելու։ Իսկ երբ անձրևէ, ընդհակառակն, ջուրը կ'վազի ապակիներուն վրայ և գիս այնչափ կը նեղացնէ որ ակռաներս կը կրճտեմ։ Եւ անձրևն որչա՛փ զուարճալի է։ Այ . . . բայց երբ մարդ թրջուի, երբ տաբատի մը բռնուի։ Ա՜հ, ի՜նչ անչահ հնար մը գտաւ հայրիկն գիս բանտ դնելով։

Այս խորհրդածութեամբ վերջ կ'առնէին Ֆլորանսին երկայն կշտաբանքն իր կրած պատժին առթիւ։ Բայց, կամաց կամաց այդ անշահ հնարքն սովորեցաւ, իր բանտին առանձնութիւնն իրեն նուազ անհաճոյ երևցաւ, երդիքն ալ նուազ նեղիչ, քիչ մը ևս և պիտի դիտէր որ երդիքներն լաւ բան մ'ունէին։

Այս պատճառաւ էր որ իր աղջկան տուած այս վերջի պատժին վրայ խօսելով, պարոն Ժէրալտ օրիորդ Մագ Նէյլին ըսած էր.

— Այս միջոցն միւսներուն պէս սովորական կը դառնայ։

Բայց այս բանն արգելք չեղաւ որ փոքրիկ աղջիկը պուռայ, ոտքը գետինը զարնէ, գետինը գլորի, երբ իր հայրն սպառնալիքն ըրաւ որ զանի բանտը պիտի դնէ այն միջոցին ուր Յովհաննա Տը Լա Լիժէլ Լաստենիքն կը հասնէր։ Եւ այս էր սովորաբար իր վարմունքն, և կ'ուզէին զայն պատժել. բաց ասի՝ յատկապէս այն օրն չէր ուզեր բնաւ բանտ մտնել։ Փափաք ունէր իր քրոջ ընկերուհւոյն հետ ծանօթութիւն ընել։

Բայց Ֆլորանս միայն հետևեալ օրն Յովհաննան կրցաւ տեսնել։ Առտուան ժամը եօթին պզտիկ հազթաթիներ ու կապոյտ բերքալէ աւօտեայ մը շուտով հագնելէն ետք Նորատի աղջկան սենեակն մտաւ։

Այս վերջինն սեղանին մօտ նստած պատուհանին առջև նամակ մը կը գրէր. և այս գործին մէջ այնչափ թաղուած էր որ Ֆլորանսին գալն չ'տեսաւ ու չ'լսեց։

Ֆլորանս սենեկին մէջ տեղ մնալով կը նայէր Նորատի անծանօթին որ լոյսին մէջ նստած էր և որու ձեռքն թղթին վրայ շուտ շուտ կը սահէր։

— Շատ լաւ, կը մտածէր Ֆլորանս, ինձ պէս իր խօսքերն չի փնտռեր. այդ բանը բնաւ ամենևին զուարճալի չէ։ Բաւական աղէտ է. բայց ինչպէ՞ս կարծեմ թէ կուլայ։

Այդ միջոցին արտասուք մը Յովհաննային այտին վրայ գլորեցաւ ու գնաց թղթին վրայ ընկաւ։

— Այո, կուլայ, ըսաւ Նորէն Ֆլորանս մտովին։ Կ'ուզեմ գիտնալ ինչո՞ւ համար է։

Հետաքրքիր աղջիկն յառաջ անցաւ և Յովհաննա գլուխն վերցնելով զայն իրմէ երեք քայլ հեռու տեսաւ։

Առաջ զարմացական շարժում մ'ըրաւ. ապա աղէտ դեղձան մազերէն ճանչնալով այն աղջիկն զոր առջի օր նշմարած էր, անոր ժպտեցաւ առանց խօսելու։

Այդ ալ անօգուտ. Ֆլորանս ամենէ առաջ բերանն բացաւ։

— Որո՞ւ կը գրես, հարցուց Յովհաննային։

— Մայրիկիս, պատասխանեց այս վերջինն։

— Ա՜հ, և ինչո՞ւ կուլաս երբ անոր գրես։ Արդէն այս տեղ, Լաստենիքն կը ճանճրանա՞ս։ Միթէ կ'ուզես Նորէն մեկնիլ։

— Ոչ, ո՜չ, ոչ։ Հոս շատ երջանիկ պիտի լինիմ։

— Ի՞նչ է ցաւիդ պատճառն եթէ այդ չէ։

— Մայրիկս բաժնուելուս վիշտն է, պատասխանեց Յովհաննա, ինչպէս նաև պզտիկ քոյրերիս ու սիրելի փոքրիկ եղբայրս։

— Եթէ ես, տեղդ լինէի, պիտի չուզէի մեկնիլ։

— Հարկ էր որ մեկնիմ։

— Ա՜հ, ուրեմն իրաւ է որ մայրդ քեզ չի սիրեր, ըսաւ Ֆլորանս։

— Ինչպէ՞ս, գոչեց Յովհաննա վշտահար և զարմանօք. սիրելի մայրիկս դիս չի սիրէ՞ . . . ։ Ինչո՞ւ այդպէս կը խօսիս, ի՞նչ ըսել կ'ուզես։

— Ե՞ս, ոչ ինչ։ Մեծ հայրիկն էր այդ ըսողն։

— Ի՞նչ կ'ըսէր։

— Կ'ըսէր թէ չէր հասկնար ինչպէ՞ս մայրդ կըրցած է բաժնուիլ քեզմէ և հաւանիլ որ տասն երեք տարեկան ընկերակից օրիորդ մը լինիս։ Խօսքն մեր մէջ, մեծ հայրիկն չէր ուզեր որ հոս գաս։ Կ'ըսէր թէ շատ նորատի ես, թէ չ'պիտի յարմարիս, թէ օրիորդ Մադ Նէյլ ու ես բաւական էինք Ժիւլիէդին համար, և ուրիշ այդպիսի շատ մը բաներ, զոր չեմ յիշեր ալ։ Բայց, ի՞նչ ունիս. հիմա աւելի շատ կուլաս քան թէ քիչ մ'առաջ։ Ա՜հ, դիտեմ, քեզ վշտացուցի ըսելով թէ ընկերակից օրիորդ մ'ես։ Ըսէ միթէ պատճառն ա՞յդ է։

— Ոչ, այդ բանը չէ, պատասխանեց Յովհաննա վշտահար։

Ի՞նչ էր իրօք այդ, բաղդատմամբ այն կարծիքին որով իր մայրն կը պարսաւէին։

— Ուրեմն աւելի լաւ, վրայ բերաւ անմիջապէս Ֆլորանս։ Ինչու որ հայրիկն ապսպրեց Ժիւլիէդին ու ինձ՝ քեզ հետ շատ սիրով վարուելու. և մանաւանդ Ժիւլիէդին, ինչու որ անոր համար եկած ես։ Մեզ ըսաւ, թէ պարկեշտ ընտանիքի մ'աղջիկն ես, թէ

պէտք է քեզ հետ քրոջ մը պէս վարուիլ, թէ ինքն քեզ իբրև իր աղջիկն պիտի նկատէ. (քեզ կը հարցնեմ թէ այդ կարելի՞ է.) թէ միևնակ այդ պայմանաւ մայրդ քեզ թոյլ տուած է հոս գալու. թէ պէտք է որ անոր ամենքս ալ շատ երախտագէտ լինինք քեզմէ բաժնուելուն, վասն զի Ժիւլիէդին օգտին համար է։ Այդ բանին վրայ մեծ հայրիկն քիչ մը վիճեց. այդ բանն շատ անգամ կը պատահի հայրիկին և անոր մէջ։ Միշտ մի և նոյն գաղափարն չունին։ Եւ եթէ խորն նայիս, մեծ հայրիկն է որ միշտ կը զիջանի. միայն երկու բանի համար դէմ կը կենայ։ Նախ ինձ համար. մեծ հայրիկն ինձ շատ աւելի երես կուտայ քան թէ Ժիւլիէդին. հայրիկն պարապ տեղ կ'աշխատի, բայց մեծ հայրիկն միշտ կը շարունակէ։ Երկրորդն հին դղեակին համար է . . . ։ Նայէ, շարունակեց փոքր աղջիկն, վարագոյրն վերցնելով, այդ հին դղեակն է որ ասկից շատ աղէկ կարող ես տեսնել։ Հեռու չէ, շատ կը սիրեմ հոն երթալն։ Սակայն որոշել պէտք է, չէ թէ դղեակը՝ն, վասն զի մեր տունէն մարդ մը հոն երբէք չի մտներ. այլ պզտիկ ճամբան՝ որ հոն կ'տանի։ Լաւ ուրեմն, հայրիկն թոյլ կուտայ որ երթամ և մեծ հայրիկն այդ ինձ կ'արգիլէ։ Կը հասկնաս անշուշտ, ես միշտ հոն կ'երթամ, վասն զի հայրիկն թոյլ կուտայ։ Բայց ճշմարիտն խօսելու համար եթէ ինքն անգամ հրաման չ'տար, կարծեմ թէ դարձեալ պիտի երթայի։

— Լա՜ւ ուրեմն, բայց ես այդ բանին հակառակն կը մտածեմ, դիտեց Յովհաննա, որ այս բոլոր շա-

ղակրատութեան ժամանակ հազիւ կրցաւ խօսք մը ընել։ Այնքան անհնազանդ չես։

— Ո՜հ, ո՜հ, կը յորդորեմ քեզ որ դիս այնքան շուտ չ'դատես, պատասխանեց վիրաւորեալ աղջիկն։ Մեծ հայրիկն կ'ըսէ թէ ամեն մարդ անձին համար պատասխանատու՝ կը մնայ, ըսէ, մինթէ ինձ պիտի ընկերանաս, պիտի ընկերանաս պզտիկ ճամբէն գը-նալու։

— Այո, եթէ հարկ լինի Ժիւլիէդին ընկերանալու։

— Ժիւլիէ՛դ։ բայց դու անոր պահապան չունը չես, գոչեց Ֆլորանս։ կը մտածեմ թէ քիչ մը զանի մեկդի պիտի թողուս ինձ հետ խաղալու համար։

— Զանի մեկդի՛ թողում։ Այդ բանն մի յուսար Ֆլորանս, պատասխանեց Յովհաննա։ Մինթէ հոս չե՞մ եկած քրոջդ հետ զբաղելու համար։

— Ա՜հ, նա՛յէ անգամ մը, դու ալ միւսներուն կը նմանիս։ Հիմա կը հասկնամ, որ պարտաւորութեանդ վրայ պիտի խօսիս ինձ, այնպէ՞ս չէ։ Որքա՜ն ախորժելի բան է կատարել ինչ որ պարտաւորութիւն մ'է։ Եւ ապա ենթադրելով որ Ժիւլիէդ քիչ մ'երեսի վրայ պիտի թողուս ինձ համար, ո՞վ պիտի գիտնայ այդ բանն, ըսէ։ Ժիւլիէդ երբեք չի գանգատիր։ Իր պակասութիւններն ունի, այդ շատ ճըշմարիտ է, շատ անգամ պահանջոտ է, և ատեն ատեն տխուր ու լռիկան, նոյնպէս, խօսքը մեր մէջ, քիչ մ'ալ նախանձոտ է։ ո՜հ ոչ։ Եւ եթէ չես ուզեր հետս գալ, շարունակեց պզտիկ աղջիկն, կրնամ զրկուիլ քեզմէ։ ինձ օգտակար չես։ Ես Հիւպէրն ու Ռըմին ունիմ։ Եւ շա՜տ սիրուն են։ Դժբաղդաբար

անոնց հետ շատ քիչ կը խաղամ, և միշտ գաղտնի։ Զանոնք չե՞ս ճանչնար։

— Առաջին անգամն է որ իրենց անունն կը լսեմ։

— Իմ մեծ հօր եղբօր որդիներս են և բարեկամներս։ Հոն վարը կը բնակին, հին դղեակն և այդ շատ ձանձրանալի է։ Կը հասկնա՞ս չեմ կրնար զանոնք տեսնել, ինչու որ մեծ հայրիկն անոնց մեծ հօր հետ չի տեսնուիր։ Զարմանալի չէ՞ այդ բանս զոր քեզ կը յայտնեմ։ Բայց այդ զարմանալի չէ։ եթէ օրագիր մ'առնեմ, հայրիկն շուտ մ'իմ ձեռքէս կը քաշէ։ Կ'ուզեմ դիտնալ թէ ինչո՞ւ համար։

— Ինչու որ օրագիրներու մէջ շատ բաներ կան որ անմեղներին տղոց համար չեն, պատասխանեց Յովհաննա։

— Նայէ, մեծ մարդիկներուն պէս կը խօսիս, դիտել տուաւ Ֆլորանս, և միայն տասն և երեք տարեկան ես։ Մինթէ քիչ մ'իմաստա՞կ ես։ Բայց պիտի քաշուիմ, արդէն ուշ է և Միէդ կ'սպասէ որպէս զի հագուեցնէ զիս։

Ֆլորանս վազելով դուրս ելաւ և իր սենեակն մտաւ ուր Միէդ կ'սպասէր։

— Շուտ, շուտ, զիս հագուեցուր, ըսաւ Ֆլորանս։ Քիչ ատենէն ժամն ութը պիտի լինի և հազիւ ժամանակ ունիմ մեծ հայրիկին համբոյր մը տալու դասերս սկսելէն առաջ։

— Ինչպէ՞ս օրիորդ, գոչեց սպասուհին, Պարոնին մօտ չէ՞ր։

— Ոչ, Միէդ։ Յովհաննա Տը Լա Լիժէլին սենեակն է։ Ինչպէ՞ս կը գտնես զինքն։

— Ո՛հ. շատ սիրուն է, օրիորդ, շատ քաղաքավար, շատ անոյշ, և բոլորովին լաւ կրթուած։ Ա՛հ օրիորդ, եթէ անոր նմանէի։ Օրիորդ Մաղ Նէյլ կը ըսէ թէ օրիորդ Յովհաննա կատարեալ աղջիկ մ՚է։

— Անանկ կատարեալ աղջիկներ ճանճրանալի են, ըսաւ Ֆլորանս ծանրութեամբ, և միշտ պիտի նայիմ որ կատարեալ աղջիկ չ՚լինիմ։ Ես, կ՚ուզեմ զուարճանալ և ուրիշներն զուարճացնել։

— Կամ զանոնք կատղեցնել, յարեց Միէդ կամացուկ մը։

— Ինչո՞ւ չէ, ըսաւ Ֆլորանս։ Այդ ալ զուարճութիւն մ՚է։ Միէդ, դիս լաւ սանտրէ և մազերս վեր վերցուր. դիտես որ մեծ հայրիկն այդպէս կը սիրէ, և ինչպէս ինք կ՚ըսէ, ինձ փոքր սմսեղուկի կերպարանքն կուտայ։ Միէդ, մթէ աղո՞ր եմ. Յովհաննէն աւելի աղուոր, ըսէ նայիմ։

— Միշտ աղուոր ես, երբ բարի ես, պատասխանեց Միէդ փախստի կերպով։

— Ո՛հ, այդ կ՚ըսեն իբրև մխիթարութիւն տըգեղներուն համար, ըսաւ Ֆլորանս, բայց կը մտածեմ որ այնչափ չեմ։ Միէդ, նոր շրջազգեստս հագցուր, չեմ ուզեր որ Յովհաննա իրմէ աւելի աղուոր հագուած լինի։

Յովհաննա Տը Լա Լիժէլ իր նամակն շարունակած էր, երբ Ֆլորանս իրմէ բաժնուեր էր.

— Սիրելի մայրիկս, կը գրէր այն, Ֆլորանս հիմա եկաւ, գիրս ընդմիջեց յանկարծ՝ զինք սենեակիս մէջ տեսայ առանց կանխաւ լսելու իր գալուստն։ Եթէ գիտնայիր որչա՞փ աղուոր է։ Մեծ, մուգ կապոյտ աչքեր, փոքրիկ բերան մը, պզտիկ քիթ մը, սպիտակ ու բարակ կաշի մ՚ունի, և ամենէն գեղեցիկ մազերն, դեղձան մազեր, որ միշտ վեր կ՚ելլեն և իմ փոքրիկ եղբօրս մազերն ինձ կը յիշեցնեն։ Կուզեմ զանի սիրել, միայն այդ բոնին համար։ Բայց, սիրելի մայրիկս, քեզ խոստացայ, երբ բաժնուեցանք, իմ բոլոր տպաւորութիւններս քեզ յայտնել, լաւ ուրե՞մն, չեմ գիտեր արդեօք Ֆլորանս զիս պիտի սիրէ՞. և այդ գաղափարն զիս կը վշտացնէ։ Կը հաւաստեմ քեզ որ զարմանալի բնաւորութիւն մ՚ունի և ինչ որ իր գլխէն կ՚անցնի, կ՚ըսէ։ Հիմա, ինձ ըսաւ թէ հոգը չէ եթէ իմ բարեկամուհիս չ՚լինի, և թէ իմդէ պէտք չունի, վասն զի Հիւպերն ու Ռըմին ունի։ Հիւպերը ու Ռըմի իր հօր եղբօր որդիներն են։ Հոս մօտ կը բնակին, բայց զանոնք շատ քիչ անգամ կըրնայ տեսնել, ինչու որ իր մեծ հայրն կռուած է իր եղբօր հետ՝ որ այդ երկու նորատի տղոց մեծ հայրն է։ Բոլոր այդ բաներն ինձ շատ շուտ պատմեց։ Կարծեմ թէ չատախօս է, խօսքը մեր մէջ։ Ժիւլիէդին հակառակն է, Ժիւլիէդ շատ քիչ կը խօսի ու շատ մտիկ կ՚ընէ. իսկ Ֆլորանս շատ կը խօսի և պատասխաններն մտիկ չըներ։ Խե՜ղճ Ժիւլիէդ, արդէն զինք կը սիրեմ. ինչ տխուր բան է իր տարիքին մէջ այսպէս հիւանդ լինիլն։ Ամեն մարդ ինձ կ՚ըսէ թէ պահանջոտ է. այդ չեմ կրնար հաւատալ. և եթէ իսկ այդպէս լինէր . . . ։ Յովհաննա Տը Լա Լիժէլ հոն էր հասած երբ Միէդ եկաւ անոր ըսելու թէ օրիորդ Մաղ Նէյլ Ժիւլիէդին սենեակն իրեն կ՚սպասէ։ Շուտ մ՚իր նամակն իր ծծատեսրին մէջ դրաւ, ծը-

ծատեարն ալ սեղանին գզրոցին մէջ, և սպասուհւոյն հեռաւեցաւ։

— Բարի լոյս զաւակս, ըսաւ օրիորդ Մագ Նէյլ Յովհաննային, ղանի համբուրելով, այս գիշեր միթէ հանգի՞ստ էիր։

— Այո, օրիորդ, շնորհակալ եմ, պատասխանեց Յովհաննա, լաւ քնացայ։

— Զէ թէ ինձ պէս, դիտել տուաւ Ժիւլիէդ՝ ընդհակառակն, շատ երկայն ժամանակ արթուն մնացի։ Իրաւ է որ այդ ինձ այնչափ շատ կը պատահի որ . . . : Յովհաննա, ինչո՞ւ աւելի կանուխ չեկար իմ մօտ, յարեց փոքրիկ աղջիկն։

— Երէկ ինձ այդ մասին խօսք մը չըրիր, յայտնեց Յովհաննա կամացուկ։ Կը քաշուէի քեզ նեղութիւն տալու, առանց աղղարութեան գալով։ Կարծէի թէ ուշ կ'արթննաս։

— Ո՛չ, ընդհակառակն։ Այդուն կ'արթննամ։ Այն ատեն Միէդ ինձ պատմութիւններ կը պատմէ. բայց իր պատմութիւններն դիս կը ձանձրացնեն, միշտ նո՛յն են։ Միթէ դու աղուո՛ր ներ դիտե՞ս։

— Այո, մէկ քանի հատ։

— Ո՛հ, հիմա, հատ մ'ինձ պատմէ. ըսաւ խնդոյն Ժիւլիէդ։ Ամենէ տխուրն ընտրէ։

— Ոչ, ըսաւ այն ատեն օրիորդ Մագ Նէյլ։ Ժիւլիէդ, նախ նախաճաշիկդ պիտի ընես ու բարեկամուհիդ պիտի թողուս որ իրն ընէ։ Բայց, վերջապէս, Ֆլորանս ինչո՞ւ չերևիր։

Սենեակն ելնելով, կանչեց՝

— Ֆլորա՜նս. Ֆլորա՜նս։

Ֆլորանս պատասխան չ'տուաւ։ Պահ մ'անոր ըսպասելէն ետք, օրիորդ Մագ Նէյլ վրայ բերաւ՝

— Առանց անոր մեր նախաճաշիկն ընենք. արդէն ժամն ութ քառորդ անցած է։

Միէդ Ժիւլիէդին անկողնին սեղան մը մօտեցուց և անոր վրայ դրաւ ու տուրմ։ Թէյն օրիորդ Մագ Նէյլին համար էր (ամեն առտու իր աշակերտներուն հետ նախաճաշիկն կ'ընէր։) տուրմն աղջկանց համար էր։

Առանց ախորժակի ուտելէն ետք, Ժիւլիէդ Յովհաննային հետ խօսեցաւ։ Պատմել տուաւ իր նորատի բարեկամուհւոյն չէ թէ պատմութիւն մը, այլ Բարիզ անցուցած օրերն։

Յովհաննա, այն ատեն, իր մօր, իր քոյրերուն ու իր փոքրիկ եղբօր վրայ խօսեցաւ՝ պարզապէս ամեն բան պատմեց, բայց զգացումով, յուզմամբ՝ իր սիրտը ա՞յնքան լեցուն էր այդ սիրելի արարածներուն յիշատակով։

Ժիւլիէդ անոր մտիկ կ'ընէր, և ուշադիր մտիկ կ'ընէր՝ խօսակցութենէն բառ մը չէր կորսնցներ։ Եւ օրիորդ Մագ Նէյլ, ոչ նուազ ուշադիր նորատի աղջկան, աւելի ևս կրնար համոզուիլ, թէ որքան կատարեալ կրթութիւն առած էր այդ աղջիկն։ Յանկարծ դուռն բացուեցաւ, և Ֆլորանս փոթորկալի հովի մը պէս ներս մտաւ։ Ժիւլիէդ դողաց՝ ամենէ շնչին աղմուկն զինք անհանգիստ կ'ընէր։

— Կամաց, կամաց, աղջիկս, ըսաւ օրիորդ Մագ Նէյլ, քիչ մը քրոջդ մտածէ ու այնքան աղմուկ մի հաներ։ Ինչո՞ւ այսչա՛փ ուշ եկար։ Տուրմը վերցուցին՝ այս առտու միայն հաց պիտի ուտես։

— Բնաւ փոյթս չէ, գոչեց Ֆլորանս. հիմա սիրելի մեծ հայրիկիս թէյին կէսը խմեցի։ Ընտիր է թէյն, իր բաժակին մէջ . . . ։ Տուրմէ աւելի լաւ։

— Քիչ մը կամաց խօսիր, Ֆլո, գլուխս կը ցաւի, ըսաւ Ժիւլիէդ իր քրոջ։

— Հաւատալի չ'երևիր, պատասխանեց Ֆլորանս, աչերդ մեծ մեծ բացեր ես։ Երբ ես գլխի ցաւ ունենամ, աչերս բոլորովին կը պզտիկնան։ Իրաւոր, Լիէդ գլխի ցաւ չունիս։

— Ինչո՞ւ Յովհաննային բարի լոյս չես ըսեր. հարցուց օրիորդ Մագ Նէյլ Ֆլորանսին։

— Արդէն զանի տեսայ, պատասխանեց փոքրիկ աղջիկն։ Այս առտու, առաջին այցս անոր ըրի։

— Ա՜հ. անոր համար է որ աւելի կանուխ քոյս չեկար, Յովհաննա, ըսաւ Ժիւլիէդ դժգոհ։

— Նայէ՛, նախա՜ճն. գոչեց Ֆլորանս, իր քոյրն մատնանիշ ընելով։ Ո՜հ, որչա՜փ վատ բան է նախանձն։ Բայց մի վախնար քու Յովհաննադ չեմ ուզեր քեզմէ առնել. բաւական զուարճալի չէ. ոհ ո՜չ։

— Ֆլորանս, լռէ, ըսաւ օրիորդ Մագ Նէյլ խստութեամբ։ Ատեն ատեն կարծես թէ սիրտ չունիս։

— Ոհ ո՜չ, բարի օրիորդս, գոչեց փոքրիկ աղջիկը Անգլիուհւոյն ծունկերուն վրայ ցատկելով։ Գիտես որ այդպէս չէ . . . այդ չի կրնար լինիլ . . . ։ Ֆլո շատ սիրտ ունի, բարի փոքրիկ սիրտ մը. ամեն մարդ այդ կ'ըսէ։

— Բայց անպիտան գլուխ մը, յարեց օրիորդ Մագ Նէյլ, փոքրիկ աղջկան գգուանքներէն դինաթափ։

— Ո՜հ գլուխն, ըսաւ այս վերջինն, երեսը կախելով, ի՞նչ կ'ընէ գլուխն։ Գլուխս ինչ որ է այն է։ Չեմ կրնար զայն փոխել . . . ։ Մի՞թէ մարդ իր գլուխն կրնա՞յ փոխել։

Պահ մը կանգ առաւ, մտածեց, ապա վրայ բերաւ.

— Աղուոր բան մ'ունիմ ձեզ ըսելու, և քիչ մնաց պիտի մոռնայի։ Այսօր դաս չունինք, օրիորդին շնորհիւ, յարեց, Յովհաննային թեթև բարև մը տալով։

— Ժիւլիէդ դաս չունի, այդ գիտեմ, ըսաւ օրիորդ Մագ Նէյլ. բայց ոչ դու, զաւակս։ Հայրդ որոշեց որ աշխատիս, գոնէ միայն առտու։

— Այո, երեկուան չարութեան համար, պատասխանեց Ֆլորանս անհոգութեամբ։ Կարծես թէ դիս բանտը դնելն բաւական չէր։ Հայրիկն երթալով չափէ դուրս անտանելի խստութիւն մը կը բանեցնէ։ Բարեբաղդաբար, մեծ հայրիկն մնա է։ Այս անգամ հայրիկին հասկցուց որ նա իրաւունք չունի, ամեն արգելք վերցուց, և . . . ։

— Ֆլորանս, ընդմիջեց այն ատեն օրիորդ Մագ Նէյլ, հոգդ վրայ աւելի յարգանօք խօսիր, զաւակս։

— Վերջապէս դաս չունիմ, ըսաւ փոքրիկ աղջիկը իր սկսած խօսքն հանդարտ աւարտելով։

— Ուրեմն երախտագիտութիւնդ հօրդ ցոյց տուր օրանակելի իմաստութեամբ, պատասխանեց օրիորդ Մագ Նէյլ։

Ապա, և այս անգամ իր խօսքն երկու քոյրերուն ուղղելով.

— Ինչպէ՞ս կը մտածէք գործածել ձեր արձակուրդն, հարցուց։

— Ես, կ՚ուզեմ Յովհաննային հետ բոլոր օրն խօսիլ և տունն մնալ, ըսաւ Ժիւլիէդ։

— Եւ ես ալ դուրս ելնել կ՚ուզեմ, ըսաւ Ֆլօրանս։

— Լաւ ուրեմն, զաւակներս, թող այդպէս լինի, վրայ բերաւ օրիորդ Մագ Նէյլ։ Յովհաննա և Ժիւլիէդ հոս պիտի մնան, և, դու Ֆլօրանս, ինձ հետ շատ երկար պատմ մը պիտի ընես։ Կառքը պիտի խնդրեմ։

— Բայց ո՞չ, գոչեց փոքրիկ աղջիկն։ կ՚ուզեմ հետիոտն ելնել. պէտք ունիմ ոտքերս շարժել։ Բաց ատի կ՚ուզեմ որ Յովհաննան հետս գայ։

— Յովհաննա պէտք է որ քրոջդ հետ մնայ, զաւակս։

— Ա՜հ, միշտ նոյն բանն է. գոչեց Ֆլօրանս, ոտքը գետինն զարնելով։ Միշտ Ժիւլիէդ, երբէք ես։

Վերջէն, յանկարծ հանդարտելով և իր քրոջ մօտենալով, անոր ըսաւ.

— Լիէդ, քեզ կ՚աղաչեմ, հաւանէ այսօր ինձ հետ պտտելու։

— Ո՛չ, պատասխանեց Ժիւլիէդ, յոգնած եմ. չեմ ուզեր դուրս ելնել։

— Ի՞նչ վնաս ունի այդ, հարցուց Ֆլօրանս, քանի որ չես կրնար քալել։ Այո՛ ըսէ, շարունակեց աւելի անոյշ ձայնով. կէս օրէն վերջ ջրվէժն կ՚երթանք, թէ և այդ տեղն չեմ սիրեր։

— Այո ըսէ, շարունակեց, այս անգամ բարձրա-

ձայն։ Ա՜հ. միտքս ուրիշ բան մ՚ալ ընկաւ, կառքն ես պիտի քշեմ. նախ, առանց քեզ ցնցելու. կը խոստանամ այդ։

— Ոչ, ոչ դու. ըսաւ այն ատեն Ժիւլիէդ. Յովհաննա պիտի քշէ կառքս։ Կ՚ուզես, այնպէ՞ս չէ, Յովհաննա։

— Անշուշտ, պատասխանեց Յովհաննա։

— Այն ատեն, ամեն բան կարգի մտած է, գոչեց Ֆլօրանս զուարթաղին։

Ապա խօսքն օրիորդ Մագ Նէյլին ուղղելով, յարեց.

— Օրիորդ, հիմա համաձայն ենք, ամենքս ալ դուրս պիտի ելնենք։ Եւ ահա առաջարկս, այս առտու գործատունը պիտի այցելենք։

— Այս օրուան համար այդ անկարելի է՝ դիտել տուաւ օրիորդ Մագ Նէյլ։ Հայրդ շատաւոր գործ մը կը լմնցնէ որու տուած է բոլոր ժամերն, և չուզեր որ առանց իր ընկերութեան գործատունն երթաք։

— Նոյն իսկ մեծ հայրիկին հետ . . . ձեր հետն, օրիորդ . . . ։

— Աւելի մի պնդեր, զաւակս, գիտես որ այդ մասին հօրդ հրամանն կը կատարուի։

— Մեղք, ըսաւ Ֆլօրանս, կը փափաքէի գործատունն Յովհաննային ցոյց տալ, նոյնպէս մեծ Սամինիէնը։

Եւ Յովհաննային դառնալով, փոքրիկ աղջիկն բացատրեց.

— Սամինիէն գործատան գործաւորներէն մին է,

կամ աւելի լաւ վերակացուներէն մէկն։ Հայրիկն ա-
նոր վրայ գովեստով կ'խօսի։ Մեծ հայրիկն անոր
վրայ վատ գաղափար ունի։ Ես, մեծ Սավինիէնը
շատ կը սիրեմ. նախ, շատ բարի ու կամակատար է,
և երկրորդ կը մտածէ (գիտեմ այդ) որ շատ սի-
րուն եմ։

Պահ մը լուռ մնաց, բայց չուտ մը վրայ բերաւ.

— Գիտէք, որովհետև չենք կրնար գործատունն
երթալ, պէտք է որ դպրոցներն այցելենք։ Մեծ
հայրիկին պիտի հարցնեմ թէ, արդեօ՞ք կրնայ մեզ
ընկերանալ։ Որչա՜փ զուարճաբան է դպրոցական-
ներուն հետ։ Առաջ, պէտք է որ մեր դպրոցներն
ճանչէ։ Գիտես Յովհաննա, հայրիկն չինեց զանոնք։

Եւ անմիջապէս, առանց ուրիշի մը խօսելու ժա-
մանակ տալու, Ֆլորանս շարունակեց.

— Կէսօրէն ետք ալ, Մէժ – Լա – Ժոլիէն (գեղեցիկ
Մէժ) ջրվէժն պիտի երթանք։ Ժիւլիէդ այդ տեղն
շատ կը սիրէ։ Կ'ըսէ թէ շատ զուարճալի է նայիլ
ջուրն որ բոլորովին փրփուրով սպիտակ ժայռերուն
վրայ կը թաւալի ու վար գլորելով մեծ կարկաջ կը
հանէ, այնչա՜փ որ ականջին թմբուկն կը խորտակէ։

Եւ որովհետև աղջիկներն օրիորդ Մագ Նէյլին
հաւանութեան կ'սպասէին, այն ըսաւ.

— Լաւ, քանի որ այդպէս կ'ուզէք, այս առտու
դպրոցներն պիտի այցելէք և կէս օրէն վերջ ջրվէ-
ժըն։

Ֆլորանս աներևոյթ եղաւ երբ ընտիր վարժու-
հին այս վերջի խօսքերն կ'արտասանէր. քիչ ատենէ
ետք եկաւ ու ներս մտնելու ժամանակ գոչեց.

— Մեծ հայրիկն կը հաւանի մեզ հետ դպրոց-
ներն երթալու։ Մեզ կ'սպասէ, պատրաստուինք։

Պատրաստութիւններն երկայն չ'տեւեցին. միայն
որքան ժամանակ պէտք էր, երեք աղջկանց, իրենց
գլխարկներն դնելու համար։ Այլ Միկդ իր թեւե-
րուն վրայ Ժիւլիէդն առաւ, վար իջեցուց ու փոքր
կառքի մը մէջ դրաւ ուր կրնար երկնցած նստիլ,
բացատրեց Յովհաննա Տը Լա Լիժէլին թեթև կառ-
քըն քշելու կերպն ու հեռացաւ։

— Մեծ հայրիկ, կուգա՞ք. կը պոռար Ֆլորանս
այդ միջոցին։

Մեծ հայրիկն վերջապէս երևցաւ։ Հագած էր
ճերմակ ու սևագիծ հագուստ մը և յարդեայ լայ-
նածիր գլխարկ մը։

— Տէսէք մեծ հայրիկն մշակի հագուստով, գո-
չեց Ֆլորանս զմայլած։ Նայէ, Յովհաննա, որչա՜փ
գէր է։

Իրաւ էր որ այս հագուստն Պարոն Ժերալտին
հօր գիրութիւնն չեր կարող ծածկել։

— Բարի լոյս, մեծ հայրիկ, ըսաւ այն ատեն Ժիւ-
լիէդ որ իր մեծ հայրն դեռ տեսած չէր։

— Բարի լոյս, աղջիկս, Աստուած քեզ պահէ,
պատասխանեց ծերունին։

Այս ըսելով ծռեցաւ ու իր թոռին ճակտին
համբուրեց։ Երբ կանգնեցաւ, բոլորովին կարմրած
էր ու աղմկալի կերպով շունչ կ'առնէր։

— Մեծ հայրիկ, միթէ կը մեկնի՞նք, հարցուց
Ֆլորանս միշտ անհամբեր։

— Հրամանիդ, պատրաստ եմ, փոքրիկ աղջիկ,
պատասխանեց Պարոն Ժերալտ։

Ապա, Յովհաննային ամչկոտ բարևին պատասխանելով, շարունակեց.

— Բարի լոյս, բարի լոյս, պղտիկ աղջիկս, եկուր դու ալ, տուր ինձ ճակատդ համբուրելու, և իզմէ մի վախնար. այնքա՛ն դէր եմ որ չեմ կրնար չարլինիլ։

Յովհաննա քիչ մը վարանելով մօտեցաւ։ Այս ծերունին որ իր կերպերուն մէջ այնքա՛ն բարի էր, այս ծերունին զոր իր բարեկամներն «էրոն մրմռն» անուանած էին, իրեն վախ չէր ազդեր. ընդհակառակը բայց կը յիշէր որ (Ֆլորանս իրեն այդ ըսեր էր իր մայրն անոր կողմէ պարսաւ ընդունած էր։

— Օ՜ն, ճամբայ ելնենք, զաւակներս, յարեց Պարոն Ժէրալտ հայր, դպրոցներուն կողմը քանի մը քայլ առնելով։

Ֆլորանս այն ատեն երկու կամ երեք անգամ ցատկեց, ապա սկսաւ առջևէն վազել։

Ծերունին քանի մը վայրկեան լուռ ու մունջ քալեց. ապա, դառնալով, ու տեսնելով թէ Յովհաննա Ժիւլիէդին կառքն կը քշէր, դժգոհութեամբ գոչեց.

— Է՜հ. ինչպէ՞ս. ի՞նչ կը նշանակէ այդ։ Մինթէ, միաք ունի՞ս, փոքրիկ աղջիկ, այսպէս յոգնելու. Միէդ ինչո՞ւ հոս չէ. իր գործն է այդ և չէ թէ քուկդ։

— Մեծ հայրիկ, յայտնեց Ժիւլիէդ, ես ուզեցի որ Յովհաննա կառքս քշէ. այդպէս կը փափաքիմ։ Օրիորդ Մագ Նէյլ ալ իր հաւանութիւնն տուաւ։

Պարոն Ժէրալտ հայր ուսերն թօթուեց։

— Օրիորդ Մագ Նէյլն ալ մրմռաց նա, քթին տակէն, կարծէի թէ աւելի խելացի է։ Իրաւ է որ խենդութեան հով մը տան վրայէն անցաւ։ Ժէրալտ որդիս, Ժէրալտ, ամենէ իմաստուն մարդն, ահա իր աղջկան, հազիւ տասն երեք տարեկան, ընկերակից օրիորդ մը կ՚տայ։ Օրիորդ Մագ Նէյլ, խոհեմ և իմաստուն Անգլուհին, այդ խեղճ փոքրիկ աղջիկն կը յանձնէ հիւանդ ու ապիկար մանկան մը քմահաճոյքին։ Եթէ այդ բանն կարգի չի դրուի, Ժիւլիէդ չարաչար պիտի գործածէ այդ վիճակը։ Բայց, ի՞նչ բաներու վրայ կը մտածեմ։ Մինթէ կարծիքս հարցուցի՞ն։ Ոչ . . . . : Լաւ ուրե՛մն, ձեռքերս կը լուամ այդ մասին։ Սակայն, սիրուն է այդ փոքրիկն իր անուշ աչքերով և կէս վշտագին կէս երկչոտ դէմքով, որու ամենքն կը նային։

Այսպէս մեկուսի խօսելով, Պարոն Ժէրալտ հայր բաւական կը քալէր. և Յովհաննա, Ժիւլիէդին կառքը քշելով նեղութեամբ կը հետևէր։

Իսկ Ֆլորանս այլ ևս չէր վազեր. իր մեծ հօրմէն կը բաժնուէր ու Ժիւլիէդին մօտ կ՚երթար, և Ժիւլիէդն իր մեծ հօր մօտ։ Կարևոր բանն իրեն համար շատ շարժիլն էր։

Վերջապէս աղջկանց դպրոցն հասան որ Լաստենիքի քաղաքին առջևն էր, (տղոցն քիչ մ՚աւելի հեռու էր։) Երկու մայրապետ այս դպրոցին աշակերտուհիներն կը կրթէին։

Անոյմէ մին, ամենէ նորատին, եկաւ Պարոն Ժէրալտին ու աղջկանց առջև, և հրամցուց զանոնք մաքուր ու օդաւէտ դասարան մ՚ուր կային մինչև

քառասուն փոքրիկ աղջիկ, հինգէն մինչև տասն երկու տարեկան։

Ամենքն ալ ոտք ելան երբ այցելուներն ներս մտան և խոնարհութիւն մ'ըրին. ապա իրարու մըջտելով Յովհաննա Տը լա Լիժէլ զոր դեռ տեսած չէին իրարու ցոյց տուին։

— Լաւ ուրեմն, սիրելի մայրապետ, հարցուց Պարոն Ժէրալտ, երկու կոյսերուն ամենէ տարեցին խօսքն ուղղելով. ձեր աշակերտուհիներն ալ ամենն խելո՞ք են։ Պատժապարտներ չեմ տեսներ, ձեզ այդ մասին կը շնորհաւորեմ։

— Իրաւ է, Պարոն, մեր բոլոր փոքրիկ աղջիկները չատ խելոք են, պատասխանեց բարի մայրապետը յայտնի գոհունակութեամբ, և չատ առաջ կ'երթան։ Միթէ կ'ուզէ՞ք իրենց տետրակներն ու գծագրութիւններն տեսնել։ Միթէ կը հաճիք լսել թէ առակ մ'ինչպէ՞ս կ'արտասանեն։

— Ոչ, ոչ, գոչեց ծերունին, փոյթս չէ բնաւ։ Փոյթս չէ բնաւ որ այս պզտիկ աղջիկներն Լա Ֆոնդէնին կամ Ֆլօրեանին առակներն գիտնան, որ բոլորագիր կամ միջնագիր գրեն, որ բոլորակ մը գծեն կամ տերևի մը ստուերն ուրուագրեն։ Ոչ, ոչ, թող իրենց գիտցածն Պարոն քննիչին համար պահեն։ Չեմ բանբասեր Պարոն քննիչն բնաւ. ընտիր անձ մ'է, զոր կը սիրեմ և որու համար յարգանք ունիմ, թէև իր գաղափարներն ամեն բանի վրայ իմ գաղափարներուս տրամագծապէս հակառակն են։ Ձեզ կ'ըսէ. (և Ժէրալտ որդիս ալ այդ կ'ըսէ,) ձեզ կ'ըսէ. թուաբանութիւնն առջև տարէք, իրաբանութեան

դասերն չատցուցէք, այդ փոքրիկ աղջկանց գծագրել սորվեցուցէք։ Եւ ես ձեզ կ'ըսեմ, սորվեցուցէք անոնց կար կարել, գուլպա գործել, լաթ լուալ։ Ա՜հ, եթէ Ժէրալտ ըսածս մտիկ ընէր։

Բարի մայրապետն ժպտեց. սովորած էր Պարոն Ժէրալտ հօր խօսքերուն։

— Ֆլօ, աջ գրպանիս մէջ քիչ մը փնտռէ, ըսաւ ծերունին իսկոյն։

Ֆլօ սահեցուց քանի մ'անգամ իր փոքրիկ ձեռքերն իր սիրելի մեծ հայրիկին գրպանին մէջ և ամեն անգամ հանեց (անոր գրպաններն ճշմարիտ պարկերու կը նմանէին) շաքարեղէններ զոր տուաւ Դպրոցին փոքրիկ աղջկանց։

Նոյն պահուն Յովհաննա Տը լա Լիժէլ Ժիւլիէդին քովն մնացեր էր, որու կառքն մինչև դասարանին դուռը քշած էր։ Առաջին կրօնուհին, ամենէ նորատին, աղջկանց հետ կը խօսակցէր։

— Լա՜ւ ուրեմն, օրիորդ Ժիւլիէդ, կ'ըսէր նա փոքրիկ հիւանդին, անոր առողջութեան վրայ լուր հարցնելէն ետք, անշուշտ գոհ եք, վերջապէս ձեր ընկերակից օրիորդն ունիք։

— Կ'ուզէք ըսել, բարեկամուհիս, մայրապետ, դիտել տուաւ Ժիւլիէդ։

— Այո, ձեր բարեկամուհին, ըսաւ կրօնուհին։ Վստահ եմ որ զայն արդէն կը սիրէք, յարեց նա։ Շատ սիրուն կ'երևի։

— Ճշմարիտ է այդ, չատ սիրուն է, պատասխանեց Ժիւլիէդ։ Ո՜հ, չվախնար ամեն քմայքս կատարելու, նայեցէք, օրինակի համար, այսօր, Միլդին տեղ, ինքն կառքս քշեց։

Վերջէն խօսքն իր նորատի ընկերուհւոյն ուղղելով

— Յովհաննա, միթէ յոգնա՞ծ ես. հարցուց նա։

—Ոչ, Ժիւլիէդ, պատասխանեց Յովհաննա. կառքը շատ թեթև է ու լաւ հաւասարակշիռ է։

— Շատ ծանր ալ չեմ, դիտել տուաւ Ժիւլիէդ։ Բայց ահա մեծ հայրիկն կ'երթայ։

— Մեծ հայրիկ, յարեց նա, խօսքն Պարոն Ժէրալտին ուղղելով, կ'ուզեմ էսդէլ մայրապետին հետ մնալ, մինչդեռ դու տղոց դպրոցն պիտի այցելես։

— Էսդէլ մայրապետին հետ կեցիր, ըսաւ մեծ հայրն։ Երբ վերադառնանք քեզ կ'առնենք։

Եւ հեռացաւ Ֆլորանսին հետ որ Յովհաննա Տը լա Լիժէլին ձեռքն բռներ էր։

Տղոց դպրոցին այցելութիւնն միայն քանի մը վայրկեան տևեց, միայն այնքան ժամանակ որքան Ֆլորանս պէտք ունէր իր մեծ հայրիկին ձախ գրպանին մէջէն խաղալիքներ հանելու, չնչին փոքրիկ առարկաներ, ինչպէս, գնդիկներ, ջանչաններ, կապարեայ զինուորներ, շաքարեղէններ և զմայլած դպրոցականներուն բաժնել, այնքան ժամանակ որքան պէտք էր փոքրիկ աղջկան՝ կարմ, ուժեղ ուշիմ, տաս տարեկան տղայի մը մնաեանալ, Փըդի-Բիէր (պզտիկ Պետրոս) անուն, և անոր ըսել.

— Բեղ վեց աղուոր գնդիկ և շաքարեղէն պիտի տամ, Փըդի-Բիէր, բայց պայմանաւ որ երբ դըպրոցէն ելնես, հին դղեակն երթաս, և Հիւպէրին ու Ռըմիին ըսես թէ ժամն երկուքին Մէժ-լա-Ժօլիին ջրվէժն դտնուին։

— Ամեն ինչ որ ուզէք, պատրաստ եմ ընելու,

պատասխանեց Փըդի-Բիէր, իր վեց գնդիկներն և իր շաքարեղէնն գրպանին մէջ դնելով, և օրիորդ Ֆլորանս չնորհակալ եմ։

Մէկ քանի վայրկեան ետք, Ֆլորանս զուարթագին Լաստենի — տան ճամբուն վրայ էր, իր մեծ հօր, Ժիւլիէդին ու Յովհաննային հետ։

— Շատ ու շատ լաւ, կը խորհէր փոքր աղջիկն, այս ըրածս գործերն լաւ կարգադրել, կ'ըսուի. բայց ես միշտ գործերս լաւ կը կարգադրեմ։ Դպրոցը Փըդի-Բիէր գտայ. եթէ գործատուները այցելէին, իր եղբայրն, մեծ Պետրոսը պիտի գտնէի և ի հարկին Սավինիէն։ Երկուքն ալ ուրախութեամբ ապսպրածս կը կատարէին։ Պէտք է խոստովանիլ թէ շատ հաճելի բան է ամեն տեղ բարեկամներ ունենալ։

ԳԼՈՒԽ Զ.

ՄԷԺ-ԼԱ-ԺՕԼԻԻՆ ՋՐՎԷԺՆ

Օրիորդ Մագ Նէյլ միտք դրած էր Ժիւլիէդին, Ֆլորանսին ու Յովհաննային ընկերանալ պատոյտին ժամանակ զոր կէս օրէն վերջ պիտի ընէին։ Այցելու մ'եկաւ և արգիլեց որ դուրս ելնէ, ինչպէս որ մըտադրեր էր ընելու. և աղջիկներն միայն Միէդին հետ ժամն երկուքին մեկնեցան։

Մէժ-լա-Ժօլիին Ջրվէժն՝ ուր երեք աղջիկներն

կ'երթային Պարոն Ժէրալտին բնակարանէն, մէկ մը-ղն հեռու էր։

Վայրի տեղ մ'էր որ շատ կը տարբերէր այն հանդարտ տեղէն ուր կը գտնուէին Լաստենիք։ Կը-նային կարծել թէ ուրիշ երկրի մը մէջ կը շրջէին. այնքան այդ կողմերն յանկարծ փոխուած տեսան։

Այլ ևս չ'կար այն հարթ ու բերրի հողն, մերթ արտ, մերթ մարգ որ ճամբայներով կտրուած էին, և որոցմէ մին գեղեցիկ Լաստենիներէ շրջապա-տուած էր. բայց հոս ոչ անտառուտ բլուրներ, այլ ժայռեր և աստիս անդին մեծաւոր կիրճեր։

Այդ ժայռէն հոսած երկու գետակներու ջու-րերն կը կազմէին Մէժ – լա – ժօլիին ջրվէժն։

Իր սովորութեան համեմատ (վասն զի ամեն պը-տոյտի այդպէս կ'ընէր) Ֆլօրանս ջրվէժն երթալով առջևէն կը քալէր։ Երգելով կը վազէր, ատեն ատեն կանկ կ'առնէր, ծաղիկ մը քաղելու կամ պզտիկ քար մը զետնէն առնելու համար։ Յովհաննա հանդարտ կը քալէր, ժիւլիէդին կառքին մօտ, զոր այս անգամ Միէդ կը քշէր։

Երկու աղջիկներն չէին խօսեր։

Ժիւլիէդ, յոգնած իր առտուան պտոյտէն և ա-մառնային օրուան մը տաքութենէ, աչքերն դոցեր էր և կարելի է կը քնանար։ Իսկ Յովհաննա կ'երա-զէր, կամ աւելի ճիշտ խօսելու համար, քիչ մ'ան-ցեալ օրերուն մէջ կ'ապրէր. իրաւ է որ այդ անցե-ալը չատ հեռու չէր. ինչու որ հազիւ երկու օր ա-ռաջ էր. բայց, վերջապէս իրեն համար անցեալ մ'էր։

Յովհաննա կարծէր տեսնել իր մայրն, իր քոյրե-րը, իր փոքրիկ եղբայրն վերջին մնաս բարևին ժա-մանակն, կարծէր իր այտերուն, իր ճակտին վրայ անոնց համբոյրներն և արտասուքներն զգալ. վեր-ջէն շոգեկառքի մը մէջ կարծէր գտնուիլ, Մաքսիմ Նաւապետն՝ որու ուսին վրայ յենած էր, իր քովը նստեր էր։ Պզտիկ ծերունի մ'իր դիմացն նստած, իր ակնոցին վրայէն անոր կը նայէր. տգեղ էր այս փոքր ծերունին իր երկայն կրկնոցովն ու թաւիշէ խոյրովն։ Բայց ահա Ռոպեսպի կայարանն . . . ։ Յովհաննա կառքէն կ'իջնէ . . . ։ Հոն օրիորդ Մագ Նէյլն կը գտնէ. հոն հարկ է Մաքսիմ Նաւապետէն բաժնուիլ։ Յովհաննա, մինչև այն ժամուն այնքան ուժեղ, յանկարծ կը տկարանայ ու կը գոչէ. «ո՜չ, ո՜չ, չեմ ուզեր ալ։» Նաւապետն զանի իր թևե-րուն մէջ կը սեղմէ և անոր այս քանի մը խօսքերը կ'ըսէ, «արիացիր աղջի՛կս, պարտքդ հոս է։» Եւ իսկոյն աներևոյթ կ'լինի։

Յովհաննա քալելով այս բաներն նորէն մտովին տեսեր էր, և իր գտնուած տեղն մոռցեր էր։ Ֆլօ-րանս զանի յանկարծ իրականութեան բերաւ։

— Վերջապէ՛ս եկանք, ըսաւ նա, Յովհաննային թևին դպելով։ Յովհաննա, ահա՛ այս է ջրվէժն։ Նայէ՛, որչա՜փ անշահ տեղ մ'է։

Այդ ըսելով, փոքրիկ աղջիկն մատնանիշ կ'ընէր բոլոր երկրին ամենէ աղտոտ ջրվէժներէն մին։

Այսպէս կոչուելով, Յովհաննա սարսուռ մ'ունե-ցաւ, և Ֆլօրանս այս բանին վրայ արտասուելու չափ խնդաց։

— Լա՜ւ ուրեմն, հարցուց նա, ի՞նչ ունիս, միթէ քալելու ժամանակդ կը քնանա՞ս։ Բայց, երկու աչքերդ մեծ մեծ բացեր ես։ Ա՜խ. գիտեմ, քնաչրջիկ ես։

Յովհաննա ժպտեց և Ֆլորանսին բացատրել ուզեց թէ ամենևին քնաչրջիկ չէ, այլ իր մտածումներով համակուած. բայց Ֆլորանս արդէն հեռու էր։

Պահ մ'ետք, Յովհաննա զանի տեսաւ միւսներէն նուազ բարձր, այլ աւելի հպելի ժայռի մը վրայ ուր փոքրիկ աղջիկն տրամաղիր կ'երևէր քիչ մը մնալ։ Իրօք, ժայռին վրայ նստեր էր, թէև ոչ այնքան հանգիստ, և ճամբուն վրայ քաղած ծաղիկներով փունջ մը կը չինէր։

Բայց Յովհաննա այլ ևս Ֆլորանսին չ'նայեցաւ, որպէս զի հետևի Ժիւլիէդին, որ աչքերն նորէն բացեր էր և Միէդին նշան ըրեր էր, որ իր կառքն նեղ կիրճի մը մէջ քշէ, իր հաւնած տեղերէն մէկն։ Հոն տրև չ'կար և ջրվէժն բոլորովին կը տեսնուէր. երկու պայմաններ որ նորատի հիւանդին շատ փափաքելի էին։

Նոյն պահուն, Ֆլորանս իր ժայռին սարին վրայ կ'սկսէր անհամբերութեան նշաններ ցոյց տալ։ Եալած էր իր աթոռէն. իր փունջը նետած ու կանգուն կեցած կը նայէր, չէ թէ ջրվէժին, այլ շուրջը գըտնուած ճամբայներուն վրայ։

— Ինչո՞ւ չեն գար, կ'ըսէր իր քթին տակէն։ Արդեօք Փըղի–Բիէր ապսպրածս չի կատարեց։

Ապա, քանի մը վայրկեան սպասելէն ետք ըսաւ.

— Ահա՜ կուգան։ Փըղի–Բիէր ապսպրածս կատարեց։

Ֆլորանս իր թաշկինակն իր գլխուն վրայ տատանելով, բոլոր ոյժովը պոռաց.

— Ասկի՜ց. ասկից. չո՜ւտ ըրէք։

Այն անձերն, որոց ուղղուած էին այս խօսքերն, երկու նորատի տղայք, մին տասն մէկ, միւսն տասն երեք տարեկան, սկսան վազել. և Ֆլորանս՝ որ իր ժայռէն իջած էր, գնաց ճամբուն միւս կողմէն, առնոց սպասելու համար։

— Բարև, Ֆլո, գոչեցին երկու տղայք միասին երբ փոքրիկ աղջկէն քսան քայլ հեռու էին։

— Բարև Հիւպէր, բարև Ռըմի, պատասխանեց այս վերջինն։

Հիւպէր ու Ռըմի (երկու եղբայրներն) իրարու ամենևին չէին նմաններ։

Անդրանիկն, Հիւպէր, քիչ մը պղնձագոյն, իր տարիքին համար փոքր էր, բայց ուժեղ, քաջառողջ, կորովի։ Իսկ Ռըմի, ընհակառակն, երկայն, նիհար, դեղձան էր, և փափուկ կերպարան մ'ունէր։

Երկուքն ալ հագած էին քուղիլէ հագուստներ, և սպիտակ կտաւէ գլխարկներ։ Երկուքին սրունքն մերկ էին։

Հիւպէր իր խոյրին վրայ դրած էր առ նուազն տասն երկու փետուր. հաւ, խայտահաւ, հնդկահաւ, աղաւնոյ փետուրներ զոր իր մեծ հօր քանի մը թռչուններէն առած էր։ Կոտրած դաշոյն մ'ունէր. ձեռքն աղեղ մը բռնած էր և ուսէն հրացան մը կախած էր։ Որչա՜փ կ'ուզէր որսի դանակ մը, կամ աւելի լաւ տապար մ'ունենալ։ Կը սիրէր վայրենոյ պէս խաղալ։ Մայն–Ռէտի գիրքերն կարդացած էր և

այս ընթերցումով այդ ամերիկացի վայրենիներուն համար սէր կը տածէր։ Հիւպէր անոնց ամեն բաներուն վրայ կը սքանչանար, ամեն բանի վրայ . . . մինչև անգամ անոնց կտածին վրայ։

Օր մ'իր մեծ հայրն գտած էր զանի որ իժ մը կը նկարէր իր թևին վրայ. կարմիր, կապոյտ, կանանչ պոչով մը։ Այդ օրն, նորատի տղան, պատժուեցաւ։ Կտածումն իրաւի թողուց, բայց առատ փետուրներ գործածեց։

Ռըմի իր եղբօր ճաշակը չունէր. բայց անոր հաճելի լինելու համար կը խաղար ինքն ալ վայրենւոյ պէս. թէև առանց եռանդի։ Հիւպէր զինք կը սաստէր իր քիչ եռանդին մասին. ատեն ատեն, դըժգոհ, կ'ըսէր իր եղբօրն, իր փափուկ դէմքին ակնարկելով.

— Դո՛ւն, միայն դժգոյն երես մ'ես։

Երկու նորատի տղայք Ֆլօրանսը շատ կը սիրէին։ Ֆլօրանս ալ զանոնք կը սիրէր, բայց չէր գիտեր, ո՞րն ամենէն շատ կը սիրէ։ Հիւպէրին յանդուգն բնաւորութիւնն շատ կը հաւնէր. բայց Ռըմի միշտ իր քմայքն կը կատարէր։

— Երկուքն ալ սիրուն են, կը մտածէր փոքրիկ աղջիկն, և երկուքն ալ հաւասարապէս կը սիրեմ։

Փոքրիկ աղջկան առաջին հոգն եղաւ, երբ երկու եղբայրք ճամբուն վրայ անոր մօտեցան, անոնց շուտ մ'ըսել.

— Գիտէ՞ք, մեր տունն նոր բաներ կան։ Յովհաննա Տը լա Լիժէլ էրէկ գիշեր եկաւ. հոս է, Ջըրվէժը, Ժիւլիէդին և Միէդին հետ։

— Ա՜հ. ըսաւ Ռըմի, Ժիւլիէդ որչա՜փ պիտի պարծի որ « էրէն » ընկերակից օրիորդն ունի։

— Շատ իրաւ է, վրայ բերաւ Ֆլօրանս։ Անոր հետ գլուխ կը բռնէ, և չամչնար իր կամքն անոր կատարել տալու։

— Միթէ լա՞ւ աղջիկ մ'է, այդ Յովհաննա Տը լա Լիժէլ, հարցուց Հիւպէր։

— Միթէ աղւո՞ր է. յարեց Ռըմի։

— Ո՛հ. պատասխանեց Ֆլօրանս, կարծեմ թէ քիչ մ'իմաստակ է. իսկ իր դէմքն, ի՞նչ ըսեմ, կարծեմ, ամեն մարդու ունեցած դէմքն է։

— Երթանք զանի տեսնելու, առաջարկեց Հիւպէր։

— Երթանք զանի տեսնելու, կրկնեց Ռըմի։

— Անօգուտ է այդ, վրայ բերաւ Ֆլօրանս։ Ասկից կարող եք տեսնել զանի (ցոյց կ'տար փոքրիկ բլրակ մը։) Եթէ հոն երթաք, անոր հետ պիտի մընաք։ Եւ ես ալ գտայ մողէսի խշտի մը, զոր ձեզի կ'ուզեմ ցուցնել։ Փոքրիկ բլրակին վրայ ելնենք, այդ աւելի լաւ է։

— Փոքրիկ բլրակին վրայ ելնենք, կրկնեցին Հիւպէր և Ռըմի։

Ֆլօրանսին հետ ելան։

Անկից կը տեսնուէր Ջրվէժին դիմացն նեղ կրմին առջև Ժիւլիէդ, Յովհաննա և Միէդ սպասուհին։ Յովհաննա, ամոռի մը վրայ նստած էր Ժիւլիէդին կառքին մօտ, որու ծայրին վրայ կը կոթնէր։

— Պարա՞պ բան է. գոչեց Հիւպէր խնդալով, կռնակը դարձուցած է մեզի ընկերակից օրիորդն, իր երեսը չեմ կրնար տեսնել։

— Բայց արդեօք թղթէ՞ արձան մ'է. յարեց Ռըմի։ Նայեցէ՛ք, չի շարժիր. իր ոտքերն ու երեսն անշարժ են։

— Այդպէս չէ, վրայ բերաւ Հիւպէր. Ժիւլիէդ կը խօսի և ինք մտիկ կ'ընէ։ Պարադայի յարմար կերպարան մը կ'առնէ, ըստ երևոյթին՝ շղթորթող է։ Կ'ուզէ՞ք մոդէսներուն երթալ։ Ես պիտի երթամ տեսնելու շատախօսուհին։

— Բայց զանի պիտի՛ վախցնես, դիտել տուաւ Ռըմի, պիտի կարծէ կարմրամորթ մ'ես։

— Հո՛ւ. հո՛ւ. գոչեց Հիւպէր (այդ էր, կ'ըսէր նա, իր գմայլութեան ազաղակն) բոլորովին պիտի զմայլիմ։

Եւ այս խօսքերն ըսելով, հեռացաւ իր եղբայրն Ֆլորանսին հետ թողլով։

Իսկ Ժիւլիէդ, առաջ լուռ մնալէն ետք, իր արդէն ընտրած տեղն, սկսած էր խօսիլ։ Ցանկարծ Յովհաննային ուղղեր էր խօսքն, կարելի եղածին չափ բարձր (վասն զի ջրվէժին աղմուկն խլացուցիչ էր) և պնոր ըսեր էր՝

— Լա՜ւ ուրեմն, Յովհաննա, միթէ դո՞ւ ալ Ֆլորանսին պէս ես։ Միթէ այս վայրը գէ՞ղ կը դտնես։ Ես, ընդհակառակն, զայն շատ գեղեցիկ կը դտնեմ, և շատ կը սիրեմ զայն. բայց, խօսքը մեր մէջ, քիչ մ'ինձ վախ կ'ազդէ, չ'պիտի կրնայի հոս մինակ մնալ։

— Իրա՜ւ. գոչեց Յովհաննա։

— Այո՛։ Եթէ քիչ մ'աւելի հեռու երթայիր, հան, ջրվէժին շատ մօտ, մեծ ծակ մը պիտի տեսնէիր։ Այս ծակն բոլորովին սև է, բայց ջուրն որ անոր

մէջ եռալով կը հոսի, բոլորովին սպիտակ է։ Երբեք չեմ նայիր այդ ծակին։

Եւ որովհետև իր նորատի ընկերուհին զարմացած կ'երևէր, Ժիւլիէդ շարունակեց բացատրութեան մտօք։

— Բայց ըսածս շատ ստոյգ է, պատմութեան նայելով։

— Ո՞ր պատմութեան, հարցուց Յովհաննա աւելի ևս զարմանալով։

— Այդ պատմութիւնը մեր ընտանիքին կ'վերաբերի, պատասխանեց փոքրիկ աղջիկն։ Միթէ կ'ուզե՞ս որ քեզ պատմեմ։

— Այո, կը փափաքիմ լսել։

— Եթէ այդպէս է, ինձ մօտեցիր. դեռ աւելի մօտ որպէս զի չ'սահիպուիմ բարձր խօսելու։ Այդպէս շատ աղէկ է . . . ։ Հիմա ինձ մտիկ ըրէ, այս է պատմութիւնս։

Եւ Ժիւլիէդ սկսաւ.

— Գամիզարներուն կռիւներուն ատենն էր . . . ։ Բայց առաջ միթէ գիտես թէ ի՞նչ են գամիզարներն։

— Անշուշտ, պատասխանեց Յովհաննա։ Գամիզարներն Սէվէն լեռներու կալվինականք էին որ չ'հաւանեցան ընդունիլ Նանդի հրովարտակն ա. նոր վերակոչումն վերջն յառաջ եկած հալածման ատեն։

— Այդ ճիշտ է, ըսաւ Ժիւլիէդ հաւանութեամբ։ Այն բանն զոր քեզ պիտի պատմեմ, յարեց, հոս պատահեցաւ, մեր մօտ, այդ գամիզարներուն կռիւներուն ժամանակ։ Մտիկ ըրէ.

Այն ժամանակն այս երկրին մէջ կը գտնուէր ծիաւոր (չըվալիէ) մ'որ մեր անունն ունէր։ Անունն էր Շիրինեան։ Մեր նախնեաց մին է։ Մինակ կը բնակէր, փոքրիկ ղղեկի մը մէջ և բնագիտութեամբ կը զբաղէր։ Բայց երբ գամիզարներուն կռիւն սկսաւ, իր գիտութիւնը թողլով կարծես թէ պարտք մը կը սեպէր գամիզարները հալածել, վասն զի, եկեղեցիին համար էր։

Գամիզարներուն մէջ, ահարկու թշնամի մը կը գտնուէր։ Կոչտ և զօրեղ մարդ մ'էր, ահարկու կալվինական մ'որ միայնակ աւելի շատ գործ կ'ընէր քան թէ իր յիսուն եղբայրներն։

Անկարելի լինելով զանի բռնել, Շիրինեան միտքը դրաւ իր աղջիկն գրաւել, և զայն իբրև պատանդ պահել։ Այդ աղջկան անունն Մէժ էր, դեռ տասն և հինգ տարեկան չէր, և այնչափ գեղեցիկ և աղուոր էր, որ երկրին մէջ զայն Մէժ-գեղանին կ'անուանէին։ Երևելի գամիզարն միայն իր աղջիկն կը սիրէր։

Գիշեր մ'որ Մէժ քիչ մ'ուշ մնացած էր դուրսը. Շիրինեանին սպասաւորներն անոր ետևէն եկան զանի հալածեցին։ Մէժ որ եղնիկի մը պէս լաւ կը վազէր, սկսաւ արշաւակի քալել. կարելի է անոնց ձեռքէն խոյս տար, եթէ մեր առջևն գտնուած ջրվէժէն անցնելու ատեն տամուկ քարի մը վրայ չ'սահէր, և ծակի մը մէջ չիյնար, որմէ չի կրցան զանի հանել . . . ։ Այս ծակն դեռ կայ, շարունակեց Ժիւլիէդ, այն սև ծակն որ հոն կը գտնուի. այն ծակն զոր չեմ ուզեր տեսնել։

Եւ այդ ժամանակէն ի վեր, յարեց նա, վայրկեան մը լուռ մնալով, այս ջրվէժն Մէժ-լա-ժօլիին ջրվէժն անուանեցին. (գաղիերէն ժօլի, աղուոր կը նշանակէ.) և այդ ժամանակէն ի վեր, (այդպէս կ'ըսեն) Մէժ ամեն գիշեր հոն կ'երևի։

Ժիւլիէդ լուռ մնաց։ Իր պատմութիւնը լմնցած էր։ Բայց Ցովհաննա անմիջապէս անոր ըսաւ.

— Ո՜հ. այդ բանին չես հաւատա՞ր, այնպէս չէ, Ժիւլիէդ, չես հաւատա՞ր որ Մէժ ամեն գիշեր կը վերադառնայ։

— Ոչ, պատասխանեց պզտիկ աղջիկն։ Հայրիկն ու մեծ հայրիկն ինձ շատ անգամ բացատրեցին որ այդ զրոյցն հրաշավէպ մ'է, և պէտք չէ անոր հաւատալ։ Եւ ասոր չ'նայելով . . . քեզ սակայն, կը խոստանամ քեզ, և միայն քեզ, որ շատ անգամ այդ բանիս վրայ կը մտածեմ, և այն ատեն կը վախնամ։ Գիտեմ որ իրաւունք չունիմ և ապուշ աղջիկ մ'եմ։ Բայց այդ ըսածս Ցլօրանսին չ'պիտի կրկնես, և մանաւանդ ոչ Հիւպէրին ու ոչ Ռըմիին։ Եւ իմ վրայ որքա՜ն ծիծաղեցան անգամ։

— Միթէ քեզ հետ լաւ չեն վարուիր։

— Ո՜հ, ամենևին, և ես ալ բնաւ չեմ սիրեր զանոնք, իրաւ է որ գլուխի տղայք են. մտածէ անգամ մ'որ միայն աղմուկ հանելու կ'ախորժին։ Անոնցմէ աւելի անտանելի բան չէ կարելի երևակայել։

— Կարծէի թէ անոնց հետ շատ քիչ կը տեսնուիս։

— Այս քիչն, ինձ համար շատ է։ Մեծ հայրիկն չուզէր որ զանոնք տեսնենք, բայց հայրիկն թոյլ կ'տայ. կ'ուզեմ ըսել թէ չ'հակառակիր որ քոյրս ե-

թէ դիպուածով անոնց հանդիպի, միասին պահ մը խաղան. իսկ Ֆլորանսին համար այդ շատ ցաւալի է, այդ տղայք ճշմարիտ սատանաներ են։

— Մ'ն, շատ շնորհա'կալ եմ այդ գովեստին համար. բայց բնաւ փոյթ չեմ ըներ, թէև ներկայ ենք, ըսաւ այն ատեն ծիծաղկոտ ձայն մ'երկու աղջկանց մեջ։ Բայց, վախցի'ր ծակէն, վախցի'ր մեծ ծակէն։

Ժիւլիէդ վախցաւ ու սկսաւ դողալ։ Յովհաննա զարմացած չիտակ ոտք ելաւ, և բոլորտիքն նայեցաւ։ Բան մը չ'տեսաւ, ու իր փոքրիկ ընկերուհին աւելի ևս վախցաւ։

Իսկ Միէդ սկսաւ խնդալ։ Բայց, դիտելով որ իր Նորատի տիրուհին իրօք ահուդողի մէջ էր ուզեց զանի ապահովել։

— Մի վախնար, օրիորդ Ժիւլիէդ ըսաւ նա. Պարոն Հիւպէրին մէկ կատակն է այդ։

Եւ սպասուհին իրաւունք ունէր. ծիծաղկոտ ձայնը որ լսելի եղեր էր, նոյն իսկ Հիւպէրին ձայնն էր։

Երբ, Ֆլորանսէն ու Ռըմիէն բաժնուելէն ետք, Հիւպէր մինակ գտնուելով ջրվէժն տանող ճամբուն վրայ, նախ իր աղեղն լարած ու իր գլխարկին փետուրներն շտկած էր. ապա իր ամենէ վէս կերպարանն առնլով ծանր ծանր յառաջ անցած էր։

Ժիւլիէդ և Յովհաննա իր գալն չէին տեսած. միայն Միէդ զայն նշմարեր էր։

Այն ատեն, Նորատի տղան իր բերնին վրայ մատը դնելով, հրամայած էր լուռ մնալու սպասուհւոյն, և շարունակած էր քալելն, միշտ նոյն ծանրութեամբ։ Իր փափաքն էր Յովհաննայի վրայ յանկարծ հասնիլ։

— Ի՞նչ դէմք ցոյց պիտի տայ երբ զիս տեսնէ, կը մտածէր նա, կարելի է որ վախնայ։ Եթէ այդ պատահի լաւ մը պիտի խնդամ։

Բայց Յովհաննա չէր շարժեր։ Մտիկ կ'ընէր Ժիւլիէդին հետաքրքրաշարժ պատմութեան (զամիզարին աղջկան պատմութեան) և գլուխն անգամ չէր դարձներ։

— Ո՜հ, ո՜հ, մրմռաց Հիւպէր։ Միթէ Ռըմի իրաւո՞ւնք ունի։ Միթէ՞ իրաւ թղթէ՞ շինուած է։

Եւ ստուգելու համար թէ Նորատի աղջիկն իրօք մխէ ու ոսկրէ էր, կը վարանէր նետ մը նետելու կամ իր անուանի աղաղակն արձակելու, երբ, յանկարծ միտքը փոխելով.

— Վա՛յ, ըսաւ մեկուսի, ուրիշ աւելի լաւ բան մը կրնամ ընել։ Շաղակրատուհիներն իրարու հետ դաղտնի կը խօսակցին, անոնց ականջ դնելն անշուշտ շատ հետաքրքրաշարժ է։

Եւ սահած էր գետինն, հնդիկներուն պէս, զգուշութեամբ սահելով, չ'նայելով քարերուն որ իր հագուստը կը պատռտէին և իր ծունկերն կը վիրաւորէին, այսպէս, առանց աղմուկ հանելու, երկու աղջկանց մօտ հասեր էր։ Եթէ չշուկ մ'իսկ հանէր, չպիտի լսէին, վասն զի ջրվէժին աղմուկն միւս բոլոր աղմուկներն կը ծածկէր։

Միէդին օգնութեան շնորհիւ, որ ծածկեր էր զինք ժամանակին ոտք ելնելով, Նորատի տղան կրցաւ Ժիւլիէդին կատքին ետևն պահուըտիլ։ Հոն, մտիկ ընելով, կրցաւ երկու բարեկամուհիներուն խօսակցութեան մէկ մասն լսել։

Ժիւլիէդ անոր ու Ռըմիին վրայ նպաստաւոր կերպով ամենևին չէր խօսեր. իր խօսքերն այնքան անանպաստ էին, որ պահ մը չի կրնալով վրէժ հանելու փափաքն զսպել գոչեց.

— Ո՜հ, շատ շնորհակալ եմ այդ գովեստին համար, շարունակէ, բնաւ փոյթ մի ըներ, թէև ներկայ ենք. և զգուշանալով ինք զինքն ցոյց տալու, Հիւպէր Նորատի հիւանդին կառքին տակ սահեցաւ։ Բայց վախցի՜ր ծակէն, վախցիր մե՛ծ ծակէն։

Այս վերջի խօսքերն աւելցուց, քաջ գիտնալով թէ որքան Ժիւլիէդին վրայ մեծ տպաւորութիւն կ'ընէր այն վայրն ուր Մէջ մեռած էր։

Ժիւլիէդ, շատ վախցած էր։ Խեղճ աղջիկն միշտ ջրվէժին կը նայէր, կարծելով թէ անկից կը հասնէր լսած ձայնն, և շարունակ կ'գոչեր։

Միէդ յուզուեցաւ, ու վար ծռելով Հիւպէրին ըսաւ.

— Պարոն Հիւպէր, ցոյց տուր ինք զինքդ։ Այդ կերպով միայն կրնաք իր երկիւղն փարատել.

— Իրաւի, Միէդ, պատասխանեց Հիւպէր, դիւրին է ըսել, այլ ոչ ընել. ոտքս մէկ անիւին մէջ բռնուած է։ Շուտ, Միէդ, եկուր ինձ օգնելու։

Եւ Նորատի տղան կը շարունակէր կատակ մ'որ չէր գիտեր թէ Ժիւլիէդին որչա՛փ կը վնասէր. իր ոտքերն ու թևերն կը շարժեցնէր և կառքն այսպէս սաստիկ կը թոթուէր։

Խելական սարսափի մը ներգործութեամբ որ իր հիւանդութիւնն կը սաստկացնէր, փոքրիկ աղջիկն սկսաւ սրտաշարժ աղաղակներ արձակել։ Հիւպէր,

այն ատեն աւելի ևս սաստկացուց իր շարժումներն։

— Կ'աղաչե՜մ, այս խաղը դադրեցուր, ըսաւ յանկարծ Յովհաննա, Ժիւլիէդ պիտի նուաղի։

Իրաւի՝ Նորատի հիւանդն այնպիսի մարմրուքէ մը կը բռնուէր որու ենթակայ կ'լինէր, և այդ կ'պատահէր երբ նա սաստիկ այլայլութիւն մը զգար։

Հիւպէր շուտ մ'ոտք ելաւ. բնաւ չափազանցութիւն չ'կար Յովհաննային ոչ խօսքին և ոչ ձայնին մէջ։ Ժիւլիէդ իրաւի հիւանդ էր, և յանցաւորն էր Հիւպէր . . . ։

Ո՜հ, որչա՛փ կը զղջար այդ ապուշ կատակն ըրած լինելուն, երբ խեղճ աղջկան դժգոյն դէմքն տեսաւ, որչա՛փ կը փափաքէ՜ր զանի դարմանել, իր յատուկ վշտին գնո՜վ։ Բայց բան մը չէր կրնար ընել, չէր գիտեր ի՞նչ ընել, իր բուռներն կը խածնէր որպէս զի լացը չ'բռնէ։

Սակայն Ժիւլիէդ միշտ մարած էր։ Իզուր Միէդ անոր ձեռքերուն մէջ կը զարնէր, ի զուր Յովհաննա աղեր անոր շնչել կ'տար, նա չէր սթափեր։

— Զով ջրի պէտք ունի, ըսաւ պահ մ'ետք սպասուհին։

Հիւպէր ջրվէժն վազեց, չիշն, որ միշտ իր վրայ էր, լեցուց, փոքրիկ աղջկան մօտ վերադարձաւ և բոլոր ջուրն իր գլխէն վար թափեց։

Այն միջոցին Ֆլորանս ու Ռըմի ջրվէժէն կը վերադառնային։ Մողէսներուն խշտին այցելեր էին, կարևոր բաներ գտեր էին, և կը փութային զանոնք Հիւպէրին ցոյց տալու։

Որովհետև Հիւպէր չէր վերադառնար, ամենէն

պարզ միջոցն էր անոր մոտ երթալ։ Եւ երկուքն ալ, ուրախ զուարթ ջրվէժին ճամբան բռներ էին։

— Հ՞ոս ենք, պոռաց Ֆլորանս, երբ տեսաւ այն փոքրիկ խումբն զոր կը կազմէին, Միէդ, Հիւպէր ու Յովհաննա, Ժիւլիէդին բոլորտիքն. ձեզ հինգ հատ գեղեցիկ մոդէս կը բերենք։

Եւ Ֆլորանս սկսաւ վազել։

Այն միջոցին Ժիւլիէդ կ'սթափէր։ Առաջ շարժում մ'ըրաւ, աչքերը բացաւ և քիչ քիչ ինք զինքին եկաւ։

— Ո՜հ, վերջապէ՞ս, ըսաւ Հիւպէր գոհութեամբ հառաջելով։

— Լա՜ւ ուրեմն, ի՞նչ պատահեցաւ, հարցուց Ռըմի։ Մինթ Ժիւլիէդ հիւա՞նդ է։

— Այո՛, քիչ մ'անհանգիստ է, պատասխանեց Յովհաննա. բայց բան մը չէ, կ'անցնի։

— Ի՞նչ ուզեր, հարցուց Ֆլորանս, և ծռեցաւ իր քոյրն համբուրելու համար։

— Ապուշի մը պէս զանի ահ ու դող հանեցի, յայտնեց այս անգամ Հիւպէր։

— Ինչպէ՞ս, հարցուց Ֆլորանս։

— Վերջին գործն քեզ պիտի պատմեմ։

— Ինչո՞ւ հիմա չես ուզեր բան մ'ըսել։

— Ինչու որ Ժիւլիէդ բոլորովին սթափած չէ, և հարկ չ'կայ իր վախն նորէն զրգռել, իր առջև այդ բանին վրայ խօսելով։

— Այն ատեն, պատասխանեց փոքրիկ աղջիկն, եկուր անկիւն մը քաշուինք և պատմէ ինձ։

— Կ'ուզեմ մեկնիլ, մրմռաց Ժիւլիէդ նոյն միջոցին. կ'ուզեմ Լաստենիքը վերադառնալ։

— Ինչո՞ւ համար եկաւ, դիտեց Ռըմի, որ բաւական բարկացած էր, վասն զի կ'ուզէր ջրվէժն մը նայ։ Երբ մէկն անոր պէս հիւանդ է, անխոհեմութիւն է երկայն պտոյտներ ընել։

Նոյն պահուն, Միէդ ամեն բան կարգի կը դնէր մեկնելու համար։ Իր գործն կը ծալէր, կը վերցնէր բարձերն որոնց վրայ Ժիւլիէդ կը հանգչէր, ծալածոռներն փոքրիկ կառքին կը կախէր, այսպէս ամեն բան կը կարգադրէր, շուտ մը Լաստենիքն վերադառնալու համար։

— Այսչա՜փ մի փութար, Միէդ, ըսաւ այն ատեն Հիւպէր։ Որչա՜փ շուտ կ'ընես, չ'պիտի կրնաս ժամանակին հասնիլ։

Եւ մատնանիշ ցոյց կ'տար սպասուհոյն երկինքն որ յանկարծ սեւ ամպերով ծածկուեցաւ։

Այն միջոցին սաստիկ հով մը սկսաւ։

— Ո՜հ, գեղեցիկ փոթորիկ մը պիտի պատահի, շարունակեց տղան։ Անօգուտ է հիմայ մեկնելու վրայ մտածել։ Ամենէն լաւն է, կարծեմ, ժայռերուն մէջ պահուտիլ։ Նայեցէք, յարեց, հոն ժայռ մը կայ, ջրվէժին մոտ որ իրաւի անցարմար չ'պիտի լինի։

— Ո՜հ ոչ, ո՜հ ոչ, գոչեց Ժիւլիէդ։ Զեմ ուզեր, երթանք։

Եւ խեղճ փոքրիկ աղջիկն՝ որու ջիղերն սաստիկ գրգռուած էին, սկսաւ դողալ։ Փայլակ մ'որ ամպերուն վրայ սահեցաւ, փոթորկին սկիզբն ցոյց տալով, անոր հանդարտութիւն չ'բերաւ։

— Այս կողմերն չ'կա՞յ մոտ տուն մ'ուր կարենայինք պատսպարուիլ, պահ մը, հարցուց Յովհաննա Միէդին։

— Միայն այծարանն կայ, պատասխանեց Ռըմի։

— Ի՞նչ օգուտ ունի այծարանին խօսքն ընել, ըսաւ Հիւպէր իր եղբօր դառնալով։ Քաջ գիտես, Ռըմի, որ հոն մարդ մը չի մտներ։

— Բայց ես ալ չեմ պահանջեր որ ներս մտնենք։

— Ո՞վ կը բնակի այծարանն, հարցուց Յովհաննա իր լսած խօսքերուն վրայ բաւական զարմանք ցոյց տալով։

— Ո՞հ, ծեր մարդ մը, պատասխանեց Հիւպէր, անպիտան մարդ մը, ագահ մը։

— Կախարդ մը, յարեց Միէդ։

— Այդ ըսածդ Միէդ, իրաւ չէ, գիտեց Ֆլորանս։ Եթէ մեծ հայրիկն քեզ լսէր, պիտի ըսէր թէ ապուշ աղջիկ մ'ես։ Միթէ կարծես թէ կախարդնե՞ր կան։

— Եւ միթէ կարծե՞ս, հարցուց Յովհաննա, խօսքը Հիւպէրին ուղղելով, որ այդ մարդն մերժէ մեզ իր տունն ընդունիլ։

— Անշուշտ, պատասխանեց Հիւպէր։ Անցած գարնան, բոլոր գիշերն դուրս թողուց մուրացկան մ'որ իր ճամբան մոլորեր էր։

Յովհաննա լուռ մնաց, սակայն առանց համոզուած լինելու։

— Անշուշտ, կը մտածէր նա, այդ մարդն շատ վատ գործ մ'ըրած է այդ մուրացկանին առջև իր դուռն գոցելով, և այդ ցոյց կ'տայ թէ անգութ է։ Բայց միթէ մե՞ր առջևն ալ դուռը չ'պիտի բանայ, մեզի պէս տղայոց, Ժիւլիէդին որ հիւանդ է։ Այդ անկարելի է, ո՜հ ոչ։

— Ահա՛ անձրևն, գոչեց Ֆլորանս այդ միջոցին։

Որչա՜փ ուժգին կը վազի։ որչա՜փ մեծ են կաթիլները։ Եթէ հոս մնանք, պիտի թրջուինք։ ահռելի փոթորիկ մը կ'սկսի։

— Այծարանն երթանք, առաջարկեց Յովհաննա։

— Այո, երթանք, ըսաւ Հիւպէր, և անոր դրան առջև փայտ կտրելու հաճոյքն պիտի ունենանք։

— Երթա՜նք, երթանք։ կրկնեցին Ֆլորանս ու Ռըմի։

Եւ երեքն ալ, սկսան այծարանին կողմն վազել։

Երբ մեկնեցան, Միէդ տրտնջալով, յանձն առաւ անոնց ընկերանալ։ Ժիւլիէդը շալերով և վերարկուներով ծածկեց, կառքն քշեց, և Յովհաննային հետ այն ճամբան մտան զոր երեք աղջիկ արդէն բռներ էին։

ԳԼՈՒԽ Դ։

ԱՑԾԱՐԱՆՆ

Այծարանն, ուր մեր նորատի գիւղացիներն կ'երթային, փոթորկէն պատսպարուելու համար, Ժէրալտին հին կալուածին մէկ մասն էր, և արտերու մէջ, ջրվէժէն հազիւ քանի մը վայրկեան հեռու կը գտնուէր։

Հին փոքրիկ տուն մ'էր որու պատերն սևցած ու ճղքուած էին. տանիքն կէս մը խոզանով և կէս մը մամռով ծածկուած հերձաքարէ էր, այն տան կերպարանն աղքատիկ ու տխուր էր։

Այն տունն միայն գետնայարկէ մը կը կազմուէր և լուսաւորուած էր չորս նեղ պատուհանով որ շատ բարձր էին։ Վերը կը գտնուէր վերնայարկ մ'որ ամեն կողմէ հովերուն բաց էր և որու մէջ միայն դուրսէն սանդուղով մը կը մտնէին։

Ժամանակաւ, երբ Շիրինեանք տակաւին աղքատացած չէին, այն ատեն այծի ու ոչխարի գեղեցիկ հօտեր ունէին, այն տունն յատկացած էր հովուին և իր օգնականին։ Անկից առած էր իր անունն, այծարան։

Երկար ժամանակ անբնակ մնալէն ետք, (վասն զի Հիւսէրին ու Ռըմիին մեծ հայրն որու կ'պատկանէր այդ տունն, հովիւ մը չունէր ալ, որ հոն բնակի.) այծարանն վարձու տուած էր, հազիւ քանի մը ամսէ ի վեր, անծանօթի մը, զոր ոչ ոք կը ճանչնար, և որ չունէր (այդպէս էր ամեն մարդու կարծիքն) ազգականներ այս երկրին մէջ։

Այդ անծանօթն ծերունի մ'էր, որու կերպարն շատ զարմանալի էին և որ ընդհանուր կասկած գրգռեր էին։ Ոչ մէկուն հետ կը տեսնուէր, իր տունն մարդու մը չէր բանար, շատ անգամ կը մեկնէր և ամեն պարագայի մէջ շատ խորհրդաւոր կերպարան մ'ունէր։

Ոմանք կ'ըսէին թէ աղքատ է, ուրիշներ կ'ըսէին թէ ագահ է։ Շատեր կ'ըսէին թէ բնատիպ մարդ մ'է, այլք կը պնդէին թէ, վատ մարդ մ'է։ Կային նաև մարդեր որ մինչև անգամ կը հաւատային թէ կախարդ մ'է։

Այդ տարօրինակ մարդուն անունն էր Մէտար։

Բայց որովհետև ամառ ամեռ, գորշ կրկնոցի մը մէջ փաթթուած էր, որովհետև ամեն եղանակի ականջաւոր խոյր մ'ունէր, զանի կ'անուանէին խոյրաւոր մարդն կամ կրկնոցաւոր մարդն։

Հիւսէր ու Ռըմի Ֆլորանսին ընկերութեամբ այծարանն հասան և սկսան պնոր դուռն զարնել։

— Է՛յ, հա՛յր Մէտար, մեզ բացէք, կ'ըսէր այն միջոցին Հիւսէր։ Մինչև մեր ոսկրները թրջուած ենք։

Բայց ոչ ոք պատասխան տուաւ.

— Կարելի է ներսը չէ, խօսք նետեց Ռըմի։

— Այո՛, այո՛, ներսն է, այդ մասին վստահ եմ, ըսաւ խսկոյն Ֆլորանս։

Ապա, մեղմաձայն յարեց.

— Հիմայ տեսայ իր տգեղ երեսն սա փոքր երդիքին մէջ որ ահա հոն է։

Եւ պզտիկ աղջիկն մատնանիշ կ'ընէր փոքր պատուհան մ'որ այծարանին վարձակալն դրան վրայ բացեր էր։

Բայց անձրևն շարունակ կը վազէր և ֆնարկու որոտումներ կը լսուէին։

— Աւելի ուժգին զարնենք, գոչեց Ռըմի։ Ահա՛, Ժիւլիէդ որ կուգայ։ Է՛յ հա՛յր Մեատար, մեզ բացէ՛ք։

Խեղճ աղջիկն իր փոքր կառքին մէջ տակաւին երկնցած էր և իր վախէն ու մարմրուքէն բոլորովին չէր ազատած. կը դողար բոլոր վերարկուներուն ու շալերուն տակ որով շտապաւ գինք ծածկեր էին. բայց անձրևն անոնց մէջէն կը թափանցէր։

— Միէդ, կը դողա՞ս, կ'ըսէր նա սպասուհւոյն, նայէ, որչա՞փ կը պաղիմ։

Միէդ չէր պատասխաներ։ Զէր գիտէր թէ ի՞նչ ընէ, և բարի գիւղացւոյ աչքերն արտասուքով կը լեցուէին։ Նախ վախ կ'ղգար որ իր խնամոց յանձնուած աղջիկն չի հիւանդանայ. ապա, կը վախնար նաև հայր Մէտարին տունն մտնելու։ «Տեսակ մը վհուկ է,» կը մտածէր Միէդ։ Եւ երեսն խաչ հանելու կը պատրաստուէր։

— Միէդ, կը մսիմ, կը շարունակէր Ժիւլիէդ։

— Ահա եկանք, պատասխանեց այս անգամ Յովհաննա Տը լա Լիժէլ։ Տան մէջ աւելի հանգիստ պիտի դտնես։

— Տան մէ՛ջ, կրկնեց Ֆլորանս։ Կարծեմ թէ այսպէս դրան առջև պիտի մնանք, ծերուկն բանալ չուզեր։ Կը տեսնե՞ս որ Հիւպէր իրաւունք ունէր։

— Ո՜հ, ըսաւ տղան որու համբերութիւնն հատեր էր, դուռն անշուշտ պիտի բանայ, թէ ոչ հարկ պիտի լինի զայն պաշարել։ Ռըմի, ինձ քարեր բեր, նախ պիտի սկսինք պատուհաններուն ապակիներն կոտրել։

Ռըմի փութաց իր եղբօր հնազանդիլ, և պահ մը ետք եկաւ ձեռքերն քարերով լի։ Հիւպէր իր երեսելի «հո՛ւ հուն» արձակելով, կը պատրաստուէր պաշարումը սկսիլ, երբ Յովհաննա յանկարծ միջամտեց։

— Այդ մ'ընէք, ըսաւ Հիւպէրին։ Բուռն միջոցներն ապարդիւն կը մնան։

— Այդպէ՞ս կարծէք, հարցուց տղան, նեղանալով որ աղջիկ մ'իր գործերուն մէջ կը խառնուէր։ Լա՜ւ ուրեմն, ես հակառակն կը մտածեմ։

Եւ քանի մը քար նետելով այծարանին պատուհաններուն մին կոտրեց։

— Լա՜ւ, լա՜ւ, գոչեց Ռըմի։ Եւ տունն ալ մերն է. կարծեմ թէ իրաւունք ունինք հազար կտոր ընել զայն։

— Հայր Մէտար, ձեր դուռն մեզ բացէք, կրկնեց Հիւպէր, և այս տասերրորդ անգամն էր որ կը կրկնէր, թէ ոչ, միւս ապակիներն ալ պիտի կոտրեմ։

Բայց դուռը չ'բացուեցաւ։ Իր անյաջողութիւնը տեսնելով տղան կատղած, կ'ուզէր նորէն պաշարումը շարունակել, երբ Յովհաննա նորէն միջամտեց։

— Ձեզ կ'աղաչեմ, ըսաւ, ձեր գայլախաղներն մէկդի թողէք։

— Որչա՜փ մեզ կը նեղացնէ՞ այս աղջիկն, մրմնջաց Հիւպէր իր քթին տակէն։ Միթէ կարծէ որ իր խնդիրն պիտի կատարեմ։

Եւ ահա ուրիշ ապակի մը կոտր կոտր եղաւ. բայց այս անգամ ալ դուռը չ'բացուեցաւ։

— Ո՜հ, ծեր ապիրա՜ն, գոչեց Հիւպէր, բոլորովին բարկացած։ Մեծ հօրս ձեռքը զանի փնտռել պիտի տամ։

— Բայց հիմայ, դիտեց Ֆլորանս, մեզ չ'պիտի բանայ։

— Միթէ կ'ուզէ՞ք որ փորձեմ, առաջարկեց այն ատեն Յովհաննա։

— Փորձեցէ՛ք, փորձեցէ՛ք, ըսաւ Հիւպէր որ նոր ատի աղջկան դէմ բարկացած էր։ Պիտի տեսնեք եթէ դուք իրմէ աւելի պիտի յաջողիք։

Յովհաննա դրան մոտեցաւ, մէկ քանի պզտիկ զարկ տուաւ, ու ըսաւ ձայնը բարձրացնելով.

— Պարոն Մէտար, մեզ բացէք։ Ժիւլիէդ Շերիւնեան, որ կը պտտի ու հիւանդ է, հոս կը գտնուի։ Թոյլ տուէք որ ձեր տունն սպասէ մինչև այս մեծ փոթորիկին վերջն։

Սակայն դուռը գոց մնաց։

— Լաւ ուրեմն, անուշիկ օրիորդ, վրայ բերաւ Հիւպէր ծիծաղելով, ի՞նչ կ'ըսէք ձեր յաջողութեան վրայ։

— Ո՜հ, օրիորդ Տը լա Լիժէլ շատ բարկացած է, դիտել տուաւ Ֆլօրանս, աւելի բարձր ծիծաղելով. բայց վստահ եմ որ այդ զգացումն չ'պիտի ցուցնէ։

Երբ Ֆլօրանս արտասանեց Տը լա Լիժէլ անունն, երես մ'երևցաւ փոքր պատուհանին մէջ։ Այն երեսը էր որ քիչ մ'առաջ երևցած էր և հաճելի դէմք մը չէր, ականջաւոր խոյրով մը շրջապատուած։

Այս դէմքին երկու դեղին աչքերն, երկու աչքեր որ ակնոցով մը ծածկուած էին, հետաքրքրութեամբ նորատի աղջկան նայեցան։

Մինթ Յովհաննա այս ակնարկին իր վրայ ուղղուած զգաց։ Կարելի է, վասն զի գլուխն վերցուց և զարմացած ճանչցաւ այծարանին բնակիչն որ ուրիշ մարդ չէր այլ միայն փոքրիկ ծերունին որու հետ անցեալ օրն շոգեկառքին մէջ գտնուեր էր։

— Պարոն, կրկնեց նա այն ատեն, կ'աղաչեմ ձեզ բացէք։

Բայց դուռը գոց մնաց։

— Ո՜հ, ըսաւ Հիւպէր, այս անգամ խօսքն Ֆլօ-

բանսին ուղղելով, բայց բաւական բարձր, որպէս զի ամենքն ալ կարենան լսել. իր ժամանակն ու իր ճիգն կը կորսնցնէ այդ օրիորդ Տը լա Լիժէլ։ Մի-թէ կարծէ թէ իր սրբուհւոյ կերպարանն բանի մը կ'օգնէ՞։ Հայր Մէտարն ծեր անպիտան մ'է, իր սիրտն միշտ անդգայ պիտի մնայ և չ'պիտի կակուղնայ ոչ գայլախաղներուս ու ոչ իր շողբորդիչ խօսքերուն միջոցաւ։

Հայր Մէտարն իր երդիքէն հեռացած չէր։ Եւ հիմայ, Յովհաննային, որու անունն Հիւպէր արտասաներ էր, կը նայէր, ոչ հետաքրքրութեամբ այլ կասկածելի և յուզուած կերպով մը։

Իսկ Յովհաննա, մտածելով Ժիւլիէդին, որ անձրևին տակ կը դողար, կրկնեց.

— Կ'աղաչեմ ձեզ, դուռը բացէք։

— Ա՜հ այո, գոչեց Հիւպէր։ Կարծես թէ անոր մտիկ պիտի ընէ։

Բայց տղան շատ զարմացաւ ու իր ականջներուն չի հաւատաց, երբ խոյրաւոր մարդն, քիչ մը վարանելէ ետք, պատասխանեց.

— Կ'աղաչեմ պահ մը սպասեցէք։

Այն ատեն աղքատիկ տան մէջ անոր երթևեկն լսուեցաւ, բան մը կը ծրարէր և ուրիշ բան մը կարգի կը դնէր, պահարանը կը գոցէր, և այլն։ Վերջապէս, ծանրաքայլ դրան մոտեցաւ զոր կէս մը բացաւ, քանի մը շղթաներ ու նիզեր հանելէն ետք։

Ֆլօրանս ամենէ առաջ մտաւ, ապա Հիւպէր ու Ռըմի որ նոյն պահուն Ժիւլիէդին կառքն կը քշէին։ Յովհաննա Տը լա Լիժէլ անոնց ետեւէն մտաւ։

Երբ Նորատի աղջիկն ծերուկին քովէն անցաւ, նա շարժում մ'ըրաւ. կարծես թէ կ'ուզէր անոր հետ խօսիլ, թերևս հարցուփորձ ընել։ Բայց Մէդին ներկայութենէ անուշտ նեղուելով, որ Նորատի աղջկան եռեւն էր, միտքը փոխեց ու լուռ մնաց։

Այն սենեակն՝ ուր կը գտնուէին մեր Նորատի դիւցազուններն, գետնայարկ սենեակ մ'էր. միայն այն բնակելի էր այծարանին մէջ, սենեկի և խոհանոցի տեղ կը բռնէր։

Կարասին շատ պարզ էր, սենեկին խորն, առանց վարագոյրի անկողին մը. ապա քանի մ'աթոռ, նստակ մը, սպիտակ փայտէ սեղան մը, հին պահարան մը, անկիւնի մը մէջ սանդուղ մը, միւս կողմն, փայտ մ'որու վրայ քանի մը պնակներ դրուած էին։ Բայց կրնար կարծուիլ թէ այս տխուր տան զարմանալի բնակիչն, իր կերակուրն եփելու նեղութիւն չէր քաշէր, վասն զի վառարանին մէջ փայտ ու մոխիր չէր տեսնուեր։

— Շատ ցուրտ կ'զգամ, կրկնեց Ֆիլիպ, երբ վառարանին առջև գտնուեցաւ, ուսկից հովն ներս կը մտնէր։

— Միթէ չե՞նք կրնար կրակ ունենալ. հարցուց Միէդ ճիգ մ'ընելով հայր Մէտարին խօսքն ուղղելու համար, սակայն առանց անոր երեսն նայելու։

Միէդ յայտնի դժկամակութեամբ այծարանն մտեր էր. կախարդի հաւատալու յիմարութիւնն ունէր և արդէն գիտէնք որ ծերունին կ'ամբաստանէր իրր թէ անոնց հետ յարաբերութիւն ունի։

Հայր Մէտարն սենեկին մէկ անկիւնն գնաց, կողով մ'առաւ, որու մէջ քանի մը փայտի կտորներ կային, և զանոնք սպասուհւոյն տուաւ։

— Ո՜հ, ըսաւ Ֆլորանս, բայց այդ բաւական չէ քոյրս տաքցնելու և իր լաթերն չորցնելու համար։ Հայր Մէտար, միթէ փայտ չունի՞ս։

Ծերունին գլխով բացասական նշան մ'ըրաւ։

— Եթէ այդպէս է, վրայ բերաւ պզտիկ աղջիկն, հարկ է հրաժարիլ կրակ վառելէ։ Բայց ես ալ կ'ուզեմ լաթերս չորցնել, վերարկու կամ շալ հետս չունիմ. չրջազգեստս բոլորովին թրջուած է։ Ո՜հ. կ'սկսիմ շատ ցուրտ զգալ։

— Հանդարտ եղիր, Ֆլո, երեք վայրկենէ դեղեցիկ կրակով մը պիտի տաքնաս, ըսաւ Հիւպէր վստահութեամբ։

— Եթէ ալ ծերուկին ապառը անգամ այրելու պէտք լինի, յարեց մեղմաձայն։

Եւ, իսկոյն Իրմիին նշան մ'ըրաւ, որպէս զի իրեն հետևի, և գնաց այն անկիւնն ուր փայտէ սանդուղը կը գտնուէր։ Երկու եղբարք այն տեղն սանդուղը վերցուցին, ամեն մէկն զայն մէկ ծայրէն բռնեց, և այսպէս սենեկէն դուրս ելան։

Հայր Մէտարն բան մը չըսաւ։

Երկու տղայք, քիչ մ'ետք, նորէն ներս մտան։

Վերնայարկէն կուգային ուր սանդուղին միջոցաւ ելեր էին։ Հոն շատ մը պտեր գտեր էին, և ամեն մէկն իր թևերով կապոց մը բռներ էր։

Հիւպէր այդ պտերներն վառարանին մէջ նետեց, մտածելով թէ հայր Մէտարն այդ անրաւ պըտերն ի՞նչ կ'ընէ։ Ապա, գետինն ծունր դրաւ, իր

գրպանէն հրահան մը հանեց, կայծքարով մը զարկաւ և ելած կայծերն ափերթի կտորի մը վրայ ընդունեց. ապա վառած ափերթն մօտեցուց փայտի կտորներուն, փայտերն պտերին տակ դրաւ, և պահ մը վերջ զուարճալի կրակ մ'աղքատիկ սենեակն լուսաւորեց։

— Էհ, գոչեց այն ատեն Հիւպէր, բաւական գոհ ենք իրմէ և խօսքն Ֆլորանսին ուղղելով, միթէ չեմ գիտե՞ր միշտ ճար մը գտնել, և միթէ վերջէն առաջի կարգի որսորդ մը պիտի չ'լինի՞մ։

— Ո՜հ այո, պատասխանեց փոքրիկ աղջիկն. հիմայ, այս կրակին առթիւ, ինձ վայրենիներուն վրայ պիտի խօսիս, քանի որ այդ սիրական խնդիրդ է։

— Միթէ այդ հետաքրքրաշարժ չե՞ս գտներ. հարցուց Հիւպէր։ Աւելի աղուոր բան չ'կայ քան կարմրամորթներուն պատմութիւններն։ Մտածէ անգամ մը, Ֆլ, երբ մեծ լինիմ, և օրինակի համար Միչիկան լճին մօտ որսի երթամ, անտառին կամ դաշտին մէջ պիտի գտնուիմ, կրակ մը պիտի վառեմ, ինչպէս որ այս տեղ վառեցի, միայն փայտի կտորի տեղ, մեծ խոտեր պիտի ունենամ, և պտերի տեղ, ճկենիներ ու նոճւոյ ճիւղեր։ Ապա օրսս ես պիտի եփեմ։ Երեւակայէ անգամ վայրի խոզ մը, կամ անտառի հնդկահաւ մը, կամ վայրի եղ մը կրակիս վրայ եփելու համար կախուած։ Ինչ սքանչելի բան. ինչպէ՞ս պիտի լափեմ։

— Ո՜հ, ո՜հ, գոչեց Ֆլորանս զգուանք յայտնող դէմքով մը. վայրի կենդանիներուն միսը չեմ սիրեր։

— Եւ դու Յովհաննա, կը սիրե՞ս. յարեց, խօսքն

Ֆիլիդին ընկերուհւոյն ուղղելով որ Նորատի հիւանդին շալերն խնամքը կը շրջնէր։

— Չեմ գիտեր, պատասխանեց Յովհաննա, երբէք կերած չեմ։

— Բայց մենք ալ նոյնպէս, ըսաւ Ռըմի։ Օրիորդ Տը լա Լիժէլ, իրաւ, զարմանալի է։ Միթէ կարծէ թէ Հոդէնդօնե՞ր ենք։

— Բայց, վրայ բերաւ Ֆլորանս, առանց Հոդէնդուհի մը լինելու, Յովհաննա կրնայ շատ մը կենդանիներու համն գիտնալ, կենդանիներ զոր մենք Եւրոպա չենք ուտեր։ Իր հայրն շատ ու շատ ճամբորդած էր, կրնար հեռաւոր ու կորսուած երկրի մը մէջ նաւաբեկութիւն ընել և ստիպուիլ, անօթութենէ չմեռնելու համար, ամեն տեսակ տարօրինակ կենդանիներ ուտել։

Նստակի մը վրայ բազմած, իր խնամքը գոցուած պահարանին առջև և մեր Նորատի դիւցազներէն կազմուած խումբին բաւական մօտ, հայր Մէտարն չարժում մը չէր ըներ. կարծես թէ կը ննջէր։ Տը-զայք միայն այդպէս կը կարծէին։

Եթէ ուշադիր դիտող մը հոն գտնուէր, պիտի տեսնէր թէ այդպէս չէր։ Մերուներն աչքերն, իր ակնոցով միշտ ծածկուած, Յովհաննա Տը լա Լիժէլին վրայ ուղղուած էին։ Երբ, այս անգամ, Ռըմի իր անունն արտասանեց, ծերունին չի կրցաւ թեթև չարժում մը զսպել, և երբ Ֆլորանս ըսաւ թէ Նորատի աղջկան հայրն շատ ճամբորդութիւններ ըրած էր, ո՜հ, այն ատեն սարսեցաւ։

Ոչ ոք այդ դիտեց, իսկ Յովհաննային բոլորովին

անտես եղաւ, վասն զի Ժիւլիէդի հետ զբաղած էր, որ կըսէր թէ, թէև այդ պահուն տաքցած, բայց շատ յոգնած էր։ Լաստենիքը վերադառնալն ալ անկարելի բան մ'էր։ Փոթորիկն դադարելու տեղ կը սատկանար, կարծես թէ երկինքն իր ծակերն բացեր էր, ծիրանի գօտի մը հորիզոնին վրայ բնաւ չէր տեսնուեր։

— Վստահ եմ, ըսաւ յանկարծ Ֆլորանս, որ օրիորդ Մադ Նէյլ, այս անպիտան օդն տեսնելով, մեզ կաւքը խրկած պիտի ունի։ Բայց պիտի չ'գիտնայ թէ ո՞ւր տեղ կը գտնուինք՝ իրաւ, անկարելի բան է գուշակել որ այծարանն ենք։ Բայց ստոյգ եմ նաև որ անկարելի բան է հետիոտն Լաստենիքն վերադառնալ։

— Միէդ, շարունակեց փոքրիկ աղջիկն, խօսքն սպասուհւոյն ուղղելով, եթէ Լաստենիքին կողմն երթայիր կարելի է կառքին հանդիպէիր։

— Ձեմ կրնար ձեզմէ բաժնուիլ, պատասխանեց Միէդ, իր նորատի տիրուհիներն տեսակ մը վնուկի մ'ընկերութեան մէջ թողլով, երթալու գաղափարն անգամ մազերն իր գլխուն վրայ կը քոտմնեցնէր։

— Ուրե՜մն ինչպէ՞ս ընենք, վրայ բերաւ Ֆլորանս իսկոյն։

Միէդ այս անգամ չ'պատասխանեց։

Միէդ բարի աղջիկ մ'էր, անձնուէր, բայց առանց գաղափարի և բոլորովին անկարող դժուարին վիճակէ մ'ելնելու ու բան մ'որոշելու։

Սպասուհւոյն լռութեան առջև Ֆլորանս պահ մը մտածեց։

— Ո՜հ, ըսաւ յանկարծ մեղմաձայն, քանի որ Միէդ չուզեր մեզմէ բաժնուիլ, հարկ է հայր Մէտարն խրկել։

— Ա՜յն, ըսաւ Հիւպէր, նոյնպէս մեղմաձայն խօսելով։ Ֆլո, միթէ խելքդ կը կորուսես։ Այդ ինքնատիպ ծերուկն երբէք պիտի չի հաւանի այծարանէն դուրս ելնելու, մարդ մ'իր ետև թողլով։

— Ա՜հ, ի՞նչ բանէ կը վախնայ, պատասխանեց փոքրիկ աղջիկն, միշտ նոյն ձայնով . . . միթէ կը վախնա՞յ որ իր փլած տունն կը գողնանք։

Եւ այդ ըսելէն ետք սկսաւ խնդալ։

— Ո՛չ, ըսաւ Հիւպէր։ Տունն իրը չէ, այլ մեծ հօրս է։ Բայց ո՞վ գիտէ, միթէ այդ պահարանին մէջ, որու կրթնած է, գանձ մը չէ՞ պահած։

Եւ ինքն ալ սկսաւ խնդալ։

— Բոլոր այդ խօսքերն օգուտ մը չունին, շարունակեց Ֆլորանս։ Բայց չենք կրնար միշտ հոս մնալ։ Ես կ'սկսիմ ձանձրանալ։

— Ես ալ, ըսաւ Հիւպէր։ Եւ դո՞ւ, Ռըմի։

— Ես ալ, պատասխանեց Ռըմի։

— Եթէ այդպէս է, այդ մեր գործն է, վրայ բերաւ Հիւպէր, խօսքն իր եղբօր ուղղելով, կամ աւելի լաւ, իմ գործս է, վասն զի անդրանիկն եմ։ Ահա ինչ կը մտածեմ ընել։ Կ'ուզեմ Լաստենիքն երթալ։ Եթէ ճամբան կառքին հանդիպիմ, պիտի կեցնեմ, ներս պիտի մտնեմ, և այծարանն պիտի գամ։ Ընդհակառակն եթէ չի հանդիպիմ, լաւ ուրեմն, հարկ կ'լինի որ ես երթամ զայն Պարոն Ժէրալտէն խնդրելու։

— Բայց սաստիկ կ'անձրևէ, դիտել տուաւ Ժիւլիէդ, որ բարեսիրտ լինելով, մտատանջութեան մէջ ընկեր էր խորհելով որ տղան այդ ճշմարիտ ջրհեղեղին տակ պիտի քալէ։

— Կ'անձրևէ, այո՛, բայց անմեղնեին փոյթս չէ, պատասխանեց Հիւպէր։

— Բայց որոտումն կ'գոռայ, յարեց փոքրիկ աղջիկն։

— Որոտո՞ւմն։ Լա՜ւ ուրեմն։

— Ո՛հ, Հիւպէր անվախ է, հաւաստեց Ֆլորանս։

— Ո՛չ, իրաւի, ըսաւ Հիւպէր, այդ որոտումն կը սիրեմ, մանաւանդ լեռներուն մէջ։ Լսեցէք այս գեղեցիկ պայթումն . . . ։

— Բայց եթէ գլխի՛դ իյնար, վրայ բերաւ Ժիւլիէդ որ կ'դողար, չ'պիտի՞ վախնայիր։

— Մինթէ հայրիկն անանկ բաներէն կ'վախնա՞ր, պատասխանեց տղան. ես ալ անոր պէս չե՞մ։

Ապա, իր կտաւէ գլխարկն առնլով, զոր տունը մտնելու ատեն անկիւն մը նետեր էր, յարեց.

— Հիմայ կը վազեմ, կը թռիմ և քիչ ժամանակէն կը վերադառնամ։

ԳԼՈՒԽ Ը.

ՀԻՆ ԴԳԵԱՆՆ

Հիւպէր հաստատամիտ տղայ մ'էր։ Ուստի, անձրևն որ սաստիկ բռնած էր, որոտումն որ կ'գոռար,

փայլակներն որ ամպերն կը բոցավառէին, բանի տեղ չ'դնելով, առանց վարանելու սկսած էր իր ճամբան։

Եւ կ'ըսէր պիտի երթամ, և կառքը բերեմ։ Շիտակ կ'յառաջանար, ճամբուն հեռևելով կրցածին չափ շուտով։ Բայց յանկարծ կանգ առաւ. ամպ մը իր աչքերուն առջևէն անցաւ և իր բոլոր մարմինն սկսաւ դողալ, կայծակն իրմէ տաս քայլ հեռու ընկեր էր։

Քանի մը բոպէ անցան, և դեռ անկարող էր հասկնալ պատահածն։ Սակայն քիչ քիչ սթափեցաւ և վտանգն՝ որմէ ազատեր էր, հասկցաւ։ Իր միտքն անմիջապէս առ Աստուած դարձաւ, այն ատեն, ճամբուն վրայ ծունր դնելով, շնորհակալ եղաւ որ զինք այսպէս պաշտպանած էր։ Ապա սկսաւ նորէն քալել։

Քալեց, վազեց, դեռ քառորդի մը չափ, ապա Լաստենիքն տեսաւ, և քիչ ժամանակէ ետք, տան բոլորտիքն դառնալով դրան առջև գտնուեցաւ։ Վանդակապան բաց էր, առանց հարցնելու, Հիւպէր ներս մտաւ։

Առաջին անգամն էր որ իր աղգականներուն տունը կը մտնէր. բայց Ֆլորանս իրենց բնակարանն այնչափ շատ անգամ նկարագրած էր անոր, որ առանց վարանելու դրանդին երեք աստիճաններէն ելաւ և բակը մտաւ։ Իր նպատակն էր ալ կողմի փողը մտնել և ուղղակի Պարոն Ժէրալտին աշխատանոցն գնալ։ Պարոն Ժէրալտ հօր յանկարծական հանդիպումն իր միտքը փոխեց։

— Ո՞վ կայ հոն, կը պոռար ծերունին յառաջանալով և ինչո՞ւ դռնապանին չես դիմեր, դու պըզտիկ։ Դռնապաններն անցորդներուն պատասխան տալու համար են։

Հիւպէր գլխարկն հաներ էր։

— Անցորդ մը չեմ, պատասխանեց հանդարտօրէն այս յանդիմանական ձայնին. Հիւպէր Շիրինեան եմ։

Եւ կը նայէր իրօք իր մեծ հօր եղբօր։

— Դո՞ւ, Շիրինեան մը, պատասխանեց ծերունին։ Ո՛հ ոչ. բայց աւելի մուրացկանի՞ մը կերպարանքն ունիս։

Մտովի նա յարեց.

— Սակայն պարտաւոր չի՞ իր ժպիրդ ակնարկէն զինք ճանչնալ։

Ապա բարձրաձայն վրայ բերաւ.

— Ի՞նչ բան ունիս հոս։ Ո՞վ կը զրկէ քեզ։ Մի՛թէ . . . ։ Օ՞ն չուտ հեռացիր ասկից։

Հիւպէր անշարժ մնաց և պարզապէս ըսաւ.

— Պարոն Ժէրալտին բան մ՚ունիմ յայտնելու։

— Ժէրալտ հայր քեզ պէս տղու մը հետ գործ չունի։ Ես իր հայրն եմ, հասկցա՞ր, եթէ այդ չես գիտեր, քեզ պիտի սորվեցնեմ . . . ։ Դու իր տան մէջ ես, և հետևապէս տանս մէջ, և ահա քեզ կը հրամայեմ որ դուրս ելնես։

— Ի՞նչ կայ հայր իմ, հարցուց նոյն միջոցին Պարոն Ժէրալտ որ իր աշխատանոցէն կ՚ելնէր ու բակն կանցնէր։

— Այս կայ որ . . . այս կայ որ . . . պատաս-

խանեց ծերունին, հեղձուկ ձայնով, վասն զի իր եղբօր թոռին տեսքն իր հին ոխն գրգռեր էր, այս կայ որ . . . ։

— Բայց Հիւպէրն է, գոչեց Պարոն Ժէրալտ, որ տղան իսկոյն ճանչցաւ։

Ապա գիտելով որ թրջուած էր և ջրերն անգամ իր հագուստէն կ՚վազէին.

— Տէ՛ր Աստուած, ի՞նչ վիճակի մէջ է, զաւակս յարեց, և ինչպէ՞ս այսպիսի օդով կուգաք։ Միթէ գո՞յժ մը կ՚բերէք, ձեր մեծ հայրն . . . ։

— Մեծ հայրս լաւ վիճակի մէջ է, և չնորհակալ եմ, փութաց ըսել Հիւպէր։ Եկայ ձեզմէ խնդրել որ կառքն Ժիւլիէդին ու Ֆլորանսին խրկէք։

— Ֆլո՛, ո՞ւր է Ֆլոն, ո՞ւր է Ժիւլիէդ, հարց ու փորձ ըրաւ Պարոն Ժէրալտ հայր։ Միթէ այս փոթորկին ժամանակ դո՞ւրս կը գտնուին։ Ժէրալտ, ի՞նչ է ուրեմն օրիորդ Մագ Նէյլի գործն։

— Օրիորդ Մագ Նէյլ մեր զաւակներուն վրայ կը մտածէ, հայր իմ, պատասխանեց Պարոն Ժէրալտ անուշութեամբ։ Վասն զի անձրևն տեսնելով, ձիերն հանրակառին կապել տուաւ և գնաց մեր երկու աղջիկներն ու Ցովհաննա Տը լա Լիժէլ առնելու։

— Կառքը մեկնեցա՞ւ, ըսաւ այն ատեն Հիւպէր։ Բայց ինչպէ՞ս անոր չի հանդիպեցայ։

— Ուսկի՞ց կուգաք, զաւակս։

— Այժարանէն՝ ուր կը գտնուէին Ժիւլիէդ, Ֆլորանս, օրիորդ Տը լա Լիժէլ և Միէդ, պատասխանեց տղան։

— Ահա՛ նոր լուր մը, գոչեց Պարոն Ժէրալտ

հայր։ Ժիւլիէդ և Ֆլօ Մէտարին տան մէջ, այն անկրօն ծերուկին մօտ, այն բոլորովին կասկածելի մարդն. միթէ անկից աւելի վատ բան մը կա՞յ։

— Ո՜հ, հայր իմ, դու որ սովորաբար այնքան ներողամիտ ես, այս անծանօթին համար չատ խիստ կ'երևիս։ Ունի իրաւ (այդ մասին համամիտ եմ) տարօրինակ կերպեր, բայց, այդ իրեն յատուկ այլանդակութիւն մ'է։

— Որդեա՜կ, կը սխալիս։ Եթէ ինձ մտիկ ընէիր, այս կողմերէն զանի մռնտել կ'տայիր։ Բայց այդ ամենն մեզ չեն բացատրեր թէ, ինչո՞ւ համար այս յիմար Միէդն տղաքը հոն տարաւ։

Այս հարցում մ'էր։ Հիւպէր այդ մոռք առաւ, և խսկոյն պատմեց որ ամենքն ալ անձրևին բռնուելով Մէժ-լա-Ժոլիին ջրվէժին մօտ, և որովհետև Ժիւլիէդ մերժեր էր ժայռերուն մէջ պահուելու, հարկ եղեր էր ամենէ մօտաւոր տունն մտնել, որ այծարանն էր։

— Ֆլօ կ'մտածէր որ օրիորդ Մագ Նէյլ, փոթորիկն տեսնելով, կառքն ջրվէժը պիտի ղրկէր, յարեց տղան, բայց հոն ոչ ոք կը գտնուէր ալ։ Ասոր համար մեկնեցայ։ Կը մտածէի կառքն ճամբուն վրայ գտնելու և այծարանն ղրկելու։ Քանի որ չի հանդիպեցայ, մինչև հոս եկայ։

— Դո՞ւ ալ, առաջ ջրվէժն և ապա այծարանն ելի՞ր, հարցուց Պարոն Ժէրալտ հայր։

— Այո, Պարոն, և Ռըմի՞ ալ։

— Ժէրալտ, ըսաւ ծերունին, սաստիկ բարկացած. ինձ կ'երևի թէ այս տղայք մեզ կը ծաղրեն,

և չնչին բան մը դիս կ'արգիլէ այս տղուն լաւ դաս մը տալու։ Ինչ, մեր աղջկանց հետ կը տեսնուին, և մենք ալ այդ մասին բան մը չ'գիտենք . . . ։ Իրաւի շաւ աղէտ օրինակ կ'տան անոնց։ Ցանցանքն միայն անոնց վրայ դիր, եթէ Ֆլօրանս . . . ։

— Կ'աղաչեմ, հայր իմ, ընդմիջեց Պարոն Ժէրալտ, հիմայ այդ բանն մէկդի թողուենք։ Ամենէ ստիպողական բանն է կարծեմ, այս տղուն ուրիշ հագուստներ տալ։ Արդէն չափէն աւելի ուշացայ, քանի որ այնքան թրջած է, կրնայ շատ վտանգաւոր կերպով պաղիլ։ Այս հոգն տանելէ ետք, պիտի երթամ տղայքն առնլու։

Այս խօսքերն լմնցնելով, Պարոն Ժէրալտ իր աշխատանոցին մօտ գտնուած սենեակն մտաւ և հրնչակն զարկաւ։

Սպասաւոր մը ներս մտաւ.

— Ձիերն կիսակառքին կապել տուր, ըսաւ։ Բայց առաջ, այս տղան Զոէին տար և խնդրէ որ անոր ուրիշ հագուստ մը տայ։ (Զոէ խոհակերուհին էր և Հիւպէրին գրեթէ տարեկից որդի մ'ունէր)։

— Դնա, բարեկամս, յարեց Պարոն Ժէրալտ, այս անգամ խօսքն Հիւպէրին ուղղելով, և սպասող սպասաւորն ցոյց տալով։

— Բայց հոգ չէ, գոչեց տղան։ Բանէ մը պէտք չունիմ. այսպէս չատ ադէկ եմ։ Միթէ մանչ մը ջուրէ կ'վախնա՞յ։

— Իրաւունք ունի այդ չարաճճին, մրմռաց Պարոն Ժէրալտ հայր։ Այսպէս էի, երբ իր տարիքն ունէի, անձրևէ, հովէ, արևէ, ծիւնէ չէի վախնար, և

այս պատճառաւ է որ ընտիր առողջութիւն մը կը վայելեմ։

Պարոն Ժէրալտ ժպտեց իր հօր մտածումն լսելով, և ապա Հիւպէրին ըսաւ.

— Հնազանդէ, տղաս։

Հիւպէր հրամանի մ'առջև (բաւական է որ մեծ հօր կողմէն չ'դար) սովորաբար դլուխ չէր ծռեր, բայց այս անուշ և հանդարտ ձայնը լսելով, որ այնքան իշխանութեամբ լի էր, հնազանդեցաւ առանց պատասխանելու։

Պահ մ'ետք, երեցաւ, հաստ կոշիկներով, կտաւէ բաղէն մը հագած, և նոյն նիւթէ տաբատ մ'որ իր հասակին համար քիչ մ'երկայն էր և որ մինչև ծունկերն վերուցած էր։

Կիսակառքը պատրաստ էր, Պարոն Ժէրալտ տըղան ներս մղուց և անոր ետևէն մտաւ։

Հազիւ Լաստենիքի տունէն հազարամէտր մը հեռու էին, երբ Հիւպէր յայտնեց թէ ի՞նչ պատճառաւ չէր հանդիպած այն կառքին, ուր օրիորդ Մագ Նէյլ կը գտնուէր։ Ամենէ կարճ ճամբան որ Մէժ-ժօլիին ջրվէժն կ'տանէր, անձրևէն այնքան թրջուած էր, որ հանրակառին կառապանն ստիպուեր էր ուրիշ աւելի երկայն, բայց անշուշտ աւելի լաւ ճամբէ մ'երթալ, ինչպէս որ կիսակառքին կառավարն նոյնն ընելու ստիպուեցաւ։ Բայց առաջին ճամբան էր որ տղան բռներ էր, երբ այծարանէն կը մեկնէր։

— Ո՜հ, ըսաւ Հիւպէր իւրովի, հիմայ կը հասկնա՛մ։ Իսկ օրիորդ Մագ Նէյլ կրնայ ջրվէժին մօտ ուզածին չափ փայտ կտրել։

Բայց օրիորդ Մագ Նէյլ հոն բնաւ փայտ չէր կտրեր։ Ջրվէժն ոչ ոք գտնելով, մտածեր էր որ անձրևին առաջին կաթիլներն զգալով, տղայք Լաստենիքն վերադարձած պիտի լինէին։ Հրամայեր էր կառապանին շուտ մը տունն վերադառնալ. բայց կը վստահար որ այս կերպով Ժիւլիէդ, Ֆլորանս և Ցավհաննա (նա մանաւանդ Ժիւլիէդ) փոթորկին բռնուեր էին։

— Շուտ ըրէ, կ'ըսէր կառավարին։ Պէտք է որ տունը գտնուիմ երբ մեր աղջիկներն հոն հասնին, վասն զի այս խեղճ պզտիկներն խնամոց պէտք պիտի ունենան։

Բարի օրիորդին մտքէն բնաւ չէր անցներ որ չէ թէ Լաստենիքն, այլ այծարանն պէտք էր դիմել տղաքը գտնելու համար։

Պարոն Ժէրալտ քիչ ժամանակէ ետք այս բանն անոր բացատրեց, վասն զի նոյն ճամբուն հետևելով, հակառակ կողմէ, հանրակառքն իրարու պիտի հանդիպէին։

Օրիորդ Մագ Նէյլ խսկոյն առած ճամբան դարձաւ, և քիչ մ'ետք երկու կառքերն որ հիմայ միասին կը քալէին, այծարանին առջև հատան։

Ֆլորանս որ կ'սպասէր բնակարանին դուռը, վազեր էր, ձիերուն բոժոժներն լսելով։ Ոչմի անոր հետևեր էր։

— Ահա հանրակառն և հայրիկին կիսակառքն, գոչեց փոքր աղջիկն։ Ա՜հ, վերջապէս պիտի մեկնինք։

— Միկ, յարեց նա, Ժիւլիէդ շատ մը պատրաստէ, վասն զի հայրիկն կիսակառքին մէջն է և հայրիկն չի սիրեր սպասել։

Բայց Միէդ խթանի պէտք չունէր, վասն զի բոլորովին պատրաստ էր. Միէդ շատ կը փութար կախարդէն բաժնուելու։ Օրիորդ Մագ Նէյլ դեռ հանրակառն իջած չէր, և Պարոն Ժէրալտ դեռ կիսակառքէն ելած չէր, որ արդէն բարի աղջիկն Ժիւլիէդին կառքն ճամբուն վրայ կը քշէր։

Յովհաննա Տը լա Լիժէլ վերջինն էր որ տան մէջ մնացած էր, Հայր Մէտարն անոր մօտեցաւ, և աւելի մեծ ուշադրութեամբ անոր նայելով հարցուց, խօսքերն կտրելով ու վարանելով.

— Միթէ իրա՞ւ է . . . ։ Ձեր հայրն շատ ճամբորդած էր . . . ։ Ո՞ր երկիրներն . . . ։ Միթէ այդ դիտէ՞ք։

— Քիչ մ'ամեն տեղ, պատասխանեց Յովհաննա, հայր Մէտարին ըրած հարցումէն բաւական զարմացած, մինչ նաւավարներն ամեն տեղ չե՞ն երթար։

— Ա՜հ, նաւավա՞ր էր։

Եւ ծերունւոյն աչքերն աղջկէն չէին բաժնուեր։

— Առևտրական նաւարկութեան մէ՞ջ էր, անշո՞ւշտ, յարեց պահ մ'ետք աւելի կասկածաւոր երևելով։

— Ոչ, պատասխանեց Յովհաննա, պետական նաւարկութեան մէջ էր։ Հայրս ծովային տեղակալ էր։

Հայր Մէտարն յուզուեցաւ։ Իր դեղին աչքերն քթթեցան իր ակնոցին ետևէն, և իր ձեռքերն ըսկսան դողալ։ Նորատի աղջիկն կարծեց թէ, իրեն նորէն պիտի խօսի, վասն զի բերանն երկու անգամ բացաւ, բայց միայն այսչափ, ապա լուռ մնաց։

— Յովհաննա թեթև բարև մը տալէն ետք հեռացաւ ու Ժիւլիէդին մնացաւ։

Հայր Մէտարն անմիջապէս փութաց իր դուռն գոցելու, և երբ Պարոն Ժէրալտ այդ դրան զարկաւ շնորհակալ լինելու համար, շղթայներն արդէն գըրուած էին։ Անօգուտ է ըսելու թէ ծերունին նորէն չբացաւ։

— Օ՜ն, ըսաւ Պարոն Ժէրալտ, բոլորովին այլանդակ մարդ մ'է։ Ուրիշ անգամ շնորհակալիքս անոր պիտի յայտնեմ։

Եւ տղոց մօտ վերադարձաւ։

Ժիւլիէդ, Ֆլորանս, Յովհաննա և Միէդ սպասուհին օրիորդ Մագ Նէյլին հետ ընտանեկան հանրակառին մէջ նստեր էին։ Հիւպէր և Ռըմի բաց դռնակին առջև կանգուն կը մնային։

Պարոն Ժէրալտ երկու տղոց առաջարկեց կիսակառքին մէջ մտնելու (փոխարինին տակաւին չէր դարձած։) Այս վերջիններն մերժեցին և բացէ ի բաց մերժեցին։

— Ո՜չ, ո՜չ, Պարոն, ըսաւ Հիւպէր։

— Լաւագոյն կը սեպենք մեր մեծ հօր տունն հետիոտն վերադառնալ, յարեց Ռըմի։

— Ձիս քեռի կոչեցէք, զաւակներս, ըսաւ Պարոն Ժէրալտ։ Եւ ապա հնազանդեցէք, յարեց, կիսակառքն ցոյց տալով։

Երկու տղայք ստիպուեցան տեղի տալ։

Հանրակառն և կիսակառքն այծարանէն անմիջապէս հեռացան։ Կիսակառքն Հիւպէրն ու Ռըմին հին դղեակին կողմն կը տանէր, իսկ հանրակառն կը կը բերէր Լաստենիքի–տունն, Պարոն Ժէրալտն օրիորդ Մագ Նէյլն, երեք աղջիկներն և Միէդն։

Փոքրիկ պատուհանէն, զոր ինք դրան վրայ ծակած էր, հայր Մէտարն երկու կաքերուն մեկնիլն կ'դիտէր։

Քանի մը վայրկեան ետք Հիւպէր ու Ռըմի կ'ինջնէին տխրագին, մեծ տան մ'առջև, որ բլուրին ըստորոտն շինուած էր և ձորակին վրայ կը նայէր։ Ատենօք զայն դղեակ անուաներ էին, բայց այս անունը բնաւ յարմար չէր։

Այդ հին բնակարանն Շիրինեանց կը պատկանէր որ առենօք Էվրիի, Նըվիմանի, Կլորիէդի, և դեռ ուրիշ տեղերու տէրերն էին։

Իրենց հարստութեան ժամանակն անցեր էր...։ Եւ թէև ժէրալտ յաջողեր էր նորէն հարստանալու, իր հօրեղբայրն, տ'Էվրի (անդրանիկն) Հիւպէրին ու Ռըմիին մեծ հայրն, չքաւորութեան, աղքատութեան մէջ կ'ապրէր, այս անկահ բնակարանին մէջ, զոր մեծ զոհողութեանց գնով կրցեր էր պահել, և անոր մէջ, քանի տարիէ ի վեր ամենէ կարևոր նորոգութիւններն ընելէ ստիպուած էր հրաժարիլ։

Մանր նեղութիւնն ալ ընկեր էր ծեր Պարոնն, իրօք թշուառութեան կերպարանն պիտի առնուր, եթէ Պարոն ժէրալտի գործածած փափկամտութեան լի միջոցներով, իր ազգականին օգնութեան չ'հասնէր, որքան որ այս վերջինն կասկած չունէր այդ մասին։

Օրինակի համար, երբ Պարոն տ'Էվրի, իր անձնական հունձքն ծախել ուզէր, գնոզ մը կը գտնէր որ ընթացիկ գինէն շատ աւելի բարձր կը

գնէր։ Երբ հարկ լինէր, ստակ փոխ ուզել (և այդ ստէպ կը պատահէր) չ'նայելով այն աւանդներն որով տուած էր իր բնակարանն որ գրեթէ արժողութիւն չունէր, կը գտնուէր պատրաստ փոխատու մը որ շատ քիչ տոկոս կը պահանջէր։

Իր գործերուն երբէք մեծ հոգ չ'տանելով Դըղեակատէրն բնաւ չէր զարմանար, որ իր աղքատութեան հակառակ, կրնար տակաւին բաւական վայելուչ դիրք մը ցոյց տալ Ինչպէ՞ս ուրեմն պիտի մտածէր թէ, ծայրը ծայրին չ'պիտի կրնար բերել, առանց այն անձին օգնութեան որ բոլոր երկրին մէջ, իրաւամբ, Լաուքինէ+է Բարէ Պարոն կը կոչուէր։

Պարոն Բերէն տ'Էվրի, իր եղբօր, որ է Պարոն ժէրալտին հայրն, նշանաւոր հակապատկերն էր։ Նիհար, ղժգոյն և բարձրահասակ, առտուանէն թիկնոցի մը մէջ փաթթուած, խրոխտ կերպարանով, կեղծամ մը հագած, փոքր ինչ թեթևօրէն արարողասէր, կը ներկայացնէր այն տիպարն ծեր ազնուականներուն որ բան մը չ'մոռնալով, բան մը սորված չէին։

Շարլ ժ. ին ատեն, 1830 ին, արքայապահ էր։ Այն ատեն, Սէվէն լեռներուն իր հին ու կէս փլուած դղեակն քաշուեր էր, ուրկից յիսուն տարիէ ի վեր չէր մեկնած։

Կ'ապրէր (տեսանք այդ) մեծ նեղութեան մէջ, իր երկու թոռներուն հետ, Հիւպէր ու Ռըմի որ որբ էին, և ունէր միայն մէկ սպասուհի, որու ամուսինն, օրական աշխատաւոր մ'էր և իր գործերուն մէջ տեղ, իբրև պարտիզպան և բանհոգ կը ծառայէր։ Այդ մարդուն անունն էր Ժարէ։

Սակայն, երբ Հիւպէր ու Ռըմի, Պարոն Թէրալ-տին հին դղեակն մտնելու տեղ, դրան դուրսը կեցան։ Հոն, միասին դաղտնի խորհուրդ ըրին։

Խորհրդակցութեան առարկան շատ կարևոր էր։ Տղայք կ'ուզէին ներս մտնել, անտես մնալով իրենց մեծ հօրմէն։

— Ծառաստանէն անցնինք, կ'ըսէր Հիւպէր իր եղբօր։ Բակէն անցնիլն անխոհեմութիւն մ'է, վասն զի մեծ հայրն կրնայ մեզ իր պատուհանէն տեսնել։

— Ինչպէս որ ուզես, կ'պատասխանէր Ռըմի, բայց առաջին անգամն է որ այսչափ վախկոտ կ'երևիս Հիւպէր։ Սովորաբար մեծ հօրմէն այսչափ չես վախնար։ Վերջապէս այսօր ո՞ր տարօրինակ բանն ըրինք։ Առանց իր հրամանին դուրս ելանք, մեր դասին ժամուն ներկայ չէինք . . . ։ Լա՜ւ ուրեմն, մի թէ այս բանս ամեն շաբաթ երկու կամ երեք անգամ չ'պատահի՞ր, միթէ ամեն անգամ բակէն ներս չե՞նք մտներ։

— Այո, բայց երբէք այս հագուստն չեմ ունեցած, պատասխանեց Հիւպէր, իր հատ կտաւէ լաթերն ցոյց տալով։ Եթէ մեծ հայրը զիս այսպէս հագուած տեսնէ, շարունակեց տղան, զիս հարց ու փորձ պիտի ընէ։ Ի՞նչ պատասխան պիտի տամ։ Միթէ պիտի ըսե՞մ թէ Լաստենիքէն կուգամ։ Ոչ, հազար անգամ ո՛չ։ Բայց, մի կարծեր թէ քեզ այս ըսելով պատիժէ մը կը վախնամ, ոչ, այլ չեմ ուզեր զանի վշտացնել։ Գիտե՞ս, որչափ բարկացած կ'երևի երբ մարդ իր եղբօր վրայ խօսի։

— Իրաւունք ունիս, վրայ բերաւ Ռըմի, անշուշտ

իր ունքերն պիտի սրստէ, և աւելի լաւ է որ Լաստենիքն երթայդ չ'գիտնայ։ Ծառաստանէն անցնինք, ապա բանջարեղէնի պարտիզէն պիտի դառնանք, ետքը խոհանոցը կը հասնինք, և վերջապէս մեր սենեակն ուր հագուստդ կը փոխես։

Այն ատեն երկու եղբայրներն իրենց որոշման հաւանութիւնը չարժեցան, և չ'նայելով անձրևին որ միշտ կ'վազէր, չ'վարանեցան բաւական ոլորուտ ճամբայ մ'ընելու ծառաստանն հասնելու համար։

Քիչ մ'ետք, իրենց սենեկին դրան առջև գոհութեամբ հառաչելով գտնուեցան, իրենց ճամբուն վրայ ոչ մէկուն հանդիպեր էին։ Բայց մեծ եղան իրենց զարմանքն ու իրենց յուսապրկութիւնն, երբ փութով ներս մտնելէն ետք, տեսան իրենց մեծ հայրն, այո, իրենց մեծ հայրն, սենեակը նստած ուր իրենց կ'սպասէր։

Ծերունին արդէն լսած էր որ կասք մ'իր տան առջև կանգ առեր էր։ Այն ատեն, պատուհանին մօտեցած ու Լաստենիքին կիսակառքն ճանչցած էր, զարմանալով, մանաւանդ դժգոհութեամբ տեսեր էր որ Հիւպէր ու Ռըմի վար կ'իջնէին։

Ի՞նչ կը նշանակէր այս։ Պարոն Շիրինեան տ'էվրի այս հարցումն կ'ընէր ինք զինքին, կամ աւելի լաւ ըսելու համար, կը մտադրէր իւրովի այս հարցումն իր թոռերուն ընելու։ Բայց անոնք երևան չելնելով, միտքը կասկած առաւ որ վարպետութիւն մը կ'բանեցնէին, և իսկոյն անոնց սենեակն ելաւ, միտքը դնելով հոն սպասելու և զանոնք հարց ու փորձ ընելու։

— Ուսկից կուգաք, հարցուց, ուրեմն երկու եղբայրներուն երբ անոնք հազիւ ներս մտած էին։

Մեծ հայր, Մէժ-լա-ժոլիին ջրվէժէն կ'գառնանք, պատասխանեց Հիւպէր։

— Ա՜հ, և ապա՞, հարցուց ծերունին, Հիւպէրին հագուստն դիտելով։

— Մեծ հայր, շարունակեց Հիւպէր, փոթորկէն բռնուելով, այծարանն ապաւէն փնտռեցինք։

— Ուրիշ տեղ չ'գացի՞ք։

— Ո՛չ, մեծ հայր, ըսաւ այս անգամ Ռըմի։

— Ինչո՞ւ համար սուտ կը խօսիք, վրայ բերաւ Պարոն Շիրինեան տ'Էվրի խստութեամբ։

— Մեծ հայր, սուտ չեմ խօսիր, կմկմաց Ռըմի։ Ձեզ կը հաւաստեմ որ ես . . . ։

— Լռեցէք։ Երկուքնիդ ալ սուտ կ'խօսիք, վասն զի երկուքնիդ ալ ուղղամտութենէ հեռի էք, երկուքնիդ ալ կ'ուզէք գիս խաբել։ Միթէ կարո՞ղ էք հակառակն պնդել։

Հիւպէր ու Ռըմի լուռ մնացին։

— Ձեր լռութիւնն խոստովանութիւն մ'է, շարունակեց մեծ հայրն, քիչ մը դադար առնէ ետք։ Ձեզ չեմ պատժեր, որովհետև ձեր սաստիկ խոստովանեցաք։ Վասն զի, գիս լաւ մտիկ ըրէք, զաւակներս, սուտ կ'խօսի մարդ, ոչ միայն եթէ այո՛ ըսէ ոչ ըսելու տեղ, կամ ոչ, այո ըսելու տեղ. սուտ կ'խօսի փոխադարձաբար, ոչ միայն երբ կ'հաստատէ ճշմարտութեան հակառակն, այլ նաև սուտ կ'խօսի (և այս բանն լաւ մտիկ ըրէք) երբ ճշմարտութենէ կը հեռանայ, երբ, պատրուակի մը միջոցաւ, կը ջանայ խնդիր փոխել անոնց առջև որ կարող ու պարտաւոր են մեզ հարց ու փորձի դնել։ Եւ ահա այս էր ձեր ըրածն։ Եւ հիմայ կ'ուզեմ որ ինձ ըսէք թէ ի՞նչ պատճառաւ իմ տունս Լաստենիքին կառքով վերադարձաք։

Հիւպէր յանձն առաւ պատասխանել. Կարճ խօսեցաւ պատմելով միայն ինչ որ հարկ էր ըսելու։

Իր մեծ հայրն անոր ուշադիր մտիկ կ'ընէր, ունքըն պուստելով, ինչպէս որ կ'ընէր երբ վրդոված էր։

Երբ Հիւպէր խօսքն աւարտեց, ծերունին լռեց, անշուշտ իր այլ և այլ մտածումներով պաշարուած։

Տղան այս լռութիւնն յարգեց, իսկ պահ մ'ետք վրայ բերաւ.

— Մեծ հայր, ձեզ կը հաւաստեմ որ յանցանքն մերը չէ։ Անկարող եղանք կիսակառքն մերժել. ժէրալա քեռին մեզ ստիպեց։

Ժէրալա քեռի՞։ Այս բառերն լսելով, Պարոն Շիրինեան տ'Էվրի չի կրցաւ թեթև շարժում մը զսպել։

— Բայց այո, շարունակեց Հիւպէր, որ այդ շարժումն դիտեր էր, մեզ ըսաւ որ գինք քեռի կոչենք։ Մեծ հայր, միթէ այդ մասին գինք կը պարսաւէ՞ք։

— Քեզմէ խնդրեցի որ պատասխանես և չէ թէ հարցումներ ընես, պատասխանեց ծերունին համառօտ։

Ապա, այս խօսքերը լմնցնելով ոտք ելաւ և իր թոռներուն սենեկէն հեռացաւ։

Այս վերջիններն մինակ մնալով, լուռ ու մունջ իրարու երես նայեցան։

— Փոյթ չէ, ըսաւ Ռըմի, իրաւի բաղդաւոր ենք։

Պատիժ չ'կայ։ Միայն, եթէ սպասելով կորուստ չը-նենք, վասն զի, վերջապէս, մեր դասն մէջ խաղաց։

— Հանդարտէ, պատասխանեց Հիւպէր, երկիւղ չ'կայ։ Մեծ հայրն, առ այժմ, մեզ պատժելու միտք չունի։

— Միթէ այդպէ՞ս կարծես։

— Այդ մասին վստահ եմ։ Զի մոռացեր մեր, այլ իր եղբօր վրայ զոր իր սրտին խորէն միշտ կը սիրէ, ինչպէս որ իր եղբայրն ալ զինք թերևս կը սիրէ։

— Ո՜հ, այդպէս չի կրնար լինիլ, ըսաւ Ռըմի։ Եթէ զիրար սիրէին, կարծե՞ս թէ այդպէս անհաշտ պիտի մնային։

— Ինչո՞ւ չէ, եթէ այդ մասին ծանր պատճառներ ունին։ Ենթադրէ անգամ մը որ երկուքիս ալ մեծ ենք։

— Ի՞նթադրեմ այդ։

— Շատ մեծ յիմարութիւն մը կ'ընենք իրարու հետ, կամայ կամ ակամայ չենք տեսնուիր, շարունակ կռիւ կը փնտռենք։ Ըսէ՛ ինձ, միթէ դու կրնայիր դիս բնաւ չի սիրեր Իսկ ես, կ'զգամ որ այդ անկարելի պիտի լինէր։ Լա՜ւ ուրեմն, կարծելով թէ իրաւունք ունիմ, բնաւ չ'պիտի դառնայի, զէթ ե՛ս առաջ։ Գիտես, ատեն ատեն կ'մտածեմ թէ այսպէս է մեծ հօր և կարելի է իր եղբօր համար։

— Բայց այն ատեն, զիտել տուաւ Ռըմի, կ'երևի թէ մին և թէ միւսն, դժբաղդ են։

— Այդ անկարելի է, ըսաւ Հիւպէր։

— Ո՜հ, բայց զիտես, վրայ բերաւ Ռըմի, եթէ անգամ մը գժտինք, երբ մեծ լինինք, մեր կռիւն

երկար ժամանակ չ'պիտի տևէ։ Պէտք պիտի չունենաս հաշտութեան առաջին փորձն ընելու, զվասն զի այդ ես պիտի ընեմ։

— Այդ մասին վստահ եմ, պատասխանեց Հիւպէր։

Երկու եղբարք, այն ատեն, իրենց խօսակցութիւնն դադրեցուցին։ Ճաշէն առաջ հազիւ ժամ մ'ունէին, իրենց սեղանին առջև նստան և իրենց դասերը սկսան։

Բայց նախ, Հիւպէր խնամք տարեր էր իր հագուստն փոխելու։

ԳԼՈՒԽ Թ.

ՎԱԼ-ՏՈՐԷԻ ՎԱՆՔՆ

Բայց ի Լաստենիք գործերն ուրիշ կերպարան մ'առեր էին։

Նախ Ֆլորանս, երբ ներս մտաւ, իր մեծ հօր մօտ վազեց, և սկսաւ պատմել ու պատմել, տաս վայրկեանի չափ . . . : Այնքա՜ն շատ բան ունէր ըսելու։ Հապա մողէսներն . . . , հապա ջրվէժն . . . , հապա այծարանն . . . , հապա Յովհաննա Տը լա Լիժէլ, որու համար խոյրաւոր մարդն դուռը կը բանար, բայց բնաւ հոգ չէր ըներ, միւսները դրան առջև թողու . . . , հապա Միէդ, որ բաւական յիմար էր կախարդներու հաւատալու . . . , և Ժիլիէդ որ վախցած ու մարած էր։

Իսկ Ֆլորանս, որ չափէն աւելի զրգռուած էր, ամեն բան կը խառնակէր, աւելի շուտ պատմելու փափաքով։

— Երթանք քոյրդ տեսնելու, ըսաւ Պարոն Ժէրալտ հայր, երբ իմացաւ որ Ժիւլիէդ սովորականէն աւելի հիւանդ էր։

Այն ատեն Ֆլորանս անոր ձեռքէն բռնելով նորատի հիւանդին սենեակն ելաւ։

Ժիւլիէդ արդէն պառկած էր։ Օրիորդ Մադ Նէյլ և Յովհաննա անոր հագուստներն հաներ էին և Միէդ անոր անկողինն կը տաքցնէր (վասն զի դեռ կը սառփար,) ապա անոր շատ տաք ըմպելի մը տուած էին որ խմէ, և խեղճ աղջիկն յոգնած դադրած շուտով քնացեր էր։

Պարոն Ժէրալտ հայր նոյն միջոցին ներս մտաւ։ Փոքրիկ աղջկան մօտեցաւ, անոր նայեցաւ, զլուխն օրօրեց և խօսքն իր որդւոյն ուղղելով։

— Ժէրալտ ըսաւ, մենք ամենքս այս տեղ ամենէ պարզ ողջմտութենէ զուրկ ենք։ Եթէ աղջիկդ այսօր հիւանդ է, և իրաք հիւանդ է, հաւատա ինձ, որ յանցանքն մերն է։ Ֆլորին հետ լեռ ու ձոր դնալու տեղ, պէտք էր որ տունն հանդարտ մնար և խաղար պէպէկին և այս փոքրիկին հետ (իր ձեռքն Յովհաննային ուսին վրայ դնելով) զոր հոս բերել տուիր, կարծեմ իրեն ընկերանալու համար։ Անշահ խորհուրդ մ'ունեցար այդ մասին, այո՛, կը կրկնեմ և իրաւունք ունիմ։

Այս խօսքերուն վրայ Յովհաննա կարմրեցաւ և իր աչքերն արտասուքով լեցուեցան։ Իրաւի, Պարոն

Ժէրալտ հայր իրեն հետ անհաշտ կը մնար։ Եւ սակայն որչա՛փ բարի կերպարան մ'ունէր։

— Հայր իմ, ըսաւ Պարոն Ժէրալտ մեղմաձայն ծերունւոյն, աչօք նորատի աղջիկն ցոյց տալով, կը վախնամ որ այս աղջկան վիշտ կը պատճառես։ Դիտէ զինք անգամ մը, ահա՛ պատրաստ է լալու։

— Այդ իրա՞ւ է, գոչեց Պարոն Ժէրալտ հայր, Յովհաննային թուշէն բռնելով և իր աչքերուն մէջ նայելով։ Կրողը տանի պզտիկ աղջիկներն որ ամեն ըսածիդ կուլան։ Մտիկ ըրէ, փոքրիկս, եթէ քեզ վշտացուցի նպատակս այդ չէր։ Ժէրալտը կը պարսաւեմ և չէ թէ քեզ։ Դու, գիտեմ այդ, բարի՛ զաւակ մ'ես, որ չ'վարանեցար մօրդ օգնելու անծանօթ մարդու մը տունն գալով։ Բայց, միթէ ոյժն պիտի ունենա՞ս պարոքն՝ զոր մօրդ սիրուն համար յանձն առիր, կատարել։ Անշուշտ, դու կարծես թէ կարող ես։ Կարելի է Ժէրալտ ալ այդ կարծիքն ունի։ Բայց ես, այդ չեմ կարծեր։ Վերջապէս ապագան մեզ այդ պիտի ցուցնէ։

Պահ մը լուռ մնաց, ապա սկսաւ ուրիշ նիւթի մը վրայ խորհիլ։

— Իսկ Ֆլորին գալով, յարեց, նոր որոշումներ պիտի ընենք որ այսուհետև իր ժամանակն չանցնէ սահակներով որ . . . ։

— Ո՜հ, մեծ հայրիկ, բողոքեց Ֆլո, իր մեծ հօր խօսքն կտրելով. Հիւսիսէր ու Ուրմի սահակներ չեն, այլ շատ սիրուն տղայք են, և ես ալ զանոնք շատ կը սիրեմ։ Բայց ասա՛ մեծ հայրիկ, իմ ազգականներս են, չես կրնար հակառակն ըսել, և պէտք է որ

ինձի պէս պզտիկ աղջիկ մը իր ազգականներն սիրէ՝ այսպէս չէ՞։

Փոքր աղջիկն այս վերջի խօսքերն՝ կամացուկ արտասաներ էր, և իր մեծ հօր նայելով։ Ֆլորանս պատասխանի մը կ'սպասէր։ Բայց Պարոն Ժէրալտ հայր չ'պատասխանեց։

Պարոն Ժէրալտ հայր բնաւ սխալած չէր։ Ժիւլիէդ իրօք հիւանդ էր։ Տենդային ու մռայլոյզ գիշեր մ'անցուց։ Առաւ հիւանդութիւնն սասակացաւ։ Բժիշկն, կոչուելով, յայտնեց որ ցուրտէն յառաջ եկած ջղատապ մ'էր։

— Մանր է, նկատելով խեղճ աղջկան հիւանդոտ վիճակն, ըսաւ Պարոն Ժէրալտին։ Բայց մի վախնաք, հիւանդութիւնն պիտի բուժենք, Աստուծոյ օգնութեամբ։ բայց անդուլ խնամոց պէտք կայ։ Լաւ միտքս ընկաւ. Ֆլորանն հեռացուցէք։ Այս աղջիկն այնքա՞ն անհանդարտ է որ իր քոյրն պիտի նեղացնէ։

Այս խմաստուն խրատին անսալով, Պարոն Ժէրալտ Ֆլորանսին արգիլեց Ժիւլիէդին սենեակը մտնելու։ Ֆլորանս այս արգելքը լսելով, քիչ մը լացաւ, վասն զի իր քոյրն կը սիրէր, ապա, քիչ մը մտածեց ու իր արտասուքները սրբեց։

— Ո՜հ, ըսաւ իւրովի, Ժիւլիէդ պիտի բժիշկուի։ Եւ ես ալ, իր հիւանդութեան ժամանակ, Յովհաննան բոլորովին պիտի գրաւեմ։ Քիչ մը ծանրագլուխ և մանաւանդ չափէն աւելի բանաւոր, բայց ի՞նչ փոյթ, անոր ծանրութիւնն պիտի ուղղեմ և միասին պիտի խաղանք։

Բայց Ֆլորանս կը սխալէր։ Չի կրցաւ Յովհաննան աղէլ, վասն զի Յովհաննա Ժիւլիէդին մտա գնաց։

Այս վերջինն անդադար նորատի աղջիկն կ'ուզէր, և այս անգիտակ ինքնասիրութեան փարած, որ հիւանդագին ու երես առած տղոց յատուկ է, կը պահանջէր որ Յովհաննա շարունակ իր մօտ կենայ։ Միայն անոր ձեռքը կ'ուզէր իր թէյն և իր դեղը առնուլ, և երբ ջերմն կ'այրէր, կամ հաղէն կոկորդը կը պատռէր, դարձեալ Յովհաննա կը կոչէր։

Յովհաննա անորմէ չէր բաժնուեր։ Միշտ հոն էր, ուշադիր՝ փոքրիկ աղջկան ամենէ սնոտի փափաքներն կանխելու պատրաստ, և իր ամենէ աննշան քըմայից հնազանդելով։ Ա՜հ, ոչինչ բանի մը համար չէր որ Մաքսիմ նաւապետն արի աղջիկ մը կանուանէր զինք։ Արի՞ էր, աւելի քան իր տարեկիցներն, այնքա՞ն իր մօր կենաց սովորութիւններն առեր էր, որ սովորեր էր ինք զինքն մոռնալ պարտք մը կատարելու համար։

Օրիորդ Մագ Նէյլ, որ նոյնպէս Ժիւլիէդէն չէր բաժնուեր, անդադար այս տասն երեք տարեկան աղջկան բարի բնաւորութեան վրայ կ'զմայլէր։

— Ա՜հ, Պարոն, կ'ըսէր Պարոն Ժէրալտին, այս զմայլումով որ իր բնաւորութեան հիմն կը կազմէր, զմայլա՜ծ եմ։ Ի՞նչ սիրտ, ի՞նչ անուշութիւն, և ի՞նչ համբերութիւն։ Ժիւլիէդ սակայն ատեն ատեն շատ պահանջկոտ է. (խեղճ աղջիկն այնքան կը տառապի։) Բայց Յովհաննա միշտ հանդարտ ու ժպտուն կը մնայ։ Հրեշտակ մ'է այն, Պարոն, հրեշտակ մը, և որչա՜փ սիրուն ընկերուհի մ'է մեր Ժիւլիէդին համար։ Իրեն չնորհիւ խեղճ փոքրիկն պիտի բժշկուի։

— Բայց, սիրելի օրիորդ Մագ Նէյլ, կը պատաս-

խանէր Պարոն Ժէրալտ, այս աղջիկն կը յոգնի։ Զանի դժգոյն ու նիհարցած կը գտնեմ։ Ձեզ կ'աղաչեմ որ իր առողջութեան վրայ հսկէք, և եթէ հարկ լինի, ձեր իշխանութիւնը գործածէք, որպէս զի կարևոր հանգիստ վայելէ։

Եւ Յովհաննա օրիորդ Մագ Նէյլին խորհրդովը կը հաւանէր հանգստանալու, բայց Ժիւլիէդ զայն իսկոյն կը պահանջէր և իր անձնուէր ընկերուհին ալ շուտ մ'իր քով կը վերադառնար։

Տասն երկու օր այսպէս անցան, տասն երկու օր երբ մեր նորատի դիւցազնուհւոյն արիութիւնն պահ մը չ'դադրեցաւ։ Այս ժամանակն անցնելէն ետք Ժիւլիէդ սկսաւ քիչ քիչ բժշկութեան երես տեսնել. այս տկար մարմնին մէջ դիտութիւնն նորէն յաղթութիւն տարեր էր։

Տասն երրորդ օրն, առաւօտուն, երբ Յովհաննա փոքրիկ հիւանդին քով նստած բարձրաձայն կը կարդար գիրք մը, Պարոն Ժէրալտ հայր ներս մտաւ։ Միէդ երկու բարեկամուհիներուն հետ միայն կը գտնուէր։

— Մեծ հայրիկ, ըսաւ Ժիւլիէդ, այսօր շատ աւելի լաւ եմ։

— Աստուծմէ շնորհակալ եղիր աղջիկս, պատասխանեց ծերունին, աղջիկն համբուրելով։ Եթէ մեզ հիւանդութիւն զրկէ, մեզ բժշկութիւն ալ կը զրկէ։ Առաջին պարագային մէջ պարտաւոր ենք հընազանդիլ, երկրորդին, զանի օրհնել։ Այս արդէն գիտես, այդ մասին չեմ տարակուսիր։

— Այո, մեծ հայրիկ։ Հայրիկն վաղուց ինձ այդ

բանն սորվեցուց, նոյնպէս օրիորդ Մագ Նէյլ։ Եւ Յովհաննա ալ այս օրերս նոյնն ըսաւ։

— Ի՞նք ալ քեզ այդ ըսաւ։ Յուսալի է այդ իր կողմէ։ Բարի զաւակ մ'է, և իր մայրն լաւ կրթած է զանի։

— Օ՜ն, օ՜ն, պզտիկ աղջիկս, ըսաւ հայրական կերպով Յովհաննային ուսին վրայ զարնելով, ինձ լաւ մը նայէ, և աչքերդ այդպէս գետինն մի ծռեր։ Ես քեզ միայն ճշմարիտն կ'ըսեմ, և չեմ սիրեր բընաւ քեզ դովեստ տալ։

Այս, յանկարծ նորատի աղջկան յոգնած կերպարանէն զարմացած, ըսաւ.

— Դնա, գլխարկդ առ, փոքրիկ։ Քեզ այսօր պիտի առնեմ, հետս տանիմ։

— Ո՞ւր, մեծ հայրիկ . . . ուզեց բողոքել Ժիւլիէդ։

— Լուռ կեցիր, պզտիկ աղջիկ։ Այսպէս ինքնասէր մի լինիր։ Բարեկամուհիդ շատ, այո, շատ յոգնեցաւ քեզ խնամելու համար։ Օդէ ու շարժումէ զուրկէ, նայէ անգամ մ'իր դէմքն, ճերմակ թղթի կը նմանի։ Այս պատճառաւ է որ անոր արձակուրդ պիտի տամ։

Ժիւլիէդ չի համարձակեցաւ պնդել։ Իսկ Յովհաննա՝ ծերունւոյն նշմարին վրայ, դնաց իր սենեակն որպէս զի իր գլխարկն առնու։

Պարոն Ժէրալտ հայր զրեթէ իսկոյն փոքր հիւանդէն բաժնուեցաւ։ Երբ սանդուղքն վար կ'իջնէր ուրախ խնդուկ մը լսեց ու դարձաւ։ Տեսաւ այն ատեն Ֆլորանս որ բազրիկին վրայ առնարար հեծած իր եաւէն վար կ'իջնէր։

— Ֆլը, պոռաց նա, այդ անպիտան խաղն դադրեցուր, և գնա հօրդ ու օրիորդ Մագ Նէյլին իմացնել թէ դու և Յովհաննան հետս պիտի գաք։

— Ուրախալի է որ վերջապէս Յովհաննա անգամ մը հետս դուրս պիտի ելնէ, պատասխանեց փոքրիկ աղջիկն, շարունակելով միշտ բաղրիկին վրայէն իջնելն։ Տասն երկու օր կայ որ շատ կը նեղանամ։

— Ֆլը, քեզ պատուիրեցի որ այդ կերպով վար չ'իջնես, վրայ բերաւ Ծերունին դժգոհ։ Վատանգաւոր խաղ մ'է այդ, և շատ անյարմար խաղ մ'է քեզ պէս փոքր աղջկան մը համար։ Արժանի ես որ քեզ տունն թողում որպէս զի հնազանդիլ սորվիս, և ես ալ քեզ . . . ։

Երկու փափուկ թեւեր որ իր վիզն շրջապատեցին և պզտիկ բերան մը գոր իր այտին վրայ զգաց, իր խօսքն լմնցնելու արգելք եղան։

— Ա՜հա՜ քեզ, ըսաւ փոքր աղջիկը, որ քաջ գիտէր թէ մեծ հայր մ'իր թոռին գգուանաց չի կրնալ դիմադրել, ա՜հա՜, մեծ հայրիկ, դիս մի յանդիմաներ և մանաւանդ մի պատժեր։ Ապա, անմիջապէս յարեց։

— Մեծ հայրիկս, ո՞ւր պիտի երթանք, ըսէ։

— Ո՞ւր որ ուզես, աղջիկս։

— Ուր որ ուզե՞մ։ Բայց ո՞ւր կ'ուզեմ երթալ։ Ա՜հ այս, գիտեմ . . . ։ Կ'ուզեմ Վալ-Տորէի վանքն երթալ։

— Երթանք Վալ-Տորէի վանքը, պատասխանեց Պարոն Ծերալտ հայր, թէև քիչ մը հեռու և քիչ մը բարձրակէտ է ինձ համար, քանի որ ես հիմակ տասն երեք տարեկան ոտքերս չունիմ։

— Ի՞նչ փոյթ, պատասխանեց Ֆլորանս, քանի որ երեքնիս ալ, մեր եօթ մղոնի համար, կոչիկներ պիտի հագնինք։

— Հիմայ, գլխարկդ հագիր, և մանաւանդ մի մոռնար հօրդ ու օրիորդ Մագ Նէյլին իմացնել որ դուրս պիտի ելնենք։

Ֆլորանս իսկոյն աներևոյթ եղաւ։ Ճամբուն վրայ սպասաւորի մը հանդիպեցաւ և անոր յանձնեց իր հօր ու օրիորդ Մագ Նէյլի մօտ կատարելիք պաշտօնը։ ապա, իր ձեռքն ընկած գլխարկն առնլով, իր մեծ հօր մօտ վազեց։

Յովհաննա Տը լա Լիժէլ պահ մ'ետք ծերունւոյն ու փոքր աղջկան ընկերացաւ, և երեքն ալ այն ատեն մեկնեցան տունէն Վալ-Տորէի վանքն երթալու համար։

Վալ-Տորէի վանքն զոր շատ հին ժամանակ Ֆլորանշիսկեան կրօնաւորներ շիներ էին բլուրի մը գագաթն, բարերեր ու արևաշատ ձորակի մը վրայ (անկից կուգար իր անունն Վալ-Տորէ, որ Ֆրանսերէն ոսկեձիր ձորակն կը նշանակէ,) հիմայ աւերակներու կոյտ մ'է միայն։ Այնպէս որ հիմայ այդ հին վանքէն մնացած է միայն քանի մը մողէսալի պատեր, կիսակործան սիւնակներ որ մատաղ յեսին բեկորներն են, և քարաշէն սանդուղի մը մէկ քանի աստիճաններն։

Ֆլորանս ինչպէ՞ս կը սիրէր այս ամայի վայրն այցելել։ Նոյն ինք Յովհաննային նկարագրեց զայն։

— Գիտէք, ըսաւ նա, նորատի աղջկան, Վալ-Տորէի վանքն բլուրի մը վրայ է, և չկայ գրօսանք մը

այնքա՛ն հրապուրելի, որքա՛ն բարմերն ելնելն։ Նոյնպես, մարդ ամպերուն աւելի մօտ կը դտնուի, և ապա ծռելով կարծես թէ (ո՛հ, այդ շատ զուարճալի է) ամեն բան վարը շատ փոքր է, և ապա... և ապա... աւերակներն շատ կը սիրեմ։ Ինչո՞ւ, այդ բնաւ չեմ գիտեր։ Այս խօսքերն աւարտելով փոքրիկ աղջիկն Լաստենիքի–քաղաքն կը մտնէր։ Յովհաննաին հետ կը քալէր։ Պարոն Ժէրալտ հայր անոնց կը հետեւէր։

Շատ շատ, կէս օրը կէս ժամ անցած էր։ Տղայք դեռ դպրոցը վերադարձած չէին, և հետեւապէս Պարոն Ժէրալտ հօր դիմաւորելու վազեցին։ Շատ կը սիրէին այս ծերունին որ երբեմն խիստ կ'խօսէր, բայց անոնց երես ալ կուտար յանդիմանելու ատեն։

Սակայն այդ օրն, Պարոն Ժէրալտ հայր հազիւ ուշադրութիւն կ'ընէր բոլոր այս տղոց որ իր բոլորտիքն հաւաքուեր էին։ Կը նայէր նա տնակներէն մին, ունքերն պռսաելով և դժգոհ կերպարան մը առնելով։

— Մեծ հայրիկ, միթէ կուգա՞ք, հարցուց շուտ մը Ֆլորանս, որ չէր սիրեր երկար ժամանակ նոյն տեղը մնալ։

Բայց, պատասխանելու տեղ, ծերունին հարցուց.

— Ո՞վ է այդ երկայն սատանան, ան մօրուքով, զոր հոն կը տեսնեմ։ (միշտ նոյն փոքր տան կը նայէր։

— Մեծ հայրիկ, նորեկ մ'է այն, յարեց պզտիկ աղջիկն։ Անոր նման երեք ուրիշ հատ ևս կան հոս։ Ամենն ալ երկայն են. բայց, ամենուն մօրուքն այսչափ սև չէ։

— Եւ միթէ հայրդ գործատան մէջ կը գործածէ՞ զանոնք։

— Այո, մեծ հայրիկ։

Պարոն Ժէրալտ հայր իր յօնքերն աւելի ևս պռոստեց, անծանօթներն չէր սիրեր և իր որդին կը պարսաւէր, երբ նա զանոնք կ'ընդունէր։

Կարելի է որ ուրիշ հարցում մը պիտի ուղղէր Ֆլորանսին, զոր երբեմն իր փոքր լրագիրն կ'անուանէր, պզտիկ աղջիկն լուրերուն այնքան տեղեակ էր, բայց նա տեսաւ զանի, քանի մը քայլ հեռու, որ դպրոցին տղոց միոյն հետ կը խօսէր։

Այս տղան Փըգի–Բիէր էր, ճիշտ այն Փըգի–Բիէրն, որ այնքա՛ն արթուն կերպարան մ'ունէր և որու պզտիկ աղջիկն այլ և այլ բաներ կ'ապսպրէր։

Նշան մ'ըրեր էր Օրէորդին թէ ըսելիք բան մ'ունի։ Այն ալ, անմիջապէս մօտեցեր էր։

— Օրիորդ, հարցուց այն տեսն Փըգի–Բիէր մեղմաձայն, միթէ կ'ուզէք գիտնալ թէ ո՞ւր են տնակ։

Անոնք էին Հիւպէր ու Ռըմի։ Ֆլորանս այս բանն անմիջապէս հասկցաւ։

— Անշո՞ւշտ, պատասխանեց։ Շուտ ըսէ։

— Հոն վարն են, բացատրեց տղան, երկրորդ մարգին մէջ, ճամբուն միւս կողմը։ Ժարէին հետ խոտերն կը կտրեն։ Եթէ այս ծառախումբն չլինէր զանոնք պիտի տեսնէիք։

Փըգի–Բիէր այս խօսքերն հազիւ աւարտած էր, երբ Ֆլորանս արդէն վազելը սկսեր էր։ Ճամբուն մրայէն ցատկեց, մարգէն անցաւ, և միշտ վազելով Հիւպէրին ու Ռըմիին մօտ հասաւ։

այնքա՛ն հրապուրելի, որքա՛ն բարձրերն ելնելն։ Նոխ, մարդ ամպերուն աւելի մօտ կը գտնուի, և ապա ծռելով կարծես թէ (ո՜հ, այդ շատ զուարճալի է) ամեն բան վարը շատ փոքր է, և ապա . . . և ապա . . . աւերակներն շատ կը սիրեմ։ Ինչո՞ւ, այդ բնաւ չեմ գիտեր։ Այս խօսքերն աւարտելով փոքրիկ աղջիկն Լաստենիքի–քաղաքն կը մտնէր։ Յովհաննային հետ կը քալէր։ Պարոն Ժէրալտ հայր անոնց կը հետևէր։

Շատ շատ, կէս օրը կէս ժամ անցած էր։ Տղայք դեռ դպրոցը վերադարձած չէին, և հետևապէս Պարոն Ժէրալտ հոր դիմաւորելու վազեցին։ Շատ կը սիրէին այս ծերունին որ երբեմն խիստ կ'խօսէր, բայց անոնց երես ալ կուտար յանդիմանելու ատեն։

Սակայն այդ օրն, Պարոն Ժէրալտ հայր հազիւ ուշադրութիւն կ'ընէր բոլոր այս տղոց որ իր բոլորտիքն հաւաքուեր էին։ Կը նայէր նա տնակներէն մին, ունքերն պռստելով և դժգոհ կերպարան մը առնելով։

— Մեծ հայրիկ, միթէ կուգա՞ք, հարցուց չուտ մը Ֆլորանս, որ չէր սիրեր երկար ժամանակ նոյն տեղը մնալ։

Բայց, պատասխանելու տեղ, ծերունին հարցուց.

— Ո՞վ է այդ երկայն սատանան, սև մօրուքով, զոր հոն կը տեսնեմ։ (միշտ նոյն փոքր տան կը նայէր։

— Մեծ հայրիկ, նորեկ մ'է այն, յարեց պզտիկ աղջիկն։ Անոր նման երեք ուրիշ հատ ևս կան հոս։ Ամենն ալ երկայն են. բայց, ամենուն մօրուքն այսչա՛փ սև չէ։

— Եւ միթէ հայրդ գործատան մէջ կը գործածէ՞ զանոնք։

— Այո, մեծ հայրիկ։

Պարոն Ժէրալտ հայր իր յոնքերն աւելի ևս պռոստեց, տնծանօթներն չէր սիրեր և իր որդին կը պարսաւէր, երբ նա զանոնք կ'ընդունէր։

Կարելի է որ ուրիշ հարցում մը պիտի ուղղէր Ֆլորանսին, զոր երբեմն իր փոքր լրագիրն կ'անուանէր, պզտիկ աղջիկն լուրերուն այնքան տեղեակ էր, բայց նա տեսաւ զանի, քանի մը քայլ հեռու, որ դպրոցին տղոց միոյն հետ կը խօսէր։

Այս տղան Փըգի–Բիէր էր, ճիշտ այն Փըգի–Բիէրն, որ այնքա՛ն արթուն կերպարան մ'ունէր և որու պզտիկ աղջիկն այլ և այլ բաներ կ'ապսպրէր։

Նշան մ'ըրեր էր Օրէոդէն թէ ըսելիք բան մ'ունի։ Այն ալ, անմիջապէս մօտեցեր էր։

— Օրիորդ, հարցուց այն տեղն Փըգի–Բիէր մեղմաձայն, միթէ կ'ուզէք գիտնալ թէ ո՞ւր են տնտ։

Անոնք էին Հիւպէր ու Ռըմի։ Ֆլորանս այս բանն անմիջապէս հասկցաւ։

— Անշո՛ւշտ, պատասխանեց։ Շուտ ըսէ։

— Հոն վարն են, բացատրեց տղան, երկրորդ մարդին մէջ, ճամբուն միւս կողմը։ Ժարէին հետ խոտերն կը կարեն։ Եթէ այս ծառախումբն չլինէր զանոնք պիտի տեսնէիք։

Փըգի–Բիէր այս խօսքերն հազիւ աւարտած էր, երբ Ֆլորանս արդէն վազելը սկսեր էր։ Ճամբուն մրայէն ցատկեց, մարդէն անցաւ, և միշտ վազելով Հիւպէրին ու Ռըմիին մօտ հասաւ։

Երկու տղայք հոն երկրորդ մարդին մէջն էին, բայց երկուքն ալ խոտը չէին կտրեր։ Հիւպէր միայն այդ դաշտային գործերն կը սիրէր և իր մեծ հայրն անոր հրաման տուեր էր որ ատեն ատեն իր պարապոյ ժամերը անցնէ այս զբաղումով։ Այս միջոցին Լինք միայն գերանդին ինը գործածէր և զայն ճարպիկութեամբ կը գործածէր։

Ռըմի, աւելի ծայլ, գետինն երկնցած կը ննջէր։ Ատեն ատեն մէկ աչքը կէս մը կը բանար ու իր եղբօր կ'ըսէր։

— Զարմանալի գաղափար մ'ունիս այսպէս քրտնելու լոկ խոտի կտորներ կտրելու համար։

— Ի՞նչ փոյթ, կը պատասխանէր Հիւպէր, արևն կրնակս կը չորցնէ, և խոտն որչա՜փ լաւ կը հոտի։ Աւելի առողջարար ու լաւ բան մը չ'կայ քան այս վարժութիւնն բաց օդին։ Եւ ապա գիտես . . . որսորդ մը պարտաւոր է առողջ և ուժեղ լինիլ ու ամեն յոգնութեան դիմադրելու սովորիլ։

— Ո՜հ, այո, միշտ կարմրամորթներն։

Եւ Ռըմի յօրանջով մը կը խղդուէր։

Երկու եղբարք այսպիսի խօսակցութիւն մը ըստպսեր էին, երբ Ֆլօրանս իրենց մօտ հասնելով, պոռաց։

— Բարև Հիւպէր, բարև Ռըմի։

— Հիւպէր իր դանակն թողուց և Ռըմի ոտք ելաւ։

— Բարև Ֆլօ, պատասխանեցին երկուքն ալ։ Ինչպէ՞ս է Ժիւլիէդ յարեցին իսկոյն։

— Աւելի լաւ է, և շատ գոհ եմ։ Եւ ապա, Յովհաննան վերջապէս ունիմ։

— Մի՞շտ պիտի ունենաս զանի, հարցուց Հիւպէր։

— Ո՛չ, միայն այս կէս օրուան համար, ըսաւ Ֆլօրանս։ Մեծ հայրիկին հետ Վալ-Տորէի վանքն կ'երթանք։ Եւ հիմայ որ ձեզ տեսայ, ահա խոյս կ'տամ։ Մնաս բարև Հիւպէր, մնաս բարև Ռըմի։

— Երթաս բարև, Ֆլօ, պատասխանեցին այս անգամ երկու եղբարք միասին։

— Ըսէ նայիմ, հարցուց այն ատեն Ռըմի, միթէ Յովհաննա միշտ անուշ՞էն կ'ընէ։

— Ո՞հ, ատեն ատեն, բայց զանի քիչ մը կը սիրեմ, պատասխանեց փոքրիկ աղջիկն, և մեծ հայրիկն ալ զանի բոլորովին սիրուն կը գտնէ։ Մնաք բարև։

Եւ Ֆլօրանս սկսաւ նորէն վազել։ Նորէն առաջին մարդն անցաւ, ապա ճամբէն, (բայց այս անգամ միւս կողմէն), և Լաստենիքի-քաղաքն հասաւ, երբ Պարոն Ժէրալտ հայր Յովհաննային կ'ըսէր որ զանի երթայ փնտռէ։

— Մեծ հայրիկ, միթէ կը մեկնի՞նք, հարցուց փոքր աղջիկն, իր մեծ հօր մօտ հասնելով։

— Բայց կարծեմ, սղտիկ, որ քեզ կ'սպասենք, պատասխանեց ծերունին։ Ուսկի՞ց կուգաս։ Այս բաներն չեմ սիրեր և աչերս խոշոր խոշոր պիտի բանամ։

— Մեծ հայրիկ, պատասխանեց Ֆլօրանս, վարի մարդէն կուգամ։

Եւ շուտ մը, յարեց, անշուշտ նոր հարցումէ մը վախնալով։

— Մեծ հայրիկ, միթէ կը մեկնի՞նք։

Քանի մը վայրկեան ետք, Պարոն Ժէրալտ հայր Լաստենիքի-քաղաքէն ելեր էր և երկու մանկանց հետ, Վալ-Տորէին վանքին կողմը կ'դիմէր։

Երբ երեքն ալ հոն տանող ճամբան պիտի մըտնէին, որ նեղ, զառ ի վեր ճամբայ մ'էր, տեսան չորս գործաւոր որ ընդհակառակն անկից կ'ելնէին։ Այս գործաւորներն լուռ ու մունջ և շտապով կը քալէին։

Զորսերէն մին, ամենէ նորատին, երիտասարդ մ'էր որու տեսքն ու կերպերն իր ընկերներուն շարժումներուն հետ հակապատկեր մը կը կազմէին։ Յովհաննա զանի ճանչեց իրրև այն անձն որ իր դալստեան երեկոյին նշմարեց Լաստենիքն, քանի մը խօսք ընելով խոյրաւոր մարդուն հետ՝ Լաստենապատ ճամբան։

— Նայեցէք, մեծ հայրիկ, գոչեց Ֆլորանս, նոյն անձն մատնանիշ ընելով, ահա Սավինիէն, միւս երեք մեծ սոպոնաներուն հետ, որոց վրայ մեզ հետ կը խօսէի, պահ մ'առաջ։ Կը տեսնէ՞ք, անոնցմէ մին այնքա՛ն սև մորուք չունի։

Սակայն չորս գործաւորներն՝ որ Պարոն Ժէրալտ հայր տեսնելով դժգոհութեան թեթև շարժում մը չ'կրցան էին զսպել, կը շարունակէին յառաջանալ։ Ծերունւոյն մոտ հասնելով, չորսն ալ բարևեցին, բայց տարբեր կերպով։ Մեծ սոպոնաներն իրենց ձեռքն լուկ իրենց գլխարկին տարին. իսկ Սավինիէն, իրը բոլորովին հանեց, ցոյց տալով այսպէս հաճելի դէմք մ'որ լուսաւորուած էր երկու մեծ աչերով որ

անբացատրելի ակնարկ մ'ունէին, երբեմն խիստ և երբեմն շատ անուշ։

Պարոն Ժէրալտ հայր անոր կարճ բարև մը տուաւ, ապա, զայրացած կռնակը դարձուց մեծ սատանաներուն, և շարունակեց իր ճամբան։

Իսկ Ֆլորանս պահ մը կանգ առաւ և խօսքն երիտասարդին ուղղելով, ըսաւ.

— Բարև Սավինիէն։ Միթէ աւերակներէ՞ն կուգաք։ Բայց, ինչո՞ւ այսպէս շուտ կը քալէք։ Ա՜հ, այո, գիտեմ, ուշացած էք, վասն զի ժամը մէկ անցած է և գործատունն դուց պիտի լինի։ Ո՜հ, հայրիկը քեզ պիտի յանդիմանէ։

Սավինիէն իրրև պատասխան ժպտեց, բայց Դէ՛ սոպոնաներէն մին, ամենէ տարիքոտն, առանց հարցուելու ըսաւ փոքր աղջկան, քիչ մը ծիծաղկոտ ձայնով մը.

— Ո՜հ, մէ՞կ անդամի համար, Օրիորդ, մեր վարպետն միթէ այդչափ չարասի՞րտ է։ Բաւական է իրրև արդարացում միայն ըսել թէ, Պարոն Սավինիէն այս երկիրներ բարեկամներուն կը ցուցնէ։

Ֆլորանս երեսը կախեց, Դէ՛ սոպոնան լիրբ կը գտնէր։ Ինքն ալ կռնակը դարձուց անոր և իր մեծ հօր ընկերացաւ։

— Ֆլո, հարցուց ծերունին փոքր աղջկան, ի՞նչ կ'ըսէիր այդ մարդոց։ Հայրդ քեզ արգիլեց գործաւորներուն հետ այսչա՛փ ընտաներաբար տեսնուելու։

— Բայց, մեծ հայրիկ, յայտնեց Ֆլորանս, նախ ընտանի չեմ։ Ապա Դէ՛ սոպոնաներուն հետ չէի խօսեր, այլ Սավինիէնին հետ կը խօսէի։ Եւ Սավինի-

էն, այդ գիտես, միս գործաւորներուն չի նմանիր, ո՞հ, անմենեւին։ Միթէ գիտեցի՞ք որչափ լաւ կը բարեւէ։ Նայեցէք, մեծ հայրիկ, գաղափարս այս է որ նա աղքատացած և դժբաղդ աշնուական մ'է։

Պարոն ժէրալտ հայր ուսերը թոթուեց, և չ'պատասխանեց, վասն զի պզտիկ աղջիկն արդէն հեռու էր։ Յովհաննային ձեռքը բռներ էր, և երկուքն ալ վազելով սեպաձև ճամբէն վեր կ'ելնէին։

Առաջ Յովհաննան կանգ առաւ, շունչը հատած էր, բոլորովին ոգեսպառ էր։ Իսկ Ֆլորանս դեռ յոգնութիւն չէր զգար։

Իր ընկերուհին թողուց, շուտ մը վար իջաւ և իր մեծ հօր մօտ վերադարձաւ, որու սրունքներուն մէջ տեղ եկաւ գրեթէ իյնալ։

— Օ՜հ, օ՜հ, պզտիկ աղջիկ, ըսաւ ծերունին ժըպտելով ու գգուելով աղջկան շնորհալի երեսն որ այս պահուն վազելէն կարմիր էր. բայց միթէ կ'ուզես հիւանդանալ, այսպէս արեւուն տակ վազելով։

— Ո՜հ, մեծ հայրիկ, մի վախնար։ Կրկին ոտքեր ունիմ, գիտես, Ժիւլիէդի ոտքերն ու իմիններս, այս պատճառաւ է որ երկուքին համար կը վազեմ։

Ապա, յանկարծ ծանր կերպարան մ'առնլով, յարեց.

— Բայց ի՞նչ ունիս, մեծ հայրիկ, շատ ազմկալի կերպով շունչ կ'առնես և կաս կարմիր ես։

— Կը տաքնամ պզտիկս, և իրաւի պէքտ է խենդ լինիլ այս տաքին այսպիսի բաղնիքի մը մէջ մտնելու համար։

— Ըսել է որ չ'պիտի կրնաս մինչև աւերակներն

ելնել։ Մե՛ղք, մանաւանդ անոր համար որ հիմայ շատ մօտ ենք։ Բայց, գիտես, միտքս բան մ'ընկաւ, հոս կեցիր։ Ոչ, քիչ մ'աւելի հեռու եկուր։ Հոն մեծ ծառ մը կայ։ Սուուերին տակ պիտի հանգստանաս և մենք այդ միջոցին բլրին վրայ պիտի ելնենք։ Ո՜հ, մեզ քիչ մը ժամանակ կը բաւէ, հին պատերն, հին սիւներն և տեսարանն նայելու, և ապա վար պիտի իջնենք։

Եւ որովհետև ծերունին այս խորհրդին չէր հաւաներ։

— Ինչո՞ւ չես ուզեր, վրայ բերաւ Ֆլորանս։ Նախ, երբէք մարդ մը չ'լինիր աւերակներուն մէջ։

— Բայց այդ տեղ քեզ պիտի բռնեմ, պզտիկ աղջիկ։ Այս գործաւորներն որոնց հանդիպեցանք, ընդհակառակն անկից կուգային։

— Եթէ անկից կուգային, վստահ եմ որ հոն չեն ալ, պատասխանեց շուտ մը փոքր աղջիկն։ Ես քեզ կ'ըսեմ, մեծ հայրիկ, որ մարդ մը չ'կայ հոն վերն։ Անկից զատ երկու հոգի ենք, ապա, մեզմէ քանի մը քայլ հեռու պիտի լինիս, և կրնանք քեզ կանչել եթէ հարկ լինի։

Այս ընելէն ետք իր մեծ հօրմէն բաժնուեցաւ և գնաց Յովհաննային ընկերանալու։

Քիչ ժամանակէ ետք, երկու աղջիկներն հասեր էին բլրին վրայ ուր վանքն չիներ էին։

— Հասա՞նք, ըսաւ Ֆլորանս։ Հա՛ պահուտելու որչա՜փ ընտիր տեղեր կան հոս։ Պահուըտուկ խաղանք, կ'ուզե՞ս այդ։ Աչքերդ գոցէ, ապա մինչև երեք հարիւր համրէ, բայց, կամաց, կամաց։ Պիտի պահուիմ, դու զիս պիտի փնտռես։

Յովհաննա իր նորատի ընկերուհւոյն փափաքը կատարեց։ Աչերը գոցեց և մինչև երեք հարիւր համրեց, այդ ընելէն ետք, սկսաւ փնտռել։

Այդ դիւրին գործ մը չէր։ Կը կորսուէր այս կիսափուլ պատերուն մէջ, այն քարերուն մէջ որ իրարու վրայ դիզուած էին, ամեն տեսակ փլատակներ՝ ուր մտած էր։

Պահ մ'այսպէս քալեց, չի կարենալով Ֆլորանսը գտնել, Վերջապէս հասաւ կոտրած սիւնաշարի մ'որ վանքին մատրան վերջի բեկորներն էին։

— Ֆլորանս անշուշտ հոն պահուած է, ըսաւ իւրովի։

Եւ կամաց կամաց յառաջացաւ։

Բայց, յանկարծ կանգ առաւ — և հագիւ կրցաւ աղաղակ մը զսպել, այնքա՜ն մեծ էր իր զարմանքն, մարդ մ'այս սիւնակին մէկուն ետև նստեր էր, դէպ առաջ ծռած էր և կռնակն կը դարձնէր։

Նորատի աղջկան հանած աղմուկը լսելով, գլուխը վերցուց։ Յովհաննա զանի իսկոյն ճանչցաւ։

Հայր Մէտարն էր, այծարանին բնակիչն։ Միշտ իր գորշ կրկնոցն հագած, բայց իր ականջաւոր խոյրը հանած էր, նաև իր ակնոցն, այնպէս որ տաս տարուան նուազ ծեր կ'երևէր։

— Ի՞նչ կ'ընէք հոս, հարցուց Յովհաննային, կասկածելի ակնարկ մ'անոր նետելով։

— Ֆլորանս Շիրինեան կը փնտռեմ, պատասխանեց այս վերջինն։ Միթէ զանի չ'տեսա՞ք։

Եւ դիտելով այդ պահուն որ ծերունին իր կոշիկներէն մին հաներ էր, յարեց մտենալով.

— Վիրաւորո՞ւած ես։ Միթէ կրնա՞մ քեզ օգնել։

— Ոչ մէկուն օգնութենէ պէտք ունիմ, պատասխանեց հայր Մէտարն համառօտ։

Ապա խորհելով, իր ակնոցը դրաւ և աւելի անուշ ձայնով յարեց.

— Ունեցածս բան մը չէ, կամ ոչինչ բան մ'է, սուր գայլախաղ մը կտրեց ոտքս։ Բայց շնորհակալ եմ։ Դուք իզմէ չէ՞ք վախնար։

— Վախնա՜մ, և ինչո՞ւ համար, դոչեց Յովհաննա։ Դուք իմ մեղաս չէք ուզեր։

— Վնաս, քեզ, Յովհաննա Տը լա Լիժէլ, ո՜հ ոչ, անշուշտ, պատասխանեց ծերունին։

Այս ըսելով, անոր վրայ այնպիսի ակնարկ մը կը նետէր որ այդ մարդուն համար կրնար զարմանալի թուիլ, յուզեալ ու երախտագէտ ակնարկ մ'էր այն։

— Ի՞նչ, միթէ զիս կը ճանչէ՞ք։ Անունս գիտէ՞ք, ըսաւ Յովհաննա զարմացած։

— Միթէ իմն չէ՞ք գիտեր, պատասխանեց կրկնոցաւոր մարդն փախստի կերպով, և միթէ ձերն անցեալ օր առջևս երկու անգամ չարտասանուեցա՞ւ։

— Այո, իրա՜ւ է, այծարանն։ Բայց՝ կարելի էր որ զայն մոռնայիք։

Հայր Մէտարն ժպտեց, և այս ժպիտը կը նմանէր դիմածռութեան մը, ու կը նշանակէր.

— Միթէ ես երբէք բան մը կը մոռնա՜մ։

Եւ պահ մ'ետք, վրայ բերաւ.

— Անցեալ օր ինձ ըսիք թէ ձեր հայրն տէրութեան նաւատորմին մէջ էր։ Միթէ զանի կորուսի՞ք, և արդեօք չա՞տ ժամանակէ ի վեր։

— Այս դժբաղդութիւնն չորս տարի է որ մէջ հասաւ, պատասխանեց Յովհաննա, որու աչերն արտասուօք լցան։ Հիմայ միայն մայրիկն ունիմ։

— Միթէ եղբայրներ, քոյրեր չունի՞ք.

— Ո՛հ այո, երեք քոյր և երկու եղբայր ունիմ։

— Ամենն ալ ձեր մայրիկին հե՞տ կը բնակին։

— Ո՛չ, միայն երեք փոքրներն անոր հետ են. Մարի, անդրանիկ քոյրս, Սէն-Տընի է, իսկ Թէոտոր եղբայրս Լա Ֆլէշ կը գտնուի։

— Ա՛հ, անոր անունն Թէոտո՞ր է։

— Այո, հայրիկին անունն էր։

Հայր Մէտարն քանի մը վայրկեան լուռ ու մտայոյզ մնաց։ Կարծես թէ Թէոտոր անունն իր վրայ մեծ տպաւորութիւն ըրեր էր։ Սակայն, պահ մը ետք վրայ բերաւ.

— Եւ դուք, ինչպէ՞ս կը գտնուիք հոս։ Միթէ Շիրինեանց ազգակա՞ն էք։

— Ո՛չ, պատասխանեց Յովհաննա, անոնց ընտանիքէն չեմ։ Ժիւլիէդին համար հոս եմ, յարեց, որպէս զի անոր ընկերուհին լինիմ։

— Խե՜ղճ մանկիկ, մրմնջեց ծերունին ակամայ։ Ի՜նչ, միթէ ձեր մայրն ստիպուած է այդ ձեր տարիքին մէջ ձեզմէ բաժնուիլ։

— Հարստութիւն չունինք, պատասխանեց Յովհաննա պարզապէս, և շատ ուրախ եմ որ կրնամ մայրիկին քիչ մ'օգնել։ Ապա, շարունակեց, Ժիւլիէդը շատ կը սիրեմ, և ամեն մարդ Լաստենիքն ինձ հետ շատ սիրալիր կը վարուի։

Ապա Յովհաննա զարմացած այս զանազան հարցումներուն վրայ, որոնց նպատակն չէր իմանար, զղջաց որ այնքա՞ն շատ բան պատմեր էր։

— Բայց, այս ամեն բաներն ինձ ինչո՞ւ համար կը հարցնէք, յարեց։

Այդ միջոցին, և հայր Մէտարն, ըստ կարգի պատասխանելէ առաջ, Ֆլորանսին ձայնն լսուեցաւ։

— Յովհա՜ննա, Յովհա՜ննա, ո՞ւր ես, կը պոռար փոքր աղջիկն իր թոքերուն բոլոր ուժովն։

— Հո՞ս եմ։ Ահա՛ կուգամ, պատասխանեց Յովհաննա, որ անմիջապէս հայր Մէտարէն ու սիւնակներէն հեռանալով, շուտ մ'անոր միացաւ։

Յովհաննա գտաւ զանի, պատի մը վրայ կանգուն, ուր յաջողեր էր ելնելու։ Անկից փոքր աղջիկն իր բոլորտիքը կը նայէր։

Յովհաննան տեսնելով, սկսաւ խնդալ։

— Ա՛հ, խաղս որչա՜փ լաւ յաջողած է, գոչեց։

Եւ անմիջապէս յայտնեց.

— Ինչպէ՞ս, չի հասկցա՞ր որ քեզ խաբեցի, չի պահուըտեցայ, այլ մեծ հայրիկին մօտ վերադարձայ, կ'ուզէի գիտնալ թէ ի՞նչ պիտի ընես հոս մինակ մնալով, կը մտածէի թէ պիտի վախնաս։ Բայց, մեծ հայրիկն զիս զրկեց քեզ փնտռելու համար։ Շուտ, շուտ մեկնինք, վասն զի մեզ կ'սպասէ։

Այդ ըսելով, պատէն վար ցատկեց, աւերակներէն մեկնեցաւ և բլրէն վար իջաւ։ Յովհաննա անոր ետևէն գնաց։

Երկու աղջիկներն այսպէս քանի մը վայրկենի չափ առանց խօսելու քալելէ ետք՝ ապա, յանկարծ Ֆլորանս կանգ առաւ և Յովհաննային կողմը դառնալով, անոր հարցուց.

— Խօսէ, արդեօք բարկացա՞ծ ես։ Երեսդ ինչո՞ւ կը կախես։

— Ո՜հ, ոչ, պատասխանեց Յովհաննա բաւական ուշթափ։

Հայր Մէտարին վրայ կը մտածէր և իւրովի կը խորհէր թէ ինչո՞ւ համար իր հօր վրայ այսչա՞փ հարցումներ ըրեր էր։

— Այ՛ո, այ՛ո, շատ բարկացած ես, վրայ բերաւ Ֆլորանս անմիջապէս։ Մի թէ աւերակներուն մէջ վախցա՞ր։ Մի թէ բան մը, կամ մարդ մը հոն տեսա՞ր։

— Չի վախցայ, պատասխանեց Նորէն Յովհաննա, բայց անձ մը տեսայ հոն։

— Ա՜հ։ Եւ ո՞վ էր այդ։

— Հայր Մէտարն։

— Իրա՞ւ, ըսաւ պզտիկ աղջիկն։ Եւ ես մեծ հայրիկին կը հաւաստէի որ երբէք մարդ մը չ'ելնիր աւերակներուն մէջ։ Բայց այդ զարմանալի է, յարեց նա մտածելով, մեծ սատանաներն աւերակներէն կուգային։ Մի թէ դիպուածով, հայր Մէտարն իրենց բարեկա՞մն է։

Ապա Յովհաննային դառնալով շարունակեց.

— Անշուշտ, չ'պիտի պատմես մեծ հայրիկին թէ հայր Մէտարն Վալ-Տորէի վանքն գտար, կարելի է որ մեզ արգիլէ հոն Նորէն գնալու։ Եւ հիմայ վազենք, կ'ուզե՞ս։ Մեծ հայրիկն մեզ կ'սպասէ և իր համբերութիւնն պիտի հատնի։

Իր ընկերուհւոյն ձեռքը բռնեց և երկուքն ալ վազելով, Պարոն Ժէրալտին միացան։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՄԵԾ ՍԱՏԱՆԱՆԵՐՆ

Ժիւլիէդին նորարուժութիւնն երկայն, դժուար եղաւ։ Աղջկան հիւանդութիւնն երկու անգամ թեթև մը կրկնուեցաւ, և միայն վեց շաբաթէ ետք իր ցնորատապէն լիովին բժշկուեցաւ։

Այն ատեն, կեանքն երկու քոյրերուն համար իր սովորական ընթացքն նորէն սկսաւ։ Ֆլորանս, օրիորդ Մագ Նէյլին հսկողութեան տակ բոլորովին մը-տաւ (Ժիւլիէդին հիւանդութեան ժամանակ զանի քիչ մը Եսդէլ մայրապետին յանձներ էին) և Ժիւլիէդ առաջուան պէս իր դասերն սկսաւ։ Յովհաննա ոչ միայն անոր հետ միասին դաս առաւ, այլ և փոքր աղջկան օգնեց իր աշխատութեան մէջ։ Աւելի մեծ գործ տեսաւ Յովհաննա, միշտ բարի և բարեսէր, միջոց գտաւ Ֆլորանսին քանի մը հրահանգներ տալու։

Ֆլորանս շատ արթուն միտք ու մեծ երևակայութիւն մ'ունէր, բայց ճշմարիտ թիթեռնիկ մ'էր, կ'աշխատէր խաղալով, կամ կը խաղար աշխատելով. միշտ շատ հոգ տանելով որ չ'նեղանայ։

Ստուգիւ չարաճճի աղջիկ մ'էր, և շուտ մը Յովհաննային բարեսիրութիւնն չարաչար գործածեց։

— Բացատրէ ինձ այս, կ'ըսէր ատէպ, այս խնդիրը ինձ համար կ'ընե՞ս, և այս հրահանգն ալ և այս թարգմանութիւնն։

Եւ Յովհաննա իր հանդստեան ժամերն կ'անցնէր փոքր աղջկան օգնելով։

Օր մը, Ֆլորանս ծուլութենէ, և աւելի ևս չարամտութենէ, Յովհաննան շատ երկար ժամանակ իր քովն պահելէն ետք, անոր յանկարծ ըսաւ.

— Բայց, միթէ դու, դպրոցի մը մէջ փոխ-վարժուհի էլ՞ որ այսչա՜փ լաւ կրնաս դաս տալ։

— Ոչ, պատասխանեց նորատի աղջիկն, բայց երբ մայրիկին մօտ կը բնակէի, փոքր քոյրերս կ'աշխատացընէի։

— Ա՜հ։ Եւ ը՞ռվ կը սիրես աւելի շատ, իրրև աշակերտուհի, պզտիկ քոյրե՞րդ թէ ոչ զիս։

— Պզտիկ քոյրերս քեզմէ աւելի ջանասէր էին։

— Իրա՜ւ, կ'երևի թէ ապուշ են։ Գիտես . . . ջանասէր տղայք փիւնիկներ չեն, և էշերը միշտ իմաստութեան մրցանակը կը տանին։

Եւ որովհետև Յովհաննա կը ջանար փոքր աղջկան բացատրել թէ բոլորովին կը սխալէր, թէ իմացականութիւնն աշխատութեան թշնամի չէ, և թէ ջանասիրութիւնն միայն միջակ գլուխներու յատուկ չէ...։

— Բաւակա՜ն է, ինձ տաղտո՜ւկ կուտաս, ըսաւ պզտիկ աղջիկն որ դիմադրութեան չէր հանդուրժեր։ Վերադարձիր Ժիւլիէդին մօտ, բարոյախօսութենէդ պէտք չունիմ, և իրաւի այդ բանն չափէն աւելի կը սեծարեն ինձ։

Յովհաննա արտասուալի աչքը հեռացաւ։ Կ'ուզէր Ֆլորանսին սէրը գրաւել, և միայն անոր բարկութիւնն կը գրգռէր, այս պատճառաւ շատ վիշտ կ'ըզգար։

— Ա՜հ, ի՞նչ ունիս, ըսաւ անոր այն տեղն Ժիւլիէդ երբ իր մօտ գնաց, չեմ ուզեր որ տրտմիս։ Նեբելի է ինձ տխուր լինիլ քանի որ միշտ հիւանդ եմ, բայց դու . . . դու առողջ ես։

— Կը հասկնա՜մ յարեց. անշուշտ Ֆլորանս քեզ նորէն վշտացուց. լա՜ւ ուրեմն, յանցանքը քուկդ է . . . ։ Յանցանքն քուկդ է, կրկնեց։ Ինչո՞ւ միշտ անոր հետ կ'զբաղիս և զիս կը թողուս կ'երթաս։

Ապա, իսկոյն իր ճշմարիտ անիրաւութեան վրայ գղջալով, վրայ բերաւ, այս անգամ ինք ալ ըստ կարգին լալով.

— Ներէ ինձ, քանի՛ բարեսրտութեամբ վարուեցար ինձ հետ, մինչդեռ ես որչա՜փ չար եմ։

Զա՞ր, ո՜հ ոչ, խեղճ աղջիկն չար չէր։ Ընդհակառակն իր սրտին մէջ ունէր բարութեան և գորովոյ գանձեր, բայց անդադար տառապելուն իր ջղերն զինք կ'վարէին։ Եւ Յովհաննա երբեմն պէտք ունէր այդ ըսելու իւրովի որպէս զի սովորական անուշութեամբ կարող լինի կրել այն յարատև փոփոխութիւններն որոց դեռ վարժ չէր։

Խե՜ղճ Յովհաննա։ Իր արիութիւնն կորուսելու մօտ էր։ Երկու ամիս կար որ արդէն Լաստենիքն կը գտնուէր, և սակայն երբէք այնչափ սրտաբեկութիւն և տխրութիւն զգացած չէր, որքան սովորաբար ծանր բաժանումէ մ'ետք կ'երևին։

Արդեո՞ք այդ վիճակին բուն պատճառն իր մօրմէն այնքա՜ն երկար ժամանակ բաժնուած մնալն էր, որով կ'զգար թէ կ'նուազէր այն այժն զոր մորը համբոյրներէն կը քաղէր։ Միթէ ի՞նքն ալ կ'զգար

տեսակ մը նեղութիւն որ քանի մ'օրէ ի վեր Լաստենիքին վրայ կը ծանրանար։ — Լաստենի — քաղաքը, Լաստենիքի — Ցունն։

Իրաւի, քանի մ'օրէ ի վեր այդ երկրին այն պզտիկ անկիւնն որ բարեբաստիկ ու հանդարտ կ'եբևէր, ամեն բան փոխուած էր։

Լաստենիքի — քաղաքն, աշխատութեան ժամերէն դուրս, մարդիկ միայն կ'երթային, կուգային, կը խօսէին, կը խորհրդակցէին։ — Երբ զանդակն գործաւորներն գործատունն կոչէր . . . այս մարդերն որ սովորաբար այնքա՛ն ուրախ զուարթ գործի կ'երթային, հիմայ դժգոհ ու մտատանջ կը քալէին։ Երբ հանդստեան ժամը դար, նոյն գործաւորներն գործատունէն երդելով, ուրախ զուարթ խօսակցութեամբ չէին մէկներ առաջուան պէս, այլ ոմանք տխուր և լուռ ու մունջ, այլք աշխուժիւ խօսակցելով ու շարժելով կ'ելնէին, ապա երբ իրենց տունը կը մտնէին, ամենէ չնչին բարուրանօք իրենց կիները կը յանդիմանէին, և իրենց զաւակներն կը կշտամբէին։

Ոչ նուազ փոփոխում կը դիտուէր Լաստենիքի — Ցունն։ Բարի օրիորդ Մագ Նէյլն սովորաբար այնքա՛ն հանդարտ, սաստի՛ մտայոյզ կ'երևէր։ Պարոն Ժէրալտ հաւր իր զուարճութիւնն մոռնալով, ոչ մէկն իր դժգոհութիւնն կը ծածկէր։ Իսկ Պարոն Ժէրալտի որդի, որ ամեն պարագայի մէջ ինք զինքն այնչափ կը զսպէր, չէր յաջողեր մեծ մտայուզութիւն մը քողարկելու։

Առտու մ'երբ հաւաքուած ընտանիքն իր նախաճաշիկն կը լմնցնէր, Պարոն Ժէրալտ հայր, դիտելով

որ իր որդին, սովորականէն աւելի մտատանջ էր, անոր հարցուց այն միջոցին որ սպասաւորներն նոր հեռացած էին։

— Լա՛ւ ուրեմն Ժէրալտ, լա՛ւ ուրեմն, մեր գործերն ի՞նչ վիճակի մէջ են։ Վա՛տ, այնպէ՞ս չէ։ Այդ դէմքէդ կը հասկնամ։

— Վա՛տ, այդ չատ բան կը նշանակէ, հայր իմ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։ Եւ ապա, եթէ կ'ուզէք որ այդ խնդրոյն վրայ խօսինք, հարկ է սպասել որ սեղանէն ելնենք։

Եւ նա ակնարկ մը նետեց Ժիւլիէդին, Ֆլորանսին և Ցովհաննային վրայ։

— Ինչո՞ւ համար, գոչեց ծերունին որ այս ակնարկը դիտեր էր, անշո՛ւշտ, վասն զի տղաք ներկայ են։ Միթէ իմ դժբաղդութեանցս քեզ հաղորդ չէի ըներ, հասակիդ չ'նայելով։ Աստուած միայն գիտէ որչա՛փ փորձանքներ ունեցայ։ Այդ ծանր դպրոց մ'եղաւ քեզ։ Միթէ այդ քեզ վնա՞ս բերաւ, խօսէ։ Ո՛չ, այնպէս չէ՝։ Լա՛ւ ուրեմն, այսօր մեր աղջկանց համար նոյնն ընենք։ Միթէ կ'ուզե՞ս որ հոգ ու նեղութիւններ չի ճանչնան։ Եթէ այդպէս ընես, անպիտան գործ մ'ըրած կ'լինիս։ Ինքնասէրներ պիտի ընես զանոնք, և ապա, վերջէն տկար կը լինին այն պայքարին մէջ որ քիչ չատ ամենուն բաժինն է։ Այսպէս, բարեկամս, խօսէ կ'սպասեմ։ Եւ դու պզտիկ, կեցի՛ր, յարեց խօսքն Ցովհաննային ուղղելով, որ համեստութեամբ սեղանէն ելեր էր և կը պատրաստուէր սեղանատունէն մեկնելու, մեր աղջիկներն ըսելով, քեզ համար ալ կը խօսէի։

Յովհաննա այն ատեն նորէն նստաւ։

— Լա՜ւ ուրեմն Ժէրալտ, վրայ բերաւ Պարոն Ժէրալտ հայր։ Լա՜ւ ուրեմն, որդեակ։

— Լա՜ւ ուրեմն, հայր իմ, պատասխանեց վերջապէս Պարոն Ժէրալտի որդի, գործադուլ մ'ինձ վերահաս կ'երևի։

Ծերունին սեղանին վրայ զարկաւ։

— Գործադո՜ւլ մը, գոչեց գործադո՜ւլ մը։ Գործաւորնե՛ր գործադուլ պիտի ընեն։ Բայց խենդ են, գործաւորներդ Ժէրալտ ամեն բան քու չնորհիւդ ունին։ Թշուառականնե՛ր, ապերախտներն։

— Մոլորեալներն են, հայր իմ։

— Մոլորեալնե՛ր։ Շա՜տ լաւ, զանոնք արդարացուր։ Բայց, վերջապէս ի՞նչ կ'ուզեն այդ մոլորեալները, ինչպէս որ կը հաճիս զանոնք անուանելու։

— Ինչ որ ամեն տեղ կ'ուզեն հայր իմ, աւելի քիչ գործ և աւելի շատ թոշակ։

— Եւ ո՞ր անձին միջոցաւ յայտնեցին քեզ իրենց անմիտ պահանջքն։ Տարակոյս չ'կայ որ այն պաշտպանեալը է, Սաւինիէն։

— Այսպէս է, հայր իմ։ Իրաւի նոյն ինք Սաւինիէն ինձ յայտնեց այդ։

— Այդպէս պիտի լինէր։ Ա՜հ, բարեկամ, կրնաս դիտող ակնարկ մ'ունենալ, բայց հոտառութիւն ունիմ կ'նայի՞ս։ Այս պատանին միշտ չէի հաւնած։ Դու ինձ ըսիր, մեծ քաղաքներէ կուգայ և այս տատճառաւ շատ ճարպիկ է։ Դու ինձ ըսիր նաև, անոր պէս մտացի ու պարկեշտ երիտասարդ՝ ինք ալ ինք կը յանձնարարէ։ Այդ կերպով զանի ընդունեցար։ այդ, առաջին սալչութիւնն է, և երկրորդ սալչութիւն, աւելի մեծ քան առաջինն, զանի գործավար մ'ըլլիր։

— Գիտէք արդէն հայր իմ, որ ինձ ճշմարիտ ծառայութիւններ մատոյց։

— Գիտեմ, գիտեմ։ Այդ բանին համար է որ հիմայ այն ծառայութիւններն կ'ուզէ որ վճարես, և այնքան աւելի սուղ կ'ուզէ ծախել, որքան որ իր շրջանէն շատ աւելի բարձր լինելով, իր պահանջումներն կրկնակի հիմնաւոր կ'երևին իրեն։ Բայց բոլոր գործաւորներուն դառնանք։ Միթէ անոնց պահանջը պիտի կատարե՞ս։

— Ո՛չ հայր իմ, չ'պիտի զիջանիմ։ պարտքս է չի զիջանիլ։ Դուք արդէն այդ ըսիք, գործաւորներուս շատ աւելի բարիք ըրի, քան ինչ որ արդարութիւնն, ուղղամտութիւնը կը պահանջէին, իրենց համար վարպետ մը չեղայ, այլ հայր մը, բարեկամ մը, չեմ կրնար աւելի շատ ընել։ Եւ եթէ հարկ լինի գործատունն գոցել, գործաւորի պակասութեան պատճառաւ, լա՛ւ, պիտի գոցեմ։ Այս առտու այդ դիտաւորութիւնս անոնց յայտնեցի։

— Լաւ ըրիր, և կը հաւանիմ։ Բայց, անոնք ի՞նչ ըրին։ Տրտունջներ հանեցին, ես արդէն լսեցի այս տեղէն։

— Կը սխալիք, հայր իմ։ Ընդհակառակը լուռ մնացին, և այս լռութիւնն է որ ինձ այսօր ըսել կուտայ թէ գործադուլ մը վերահաս է։

Այս պահուն Ֆլորանս, գործադուլի վրայ այս խօսքերը լսելով, չվոխած և չի գիտնալով թէ ի՞նչ

կը նշանակէ, ծռեցաւ իր մեծ հօր կողմն, որու մօտ նստած էր, և ականջին փսփսաց.

— Մեծ հայրիկ, ի՞նչ է գործադուլ մը։

— Հիմայ այդ պիտի բացատրեմ քեզ, պզտիկ, պատասխանեց ծերունին իսկոյն։ Գործադուլ մը համաձայնութիւն մ'է գործաւորներու, որ չեն ուզեր աշխատիլ մինչև որ իրենց առաջարկած պայմաններն չընդունուին։ Այս գործաւորներն, շարունակեց Պարոն Ժէրալտ հայր (հայրդ զանոնք մոլորեալ կ'անուանէ) վատ գործաւորներն են սովորաբար, չեմ ուզեր ըսել թէ (այդ լաւ իմայիր) իրենց արհեստն չեն գիտեր, ընդհակառակն, ստէպ շատ ճարպիկ կ'լինին։

Ապա, իր թոռին դառնալով հարցուց.

— Միթէ լաւ հասկցա՞ր, զաւակս։ Միթէ հիմայ հասկցար թէ ի՞նչ է գործադուլ ընող մը։

Ֆլորանս պահ մը մտածեց, ապա պատասխանեց.

— Այո, մեծ հայրիկ, մեծ սատանաներուն նման բան մ'է։

— Լաւ պատասխանեցիր, պզտիկ աղջիկ, գոչեց ծերունին խնդալով։

Ապա խօսքն իր որդւոյն ուղղելով, Պարոն Ժէրալտ հայր յարեց.

— Որդեակ, այս անծանօթ գործաւորներն, զոր անխոհեմութիւն ունեցաւ առնլու (վասն զի շատ գործ ունէիր) պարագլուխներն են, այնպէս չէ՞։

— Ստիպուած եմ այդպէս կարծելու, հայր իմ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։

— Հապա եթէ ինձ մտիկ ընէիր, զանոնք կը վռնտէիր։

Պարոն Ժէրալտ գլուխն օրօրեց։

— Ի՞նչ փոյթ ըսաւ, գործն այսպէս եղաւ։ Եւ եթէ այս չորս մարդերն ճամբէի . . . ։

— Ո՜հ հայրիկ, ընդմիջեց Ֆլորանս, մոռցայ քեզ ըսելու թէ դէմ սատանաներն հայր Մէտարին բարեկամներն են։ Անցեալ գիշեր, այծարանը քնացան։ Հիւպէր ինձ պատմեց այդ։

— Ի՞նչ կ'ըսէ Ֆլոն, ի՞նչ կ'ուզէ ըսել՝ մրմռաց Պարոն Ժէրալտ հայր։

— Այո, մեծ հայրիկ, բացատրեց Ֆլորանս, այս անգամ խօսքն իր մեծ հօր ուղղելով, դէմ սատանաներն այծարանին վերնայարկին մէջ պահկեցան, անշուշտ պտերին վրայ (այս պատճառաւ է, անշուշտ, որ այնքա՞ն շատ պտեր կայ այծարանն։) Հիւպէր ու Ռըմի անոնց վար իջնալը տեսան այդ վերնայարկէն, սանդուղի մը միջոցաւ . . . ։ Թեզ այդ կը հաւատամ, մեծ հայրիկ։

Եւ որովհետև ծերունին բան մը չէր պատասխաներ, պզտիկ աղջիկը շարունակեց.

— Անցեալ օր, Հիւպէր ու Ռըմի գացեր էին շատ կանուխ, ժարէին հետ գողացանցեր հանել որ առջի գիշերն Բոռասենէզին մէջ (գիտես այն գետակը որ ջրվէժին ետև կը գտնուի։) Այդ շատ կը սիրեն, կերևի թէ շատ զուարճալի բան է գողացանց հանել։ Առտու, ժամը չորսն առաջ մեկներ էին, այծարանին մօտ անցնելու ժամանակ, Հիւպէր այն կողմը կը նայի, և կը տեսնէ մարդ մը, ապա ուրիշ մը, ետքը ուրիշ մը, վերջին ուրիշ մ'ալ — ամենքը չորս կ'ընէ, այնպէ՞ս չէ, կիջնէին այն սանդուղէն որ

վերնայարկին կողմը դրուած է։ Հիւպէր չի կրցաւ անոնց դէմքը տեսնել, ինչու որ շատ հեռու էին, բայց գիտեց որ այդ մարդերէն երեքը սև, երկայն մօրուք մ'ունէին։ Հիւպէր այդ պատմեց ինձ, այն ատեն, ահա ես անոր ըսի թէ այդ մարդիկ Դեր սարդանէրն են։

Պարոն Ժէրալտ հայր երկրորդ անգամ մը սեղանին վրայ ուժգին զարկաւ։

— Ֆլօ, ըսաւ, իր ամենէ խոշոր ձայնն հանելով, մի թէ վրաս կը ծիծաղի՞ս։ Դու անհնազանդ եղար ինձ, նորէն այս տղոց հետ տեսնուեցար, պատուերիս հակառակ։

— Այո, մեծ հայրիկ, յայտնեց Ֆլօրանս։

— Ո՞ւր, և ե՞րբ։

— Քանի մ'անգամ, մեծ հայրիկ, և տարբեր տեղեր, պատասխանեց նորէն Ֆլօրանս. բայց երէկ առաւօտ, վերջին անգամ։ Ձմրէն կ'անցնէին, տեսայ զանոնք, և վազեցի որ բարևեմ։

Պարոն Ժէրալտ հայր ունքերը պռստեց։ Արդէն շատ կարմիր էր և աւելի կարմրեցաւ, Ֆլօրանս ալ հասկցաւ թէ պատժուելու մօտ էր։ Բայց իր մեծ հօր դժգոհութիւնն դադրեցնելու կերպն գիտէր։

Իր տոից մատերուն վրայ կեցաւ, և նորէն Պարոն Ժէրալտ հօր ականջին ծռելով անոր ըսաւ գգուելի ձայնով մը.

— Ո՜հ, մեծ հայրիկ, ինձ դէմ այսչափ մի բարկանար, աչերդ այդպէս խոշոր խոշոր մի բանար, եթէ ոչ, ես ալ քովդ չ'պիտի գամ։ Այո, մեծ հայրիկ, յարեց փոքր աղջիկն իր մեծ հօր դորովալի գը-

գուանք մը տալով, քեզ երբէք չ'պիտի համբուրեմ։ Ծերունին զինաթափ մնաց։

Սակայն Պարոն Ժէրալտ որդի, զանգակն որ իր առջև դրուած էր, զարկաւ և հրամայեց սպասաւորին որ խակոյն հասաւ, Միէղը կանչելու։

Ապա, երբ այս վերջինն եկաւ, անոր ըսաւ թէ տղայքը պարտէզը տանի։ Այն ատեն, երեք աղջիկներն սոսկալուեցան սեղանատունէն դուրս ելնել։

Բայց Ֆլօրանս շատ կը փափաքէր մնալ։ Հետաքրքիր էր ու կը մտածէր որ եթէ իր հայրն, Ժիւլիէդը, Յովհաննան և դինք դուրս ղրկէ, կարևոր բաներու վրայ խօսելիք ունի։ Բայց չի համարձակեցաւ բողոքել ու դուրս ելաւ ոտներն քաշելով։

Քանի մը վայրկեան ետք, Պարոն Ժէրալտ ըստ կարգի սեղանատունէն կ'ելնէր և իր հայրն ու օրիորդ Մագ Նէյլ իր աշխատանոցը կը տանէր։

Այս աշխատանոցը մտնելու համար, պէտք էր փոքրիկ սենեկէ մ'անցնիլ, որ տեսակ մը սպասարան էր։ Կրկին դուռ մ'այս սենեակն աշխատանոցէն կը բաժնէր։

Երբ իր հօր ու օրիորդ Մագ Նէյլին հետ մինակ մնաց, Պարոն Ժէրալտ, որ խոհեմութեամբ տղոց առջև երբէք կարևոր բաներու վրայ չէր խօսեր, շատ աւելի որոշ կերպով մը խօսեցաւ։ Կացութիւնը ծանր և վրդովիչ էր, այնքան աւելի ծանր, տագնապալից, որքան որ թագուն ազդեցութիւն մ'այս բոլոր գործին մէջ զգալի էր։ Պարոն Ժէրալտ այս մասին բոլորովին համոզուած էր։

— Այո ըսաւ, խորին համոզումն ունիմ, որ մեր

օտար գործաւորներն, զոր նոր առի, միայն գործիներ են։ Սավինիէն անգամ, ուրիշ կողմէ կը շարժի։ Ո՞վ է այս մարդն։ Այդ տակաւին չեմ գիտեր, բայց կասկածներ ունիմ, և այն դէպքն զոր Հիւպէր Ֆլորանսին պատմեց, այդ իմ կասկածներս կը հաստատէ։

— Ինչպէ՞ս, ժէրալտ, գոչեց Պարոն ժէրալտ հայր, միթէ այնքա՞ն կարևորութիւն կրնա՞ս տալ այն առասպելին զոր այն տղան Ֆլորին պատմեց։

— Այդ առասպել մը չէ, հայր իմ։ Հիւպէր ճշմարիտը խօսեցաւ։ Եւ ապա ուրիշ իրաւունքներ ունիմ, այծարանին բնակիչէն կասկածելու համար որ մեր գործերուն կը խառնուի։

— Այն ալ ուրիշ մարդ մ'է որու դէմ ի զուր ուզեցի քեզ զգուշացնել։ Կասկածելի մարդ մ'է այն, որդեակ, կասկածելի մը։ Քեզ այդ կը հաւատամ։ Հիմայ ի՞նչ կայ, ո՞ւր կ'երթաս։

Պարոն ժէրալտ որդի ոտք ելեր էր։ կամացուկ մը դրան մօտեցաւ և դայն շուտ մ'ու յանկարծ բացաւ։

Այն առեն Ֆլորանսին առջև գտնուեցաւ որ կանգուն կը կենար երկու դրան մէջ տեղ։

— Դո՞ւ ես Ֆլորանս, ըսաւ տրամադրին։ Ի՞նչ կ'ընես հոս։

Պատասխանելու տեղ, Ֆլորանս իր դէմքն երկու ձեռքով ծածկեց։ Ո՜հ, որչա՜փ կ'ամչնար իր վատ վարմունքին համար, վասն զի Ֆլորանս մտի՛կ կ'ընէր, բայց (այդ անմիջապէս ըսենք) սովոր չէր այս բանին։ Իր նպատակն մտիկ ընել չէր։ Պարտէղէն կուգար, որ երրորդ Մագ Նէլլն խաղալիքի պահարանին

բանալին ունէր, թոուցիկ մ'անկից առնելու համար, երբ յանկարծ, առաջին դուռը բանալէ ետք, լսեր էր Հիւպէրին անունն զոր իր հայրն արտասաներ էր։ Այն առեն կանկ առեր էր, ձեռքն երկրորդ դրան բանալիին վրայ դրած, և մտիկ ըրեր էր։

Պարոն ժէրալտ որդի սուր ականջ մ'ունէր։ Լսեր էր որ առաջին դուռը կը բացուի ... ապա լռութիւնը տիրեր էր։ Պահ մ'ետք ոտք ելաւ, ստուգելու համար, եթէ մէկն մտիկ կ'ընէր։

— Ի՞նչ կընես հոս, կրկնեց իր աղջիկը սպասարանը քաշելով։

Ֆլորանս շատ ամօթապարտ, նորէն լուռ մնաց և լացաւ։

— Խլեցիր իմ տեղս կը խօսի, այդ կը տեսնեմ, վրայ բերաւ Պարոն ժէրալտ։ Կ'թողում քեզ անոր խայթին։ Բայց, որպէս զի երբէք, երբէք, կը լսե՞ս, այդպիսի քմայք մը նորէն չունենաս դռներուն ետևը, քեզ այնպիսի պատիժ մը պիտի տամ որ միտքդ պիտի մնայ, կը յուսամ։ Քիչ առենէ ծննդեան օրդ է, (տասն և մէկ տարեկան պիտի լինիս,) կընքամայրդ որ քեզ երես կ'տայ, սնտուկ մը ղրկեց քեզ, ամեն տարուան պէս։ Այդ սնտուկն այսօր առաւու հոս հասաւ։ Զայն չ'բացի, գիտես որ միշտ կը թողում քեզ որ բանաս։ Բայց ահա ինչ որոշեցի։ Միայն երեք ամսէ ետք զայն պիտի բանաս, եթէ վարմունքդ օրինաւոր լինի։ Հոս մօտ է այդ սնտուկն, իմ սենեակս։ Եթէ ոչ, կը լսե՞ս, Ֆլորանս, այն սնտուկն դպրոցին պզտիկ աղջկանց պիտի տամ։

— Մի պուռար, յարեց Պարոն ժէրալտ, տեսնե-

լով որ իր աղջիկն սաստիկ պիտի բարկանայ, ազմուկ մի հաներ։ Անօգուտ է այդ, ապա օգտիդ համար է որ այսպէս կը վարուիմ։

Եւ իր աշխատանոցը մտաւ, այս անգամ առաջին դրան նիգը հրելէն ետք։

Իսկ Ֆլորանս բաղմոցին վրայ նետուեր էր և սուր աղաղակներ կ'արձակէր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԿՆՔԱՄՈՐ ՍՆՏՈՒԿՆ

Հետևեալ օրն գործադուլ ընողներուն ընթացքը հանդարտ էր։

Երրորդ օրը, Պարոն Ժէրալտ գործատունն գոյեց։

Երբ հետևեալ առտու չի լսուեցաւ այն զանգակին ձայնն որ գործաւորներն գործատունն կը կոչէր, այլայլութիւն մ'երևան ելաւ Լաստենիքի մէջ, քանի մը մարդիկ, քանի մը կիներ լացին, և մանկիկներն իւրովի հարցուցին թէ արդեօք հիմայ շաբաթուան մէջ երկո՞ւ կիրակի կայ։ Սակայն, միայն այս պատահեցաւ։

— Ի՞նչ պիտի ընես հիմայ, Ժէրալտ, հարցուց Պարոն Ժէրալտ հայրը իր որդւոյն։

— Պիտի սպասեմ, պատասխանեց այս վերջինն։

— Կարելի է աւելի լաւ կ'ընես եթէ կառավարութեան իմաց տաս։

— Բայց, հայր իմ, վախնալու բան մը չ'կայ։

Թերևս երեք օր անցան առանց փոփոխում բերելու։ Կացութիւնն միշտ նոյնը կը մնար, գործաւորներն իրենց պայմաններուն վրայ կը պնդէին։ Պարոն Ժէրալտ չէր զիջաներ։

— Մինթէ այսպէս երկար ժամանակ պիտի տևէ՞, հարցուց Ֆլորանս իր մեծ հօր ութներորդ գիշերն։

— Կարելի է այ՛ո, կարելի է ո՛չ, պատասխանեց Պարոն Ժէրալտ հայր։

Այդ իրիկուն ծերունին երեք աղջկանց հետ միանակ կը գտնուէր։ Իր որդին, գործ ունենալով, իր աշխատանոցը կանուխ քաշուեր էր, և օրիորդ Մագ Նէյլ նոյն օրն սաստիկ գլխի ցաւէ բռնուելով, ճաշին անգամ չէր երևած։

— Ա՜հ, կ'ուզեմ որ այդ գործաւորներուն ըրածը դադրի, վրայ բերաւ Ֆլորանս, պահ մ'ետք, և Ժիւլիէդն ալ, և Յովհաննան ալ։

Պարոն Ժէրալտ հայր աւելի հանդարտօրէն յարեց, հիմայ պառկելու երթանք։

Երեք աղջիկներն հարբուրեց, Միէդը կանչեց, զանի յանդիմանեց և պահ մ'ետք, երբ Ֆլորանս ու Յովհաննա սանդուղքն վեր կ'ելնէին, իրենց եաւէն սպասուհին որ ընդունած յանդիմանութենէն կաս կարմիր եղեր էր և Ժիւլիէդն իր թևերուն մէջ կը տանէր, մեծ հայրն ալ իր սենեակն կը մանէր։ Առտու կանուխ կ'ելնէր և գիշերն կանուխ կը պառկէր։

Երբ Ֆլորանս իր սենեակը մտաւ (աղբոր սենեկին մ'էր որ Ժիւլիէդին սենեկին հետ հաղորդակ-

ցութիւն ունէր, դրան մը միջոցաւ, ասկէ զատ ունէր նաև ուրիշ դուռ մը Նրբանցքին վրայ,) Ցլոբանս, երբ իր սենեակն հասաւ, անմիջապէս իր անկողինն մտաւ և խսկոյն քնացաւ։

Ընդհակառակն, երբ Յովհաննա իր սենեակը գտնուեցաւ, պառկելու չմտածեց։ Իր մոր նամակ պիտի գրէր, երկու կամ երէք օրէ ի վեր այդ պարտքըն չէր կատարած։

Իր պատուհանն բոլորովին բաց էր, զայն չի գոցեց և իր սեղանին առջև նստելով, ճշմարիտ օրագիր մը սկսաւ, այս սեղմած տողերուն մէջ իր բոլոր սիրտն և իր բոլոր դաղափարները դնելով։

Ժամի մը չափ այսպէս գրեց։ Բուն կուգար...։ Ու նամակը ծալեց, իր լապտերը վառարանին վրայ դրաւ և հանուելէ առաջ պատուհանին մօտեցաւ, որպէս զի գոցէ։

Օդն անուշ ու հոտաւէտ էր։ Սակայն այն ամառնային գեղեցիկ գիշերներէն մին չէր, այն պայծառ ու աստղազարդ գիշերներն, ինչպէս սովոր կը պատահին, մանաւանդ լեռներու մէջ։ Լուսինն առերեւոյթ եղեր էր, և միայն քանի մը մոլորակներ երկինքը կը փայլէին։

Յովհաննա հինգ մինչև վեց վարկենի չափ հոն կանգուն մնաց, պատուհանին վրայ կռթնած, իր ուշադիր ականարկն այս խոր մթութեան մէջ նետելով։

Ցանկարծ սարսռաց, առարկայ մ'իր դլխուն վրայէն կ'անցնէր և աղմուկով իր սենեկին մէջ կ'իյնար։

Նախ զարմանահար և մինչև անգամ ահաբեկ,

պատուհանէն դուրս ծռեցաւ, և կարծեց տեսնել մեծ ստուերի մը շարժիլն և Լաստենիներուն մէջ առներևոյթ լինիլն։

Աղջիկն այլայլած և դողդոջուն իր պատուհանը գոցեց, իւրովի հարցնելով թէ արդեօք կ'երազէր, բայց ոչ, առարկայ մ'իր ետին գետինն կը գտնուէր, այդ առարկան պահ մ'առաջ հոն չէր։ Ծռեցաւ, իր ձեռքերուն մէջ առաւ զայն ու շօշափեց, և ապա հետաքրքրութենէ մղուած, հանեց այն թուղթն որով ծածկուած էր։

Այդ առարկան դայլախաղ մ'էր, այն սովորական դայլախաղներէն մին, որ ամեն տեղ կը գտնուին։ Ի՞նչ կրնար նշանակել այդ։

Յովհաննա հետզհետէ աւելի ևս զարմանալով, մտածեց քննել թուղթն որ դայլախաղն ծածկեր էր, և սաստիկ զարմանօք տեսաւ որ անոր վրայ քանի մը բառեր դրուած էին։

Անմիջապէս, լապտերին մօտենալով, հետևեալ բառերն կարդաց.

— Այս գիշեր գործատունն կրակ պիտի ձգուի։

Այն ատեն պահ մ'անշարժ, զարմանահար և ահուդողի մէջ մնաց։ Սակայն, պահ մ'ետք իւրովի ըսաւ.

— Ո՜հ։ Տէր Աստուա՞ծ, այս գիշեր կրա՞կ պիտի ձգուի...։ Միթէ այդ կարելի՞ է...։ Բայց ժամը քանի՞ է։

Իր ժամացոյցն նայեցաւ և տեսաւ որ ժամը տասն ու մէկին քսան վայրկեան կայ։

— Կարելի է շատ ուշ չէ, վրայ բերաւ, բայց

պէտք է շուտ մ'իմաց տալ, վասն զի հիմայ կը հասկընամ թէ այս գայլախաղն ազդարարելու համար նետուած է։ Որո՞ւ պէտք է որ իմաց տամ, յարեց։

Իր առաջին գաղափարն եղաւ օրիորդ Մագ Նէյլը։ Բայց մտածելէն ետք, միտքը փոխեց։ Օրիորդ Մագ Նէյլ շատ կը տառապէր, և ապա, աղ բարի օրիորդին դիմելով թանկագին ժամանակ կը կորուսէր, աւելի լաւ էր անմիջապէս Պարոն Ժէրալտին երթալ։

Այս վերջինն երբէք կէս գիշերէ առաջ չէր պառկեր։ Յովհաննա գիտէր որ զանի իր աշխատանոցը պիտի գտնէ։ Ուստի հոն վազեց։

Տեսնելով աղջիկն որ շատ յուզեալ կը յառաջանար, Պարոն Ժէրալտ հասկցաւ թէ շատ ծանր գործ մը նորատի աղջիկն կը ստիպէր դինք տեսնելու։

— Ի՞նչ կայ, հարցուց ոտք ելնելով։

Յովհաննա խրթև պատասխան, բռնած թուղթն անոր տուաւ։

Պարոն Ժէրալտ զայն առաւ, կարդաց, նորէն կարդաց, թերթ կարմրութիւն մ'իր այտերուն վրայ կը նշմարուէր։

Ապա, խօսքն Յովհաննային ուղղելով, հարցուց ձայնով մը զոր կը ջանար մեղմել.

— Ո՞վ տուաւ քեզ այս թուղթն։

Շուտ մը, Յովհաննա բոլորովին այլայլած, պատասխանն անոր պատմեց։

— Միթէ /զմէ զատ, ուրիշի մ'այդ բանին վրայ խօսեցա՞ր, վրայ բերաւ Պարոն Ժէրալտ, երբ Յովհաննա իր պատմութիւնն աւարտեց։

— Ո՛չ, Պարոն, պատասխանեց։ Մտածելով որ ժամանակը կ'անցնէր, անմիջապէս ձեզ դիմեցի։

— Լաւ ըրիր զաւակս, և շնորհակալ եմ։ Բայց ուշ է, գնա հանգչէ։ Ա՜հ, խօսք մ'ևս ունիմ։ Երբ գայլախաղն քեզ նետուեցաւ, միթէ դուրս նայեցա՞ր, միթէ մէկը տեսա՞ր։

— Կարծեցի մեծ ստուեր մը տեսնել։ Սակայն կրնամ սխալիլ, վասն զի շատ մութ էր։

— Շնորհակալ եմ նորէն, աղջիկս։ Գիտեմ որ խոհեմութեանդ վրայ կրնամ վստահ լինիլ, և հիմայ, գնա հանգչելու։

Յովհաննա շատ կը փափաքէր Պարոն Ժէրալտին հարցնել թէ ի՞նչ պիտի ընէ։ Բայց չի համարձակեցաւ, և միշտ հնազանդ նորէն ելաւ իր սենեակն։

Երբ Պարոն Ժէրալտ առանձին մնաց, վայրկեան մը չի կորուսեց, իր աշխատանոցէն ելաւ և իր հօրմօտ գնաց։

Առանց անոր հասկցնելու թէ ինչ կար (անշուշտ չէր ուզեր զայն յոգնեցնել) ըսաւ անոր թէ կ'երթայ գործատունն, նայելու եթէ ամեն բան կարգին է։

Պարոն Ժէրալտ հայր ուզեց անոր միանալ։ Պարոն Ժէրալտ մերժեց։ Զէր ուզեր իր հօր նեղութիւն տալ, վասն զի կարելի էր որ գիշերուան մեծ մասը գործատունն անցնէ։

— Բայց, ըսաւ ծերունին հետդ մէկն առ։

— Լաւ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։ Ձեզ հանգիստ պատճառելու համար, Ժէրոմը հետս պիտի առնեմ։

— Եթէ այդպէս լինի շատ աղէկ է։ Գիտեմ որ

խոհեմ ես։ Սենեկէս անցիր վերադառնալու ժամանակ։ Մի մոռնար այդ ընելու։

— Կը խոստանամ կատարել խնդիրդ։

Քանի մը վայրկեան ետք, Պարոն Ժէրալտ տունէն կ'ելնէր, և կը դիմէր այն փոքր շենքն ուր ախոռը կը գտնուէր։ Հոն, Ժէրոմ կառավարն արթնցուց, որու խոհեմութեան ու անձնուիրութեան վրայ կըրնար վստահ լինիլ և անոր հրամայեց լոյս մը վառելու։

Ժէրոմ ելաւ և ընդ փոյթ հագուեցաւ։ Ապա, անմիջապէս վար իջաւ, ձեռքը լապտեր մը բռնած։

— Լաւ, ըսաւ Պարոն Ժէրալտ։ Հիմայ ինձ մի՛ սցիր, գործատունն պիտի երթանք։

Եւ որովհետև բարի մարդն զարմանօք անոր կը նայէր։

— Շուտ ըրէ, ժամանակը կարճ է, վրայ բերաւ Պարոն Ժէրալտ։

— Ժամանակը կա՞րճ է, մրմռաց կառապանն։ Մի՞թէ նոր բա՞ն մը կայ։ Բայց, զգուշանանք, վասն զի այսպիսի ստահակներով . . . ։

Իր խօսքը չաւարտեց, և առանց իր տիրոջը իմաց տալու, գնաց նա շնարկի մը մօտ ուր մեծ շուն մը կը գտնուէր, և անոր շղթան հանեց։

— Ի՞նչ կ'ընես հոն, հարցուց Պարոն Ժէրալտ։

— Թոմը մեզի հետ կ'առնեմ, պատասխանեց Ժէրոմ։

— Ո՛չ, թող զայն։ Մի՞թէ չե՞ս տեսներ որ բոլոր տնեցիքը պիտի արթնցնէ։

Իրաւի, մեծ շունը սաստիկ կը հաչէր։

— Լռէ՛, Թոմ, ըսաւ անոր Պարոն Ժէրալտ, զայն նորէն կապելով, լռէ՛, բարի շունս։

Թոմ հնազանդութեամբ լռեց։

— Մեկնինք, ըսաւ այն ատեն Պարոն Ժէրալտ Ժէրոմին։

Բայց, նոյն պահուն, ձեռքը դրպանին տանելով, դիտեց որ մոռցեր էր իր սենեակը բանալի մ'որմէ պէտք ունէր։

— Պահ մ'ինձ սպասէ, վրայ բերաւ, կամ աւելի լաւ է որ առջևէն երթաս։ Դրանդէն դուրս պիտի ելնեմ. զիս ճամբուն վրայ սպասէ։

Ապա շուտ մը տունը մտաւ։ Իսկ Ժէրոմ, բակէն անցաւ և պզտիկ դռնէ մը դուրս ելաւ։

Թոմին հաջումներն Ֆլորանսն արթնցուցեր էին, իր սենեակն ախոռին բակին վրայ կը նայէր։

— Ի՞նչ կայ, ըսաւ իւրովի, աչքերը չփելով։ Անշուշտ Թոմ գողեր տեսած պիտի լինի։

Իսկոյն ելաւ նա ու ապակիներէն դուրս նայեցաւ։

Գիշերային մթութիւնն միշտ կը դիրէր, բայց այն լապտերն զոր Ժէրոմ բռնած էր բաւական լոյս կ'տար։ Այս կերպով փոքր աղջիկն իր հայրը լաւ տեսաւ։

— Ա՜հ, գողեր չեն, մտածեց նա, այլ հայրիկն է։ Ո՞ւր կ'երթայ։ Կարելի է Լաստենիքի – քաղաքն կամ ուրիշ տեղ մը զոր չեմ գիտեր։ Շատ զարմանալի բան մ'է գիշերը պտոյտի ելնելը։ Անշուշտ հայրիկը գործ չունի և կ'երևի թէ չուզէր տակաւին քնանալ։

Եւ փոքր աղջիկն իր անկողինն պիտի դառնար, նորէն պառկելու, երբ տեսաւ որ իր հայրը տան մէջ

կը մտնէ, իսկ Ժէրոմ, լապտերը բռնած, անկից կը հեռանայ։

— Ի՞նչ կը նշանակէ այս, մտածեց Ֆլորանս։ Միթէ մէկը հիւա՞նդ է, և միթէ հայրիկն Ժէրոմը կը ղրկէ բժիշկը՞ կոչելու։ Անշուշտ հիւանդն Ժիւլիէդը չէ, վասն զի աղմուկ պիտի լսէի։ Ո՜հ, արդեօք մեծ հայրիկն է . . . ։

Այսպէս խորհելով, Ֆլորանս յանկարծ անհանգիստ եղաւ, փութով աւօտեայ մ'անցուց վրան, իր սենեկէն ելաւ և սանդուղքն վար իջաւ։

Իր նպատակն էր իր մեծ հօր սենեակն իսկոյն երթալ, բայց իր հօր սենեակներուն առջևէն անցնելու ժամանակ դիպուածով ներս մտաւ։

— Կարելի է որ հայրիկն հոս է, ըսաւ պզտիկ աղջիկն իւրովի։

Պարոն Ժէրալտ իրաւի հոն կը գտնուէր։ Ֆլորանս զայն հոն գտաւ այն պահուն որ Նա իր ննջարանէն դուրս կ'ելլէր, իր փնտռած բանալին առնլէն ետք։ Այս սենեակն իր աշխատանոցին վրայ էր, և Ժիւլիէդին սենեկին տակ կը գտնուէր։

— Հայրի՛կ, հայրի՛կ, գոչեց Ֆլորանս, իր հօր մօտ վազելով, միթէ մեծ հայրիկն հիւա՞նդ է։

— Ի՞նչ կ'ուզես ըսել, զաւակս, պատասխանեց Պարոն Ժէրալտ։ Մեծ հայրդ քաջառողջ է։

— Այդ լաւ լուր մ'է, ըսաւ պզտիկ աղջիկն հանգիստ սրտով։ Ահա այս է խնդիրն, հայրիկ, վրայ բերաւ շուտ մը Ֆլորանս, Թոմ սաստիկ կը հաչէր, դիս արթնցուց։ Պատուհանէն դուրս նայեցայ։ Զեզ տեսայ Ժէրոմին հետ բակին մէջ անոր խօսեցաք,

ապա տունը մտաք, իսկ Ժէրոմ, ընդհակառակն, դուրս ելաւ։ Այն ատեն մտածեցի թէ կարելի է մէկը հիւանդ է, և բժիշկին կը ղրկես որ կոչէ, և որովհետև հիւանդը Ժիւլիէդ չէր, վախցայ որ մեծ հայրիկն չ'լինի։

— Անհոգ եղիր, աղջիկս։ Քեզ արդէն ըսի թէ մեծ հայրդ շատ լաւ վիճակի մէջ կը գտնուի, և տան մէջ հիւանդ չ'կայ բնաւ։

— Ա՜հ, լաւ լուր մ'է այդ, կրկնեց Ֆլորանս։ Որչա՜փ ապուշ եմ, յարեց անմիջապէս, չի մտածեցի որ Ժէրոմ հետիոտն չ'պիտի գնար բժիշկը կոչելու համար։ Ձիերը կառքին պիտի կապէր, կամ ձի մը պիտի հեծնէր, վասն զի . . . ։

— Գնա՛, նորէն պառկէ զաւակս, ընդմիջեց Պարոն Ժէրալտ։ Լաւ չըլլար, գիշեր ժամանակ, սենեկէդ դուրս ելնելով։ Ուրիշ անգամ նոյն բանը մի կրկներ։

— Հայրիկ, գիտէք, կարծեցի թէ մեծ հայրիկը հիւանդ է։

— Այս պատճառաւ քնդ չեմ յանդիմաներ։ Օ՛ն, շուտ մը գնա, նորէն պառկէ։

Բայց կարծես թէ պզտիկ աղջիկն չէր ըներ այդ պատուէրն։ Անշարժ կը մնար և կը նայէր իր հօր սենեկին մէկ անկիւնն։

Այդ անկիւնն կը գտնուէր տեսակ մը խորունկ որմադարան մը կամ աւելի ճիշտը, պարզ խորշ մը (վասն զի դուռ չունէր) որ իրրև պահարան կը ծառայէր, և ուր Պարոն Ժէրալտ ասկէ զատ քանի մը գրքեր, քանի մ'աննշան թղթեր կը դնէր։ Դամասկ

վարագոյրներ, որ պատուհանին և անկողնին վարագոյրներուն նման էին, այս խորշը կը ծածկէին։

Այդ վարագոյրներուն մին բացուած էր, և այդ բացուածէն, երբ իր հայրն կը խօսէր, Ֆլորանս նըշմարած էր սնտուկ մը գետնին վրայ դրուած, խորշին վերջի յարկին տակ, միջին մեծութեամբ սնտուկ մը, ոչ աննման անոնց զոր ամեն տարի իր տարեդարձին առթիւ իր կնքամօրմէն կ'ընդունէր։

— Ո՜հ, ըսեր էր իւրովի, վստահ եմ որ այս է սնտուկս, սնտուկը զոր բարի կնքամայրս իմ տասնըմէկերորդ տարեդարձիս առթիւ ղրկած է ինձ։

Եւ Ֆլորանս այդ սնտուկն խկոյն բանալու փափաքն ունեցեր էր։

Բայց ինչպէ՞ս ընէ։ Անկարելի էր այդ բանն խընդրել իր հօրմէ որ անշուշտ պիտի մերժէր։ Իր հետաքրքրութիւնն, իր անխոհեմութիւնն պատժելու համար չէ՞ր որ հայրն այդ սնտուկն ղրաւած էր և երե՛ք ամսուան համար ղրաւած։

— Ինչպէ՞ս ընեմ, ինչպէ՞ս ընեմ, կը կրկնէր իւրովի փոքր աղջիկն։ Բայց կ'ուզեմ անպատճառ սընտուկս բանալ։

Եւ կը նայէր սնտուկին ակնապիշ ու անյագ։

Հայրը որ գիտէր թէ իր աղջիկն ստէպ կ'անասստէ, չի զարմացաւ երբ տեսաւ որ նա դժուարաւ կը հնազանդէր։ Բայց, ուզելով վերջ տալ խընդրոյն, վասն զի ինք ստիպողական գործ ունէր, դուրս հանեց աղջիկն, ապա, երբ երկուքն ալ մեծ բակը դտնուեցան, Պարոն Ժէրալտ Ֆլորանսն համբուրեց, ըսելով։

— Շուտ մ'ելիր սենեակդ ու նորէն քնացիր, զաւակս։

Ֆլորանս՝ որու աչքէն բան մը չէր վրիպեր, դիտեց այն տեղն որ իր հայրը գլխարկը ձեռքը բռնած էր։

— Դուրս կ'ելնէ՞ք, հարցուց, պզտիկ աղջիկն խկոյն։ Մի՞թէ պտոյտի կ'երթա՞ք։

Եւ յետին ծայր ուրախ էր որ իր հայրն պտոյտի ելնելու փափաք ունէր, պարագայ մ'որ իրեն դորձին կուգար, չէր ուզեր հեռանալ, այլ ընդհակառակն անվրդով կը կենար։

Պարոն Ժէրալտ իր աղջկան հարցման չի պատասխանեց, այլ այս անգամ խստութեամբ անոր ըսաւ։

— Ֆլորանս, հնազանդէ և դնա անմիջապէս քնացիր։

Ֆլորանս, չի կրցաւ դէմ դնել և սանդուղքն վեր ելնել ձեւացուց։ Բայց վեր չելաւ, և վարագոյրի մը ետին պահուելով, անկից դիտեց իր հայրն։

Տեսաւ որ իր հայրը ղրանդին վրայ նայող տան դրան կը դիմէր, այդ դռնէն դուրս կ'ելնէր և խընամքով իր ետևէն կը զոցէր։

Փիչ մ'ետք Պարոն Ժէրալտ Ժէրոմ կապավարին միացեր էր, և երկուքն ալ փութալով դործատան ճամբուն մէջ մտեր էին։

— Վստա՜հ էի, ըսեր էր Ֆլորանս իւրովի, երբ իր հայրը հեռացեր էր, հայրիկը պտոյտի կ'ելնէ։ Ո՜հ, օդուտ պիտի քաղեմ այդ առթէն և սնտուկս պիտի բանամ։

Եւ խկոյն իր պահուկէն ելնելով, վերադարձաւ

չուտ մ'իր առջի տեղը, վազելով սպասարանէն, աշխատանոցէն անցաւ և ննջարանն մտաւ։

Հոն, առանց շունչ առնելու, ճիշտ այն անկիւնն գնաց ուր սնտուկը կը գտնուէր, և որու վրայ պահ մ'առաջ իր ակնարկն սևեռած կ'երևէր։

Այս թանկագին սնտուկն միշտ հոն էր, գետնին վրայ, պահարանին վերջի յարկին տակ։

Ֆլորանս զայն քաշեց և հասցէին նայեցաւ։

Իրաւի իր սնտուկն էր։ Կարելի չէր տարակուսիլ, վասն զի իր անունն վրան գրուած էր։

— Ա՜հ, ի՜նչ ուրախութիւն, գոչեց, վերջապէս ամեն այն աղուոր բաները զոր բարի կնքամայրս ինձ կը զրկէ, պիտի տեսնեմ, վասն զի կնքամայրս ինձ երես կուտայ և իրաւունք ունի։

Սակայն պահ մը վարանեցաւ, խիղճն իրեն կ'ըսէր թէ վատ գործ մը պիտի ընէր։ Բայց նորէն անսասան մնաց։ Փափաքն որչափ մեծ էր, և ապա երեք ամիս որչա՜փ երկար են, մանաւանդ եռամսեայ կատարեալ իմաստութիւն մը։

— Որչա՜փ ապուշ եմ, ըսաւ իւրովի։ Ո՞վ պիտի գիտնայ այդ։

Ո՞վ պիտի գիտնայ այդ։ Միթէ Ֆլորանս մոռցե՞ր էր որ մեր ամենէ չնչին գործերն, մեր ամենէ անհնչան սխալմունքներն Աստուծոյ աչքէն չեն կրնար վրիպիլ։

Հէ՛ք աղջիկն, նորէն սնտուկին նայեցաւ, և գետինը ծունր դնելով սկսաւ զայն բանալ։ Այդ շատ դժուար չէր, պարզապէս չուանէ մը շրջապատուած և ակիներու միջոցաւ զոցուած էր։

Ֆլորանս չուանը կտրեց և ակիները դարձուց, ապա խուփն վերցուց։ Ապա իր երկու փոքրիկ ձեռքերն միասին սահեցնելով սնտուկին մէջ, առաջ թուղթ մը հանեց, ապա ստուարատուփ մը զոր խակոյն բացաւ։

Բայց, այն ատեն երեսը կախեց, ստուարատուփը գեղեցիկ ձեռագործի զամբիւղ մը կը պարունակէր։ Ի՞նչ, որովհետև հիմայ տասն և մէկ տարեկան էր, իր կնքամայրը կը մոռնայէր թէ խելացի աղջիկ մ'եղած էր . . . ։ Եթէ գոնէ զիրքեր զրկած լինէր ուրոց ընթերցումը սակայն զուարճալի է, մինչդեռ կար կարելն այնչա՜փ ձանձրանալի է։

Սակայն սնտուկը դատարկ չէր։ Այսպէս խորհելով, Ֆլորանս երկրորդ ստուարատուփ մը կը հանէր զոր բացաւ ըսելով.

— Բաւական է որ այս օգտակար պարգև մը լինէր։ Բայց ո՛չ, պէպէ՛կ մ'է, յարեց։ Ո՜հ, բարի կընքամայրս, որչա՜փ սիրուն ես։ Կարծեմ թէ երբ քրոսան տարեկան ալ լինիմ, պէպէկներն դարձեալ պիտի սիրեմ։ Բայց, նայիմ նոր աղջիկս։

Իր նոր աղջիկն աւելի լաւ քննելու համար, ինչպէս որ զայն անուաներ էր, Ֆլորանս գոհ չեղաւ վառարանին վրայ վառուած լամպերէն, այլ երկաճիւղ աշտանակի մոմերը վառեց, և զանոնք գետինը դրաւ, օթոցին վրայ ու վարագոյրներուն առջև որ խորշը կը ծածկէին։ Այն ատեն, գոչեց նա.

— Ո՜հ, զարմանալի՜ փոքրիկ անձն։ Որչա՜փ սիրուն է, ո՛չ, քանի՜ տգեղ է։ Իր աչերը զարմանալի ձև մ'ունին և իր հագուստը տարբեր տարագ մը։

Ո՛հ, բայց ոսկի ապարանջան մը կը կրէ, և իր անունը վրան գրուած է։ Միայն, այդ անունն բաւական դժուարին է կարդալ։ Սակայն փորձեմ։ Ա՛հ, վերջապէս յաջողեցայ։

— Նհան։ (Զինական լեզուով Երանուհի։) Այո, լաւ կարդացի։ Նհա՛ն, այդ անունն Զինական է։ Ուրեմն աղջիկս Զինացի մ'է։ Ո՛հ ոչ, գիտեմ հիմայ, Գոնգէնցի մ'է, վասն զի, բարի կնքամայրս յետին ծայր արդի իրողութիւններէ կ'ախորժի։ Մեծ հայրիկն է այդ ըսողն և մեծ հայրիկս . . . ։

Բայց իր խօսքը չաւարտեց, կարծեց թէթև չշուկ լսել։

— Արդեօք հայրի՞կն է որ կը վերադառնայ, մըտածեց նա։

Եւ իսկոյն խոյս տուաւ, օթոցին վրայ թողլով սնտուկն և իր բոլոր պարունակն։ Իր շտապին, իր յուզման մէջ, աշտանակներուն մին գետինն գլորեցուց, և այդ չի նշմարեց անդամ։

Երբ սանդուղին վերը գտնուեցաւ, Ֆլորանս կանգ առաւ ու մտիկ ըրաւ։ Ուրիշ բան չէր լսեր, այլ միայն իր սրտին բախումներն։

— Սխալեցայ, ըսաւ իւրովի։ Պէտք չէր այսչա՜փ շուտ խոյս տալ։ Պէտք էր սնտուկն իր տեղը դնել և ապա մտերն մտնել։ Հայրիկը պիտի տեսնէ որ իր սենեակն մտեր եմ և վաղը դիս պիտի պատժէ։

Պահ մը վար իջնելու միտք ըրաւ, այլ չի համարձակեցաւ։ Եթէ իր հայրը չէր վերադարձած կարելի է որ յանկարծ գար։ փոքր աղջիկն ալ չէր փափաքեր (և այդ մասին իրաւունք ունէր) իր հօր առջև գտնուելու։

Իր սենեակը մտաւ և պառկեցաւ։

Իրօք Ֆլորանս սխալեր էր։ Շշուկը զոր լսեր էր միայն իր երևակայութեան մէջ էր։ Պարոն Ժէրալտ գործատուէն չէր մեկնած, ուր ուղղակի գացեր էր։

Երբ Ժէրոմին հետ հոն կը հասնէր, երկու մարդիկ որ միջոցէ մ'ի վեր, փոքր ցանկապատի մ'ետև կանգուն կեցեր էին, իրարու արմուկով դնդեցին երբ Պարոն Ժէրալտը նշմարեցին։

— Վարպե՞տն, ըսաւ այդ մարդոց մէկն, զոր Ֆլորանս անշուշտ ճանչցած պիտի լինէր, իբրև դեռ սա՜ռանէրուն մին, վարպե՞տը, մեր նպատակը դերև ելաւ։

— Ո՛հ, մինակ է, կամ գրեթէ մինակ, կրնանք գործել, պատասխանեց իր ընկերն։

— Ո՛հ, այդ չի կրնար լինիլ, վրայ բերաւ միւսը։ Ո՞վ կ'ըսէ քեզ թէ հոս մօտ ուրիշներ պահուած չեն։ Միայն փախչելու կարող ենք։ Մատնուեցանք։

— Բայց ո՞վ ըրաւ այդ։ Այն անձն որու ուղղուած էր այս հարցումն, իր ընկերին կողմը ծռեցաւ և անոր ականջին անուն մը փսփսաց։

— Եթէ այդ գիտցած լինէի, ըսաւ միւս մարդն իր բուռներն սեղմելով։

— Ո՛հ, սպառնալիք մ'ըներ, օգուտ մը չունի այդ։ Հիմայ, մեր միւս կողմը գտնուող ընկերներուն իմաց տանք և շուտ մը փախչինք։

Ապա, իր խօսքն ի գործ դնելով, այն որ այսպէս կը խօսէր, իր ընկերին թևը բռնեց ու իր եռեւէն քաշեց։

Պարոն Ժէրալտ և Ժէրոմ չտեսան այս երկու

մարդիկն զոր խաւարը կ'պաշտպանէր։ Թօմ անոնց հետքը պիտի գտնէր եթէ իր շնարկին մէջ կապուած չի մնար։

Պարոն Ժէրալտ ուրեմն իր ճամբան շարունակեր և քիչ մ'ետք գործատունն հասեր էր։ Մտեր էր հոն, չէ թէ վանդակապատն, այլ փոքր դռնէ մ'որ բանալին ինքը միայն ունէր, (այդ բանալին էր զոր գացեր էր իր սենեկին մէջ փնտռելու ուր զայն մոռցեր էր, երբ իր տունէն կը մեկնէր,) ապա, չիտակ պահապանին տունը գացեր էր։

Այդ պահապանն (հին զինուոր մ'էր) կը բնակէր պզտիկ տուն մ'որ միայն բաժնուած էր գործատունէն բակի մը միջոցաւ որմէ գործաւորներն կ'անցնէին։ Բարեսիրտ մարդն բաւական զարմացաւ երբ կէս գիշերին իր տիրոջ գալը տեսաւ, բայց այդ զարմանքը չ'յայտնեց։

Պարոն Ժէրալտ ամոր հրամայեց որ ելնէ և գործատան բոլոր սրահներն լուսաւորէ։

Զորս ջրհանկիրներ (անոնք ալ հին զինուորներ էին) պահապանին հետ կը բնակէին։ Այս մարդոց երկուքն ցորեկը կը ծառայէին, միւս երկուքն գիշերը։

Պարոն Ժէրալտ չորսն ալ կոչել տուաւ, անոնց և Ժէրոմին հետ զանազան չէնքերն այցելեց և իրենց ըսաւ թէ ամեն գէպքի պատրաստ լինին, ապա այն մեծ սենեկին մէջ քաշուեցաւ որ իրեն իրեւ գրատուն կը ծառայէր։ Մտադիր էր գիշերն հոն անցնել։

Երբ հոն մտաւ, մեծ ժամացոյցն առտուան ժամը մէկ զարկաւ։

— Օ՜ն, ըսաւ նա իւրովի, իր գրասեղանին առջև նստելով, ամեն բան կարգադրուած է և պիտի հրոկենք։ Կարծեմ թէ հիմայ այս հէք մարդիկ իրենց վատ նպատակէն պիտի հրաժարին, վասն զի գիտեմ թէ պէտք եղած զգուշութիւններն առած եմ, գործատան այլ և այլ սենեակներն լուսաւոր են։

Ապա, առնլով այն թուղթն զոր Յովհաննա իրեն յանձներ էր, նորէն քննեց։ Դիրը չինծու էր։ Այն որ այս թղթին վրայ այդ քանի բառերն գծած էր, անշուշտ անյայտ մնալ կ'ուզէր։ Սակայն Պարոն Ժէրալտ զայն ճանչցած պիտի լինէր, կամ շատ շատ գուշակած, վասն զի գրոց մը քաշելէն ետք, ծրար մը առած էր որ նշանագիրներ կը պարունակէր, և գիտուածով հատ մը հանելով, երկու գիրերն բաղդատեց, նշանագրինն ու թղթինն, և խսկոյն ըսաւ մեղմիկ ձայնով.

— Այն է, կը տարակուսի, Սամինիէնն է։ Հիմայ ստոյգ եմ։ Ա՜հ, կարող եմ ըսել թէ մոլորեալ մ'է, ինքնին բարի սիրտ ունի, չի կրցաւ, չուզեց այսչա՜փ վատ գործի մ'ալակից լինիլ, և հիմայ կը ջանայ զայն ի դերև հանել։

Այսպէս մտածելով, Պարոն Ժէրալտ չէր սխալեր։ Իրօք, Սամինիէնն էր այս տոմսակը գրողն։

Տարի մը չ'կար որ Սամինիէն գործատունն կը գտնուէր։ Պարոն Ժէրալտ որ ամեն մարդու տաղանդը կը ճանչէր կամ աւելի լաւ կը գուշակէր, շուտ մը զայն գնահատած էր, այնպէս որ պարզ գործաւորէ մը շուտ շուտ գործավարի պաշտօնին հասուցած էր զանի։

Երիտասարդն ուշիմ էր, և (ինչպէս Պարոն Ժէրալտ հայր դիտեր էր) իր բնիկ յատկութեանց նայելով իր շրջանէն շատ աւելի բարձր կը գտնուէր։ Դժբաղդաբար մեծ քաղաքներ պտտած էր, և եթէ հոն բաւական ուսմունք ու մեծ ճարպիկութիւն մը ստացեր էր, միւս կողմէ, շատ սխալ գաղափարներ քաղեր էր։

Բայց Սավինիէն պարկեշտ էր, և երբ իմացաւ թէ ոմիր մ'այս է գործատան այրումն, նոյն գործագուլին վախճանն պիտի լինէր, սաստիկ սրտմտած էր, կռուած էր անոր դէմ, աւա՜ղ, անօգուտ տեղ իր ձայնն չէին մտիկ ըրած։

Այն ատեն, բաժնուելով անոցմէ որոնց հետ կ'ամչնար այսուհետև ընկերանալու (որ օտար գործաւորներն, Դէ՜ ապրանքէն էին) որոշեր էր, չէ թէ զանոնք, այլ անոնց նպատակն արգիլել, Պարոն Ժէրալտին իմաց տալով։ Ի՞նչ միջոցաւ կրնար յաջողիլ այդ դեռ չգիտէր, վասն զի չէր ուզեր ճանչուիլ. սակայն, մտածեց որ զայն պիտի գտնէ։

Ժամանակը կ'անցնէր։ Արդէն իրիկունն կը յառաջանար, գիշերը կը հասնէր։ Պէտք էր արագ ու աղդեցիկ կերպով գործ տեսնել։

Սավինիէն Լաստենի – Տուէն վազեր էր։

Այն միջոցին, որ կը հասնէր, դիտեր էր առաջին դսդիկոնին վրայ սենեակ մ'որ տակաւին լուսավառ էր։ Այդ սենեկին պատուհանն բաց էր, աղջիկ մը անոր վրայ կոթնած էր։ Այն ալ Յովհաննա Տը Լա Լիժէն էր։

Սավինիէն զանի շուտ մը ճանչցաւ, վասն զի վառարանին վրայ դրուած լապտերն կը լուսաւորէր։ Սակայն, ինքն անտես կը մնար, գիշերային մթութեան շնորհիւ։

Այն ատեն, իր տեսարակն առաւ, թուղթ մ'անոր մէջէն քաշեց և իր գրին ուրիշ ձև մը տալով, գրեց առանց տեսնելու այն քանի մը բառերն որ արդէն մեզի ծանօթ են.

— Այս գիշեր գործատունն կրակ պիտի ձգուի։

Ապա, գայլախաղ մ'առնէն ետք, այս թղթով փաթթեց և զայն օդին մէջ նետեց։ Ի վերջէ հնար մը գտեր էր։

Երիտասարդն ճարպիկ էր, վստահ էր իր յաջողութեան վրայ։ Գայլախաղն Յովհաննային գլխուն վրայէն անցաւ և ազմկալի իր սենեկին մէջ ընկաւ։ Այդ ընելէն ետք, Սավինիէն Լաստենուոյ մ'ետև պահուած, Լաստենիքի – Տուէն նայեցաւ։ Տեսաւ Յովհաննային ծռիլն և վար նայիլն, տեսաւ իր պատուհանը գոցելն և կրցաւ զայն դիտել, իր սպիտակ վարագոյրներուն ետևէն։ Յովհաննա գայլախաղն վերցուց, զայն քննեց և լապտերին մոտ կանգուն զայն կարդաց։

Սավինիէն, այն ատեն չունչ առաւ։ Գիտէր որ Յովհաննա մտացի ու խոհեմ էր, ու տարակոյս չունէր բնաւ որ Պարոն Ժէրալտի պիտի իմացնէր։

Իրօք, հաղիւ քառորդ մ'անցեր էր, երբ տեսաւ երկու մարդ որ բնակարանէն դուրս կ'ելնէին։ Այդ մարդոց մին լապտեր մը բռներ էր, այն էր Ժէրոմ կառավարն, միւսն էր Պարոն Ժէրալտ։

— Հիմայ կրնամ մեկնիլ, ըսաւ Սավինիէն իւրովի։

Եւ Սակայն հոն կեցեր էր, թեւերն խաչաձև, ակնարկն սևեռուն, որպէս թէ իր մտմտուքին մէջ թաղուած, դիտելով որ ժամերն խոյս կ'տային, և առաւօտն գինքն նոյն տեղը պիտի գտնէր անշարժ։

Ձեռք մ'որ իր թևին վրայ ընկաւ, սթափեցուց իր երազներէն։ Մարդ մ'իր քով կը գտնուէր, մարդ մ'որ մեծ կրկնոցի մը մէջ փաթթուած էր, և որ ականջաւոր խոյր մ'ունէր։

— Լա՜ւ ուրեմն, ըսաւ նա Սավինիէնին, ընկերներուդ ընթացքն ի դերև հանեցիր։ Մեկնեցան, վասն զի քաղաքապահներէն կը վախնային։

— Հրամիգներ ինձ համար ընկերներ չեն, պատասխանեց երիտասարդն։ Բայց, դուք ևս, թոյլ տուէք զիս . . . ։ Դո՜ւք, անոնց կը հաւանիք, թերևս կը գրգռիք։

— Զար գործ մը չի կրնար պատճառ ունենալ, պատասխանեց Սավինիէն որ կը ջանար հեռանալու։

Հայր Մէտարն, վասն զի նոյն ինքն էր, զայն կեցուց։

— Կեցիր ըսաւ, քեզ խօսելիք ունիմ։ Միտքդ դուշակեցի, կ'ուզես Լաստենիքէն հեռանալ։

— Երբ լուսնայ, ես ալ պիտի մեկնիմ, պատասխանեց երիտասարդն։

— Հիմայ պիտի ծագի լոյսն։ Նայէ հոն, հորիզոնին այս անորոշ նշոյլներն, այգուն առաջին շողերն են, շատ շատ երկու ժամ ունինք մեր առջև։ Բայց ասկից հեռանանք։ Իմ տունս աւելի հանդարտ պիտի լինինք։

Այս խօսքերն արտասանելու ժամանակ, ծերունին Սավինիէնն կը քաշէր։ Այն ալ չի դիմադրեց։

Քանի մը վայրկեան ետք, երկուքն ալ Լաստենիքի – Տունին կողմէն հեռացեր էին, և երկուքն ալ այծարանին ճամբան կը բռնէին։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՀՐԴԵՀԸ

Առտուան ժամն երեք էր։ Ժիւլիէդ չէր կրնար քնանալ, ջղային ու սրտայոյզ վիճակի մէջ էր ու երբեմն ահուզողի մէջ։

Այնպէս երևցաւ իրեն թէ զսրմանալի աղմուկ մը գետնէն կ'ելնէ, խուլ ճարճատիւն մ'էր, որ ի սկզբան աննշան, հետզհետէ սկսաւ շատնալ։ Ապա, կծու մուխ մը տարածուեցաւ սենեկին մէջ, և սաստիկ տաքութիւն մը զգալի եղաւ։

Փոքր աղջկան այնպէս երևցաւ որ կը խղդուէր։

— Միէ՛դ, Միէ՛դ, պոռաց այն ատեն Ժիւլիէդ, կոչելով սպասուհին որ սենեակը կը պառկէր։

Միէդ արթնցաւ, և ինքն ևս զգաւով, մուխն և տաքութիւնն, նա ըսաւ.

— Բան մը կ'այրի։ Վարէն կուգայ։ Երթամ նայիմ ի՞նչ կայ . . . ։ Անհոգ եղիք, օրիորդ Ժիւլիէդ։ պահէ մը պիտի գամ։

Իրօք վար իջաւ, բայց նորէն վեր չելաւ։ Եւ քանի մը վայրկեան ետք իր ձայնն լսուեցաւ։

— Կրա՛կ առեր է, կրա՛կ առեր է, խո՛յս տուէք։

Այս կրկին աղաղակներն լսելով, օրիորդ Մագ

Նէյլ շուտ մ'իր պատուհանը բացաւ։ Զարաչուք լոյս մը մեծ բակն կը լուսաւորէր։

— Ո՜հ, Տէ՛ր Աստուած, կրա՛կն առեր է, կրկնեց։ Տղա՛ք, պէտք է աղա՛յքը ազատել։

Այդ միջոցին նշմարեց Միէղը, Միէղ մաղերը թափած և հագիւ հագուած։

— Շնորհակա՛լ եմ, Տէ՛ր Աստուած, ըսաւ նա իւրովի։ Եթէ Միէղ վարն է, Ժիւլիէդ ապահովութեան մէջ է։

Միէղին անձնուիրութիւնն ճանչնալով, և պատահածը չի գիտնալով, օրիորդ Մագ Նէյլ միջոց մը չէր կրնար տարակուսիլ թէ սպասուհին նորատի հիւանդն առած տարած էր։

Կը մնային դեռ Ֆլօրանս և Յովհաննա։

Օրիորդ Մագ Նէյլն այս վերջինն կոչեց, պատին ուժգին զարնելով։ Ապա իր սենեկէն ելաւ, Ֆլօրանսին սենեակը մտաւ, որու հետ խստութեամբ վարվելու սովորեցաւ, վասն զի խորունկ քնի մը մէջ թաղուած էր և չէր հասկնար թէ ի՞նչ է պատահածը. ուստի պզտիկ աղջիկն կը մերժէր ելնելու։

Բայց բարի օրիորդն իր դիմադրութեան յաղթեց և Յովհաննան նրբանցքին մէջ գտաւ։

— Ո՞ւր է Ժիւլիէդ, հարցուց անոր նորատի աղջիկն։

— Միէղին հետ վարն է, պատասխանեց օրիորդ Մագ Նէյլ։ Շուտ մ'ինձ հետևեցէք, զաւակներս։

Եւ երեքն ալ վազելով վար իջան։

Սակայն, երբ օրիորդ Մագ Նէյլ Ֆլօրանսն և Յովհաննան իր եաւէն կը քաշէր, խոհարարուհին,

որ նոյնպէս Միէղին աղաղակներն լսեր էր, ուշմըտութիւնն ունեցեր էր կերակուրի զանգակն զարնելու. այս կերպով ամենքն ալ արթնցուց։

Քիչ ժամանակէ ետք, ամեն մարդ ոտքի վրայ էր։ Եւ երբ օրիորդ Մագ Նէյլ ու աղջիկներն սանդուղքէն վար իջան, լսեցին Պարոն Ժէրալտ հայր որ իր ամենէ խիստ ձայնովն կը պոռար, դուրս ելնելով իր սենեկէն որ գետնայարկ էր և բակին մէկ ծայրը կը գտնուէր։

— Ի՞նչ կայ։ Ի՞նչ կը նշանակէ այս։

— Հրդե՜հ, պատասխանեց օրիորդ Մագ Նէյլ համառօտ։

— Հրդե՜հ, գոչեց ծերունին։ Հապա՛ Ժէրալտ որ վերադարձած չէ՞ . . . ։ Տղա՛ք ձեր հետ են, այնպէս չէ՞, յարեց։ Զանոնք դուրս տարէք և անոնց վրայ հսկեցէք։ Ո՞ւր է կրակն։

Եւ Պարոն Ժէրալտ հայր արտորնօք յառաջ անցաւ, իր հետն ունենալով երկու սպասաւոր, որ իրեն հետ արթնցեր էին և որոց սենեակն իր սենեկին վրայ կը գտնուէր։

— Բայց հո՞ս է կրակն, գոչեց նոյն պահուն բոցերուն ճարճատիւնը լսելով։ Բայց հո՞ս է, կրակն որդւոյս սենեակներուն մէջ է։

Այս խօսքերն լսելով, «կրակը որդւոյս սենեակներուն մէջ է,» Ֆլօրանս աղաղակ մ'արձակեց։ Հասկցաւ . . . յիշեց . . . ։ Ինքն էր կրակ ձգողն։ Երբ իր հօր սենեկէն խոյս տուեր էր, իր կնքամօր սնտուկն բանալէն ետք, գետնին վրայ թողեր էր (անխոհե՜մը) վառուա՜ծ մոմեր, մոմեր, զոր ինք վա-

բագոյներուն առջև դրեր էր։ Ի՞նչ կ'ըսեմ, միթէ իր շտապին մէջ, աչտանակներէն մին, գետինն չէ՞ր գլորած, և զայն չէ՞ր վերուցած . . . ։

— Ո՜հ, մեծ հայրիկ, գոչեց Ֆլորանս, օրիորդ Մագ Նէյլին ձեռքը թողլով և իր մեծ հօր մօտ վազելով որ Պարոն Ժէրալտին սենեակներուն կողմը կը դիմէր, մեծ հայրի՜կ, հոն մ'երթար, պիտի այրի՜ս . . . ։ Կրակը հայրիկին սենեկին մէջն է· բայց հայրիկն հոն չէ . . . և կրակն ես ձգեցի մոմերով . . . ։ Ո՜հ, մեծ հայրիկ, մ'երթա՞ր հոն։ Ձե՜մ ուզեր։ Ձե՜մ ուզեր։

Եւ զանի կը բռնէր։

Այդ միջոցին, պզտիկ աղջկան ըսածը հասկնալու փորձ չընելով, Պարոն Ժէրալտ հայր նշան ըրաւ ըսպասաւորի մ'որ փոքրիկ աղջիկն շուտ մ'առնէ, դուրս տանէ։

Ցարմար ժամանակն էր։ Այն միջոցին, դուռն որ սպասաւորսն Պարոն Ժէրալտին աչխատանոցէն կը կը բաժնէր, կրակէն բռնուելով, կտոր կտոր թռաւ և բոցերն այս բացուածէն խոյս տալով, եկան պատերն լզել, հագիւ քանի մը քայլ հեռու Պարոն Ժէրալտ հօրմէ, և այն սպասաւորէն որ իր հետ յառաջացեր էր։

— Փախչի՛նք, ըսաւ այն տեղն ծերունին, և մանաւանդ նայինք եթէ մէկն աղատելու պէտք կայ։

Երկու մարդիկ այն տեղն դրանդին վրայ նետուեցան, և դրանդէն բակը հասան։

Օրիորդ Մագ Նէյլ, Ֆլորանս և Յովհաննա միայն քանի մը վայրկեան անոնցմէ առաջ հոն հասեր էին,

քանի մ'անձեր դեռ կը գտնուէին հոն, և անոնց մէջ տեղն էր Միէդ, Միէդ՝ որ Ժիւլիէդն օրիորդ Մագ Նէյլին և երկու միւս աղջկանց հետ չի նշմարելով, իսկոյն հնչնուք ունեցաւ և հարցուց։

— Բայց, ո՞ւր է օրիորդ Ժիւլիէդը։

— Ժիւլիէ՛դ, կրկնեց օրիորդ Մագ Նէյլն սաստիկ դժգունալով, միթէ քեզ հետ չէ՞, Միէդ։

— Ո՜չ, պատասխանեց սպասուհին որ առանձին վար իջեր էր։ Ո՜հ, Տէր աստուած, յարեց, յուսահատութենէ թևերն գալարելով, միթէ հոն վերը՞ մնացած է։

Կայծակէն աւելի շուտ, Յովհաննա այս խօսքերն լսելով, դրանդէն վեր ելեր էր, ոչ վանդին վրայ մտածեր էր նա և ոչ ոքի ժամանակ տուեր էր որ իրեն դէմ կենան, ու արիութեամբ տունը մտեր էր։

Կ'երթար Ժիւլիէդը փնտռելու։

Օրիորդ Մագ Նէյլ, Միէդ և քանի մը սպասաւոր ուզեցին իր ետևէն գնալ։ Պարոն Ժէրալտ հայր զանոնք կեցուց։

— Ոչ ոք պէտք է որ շարժի, գոչեց նա։ Ոչ ոք պէտք է որ շարժի, կ'ըսեմ ձեզ։ Միթէ չէ՞ք հասկը. նար որ միջոցէ մ'ետք սանդուղն անգործածելի պիտի լինի։ Եւ հիմայ ելնարաններ, չուաններ բերէք, և շուտ Ժիւլիէդին պատուհանին . . . ։ Թող Աստուած մեզ օգնէ։ Այս կերպով միայն կրնանք խեղճ տղայք ազատե՛լ։

Սակայն, Յովհաննա Տը լա Լիժէլ իր քաջութեամբ սիրտ առած, կրցած էր մինչև առաջին ղըսդիկոնն հասնիլ· Հոն առանց շունչ առնելու, Ժիւլիէդին սենեակն վազեր էր։

— Ժիւլիէ՛դ, Ժիւլիէդ, ըսաւ մտնելով, մի վախնա՛ր ալ, ահա եկա՛յ։

Եւ պզտիկ աղջկան անկողնին կողմը կը դիմէր, երբ կանկ առաւ և աղաղակ մ՚արձակեց։

Կրակն այս տեղ, արդէն գետինն այրած էր, և անկողնին բոլորտիքն բոցեր կը տեսնուէին։ — Սենեկին միւս ծայրն, Ժիւլիէդ կանգուն կեցած էր, աւելի սպիտակ քան գիշերային շապիկէն զոր հագած էր, և թևերն անոր կողմն կ՚երկնցնէր։

Ժիւլիէ՛դ կանգուն . . . ։ Երկիւղն կատարած էր ինչ որ գիտութիւնն չէր կրցած ընել, ցաւին յաղթած էր, շարժում տուած էր փոքր աղջկան սրունքներուն։

Սակայն, Յովհաննա հազիւ դիտեց այդ, ժամանակն որչա՛փ սուղ էր։

— Շո՛ւտ, շո՛ւտ, ըսաւ նա Ժիւլիէդին, փախչինք։

Եւ զայն կէս մը գրկելով, կէս մը քաշելով, այսպէս նրբանցքին հասեր էր։ Բայց կէս ճամբան կանկ առաւ . . . ։ Անկարելի էր յառաջանալ, սանդուղն հիմայ կ՚այրէ՛ր։

Այն ատեն, յուսահատ, և Ժիւլիէդը միշտ հետը քաշելով, Յովհաննա ամենէ մօտ սենեկին մէջ մտեր էր, որ բարեկամի սենեակ մ՚էր նրբանցքին միւս կարգը։ Հոն դէպի պատուհանն վազեր էր, որ ոչ թէ Լաստենիքի ուղղուն այլ դաշտերու վրայ, կը բացուէր և հոն մեծ աղաղակներ արձակեր էր։

Նոյն ժամանակ, Պարոն Ժէրալտ հոր տուած հրամաններն շուտով ի գործ դրուած էին։

Մեծ եղնարան մը բերեր էին, Ժիւլիէդին պատուհանին առջև, պատին կողմը կանգնեցուցեր էին, և սպասաւորներէն մին, որ անձնուէր ու աշխոյժ պատանի մ՚էր, անմիջապէս վեր ելեր էր։

Միայն քանի մ՚աստիճան մնացեր էր վերը հասնելու, ամենքն ալ զայն ահաբեկ կը նայէին, ամենքն ալ Աստուծոյ կ՚աղաթէին, երբ տեսան յանկարծ որ կը շարժի, կոթնելու տեղ մը կ՚փնտուէ, բայց չի գտնելով, գետինն կ՚իյնայ։

Սանդուղը հուրէն բռնուեր էր։ Բարեբաղդաբար ինքը, միայն պարզ գալարում մ՚ունեցեր էր։

Ուրիշ եղնարան մը բերին, այս էր երկաթէ եղնարան մը, և երկրորդ սպասաւոր մ՚ որ առաջինէն նուազ ճարպիկ, նուազ անձնուեր չէր, անմիջապէս յառաջացաւ, աղատումն փորձելու համար։ Յանկարծ ահաբեկ կանկ առաւ . . . ։

Ճարճատիւն մը լսելի եղեր էր, ճարճատիւն մ՚որ ամեն ճակատներուն վրայ քրտինք բերաւ և ամեն դէմքերն գունատեց։

Այդ միջոցին՝ մարդեր կը հասնէին, որ Լաստենիքի – քաղաքէն, հին դղեկէն և գործատուներէն կուգային։ Ամենքն ալ զանգակին ձայնն լսեր էին և շուտով Լաստենապատ ճամբէն վեր կ՚ելնէին, որ Լաստենիքի – Տունն կ՚տանէր։ Անոնց առջևէն կը քալէր Պարոն Ժէրալտ։

— Ժէրա՛լտ, գոչեց Պարոն Ժէրալտ հայրը՝ երբ հեռուէն իր որդին նշմարեց։

— Հա՛յրս, բարեկամնե՛րս, զաւակնե՛րս, պատասխանեց Պարոն Ժէրալտ։

Բայց ոչ ոք պատասխանեց, վասն զի այս պա-

հուն իսկ, լուած ճարճատիւնին վրայ, Ժիւլիէդին սենեկին տագանն վար ընկեր էր։

Սակայն, Սավինիէն ու հայր Մէտարն այծարանին ճամբուն վրայ խօսակցելով, Լաստենիքի–Տան շրջանէն մեկնելէն ետք՝ լսեր էին զանգակին ձայնն։

— Կրակը՝, գոչեր էր այն ատեն Սավինիէն, նըշմարելով այն չարաշուք նշոյլն որ հրդեհ կը գուժէր։ Ա՜հ, թշուառնե՛ր, գործատունն կրակի տալ չ'կըրնալով, տո՛ւնն այրեցին։

Չէր կրնար ենթադրել թէ այս կրակն, չէ թէ այն վտանգաւոր մարդոց, դէթ սոգանոցներուն գործն էր, որոնց վատ ընթացքն շատ լաւ գիտէր, այլ անխոհեմ և անհնազանդ Ֆլորանսին։

Հայր Մէտարն անոր պէս մխալեր էր, և անորմէ ետք կրկներ էր։

— Թշուառնե՛ր։

Այսպէս վատ գործէն կը սոսկար։ Չէր կրնար հաւանիլ որ բնակութեան տուն մ'այրեն, և այդ կերպով կիներու, մանկիկներու կեա՛նքն վտանգի մէջ դնեն։

Այդ պատճառաւ էր որ իր տարիքն ու իր սըրունքներուն ծանրութիւնն մոռնալով, սկսեր էր Սավինիէնին եւեւէն վազել։

Սավինիէն առաջինն էր որ տան մօտ հասեր էր։ բայց եւեւէն հասեր էր, այսինքն ոչ այն կողմն որ կ'այրէր, այլ միւս, և անոր բոլորտիքն պիտի դառնար, կրակին բուն տեղը գտնուելու համար, երբ Յովհաննաին աղաղակները զայն կեցուցեր էին։

Երիտասարդն դլուխն վերցուց, և առաջին գըսդիկոնին սենեկի մը պատուհանին առջև տեսեր էր նորատի աղջիկն որ՝ Ժիւլիէդն իր թևերուն մէջ բռնած, օգնութիւն կը խնդրէր։

Պէտք էր այս երկու խեղճ աղջիկներն ազատել, և փութալ, վասն զի կրակն արդէն կը յառաջանար, և քիչ մ'ետք բոլոր տան մէջ պիտի տարածուէր։

Շուտով ակնարկ մը նետելէն ետք, Սավինիէն այդ կացութիւնը քննեց։

Գետնայարկը կը գտնուէին քանի մը պատուհաններ, որ դրսէն շերտդոյներու միջոցաւ գոցուած էին։ Վերևն, առաջին դսդիկոնն, և պատուհանին առջև որու մօտ երկու աղջիկներն կանգուն կը կենային, կը տեսնուէր փորակերտ պատշգամ մ'որ երեք երկաթէ ագռաւէ բռնուած էին։

— Ո՜հ, մտածեց Սավինիէն, ոչ երկար և ոչ դըժուար պիտի լինի։

Եւ իրօք ուժգին, ճարպիկ և արի երիտասարդի մը համար և վաղուց մարմնամարզական կրթութեանց վարժ, ինչպէս էր Սավինիէն, աղայական խաղալիք մը, քանի մը վայրկենի գործ մ'էր այն։ Ուստի գետնայարկին պատուհաններուն մէկուն շերտդոյրը բացաւ, սաստիկ ճիգ մ'ընելէն ետք այդ շերտդոյրին վրայ ելաւ, անկից բռնեց ագռաւներուն մին, որ պատշգամն կը կրէին, անկից ալ այդ պատշգամին վրայ հասաւ։

Երբ այսպէս կ'ելնէր, հայր Մէտարն տան առջև կը հասնէր։

Յովհաննա չէր պոռար ալ, վստահութիւն կ'սպասէր օգնութեան, և երբ Սավինիէն պատշգամէն

պատուհանն անցաւ, աղջիկն անոր ըսաւ, միշտ բարեկամուհւոյն վրայ հոգալով.

— Առա՛ջ Ժիւլիէդ։ Ժիւլիէդն ապատեցէք։

Բայց Ժիւլիէդ չէր կրնար ալ կանգուն մնալ։ Ազատումի միջոցին մարած և յանկարծ գետինն ընկած էր։

Սավինիէն չի փորձեց զայն սթափեցնելու։ Պատուհանին վարագոյրները քաշեց, առաւ (հաստ բամպակէ վարագոյրներ էին) զանոնք իրարու կապեց, և երկաթէ վանդակապատին հաստատեց։ Ապա, Ժիւլիէդ իր թևերուն մէջ առնլով և մէկ ձեռօք զանի բռնելով պատուհանին միւս կողմն անցաւ։ Հոն ազատ մնացած ձեռօք վարագոյրները բռնեց, որոնց միջոցաւ ինք գինքը վար սահեցուց իր թանկագին բեռին հետ։ Բայց, պահ մ'ետք, ստիպուեցաւ կանգ առնլու. իր չինծու չուանն շատ կարճ էր։ Ի՞նչ ընել պէտք էր։ Վար նայեցաւ և բարձրութիւնն աչօք չափեց. անկարելի էր վար ցատկել։ Գետնէն տաս կանգունի չափ բարձր կը գտնուէր։

Մտատանջ, վարանկոտ, գրեթէ յուսահատ, ի զուր կը փնտռէր ազատումի կարելի միջոց մ'երբ (ո՜հ, այդ էր Աստուծոյ օգնութիւնն) հայր Մէտարը ելնարան մը բերաւ, զոր գտած էր բարեբաղդաբար մոտակայ սայլարանի մը մէջ որ տնակցութեան մասը կը կազմէր, և ուր, ըստ դիպուածոյ վազեր էր, Սավինիէնին ձախորդ վիճակը տեսնելով։

Երբ սանդուղն պատին կռթնցուց, էջն շատ դիւրացաւ։ Բիչ մ'ետք, Սավինիէն վերջի աստիճանները հասաւ, այն ատեն Ժիւլիէդն հայր Մէտարին յանձնելէն ետք նորէն ելաւ, որպէս զի Յովհաննան դուրս հանէ։

Յովհաննա ճարպիկ և արի էր, ինքզինքին կ'օգնէր։ Սավինիէն զանի առաւ անցուց՝ ըստ կարգին, պատուհանին միւս կողմն, ըսաւ անոր թէ երկու ձեռօք վարագոյրներն բռնէ և այսպէս մինչև ելնարանն սահի։ Նորատի աղջիկն հնազանդեցաւ և Սավինիէն նոյն կերպով իր ետևէն իջաւ։

Երբ Յովհաննա ու Ժիւլիէդ այսպէս մահուանէ կ'ազատէին, աննկարագրելի այլայլութեան տեսարան մը տան միւս կողմն կը պատահէր։

Պարոն Ժէրալտ վերջապէս իր հօր մօտ հասեր էր, և անոր մօտ հասեր էր այն պահուն ուր սենեկին յատակն կը փլէր և ամենուն սարսափ կ'ազդէր, վասնզի ամենքն ալ կարծէին թէ երկու խեղճ պզտիկ աղջիկներն հոն կը գտնուէին։

Նշմարեց Ֆլորանսն որ գետնին վրայ ծունր դրած, կուլար կ'աղօթէր և կը պոռար (փոքր աղջկան յուսահատութիւնն այնքա՞ն մեծ էր,) բայց իր քոյրն չէր տեսած։

— Ժիւլիէ՛դ, աղջի՛կս, գոչեց Պարոն Ժէրալտ սաստիկ մտայոյզ։

Իր հայրն իր որդւոյն երկու ձեռքերն ուժգին սեղմեց։

— Արիացի՛ր, ըսաւ նա, խեղճ որդիս։

Եւ մխալից փլատակներն անոր ցոյց տալով յարեց.

— Ժիւլիէդ ու Յովհաննա հոն են։

Պարոն Ժէրալտ գլուխն ծռեց։ Կարծես թէ սրտին հարուած մ'առած, չանթահար պիտի մնար։ Բայց ո՛չ, իր կքումն միայն պահ մը տևեց։ Իր բարձրը հասակը կանգնեց, և խօսքն ուղղելով անոնց, որ մօտէն իրեն հտևեր էին ըսաւ.

— Ջո՛ւր բերէք, կարելի է զանոնք կրնանք տակաւին ազատել։

Ապա, թերևս անօգուտ օգնութեան մը չսպասելով, բոցերուն մէջ պիտի նետուէր, երկու հէք աղջիկներն փնտռելու համար, երբ յանկարծ կանչ առաւ։

Ձայն մը, տղայական ձայն մը գոչեր էր։

— Ազատա՛ծ, Ժիւլիէդ ազատա՛ծ է։

Եւ Յովհաննա Տը լա Լիժէլ ամենուն աչերուն երևցաւ, ինչպէս երկնառաք անձ մ'անդամ կրնար երևիլ։

Հազիւ Նորատի աղջիկն վար իջեր էր, որ՝ միշտ ինքզինքն մոռնալով, մոռցեր էր միայն իր սիրականներուն վրայ և փափաքեր էր զանոնք ազատելու։

Նա գիտէր որ տան միւս կողմն Ժիւլիէդը կը փնտռէին։ Պզտիկ աղջիկն Սավինիէնին և հայր Մէտարին հետ թողլով, շուտ մը հոն վազեր էր, և շունչը կտրած այլայլած կը հասնէր, ուրախալից լուր մը բերելու համար։

— Ժիւլիէդ ազատա՛ծ է, կրկնեց, Պարոնայք Շիրինեանց դիմելով, հո՛ն է Սավինիէն։ Եկէ՛ք։

— Ո՛հ, Տէր Աստուած, շնորհակալ եմ, ըսաւ Պարոն Ժէրալտ որ անմիջապէս Յովհաննային հետևեցաւ։

Իսկ Պարոն Ժէրալտ հայր, որ վշտին մէջ այնքա՛ն զօրաւոր էր, բարեբաղդութեան մէջ սկսաւ դողդողալ։

Ծերունի մը զայն յարմար ժամանակին իր թևերուն մէջ ընդունեց և խղդելու չափ սեղմեց։ Այս ծերունին բարձրահասակ էր, իր թիկնոցին մէջ սեղմուած էր, բայց իր կեղծամն մոռցեր էր, կամ կորուսեր էր, շուտ շուտ քալելու ատեն։ Երկու տղայք իր քով կանգուն կեցեր էին, ասոնք էին Հիւպէր և Ալբերտ։

— Ոչ այսչա՛փ ուժգին, եղբայր իմ, ըսաւ Պարոն Ժէրալտ հայր, բոլորովին ինք զինքին գալով և խօսքն ծերունւոյն ուղղելով։ Ոչ այսչա՛փ ուժգին, կրկնեց կէս մը խնդալով, կէս մը լալով, և թոյլ տուր ինձ որ քեզ համբուրեմ։

Եւ երկու Շիրինեանց հին կռիւն (յիսուն տարուան կռիւ մը) մէկ վայրկենի մը մէջ մոռցուեցաւ, եղբայրական համբոյրի մը մէջ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՀԻՆ ԱՑԹԱՐԱՆԸ

Սավինիէն, հայր Մէտարին հետ առանձին մնալով, Ժիւլիէդին մօտ ծունր դրեր էր։ Դեռ հոն էր, և ճիգ կը թափէր որ պզտիկ աղջիկն սթափի, երբ Պարոն Ժէրալտ հոն հասաւ, Յովհաննէն առաջնոր-

դուած։ Ֆլորանս, օրիորդ Մաղ Նէյլ և Միէդ կը հետևէին։

Պարոն Ժէրալտ Ժիւլիէդն իր թևերուն մէջ առաւ և իր հոր համբոյրներուն տակ փոքր աղջիկն աչերը բացաւ ու մրմնաց.

— Հայրիկ, չա՞տ վախցայ։ Վերջապէս ահա եկաք։ Ո՞ւր է Յովհաննան։

— Հոս է աղջիկս, հոս քեզ մօտ։

— Ա՛ուղեմ զայն համբուրել։ Հայրիկ, եթէ Յովհաննան չլիներ պիտի մեռնէի . . . Զանի ևս համբուրեցէք, հայրիկ։

Պարոն Ժէրալտ Յովհաննային վրայ ծռեցաւ, անոր ճակատն համբուրեց, իր թևերուն մէջ սեղմեց և այլայլութեամբ մ'անոր ըսաւ.

— Թող Աստուած քեզ վարձատրէ, զաւակս։

— Ապա, Ժիւլիէդն օրիորդ Մաղ Նէյլին յանձնելէն և այդ անձնուէր բարեկամուհին աղաչելէն ետք, որ տղայքը հին դղեակն տանի (վասն զի թէև չգիտէր տակաւին իր հոր ու իր հօրեղբօր հաշտութիւնն, կարծեց թէ կարող է, միճակին ծանրութեան նայելով այսպէս վարուիլ,) շուտ մը վերադարձաւ այն տեղն ուր իր պարտաւորութիւնն զայն կը կոչէր, այսինքն այն տեղն ուր սատակիկ կ'այրէր։

Պարոն Ժէրալտ հայր և իր եղբայրն Պարոն Շիրինեան տ'Էվրի, հոն մնացեր էին, քաջալերելով իրենց ներկայութեամբ զանոնք որ անձնուիրութեամբ կ'աշխատէին, չէ թէ տունն ազատելու (այդ բոլորովին անկարելի բան մ'էր) այլ կրակը մարելու։

Դժբաղդաբար ջուրը կը պակսէր և շորս ջրհան-

կիրներն որ գործածուելն հասեր էին, կը բազմանային ի զուր, բոցերը չառնալով ամէն բան կը լափէին։

Իսկոյն չղթայ մը կազմեր էին։ Ճատ թևեր կային, և Լատեենիքի քաղաքի այդ ամէն գործաւորներն որու քանի մը հատը, ժամմ'առաջ, գործատան հրդեհը տեսնելով կարելի է որ ծիծաղէին, իրենց մէջ բարի նախանձով կը մրցէին, և պատրաստ էին իրենց կեանքը վտանգի մէջ դնելու այն անձին բնակարանէն պղտիկ մաս մ'ազատելու համար, այն անձին զոր, աւելի հանդարտ օրերու մէջ, անոնք անդամ Լատենիքի Բարի Պարոն անուաներ էին։

Ամենքն ալ տեսնելով այդ հրդեհն. զոր ծանր յանցանքի մը հետևանքն կը կարծէին, անոնք ալ, տակալով դղեակներ էին։ Հիմայ, աւելի լաւ զգացումներ ունենալով, իրենց անձնուիրութեան շնորհիներուն կ'սատանային, մոլորութեան և տկարութեան միջոցի մը համար։

Հիւպէր ու Ռըմի ալ հոն կը գտնուէին։ Երկու եղբայրներն, մանաւանդ Հիւպէր, արիութիւն մը, ճարպիկութիւն մը ցոյց կ'տային որ իրենց մեծ հոր սիրան գոհացութեամբ կը լեցնէր, և իրենց հօրեղբայրն որ անոնց միշտ կը նայէր, չէր կրնար ինքզինքն զսպել և կը մրմնջէր։

— Ա՜հ, կարիձներն, անոնց պէս էլ այդ տարիքին մէջ։

Իրենց կողմէն Սաֆիրիէն և հայր Մէտարն, տան այդ կողմէն մեկնելէն ետք ուր իրենց ներկայութիւնն անօգուտ կը դառնար, փութացեր էին հը-

դեհին բուն տեղն երթալու։ Առաջինն, Ժիւլիէդ ու Յովհաննա ազատելէն ետք, միայն գաղափար մ'ուներ, վազել այն տեղն ուր վտանգ կար։ Իսկ երկրորդն, կարելի է որ յուսար օգտակար լինելու, և այդ կերպով մասամբ քաւել յանցանքն որու պատասխանատու կը կարծէր դեռևս լինիլ։

Այսպէս մտեցեր էր, բայց, անմիջապէս դիտեր էր որ Ճարպիկութեան ժամանակն անցած լինելով, իր օգնութիւնն անոգուտ պիտի լինէր։ Այն տունն, քանի մը քայլ հեռանալով հոն մնացեր էր, մոռածմանց մէջ թաղուած, մինչդեռ իր առջև, կրակն կործանիչ գործն կը շարունակէր։

— Այո, կը խորհէր նա, ես եմ ճշմարիտ յանցաւորն (և այդ ըսելով իր կուրծքը կը զարնէր,) եթէ ես չլինէի, այս տունն պիտի չունենար այս վիճակն զոր ապուշ չարութեամբ Ժէրալտին գործատան վերապահած էի։ Եթէ ես չլինէի, խեղճ մանկիկներ անոնցի մահուան մը վտանգն չպիտի տեսնէին։ Եթէ ես չլինէի . . . ։

Իր խօսքն չի կրցաւ աւարտել, դերան մը տանիքէն քակուելով որ մեծ մասամբ կը փլէր, իր վրայ ընկաւ և դայն գետինն տապալեց։ Իսկոյն, մեծ աղաղակ մ'արձակեց։

Յովհաննա առաջինն էղաւ որ դայն լսեց։ Այդ պահուն օրիորդ Մագ Նէյլին կը հետևէր, Ֆօրանսին և Միկդին հետ, որ Ժիւլիէդ կը տանէր, ամենքն ալ հին դղեակին կողմն կը դիմէին։ Նորասի աղջիկն հայր Մէտարին կեցած տեղւոյն մոտ անցեր էր։

Ինքն, ամենէ առաջ վազելով հասաւ։

Սակայն, չուտ մը հէք մարդուն չորս կողմն առին։ Շատ ծանր վիրաւորուած էր (իր երկու որբուհիներն ճզմուած էին) սակայն մարած չէր և այս մրմունջն լսելի եղաւ.

— Այս փորձանքն որ ինձ հասաւ արդար է։

Ապա, ուզեց որ դայն իր տունը տանեն։ Պարոն Շերինեան տ'Էվրի դիմեցրեց.

— Ո՛չ, ըսաւ, չէ թէ այծարանն այլ տունս, հին դղեակը տարուի։

Հայր Մէտարն չ'վերժեց։

Երբ Լասաենիքի – բազարն կը վազէին որպէս զի տանեն այն բաներն որմէ պէտք ունէին կրելիք մը ընելու համար, երբ միւս կողմէն, բժիշկը կոչելու կը վազէին, Յովհաննա վիրաւորեալին մոտեցեր էր, գթասրտութեամբ անոր մոտ ծունր դրած և անոր ձեռաց մին իրեններուն մէջ առած էր։

Հայր Մէտարն այն տանն անոր նայեր էր, ինչպէս որ արդէն անգամ մը նայեր էր զանի Վալ – Տորէին վանքին աւերակներուն մէջ։ Ապա, անշուշտ իր դաղափարին պատասխանելով.

— Ա՜հ, այս, այս է աղջիկն Թէօտոր Տը լա Լիժէլին, ըսաւ ճգամբ, և կանկ առնելով, ցաւէն պոռալու համար։

Ապա, պահ մը լուռ մնալէն ետք, ծերունին աշնուազ ճգամբ, վրայ բերաւ.

— Շնորհակալ եմ ձեր գթասրտութենէ։ Թող Աստուած ձեզ վարձատրէ՝, յարեց, Պարան Ժէրալտին խօսքերն կրկնելով։

Կրելիքը պատրաստ էր։ Վիրաւորն անոր վրայ

գնել ուզեցին։ Բայց երբ հարկ եղաւ իր կոտրած սրունքներն շարժել, հայր Մէտարը սուր աղաղակներ արձակեց, և ցաւն այնքա՛ն սաստկացաւ, որ բոլորովին մարեցաւ։

Այդ ընդ փոյթ ըրին, կրելիքին վրայ դրին գանի և Սամինիէն, Ժարէ բանուորին հետ զայն հին դրեալն տարաւ։

Պարոն Շերինեան տ'Էվրի անոնց հետևեցաւ Յովհաննային հետ որ կ'երթար որիորդ Մագ Նէյլին, Ֆլորանին և Ժիւլիէդին ընկերանալու։

Երբ հայր Մէտարն դղեկին մէկ սենեկին մէջ պառկեցուցին, դեռ չէր սթափած։ Տակաւին մարած էր երբ բժիշկն հասաւ։

Այս վերջինն վիրաւորն երկայն բարակ և ուշադրութեամբ քննեց, ու պարոն Շերինեան տ'Էվրիի կողմը դառնալով որ Սամինիէնին ու Ժարէին հետ իր վճռոյն կ'սպասէր, նա ըսաւ.

— Այս մարդուն վիճակն ծանր, շատ ծանր է։ Պարզ կոտրում մը չէ, այլ մխերուն ու ոսկորներուն ճզմում մը . . . ։ Կրկին անդամատութիւն մը անդամ հարկ չէ ընել, վիրաւորն տարուօք և ակտրացած է, չպիտի կրնայ դիմանալ։

— Ուրեմն կորա՞ծ է, գոչեց Պարոն Շերինեան տ'Էվրի։

— Այո, կորա՞ծ է, սակայն կրնայ տակաւին երկու մինչև երեք օր ապրիլ։

Մինչդեռ բժիշկն այս խօսքերը կ'արտասանէր, հայր Մէտարն ինքզինքին եկեր էր։ Մարիկ ըրեր էր . . . ամեն բան լսեր էր . . . ։ Այս պէս, պիտի մեռ-

նէր։ Քանի մը վայրկեան լուռ մնաց, կարծես թէ կը պայքարէր իւրովի մահուան այդ ահելի գաղափարին դէմ, ապա նստար մ'ուզեց։

Նստա՞ր մը, մրմռաց Պարոն Շերինեան տ'Էվրի, բայց խե՜նդ է, խեղճ մարդն։ Ի՞նչ ունի թողլու։ Կարծեմ թէ աւելի լաւ կ'ընէ եթէ իր հոգւոյն փրկութեան վրայ մտածէ։ Վերջապէս իր կամքը կատարենք

Եւ Ժարէ մոտակայ աւանը գնաց որ նստարն բերէ։

Այս վերջինն երկու ժամէ ետք հասաւ։ Անմիջապէս իր նոր յանձախորդին սենեակը գնաց։

Երբ մեկնեցաւ, շատ երկարատեսութենէ մ'ետքը, հայր Մէտարը խնդրեց Յովհաննա Տը լա Լիժէն անդամ մ'ևս տեսնել։ Այս փափաքն աղաչանք մ'էր։

Իսկոյն տուին Յովհաննային որ վազելէն եկաւ, օրիորդ Մագ Նէյլին ընկերութեամբ։

Հապիւ երկուքն ալ վիրաւորին սենեակը մտած էին, երբ Պարոնայք Շերինեանց հայր ու որդի, Հիւպէր ու Ռըմի, և քանի մը սպասաւոր հին դղեակը հասան։ (Քալելու ժամանակ, Պարոն Ժէրալտ հայր իր որդւոյն պատմած էր թէ ինչպէ՞ս իր եղբօր հետ վերջապէս հաշտուած էր։)

Առտուան, ժամը տասն ու մէկ կը մոտենար և Լասաենիքի–Տուէն միայն մխալից փլատակներ կ'երևէին։

Թէև Պարոն Ժէրալտ ու իր հայրը սաստիկ յոգնած էին, թէև պէտք կ'զգային քիչ մը սնունդ առնելու, ուզեցին առաջ երթալ հայր Մէտարը տես-

նել։ Ուստի վիրաւորին սենեակը դացին, ուր Պարոն Շերինեան տ'Էվրի և Սամինիէն նոտարին մեկնելէն վերջ վերադարձած էին։ Հիւպէր ու Ռըմի անոնց եւ-տևէն այն տեղը սահեցան։

Պարոն Ժէրալտը տեսնելով, հայր Մէտարը կէս մը վեր ելեր էր։

— Եւ ասո՞ւն, հարցուց նա։

— Տունը չ'կայ ալ, բարեկամս պատասխանեց Պարոն Ժէրալտ, բայց հիմայ ձեր վրայ հոգալ պէտք է։ Ինչպէ՞ս էք։ Շատ կը տառապիք, այնպէս չէ՞։

(Նոյն պահուն, Պարոն Շերինեան տ'Էվրի բժիշկին խօսքերն իր եղբօր կ'իմացնէր։)

— Այ՛ո, սոսկալի կերպով կը տառապիմ, պատասխանեց վիրաւորն։ Բայց, այդ միայն արդարութիւն է, կրկնեց նորէն։

Եւ որովհետև Պարոն Ժէրալտ զարմացմամբ կը նայէր անոր, ծերունին տենդագին յուզմամբ շարունակեց.

— Իմ ձեռքս չէր կրակը ձգողն։ Սակայն ես եմ փուն յանցաւորն։

Եւ անմիջապէս յարեց։

— Այդ սաֆրը գործ տեսաւ այն մարդիկ որ իզմէ զրգռուելով, գործատուէն պիտի այրէին։

— Բայց, գոչեց Պարոն Ժէրալտ հայր, որ չէր հասկնար, գործատուէն պիտի այրուէր։ Այդ ամենևին չէի գիտեր։ Բայց վստահօրէն գիտեմ թէ Լասատենիքի-Տունն անխոհեմութեամբ է որ կրակ ձգուեցաւ։ Այդ մարդը կը ցնորէ կամ սխալմունք մը կայ զոր չեմ կարող բացատրել։ Ֆլօն ինձ ըսաւ . . . . Բայց ո՞ւր է Ֆլօն։ Գնա՛, փնտռէ, պզտիկ աղջիկ։

Այս վերջի խօսքերն Յովհաննա Տը լա Լիժէլին ուղղուած էին, որ անմիջապէս հնազանդեցաւ։

Բիչ մ'ետաք, Ֆլօրանս բոլորովին տրտատուած որ պատմեց թէ ինչպէ՞ս օգուտ քաղեր էր իր հօր գիշերային պատայէն, որպէս զի իր կնքամոր անուշկն բանայ, ինչպէս շատ մը մոմեր վառած և անխոհեմութեամբ վարագոյրներուն առջև դրած էր, որպէս զի Նոեռ, իր Դոնգէնցի պէպէկն աւելի լաւ քընէ, և ինչպէս, վերջապէս չչուկ մը լսելով, խոյս տուած էր, առանց մոմերն մարելու և առանց աշտանակներէն մին անդամ վերցնելու զոր իր շտապին մէջ գետինն տապալած էր։

— Օ՜ն, Մէտար, ըսաւ Պարոն Ժէրալտ հայր նոր Ֆլօրանս իր պատմութիւնն աւարտեց, և ինքզինքդ մի չարչարեր։ Ցանցաւորն այս պզտիկ աղջիկն է, որու զղջումն ճշմարիտ է, այդ մասին վստահ եմ։

— Եւ դու, Ֆլօրանս, յարեց նա, պզտիկ աղջիկն համբուրելով, մի լար ալ, զաւակս։

Բայց հայր Մէտարն չէր հանդարտեր, ոչ ոչ, իր յուզումն, ընդհակառակն, կը շատնար։

— Ո՜հ, ըսաւ նա, Լասատենիքի-Տան այրումն կրնայ անխոհեմութենէ մը յառաջ եկած լինիլ։ Սակայն, նուազ յանցաւոր չեմ։

Եւ այս անդամ խօսքն երկու եղբօր ուղղելով, հարցուց կարմ, կցկտուր, չչական ձայնով մը.

— Պարոնայք, մինթէ գիս չի ճանչցա՞ք։

Եւ որովհետև երկուքն ալ բացասական կը պատասխանէին, յարեց.

— Մարիոս Մէտարն եմ, ձեր հին հովիւն։

— Ի՞նչ, դու ես, դոշնց Պարոն Ժէրալտ հայր, դու Մարիոս, փոքր այծարածն։

— Այո, ես, այն խեղճ տղան, որ առանց ընտանիքի էր, որու ապաւէն տուեր էիք, որ առենօք ձեզ կը սիրէր, և զոր օր մը, քարկուքեան միջոցի մը մէջ՝ դանակոծեցիք։

— Ա՜հ, այո կը յիշեմ այդ, կարծես թէ դեռ երէկ պատահեցաւ, վրայ բերաւ Պարոն Ժէրալտ հայր, վիճակին ծանրութիւնն մոռնալով, իր պատանեկան տարիներուն մտածելու համար որ հիմայ այնքա՜ն հեռաւոր էին։ Բեզ դողութեամբ կ՚ամբաստանէի։

Դու ժխտեցիր և իրաւունք ունէիր, վասն զի (ճաքը իմացայ այդ,) անմեղ էիր։ Սակայն, երևոյթներն քեզ դէմ լինելով, ամբաստանութիւնս կը պնդէի, նորէն ժխտեցիր, և այս անգամ իրաւունք չունեցայ, ինչու որ անքաղաքավար դտնուեցայ։ Եռ ալ, դաւաղանս առի և քեզ զարկի։ Ապա, քեզ վռնտեցի, բայց երբ քեզ հետևեալ օրն փնտռել տուի, քեզ չի դտան։ Ո՞ւր դացեր էիր։

Պարոն Շերրինեան տ՚Էվրի նոյն պահուն իր ձեռքն իր եղբօր ուսին վրայ դրաւ։

— Անդուան, ըսաւ, աւելի ևս հարց ու փորձ մի ըներ։ Միթէ չե՞ս տեսներ որ անտանելի կերպով կը տառապի և հանդարտելու, հանգչելու պէտք ունի։

— Ո՛չ, ո՛չ, դոշնց հայր Մէտարը, դեռ կ՚ուզեմ խօսիլ, ամեն բան ըսել կ՚ուզեմ։ Միթէ չէ՞ք գիտեր որ ապրելու քիչ ժամանակ մնաց ինձ։

Եւ միշտ այդ տենդային գրգռութենէ մղուած, պատմեց որ հեռու տեղ մը, Ամերիկա դացեր էր։

Լսեր էր թէ հոն ոսկին առանց դժուարութեան կը վաստկին, և կ՚ուզէր շատ շուտ հարստանալ, հարստանալ, որպէս զի դողութեամբ չամբաստանուի ալ, հարստանա՛լ և այն երկիրն վերադառնալ ուսկից ամէնքս, փնտռուած մեկներ էր, հարստանա՛լ, որպէս զի իր վրէժն լուծէ և իր հարստութիւնն ցոյց տայ։

Բայց որչա՜փ սխալեր էր։ Երեսուն երկու տարուց չափ թշուառութեան դէմ մաքառեր էր։ Վերջապէս, երբ բոլորովին յուսահատ պայքարն կը թողուր ու Ֆրանսա վերադառնալու վրայ էր, անսուսալի օգնութիւն մը հասաւ իրեն։ Նորատիպ ծուխային ապայի մը յանձնարարութեան շնորհիւ (որ ասկէ պատ հայր Մէտարին կեանքն ազատեր էր,) Եւրոպայի մէջ Մեծագոյն – Նահանգաց մէջ հողերը դներ էր ու գանոնք մշակել կ՚ուզէր, հայր Մէտարն իրրև վերակացու բռնեց։ Այս հողերն քարիւղ կը պարունակէին, և այս կերպով հարստութեան ճամբուն մէջ մտաւ։

Հայր Մէտարին ձայնն աւելի ևս կցկտուր ու շշչական կը դառնար։ Պարոն Շերրինեան տ՚Էվրի նորէն ուզեց դիմադրել և զանի լռեցնել։

— Ո՛չ, ո՛չ, կրկնեց վիրաւորն։ Մինչև ծայրը պիտի երթամ, պէտք է, կ՚ուզեմ։

Եւ խսկոյն, առանց պահ մը կանգ առնելու, վրայ բերաւ.

— Տակաւին ժամանակ մը կը մնայի Ամերիկա, ապա Ֆրանսա կը վերադառնայի։ Այնպէսն անբնական էր. առենօք երջանիկ տարեք էի հոն, փութացի գայն վարձու բռնել, առանց, սակայն ինքզինքս

յայտնելու։ Բայց գաղափարներս բոլորովին փոխուած էին։ Ոխս մոռացած էի, այդ արդէն որչա՞փ հին էր։ Զէի մտածեր ալ հարստութիւնս ցոյց տալու։ Ի՞նչ օգուտ ունէր այդ։ Ծեր էի։ Թշուառութեան երկար տարիներն այնքա՞ն խնայողութեան գիս վարժեցուցեր էին, որ ամէն մարդ կարծէր թէ աղա՛հ մ'եմ։

— Քանի մը տարիէ ի վեր ուրիշ ընթացք մ'ունէի։ Ամէն լերանց այս փոքր անկիւնն, որու վրայ այնքա՞ն շատ երազեր էի, երկարատև աքսորիս ժամանակ, կ'ուզէի մեծ շէնք մը շինել, գործատուն մը հաստատել, կ'ուզէի (մեծ հարստութեանս շնորհիւ և արուեստիս միջոցաւ) երկրին այս մասն այլափոխել, զայն հարստացնել, շէնցնել, անոր շարժում ու կեանք տալ։ Բայց, այս անգամ ալ նորէն սխալեր էի, վասն զի ուրիշ մ'այդ իզմէ առաջ բրեր էր։ Եւ այս ուրիշն՝ զոր այսպէս ճամբուս վրայ կը գտնէի, այս ուրիշը ժէրալա մ'էր հին սիրոջս մի որդին, որմէ (այդպէս կարծէի) ծանր գանգատներ ունէի, որ զիս ատենօք ամբաստանած, ծեծած, և վանած էր։ Ա՜հ, այն ատեն հին սիրտս սեղմուեցաւ, և անոր դէպ աչք կը նայէի։»

Հայր Մէտարը կանգ առեր էր։ Միթէ կարող չէ՞ր աւելի ևս խոսիլ, ցաւէն բեկեալ լինելով, կամ միայն ամփոփուած կը խորհէր։

Այդ լռութեան պատճառն ինչ որ էր, եբ նորէն խոսիլ ուզեց, Պարոն ժէրալտ կարծեց թէ ըստ կարգի դիմադրելու հարկ կար։

— Ա՜խ, ա՜խ, ըսաւ նորէն վիրաւորն, դեռ խոստովանանք մ'ունիմ ընելու, թոյլ տուէք որ շարունակեմ։

Եւ իսկոյն, այս անգամ խօսքը միայն Պարոն ժէրալտին ուղղելով, շարունակեց։

— Ես եմ, կամ լաւ ևս, ես էի կոիւներուն գլխաւորը, անկարգութեան շարժառիթն, վերջապէս պարագլուխն այն գործադուլին որ Լաստենիքը պատահեցաւ։

— Նպատակիս հասնելու համար օգնութենէ մը պէտք ունէի։ քիչ ժամանակէ ետք, ձեր նորատիպ գործավարներուն մին աչքս զարկաւ։ Զայն համոզեցի ու յորդորեցի որ ձեր գործատուներն շահի։ Բայց, այդ բաւական չէր . . . ։ Օտար գործատուներ՝ որ երախտագիտութենէ չէին կարող հրաժարուիլ, ձեռացս մէջ հոս գործիներ դարձան։ Եւ այսպէսով այս գործադուլն ընել տուի։

Հայր Մէտարը յոգներ էր։ Իր կցկտուր ձայնն մարկ ընելը միշտ կը պատճառէր։ Սակայն, իր բոլոր այժն առնելով, կրցաւ յարել, խօսքը միշտ Պարոն ժէրալտին ուղղելով։

— Եւ հիմայ, Պարոն ժէրալտ, ձեր ներողամտութիւնն կը խնդրեմ այս երիտասարդին համար։ (Սաֆիրիէն ցոյց կ'տար, որ անկողնին ոտքն կանգուն կեցած լռութեամբ կուլար։) Պարկեշտ մնաց և նաև բարի է։ Իսկ ես ձեր ներումն ինձ համար կը խնդրեմ։

— Ներողամտութիւնս անո՞ր համար, պատասխանեց Պարոն ժէրալտ, Սաֆիրիէնին երթալով, և անոր ձեռքը սեղմելով, ա՜հ, ալդէն ներուած է,

այդ խե՜ղճ, մոլորեալ տղան։ Մինչ ժիլիդ աղջիկն ևս չազատե՛ց, և մինչ հոր մ՚երախտագիտութիւնը վարպետի մ՚ոխն չ՚վաներ։

— Եւ դուք, խեղճ բարեկամս, յարեց նա, վիրաւորին գառնալով, և անոր վրայ ծռելով, հանդարտ մնա՛ք։ Թող Աստուած ձեզ ներէ։ Ահա, ձեզ ձեռքս կուտամ . . . ։ Ի՞նչ կրնամ ձեզ համար ընել։

— Բան մը մի ընէք, պատասխանեց ծերունին տխրալուծ։ Այ՛ո, սակայն . . . ։ Ձեր հօրմէն խնդրեցէք որ այն ալ ինձ իր ձեռքը տայ։

— Ձեռքը, խե՛ղճ ծերուկս, բայց կ՚ուզեմ քեզ համբուրել, գոչեց Պարոն Ժէրալա հայր։ Մինչեւ այդ կրնամ ընել ձեծիս յիշատակը մոռցնելու համար։

Պարոն Շիրինեան տ՚Էվրի, ըստ կարգին, յաջաջցեր էր։ Ինքն ալ կ՚ուզէր հայր Մէտարին իր նեղումն և իր գթութիւնն ցոյց տալ։ Հիւպէր ու Ռոմէանոր հետևեցան, ապա սրիսրդ Մագ Նէյլ, Ֆլորանս ու Յովհաննա։

Այդ մարդուն, որ մեռնելու մօտ էր, նոյն պահուն, կամ բարի խօսք մը կ՚ուզէին, կամ ձեռքը կը սեղմէին։

Յովհաննա ամենէ վերջինն էր որ մօտեցաւ։ Երբ անոր մօտ հասաւ, ծերունւոյն աչերն արտասուք լցան, և հիմայ մեղմօտայն, վասն զի զրգռութիւնն դադրած էր, անոր ըսաւ.

— Յովհաննա Տը լա Լիժէլ, ծովային սպան որ կեանքս ազատեց, այն որ զիս հարստութեան ճամբուն մէջ դրաւ, ձեր հայրն էր, Թէոտոր Տը լա Լիժէլ ծովային տեղական, որ այն ատեն դեռ շատ նորատի և պարզ թեկնածու էր։ — Ամերիկա էի, այս դէպքէն ի վեր քսան տարիներ անցած են . . . ։ Երկարատև թշուառութենէս վերջապէս վհատ, հիւանդ, անօթութենէ կիսամեռ, որոշեր էի, այդ երկրէն հեռանալու, ու գացեր էի հարստութիւն փընտռելու, և ուր միայն ազքատութիւն գտեր էի։ Ֆլորանսա վերադառնալու համար, կրցեր էի (իրրև Ֆրանսայի) Տէրութեան նաւով մը ճամբորդել, և այդ նաւն էր ուր ձեր հայրն կը գտնուէր։

— Ճամբորդութեան երկրորդ օրն վատ, փոթորկալի օդ մը կ՚ընէր, կամուրջին մէկ անկիւնն մինակուկ, կանգուն կեցեր էի, նաւային զորձերն դիտելով, յանկարծ սաստիկ հով մ՚ելաւ և ծովը սկսաւ ալեկոծիլ։ Ալիքներն ամէն կողմէ կը խուժէին . . . ։ Ալիք մը կամուրջին վրայ ընկաւ և զիս տարաւ Ովկէանոսին մէջ նետեց։

— Մարդ մը ծովն ընկաւ, կը պոռային։

Եւ հրամանատարն հրամայեց որ նաւակ մ՚իջեցնեն ծովը։

Սակայն փոթորիկն աւելի ևս կը սաստկանար։ Մինչ տասնով պիտի հասնէին զիս ազատելու համար . . . ։ Մարդ մ՚ալեաց մէջ նետուեցաւ անձնուիրութեամբ։ Զիս չճանչնար և վտանգը վերահաս է։ Փոյթ չէ իրեն։ Կը սուզի . . . Նորէն կը սուզի . . . զիս կը բռնէ . . . այժմ կը մաքառի . . . մահուան դէմ ինձ համար կը մաքառի . . . վերջապէս զիս վեր կը հանէ, և իր կեանքը վտանգի մէջ դնելով կը յաջողի զիս ազատել։

— Այս մարդը, զաւակս, ձեր հայրն էր։ Թող իր անունն օրհնեալ լինի։

— Այդ բաւական չէ։ Ձիս ազատելէն ետք, կը համակրի վիճակիս, հետս կը խօսի, դիս հարց ու փորձ կ'ընէ։ Կ'իմանայ որ ազքատ ու դժբաղդ եմ, որ ի զուր գործ կը փնտռեմ։ Այն ատեն դիս կը քաջալերէ կը մխիթարէ։ Ապա, երբ առաջին անգամ, նաւը կացան մը կը հասնի, իր քսակը ձեռքս տալով, կը խրատէ դիս. որ ճամբաս չի շարունակեմ Ամերիկա մնամ, ուր իր շնորհիւ, իր յանձնարարութեան շնորհիւ, այս անդամ մեծ շահագործութեան մը մէջ գործ կը գտնեմ։ Անոր շնորհիւ կ'ապրէի, անոր շնորհիւ հարստացայ։ Ա՜հ, զուք անոր արժանի աղջիկն էք։ Ունիք անոր արիութիւնն և բարութիւնն . . . ։ Եւ երբ այս գիշեր ձեզ տեսայ, պատուհանին առջևը, ձեր վտանգն մոռնալով, միայն ձեր բարեկամուհւոյն հոգ կը տանիք. նորէն սկսայ խորհիլ, զարմանալի ազնիւութիւն մը դիս դրաւեց և զղջացի։»

Հայր Մէտարը լռեց, բոլորովին յոգնած էր, քրտինքը կը հոսէր իր խորշոմած ճակատին վրայ։ Քանի մը վայրկեան անշարժ, անզգայ և անձայն մնաց, ապա, ճիգ մ'ընելով, Յովհաննային ձեռքն առաւ և համբուրեց։ Ապա, քահանայ մ'ուզեց, վասն զի միայն իր հոգւոյն փրկութեան վրայ կ'ուզէր մտածել, ըսաւ։

Այն ատեն, ամենն ալ եկան այս սենեկէն ուր հին այծարածն կը մեռնէր, Սավինիէն և բարի Էդկէ մայրապետն, զոր Պարոն Ժէրալտ կոչել տուեր էր, միայն անոր հետ մնացին։

Յովհաննա Տը լա Լիժէլ բոլորովին այլայլեր էր, այս ամեն տեսած ու լսած բաներէն, սակայն Ժիւլիէդին մօտ վերադարձաւ։ Պզտիկ աղջիկն հանդարտ կը ննջէր, Միէդ սպասուհւոյն ապահովութեան տակ կը մնար այս անդորր քունին մէջ յուզումն զոր զգացեր էր։

Յովհաննա իր անկողնին մօտ նստել կ'ուզէր, երբ աչքերն վեր վերցնելով նշմարեց Պարոն Ժէրալտ ու օրիորդ Մադ Նէյլ, որ փոքր աղջկան սենեկին մէջ կը մտնէին։ Անոնց մօտ վազեց և ձայնն մեղմացնելով, իր բարեկամուհին չարթնցնելու համար, ըսաւ.

— Հիմայ միայն կը յիշեմ։ Մոռցեր էի . . . ։ Երբ Ժիւլիէդ իր սենեակը գտայ, հոն, ոտք ելնելով քանի մը քայլ ըրեր էր։

Պարոն Ժէրալտ և օրիորդ Մադ Նէյլ իրարու նայեցան։

— Արդեօք բոյժը գտա՞ւ, մեր աղջիկն, հարցուց օրիորդ Մադ Նէյլ։

— Ո՞վ գիտէ, ըսաւ Պարոն Ժէրալտ։ Թերևս մեծ այլայլութենէ մ'ետք, այս բոյժն կրնայ գտնել . . . ։

— Ո՜հ, Տէր Աստուա՜ծ, եթէ այդպէս լինի, քեզ որչա՜փ պիտի օրհնեմ։ Բայց սպասենք, յարեց, և չ'տանք խեղճ աղջկան յոյս մ'որ ունայն է։

Պարոն Ժէրալտ, այն ատեն Միլդին մօտեցաւ, որու քանի մը բարի խօսքեր ըսաւ, վասն զի բարի աղջիկն անմխիթարելի էր (որովհետև այդ միջոցին սաստիկ վախ զգացեր էր,) պահ մ'իր սիրելի նորատի տիրուհին մոռցած լինելուն։ Ապա քիչ մը հեռանալով, Պարոն Ժէրալտ օրիորդ Մադ Նէյլին հետ խօսակցեցաւ։

Ֆլորանս, նոյն պահուն սանդուղին մէկ աստիճանին վրայ կանգնուն իր հորբորդիներուն հետ, Հիւպերին ու Ռըմիին հետ կը խօսակցէր։ Հայր Մէտարին սենեկէն դուրս ելնելէն ետք, ուզեր էր, ինքն ալ Ժիւլիէդին մօտ վերադառնալ, բայց ճամբան կանգ առեր էր, սանդուղին կէսը միայն իջնելով։

Հոն, երկու տղայք, փոքր աղջիկան պատմել կուտային թէ ինչպէ՞ս Լասաենիքի – Տուքը կրակ ձգեր էր։

— Այսպէս, կ'ըսէր Ռըմի, անխոհեմաբար, աշտանակներ գրիր, որոց՞մոմերն վառած էին։

— Այո, կը պատասխանէր Ֆլորանս լալով երբ իր գործած յանցանքը կը յիշէր, որ այնքա՞ն աղետալի հետեւանքներ պիտի ունենար։

— Եթէ մտածենք, կը յարէր Հիւպէր, որ Դոնգէնցի պէպէկի մը համար ամեն մարդ այրելու վտանգի մէջ դրիր և ինքզինքդ ալ միասին . . .

— Ո՜հ, կ'ըսէր Ֆլորանս, իրօք Ժիւլիէդ այրելու վտանգի մէջ էր, և Յովհաննա Տը լա Լիժէն ալ։

Եւ արտասուքն աւելի առատ կը թափէր։

— Եւ չե՞ս մտածեր որ հայր Մէտարն անխոհեմութեանդ և անհնազանդութեանդ շնորհիւ պիտի մեռնի, կը շարունակէր Հիւպէր։ Խե՜ղճ ծերուկն, ամենևին չեմ սիրեր զանի, բայց կը գթամ վրան։ Եւ որչա՜փ անկեղծութեամբ զղջաց։

— Նայէ, մի անգամ Ֆլո, վրայ կը բերէր Ռըմի։ Եթէ անհնազանդ չի գտնուէիր, կնքամօրդ սնտուկը բանալ ուզելով, հօրդ պատուերին հակառակ,

այդ ամեն պատահած չարիքն տեղի պիտի չունենար։ — Ուրեմն, այսուհետև, երբէք պէտք չէ անհնազանդ լինիլ։

— Այդ արդէն մտածեցի, կը պատասխանէր փոքր աղջիկն։ Այո, կը խոստանամ, յարեց նա, երբէք, այսուհետև անհնազանդ չ'լինիլ։

— Այդ, լաւ խոստում մ'է պզտիկ աղջիկ, ըսաւ այդ միջոցին ձայն մ'երեք տղոց եւևէն։

Ֆլորանս գլուխն վերցուց, և իր արտասուքներուն մէջ ժպտեց, իր մեծ հայրը ճանչցեր էր։

Պարոն Շերինեան տ'Էվրի իր եղբօր հետ կը գտնուէր։

Երբ հայր Մէտարէն բաժնուեր էին, երկու եղբայրները լոկ փափաք, միակ մտածում մ'ունեցան, այս է պահ մ'առանձին մնալ, գիրար համբուրել, տեսակցիլ ու խօսակցիլ, վերջապէս մտնալու համար, քանի մը վայրկենի մէջ, յիսնամեայ թշնամութիւնն, որու համար երկուքն ալ այնքա՜ն դժբաղդ եղեր էին. թէ թեւի մտեր էին, իրենց պատանեկութեան ժամանակին պէս, և զացեր էին դպրեկատիրոջ սենեակն, ճիշտ այն սենեակն ուր իրենց հայրը մեռեր էր, և ուր երկար ժամանակ երկուքն ալ բընակեր էին։

Լաւ, ըսաւ այն ատեն Պարոն Ժէրալտ, իր անդրանիկ եղբօր թեւերուն մէջ նետուելով, եօթանասուն ու չորս տարեկան եմ, և կէս դարէ մ'ի վեր, մանկան մը պէս վարուեցայ։ Ոչ միայն անմիտ օրս մը քեզ դէմ պէտք չէի պահել, այլ պարտաւոր էի, քեզ ձեռքս տալ, կամ աւելի լաւ ես քեզ համբուրել, և այդ աւելի լաւ կ'լինէր։

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Պարոն Շիրինեան տ՝Էվրի, ես պարտաւոր էի քեզ հետ այսպէս վարուիլ։ Անդրանիկն եմ, պարտ էր ինձ օրինակը տալ։ Եւ ապա, այս խնդրոյն մէջ որ սեղ իրարմէ բաժնեց, իրաւունք ունէի . . . ։

— Իրաւունք չունէի՞, միայն այդ ապացուցուած չէ, ընդմիջեց Պարոն Ժէրալտ։ Բայց, այդ բանին վերայ չի խօսինք ալ։ Քու վրայ, իմ վրայ խօսինք։ Ա՜հ, որքա՜ն լաւ է այս տեղ գտնուիլն։

—Բայց եկուր, ըսաւ նա, թեթև լուութենէ մը ետք, եկուր երթանք Ժէրալտը տեսնել։ Վստահ եմ որ տղոց մօտ է։ Բայց ո՞ւր տեղաւորցուցիր մեր աղջիկներն։

— Հիւպէրին ու Ռըմիին սենեակն։

— Մեր սենեակն է՞ր այն, երբ փոքր էինք։ Ո՜հ, ճամբան չի մոռցայ, և ես քեզ պիտի առնեմ հոն։

Եւ երկու ծերունիներն, միշտ թև թևի մտած, կը դիմէին շիտակ Հիւպէրին ու Ռըմիին սենեկին կողմն ուր կարծէին Պարոն Ժէրալտը գտնել։

Ասնդրին վրայ, Ֆլորանսն տեսնելով, կանգ առեր էին։ Հոն, Պարոն Ժէրալտ իր թոռին որոշումը լսելով, իրեն համար դիւցազնական որոշում մը, գայն բարձրաձայն և ուրախութեամբ շնորհաւորեր էր։

Ապա խօսքն, նորէն իր եղբօր ուղղելով ըսաւ.

— Մինչև որ քեզ Ժէրալտը ներկայացնեմ, պզտիկ Ֆլորանսս համբուրէ։ Հրեշտակի չափ աղուոր է . . . երբ չի լար, յարեց նա, գիտելով որ փոքր աղջկան դէմքն արտասուալի էր։ Լացդ դադրեցուր, պզտիկ ապրիկ, միթէ կ՝ուզես որ Լուի հօրեղբայրդ քեզ ապեղ չգտնէ։

— Արտասուքն ապեղ չեն ըներ, ուզեց Պարոն Շիրինեան տ՝Էվրի, երբ բարի զգացումէ մը յառաջ գան, վասն զի, բարի զգացումներն, ընդհակառակն կը գեղեցկացնեն։

— Ֆլո, միթէ կը լսե՞ս, գոչեց Պարոն Ժէրալտ զմայլած։ Օ՜ն աղջիկս, Լուի հօրեղբայրդ համբուրէ և զանի՛նքա՜ն սիրէ, որքա՜ն որ մեծ հայրիկդ կը սիրես։ Ֆլո, առանց իր աչերը սրբելու, համբուրեց իր հօրեղբայրն որ իր թևերուն մէջ զայն վերուցեր էր։ Եւ երբ ծերունին զինքը գետինը դրաւ, իր մեծ հոր դառնալով, ըսաւ.

— Լուի հօրեղբայրս շատ պիտի սիրեմ, արդէն կը սիրէի զանի, ինչու որ Հիւպէրին ու Ռըմիին մեծ հայրն էր։ Բայց անկարելի է զանի քեզ չափ սիրել, ո՜հ ոչ։ Ինձ համար միայն մէ՛կ մեծ հայրիկ կայ աշխարհս մէջ։

Պարոն Ժէրալտ հայր սկսաւ ժպտիլ։

— Ինչպէս որ ինձ համար, միայն մէկ Ֆլո կայ, այնպէ՞ս չէ, ըսաւ։

— Նայէ Լուի, շարունակեց իր եղբօր դառնալով, այս փոքրիկը համբարու մ՝է, և չեմ զարմանար որ եղբօրդիներս (և կը դարձնէր Հիւպէրին ու Ռըմիին ուսին վրայ) անոր երես կուտան։ Ա՜հ, կարիճներն, միթէ գիտե՞ս եղբայր իմ, որ հրդեհին ժամանակ երկու պզտիկ մարդու պէս վարուեցան։

— Միթէ զանոնք տեսա՞ր։ Որչա՜փ ճարպիկ, քաջ, աներկիւղ են։ Այս (Հիւպէրին թուշը կը բըռնէր) արդէն կը ճաշնամ, օր մ՝ինձ դէմ կեցաւ։ Իսկ միւսը (Ռըմին ցոյց կուտար,) լաւ, իրարու հետ

պիտի ծանօթանանք։ Հիմայ, զիրար սիրեցէք. զաւակներս, և մեզ մի հետևիք . . . երբէք քաղաքականութեամբ մի զրաղիք։

Ապա՝ իր եղբօր դառնալով.

— Լուի, վրայ բերաւ, չերթա՞նք վերջապէս Ժէրալտը գտնելու։ Տարակոյս չ'կայ որ տակաւին Ժիւլիէդին մօտ է։

Երբ այս խօսքերը կ'աւարտէր, Ֆլորանս որ (ինչպէս արդէն դիտենք) շատ հետաքրքիր էր, կ'ախորժէր ամեն կողմը դիտել, և այսպէս կը ծուէր պատուհանէ մը դուրս որ մեծ բակին վրայ կը նայէր։

Այն ատեն, ըսաւ իր մեծ հօր.

— Մեծ հայրիկ, հայրիկը Ժիւլիէդին մօտ չէ, վարն է, հոն, գործաւորներուն հետ։

Իրօք, Պարոն Ժէրալտ իր անդրանիկ աղջկան սենեկէն ելեր էր, և բակն իջեր էր, ուր խնդրեր էին զայն տեսնել։

— Բայց, ի՞նչ կ'ուզեն նորէն հօրմէդ, այս գործաւորներն, ըսաւ ծերունին զժգոհ, կը մտածեմ թէ գործադուլի համար չէ որ կուգան։ Եւ, դէշ սոպոնոնէրն միթէ հո՞ն են։

— Ո՛չ, մեծ հայրիկ։

— Մեկնած պիտի լինին այս տեղէն։ Մեղք, քաղաքապահներուն ձեռօք պիտի բռնել տայի զանոնք։ Ֆլո, միթէ գործաւորներն բաղմաթիւ են։

— Ոչ, մեծ հայրիկ, քսանի չափ են։

— Ուրեմն կը հասկնամ, պարզ պատգամաւորութիւն մ'է վրայ բերաւ Պարոն Ժէրալտ հայր։ Խե՜ղճ մարդիկ, կ'երևի թէ կը գղջան։ Բայց ասոնք,

այս գիշեր իրենց շարժումներն շատ լաւ էին։ Լուի, հոն երթանք, և եթէ Ժէրալտ անոնց ներէ, լաւ, երկու ձեռօք պիտի ծափահարեմ։

Իրօք, կրցաւ երկու ձեռօք ծափահարել, վասն զի Պարոն Ժէրալտ ոչ միայն գործադուլ ընողներուն ներեց, այլ և շնորհակալ լինելով այն ճգանց համար զոր թափեր էին Լասաենիքի–Տուենն աղատելու համար, գտաւ իր սրտին մէջ քանի մը բարի խօսքեր որ կ'այլայլեցնեն, կը համոզեն, և անձնուիրութիւններ յառաջ կը բերեն։

— Ո՜հ, զաւակներս, գոչեց նա աւարտելով, քանի՛ քանի աղետից առաջը պիտի առնուէր, եթէ դիտնայիք ճանչել այն անձերն որ ձեզ կը սիրեն, և եթէ անոնց վրայ կատարեալ վստահութիւն ունէնայիք։

Այս խօսքերուն վրայ, գործաւորներն զանի կը շրջապատեն և կ'ուզեն ձեռքն զոր անոնց կ'երկնցընէ, սեղմել։ Ամենն ալ իրենց զղջումն կը յայտնեն, ամենքն իրենց հաւատարմութիւնն կը հաւաստեն։ Եւ երբ Պարոն Ժէրալտ իրենց նշան կ'ընէ թէ խօսակցութիւնն վերջապէս լմնցած է, կը հեռանան, երբէք անգամ այս խօսքերը կրկնելով.

— Կեցցէ՛ մեր բարի վարպետն։ Կեցցէ Լասաենիքի Բարի Պարոն։

Պարոն Շիրինեան տ'Էվրի իր եղբօրորդւոյն շատ սիրալիր ընդունելութիւն մ'ըրաւ։

— Շատ կը ցաւիմ սիրելի Ժէրալտ, ըսաւ անոր, այսչա՞փ երկար ժամանակ ձեզ նման եղբօրորդւոյ մը սէրէն զրկուած լինելուս։ Եթէ կ'ուզէք կրուսած

ժամանակն կը նորոգենք։ Հիմայ, բոլոր տունս ձեր հրամանին տակն է, գործածեցէք զայն ձեզ և ձեր ընտանիքին համար։ Լաստենիքի – Տան հանգստութիւնն չպիտի դանէք, բայց ձեր հայրն ու ես պիտի ջանանք որ ձեր տունն շատ չի կարօտնաք։

— Ա՜հ, սիրելի հօրեղբայրս, պատասխանեց Պարոն Ժէրալտ, ուր որ դուք հօրս հետ գտնուիք, ես ալ այն տեղ շատ երջանիկ պիտի համարիմ ինքզինքս։ Եւ եթէ խեղճ Մէտարին փորձանքը չ'ինէր (թող Աստուած անոր օգնէ իր վերջի ժամուն) նորէն Լաստենիքի տունս պիտի ըսէ՛ի որպէս զի այսօրուան զգացած երջանկութիւնս վայելեմ։

— Իրաւ է որ ձեր գլխին եկած աղէտքին հակառակ, բոլորովին ուրախ կ'երևիս, ըսաւ Պարոն Ժէրալտ հայր իր որդւոյն նայելով։

— Աւելի քիչ բանի համար կրնայ մարդ ուրախ լինիլ, հայր իմ։ Վերջապէս, ձեր եղբայրը գտաք ...։ Ձեր եղբայրն զոր միշտ կը սիրէիք, և (բայց այս, կարելի է որ երևակայական յոյս մ'է) Ժիւլիէդ պիտի քալէ նորէն, փոսն զի կրցաւ քալել։

— Ի՞նչ կ'ըսես։ Ժիւլիէ՞դ . . . ։

Այս գիշեր, Յովհաննա Տը լա Լիժէլ Ժիւլիէդն իր սենեկին մէջ տեղ կանգուն կեցած գտաւ։ Անշուշտ, աղջիկս բոցերէ շրջապատուած, անհնարին ճգանց շնորհիւ, կրցաւ ոտք ելնել։ Առանց ուրիշի օգնութեան քանի մը քայլ ըրաւ։ Տէր Աստուած տար որ այս բուժութեան սկիզբը լինէր։

— Աստուա՜ծ տայ որդեա՜կ, և մենք յուսանք։ Բայց միթէ Յովհաննային ըրածը գիտե՞ս, միթէ գիտե՞ս թէ, վտանգին չ'նայելով, այրող տունը վերադարձաւ մեր զաւակը փնտռելու համար։

— Ամեն բան գիտեմ, հայր իմ, օրիորդ Մագնիլլ ինձ ամեն բան պատմեց։ Յովհաննա Ժիւլիէդին կեանքն ազատեց. ո՛չ ոք կարող է այդ մոռնալ։

— Ո՛հ ոչ։ Բայց ո՞ւր է այս փոքրիկն, որպէս զի զայն ուզածիս պէս համբուրեմ։ Եւ ես, որ անոր վրայ կը տարակուսէ՛ի։ Պէտք է զանի հոս բերել տալ, կ'ուզեմ զանի շնորհաւորել։

— Ո՛չ, հայր իմ, թո՛ղ առ այժմ։ Ո՛հ, չառնենք իրմէ այն բանն որ իր ամենէ մեծ շնորհն է, այս է՝ իր անդիտութիւնն լաւ յատկութիւններուն մասին և իր սրտաշարժ համեստութիւնն։ Կը խնդրեմ ձեզմէ անոր չափէն աւելի երես չ'տալ։

— Լուի, միթէ կը լսե՞ս, ըսաւ այն ատեն Պարոն Ժէրալտ իր եղբօր։ Հիմայ տղայք են իմաստուններն որ ծերերուն բարոյական դասեր կուտա՛ն։

Յետոյ, կանգ առաւ և պահ մ'ետք վրայ բերաւ։

— Ժէրալտ, մեծ իմաստութեանդ վրայ կ'զմայլիմ, բայց պէտք է այդ փոքրիկն վարձատրել, որդեա՛կ։

— Ո՛չ հիմայ, սիրելի հայր իմ, պատասխանեց Պարոն Ժէրալտ։ Կը վախնամ որ այդ կերպով իր անմեղութիւնն ծախու առած չերևինք. անտարակոյս այդ բանն իրեն շատ ծանր պիտի դայ։

— Այդպէ՞ս կարծես։ Ուրեմն, թող կամքդ լինի։ Բայց կրնանք վաղն ալ այդ խնդրոյն վրայ խօսիլ։

— Հետևեալ օրը, հայր Մէտարն ապաշխարող քրիստոնէի մը զգացումներով մեռաւ։

Երբ իր կտակը բացին, միայն այս քանի մը տողերը գտան։

— Բոլոր հարստութիւնս կը թողում Տիկին Տը լա Լիժէլին, Թէոտոր Տը լա Լիժէլին, ծովային տեղակալին այրուոյն, անոր կը յանձնարարեմ որ հարստութեանս հինգերորդ բաժինն Յովհաննա Տը լա Լիժէլ, իր աղջկան տայ, որու այս յիշատակն կը նուիրեմ, իրմէ խնդրելով որ հոգւոյս փրկութեան համար Աստուծոյ աղօթէ։

ՎԵՐՋԱՐԱՆ

Երջանիկ օրերն կը համրուին, այդ չատ իրաւ է։ Այսպէս է հիմայ Լաստենիքի բնակիչներուն համար, Լաստենիքի – քաղաքն, Լաստենիքի – Տունն։

Այո, ճիշտ ըսինք, Լաստենիքի – Տունն, վասն զի հին տան տեղն ուրիշ տուն մը չինուեցաւ, հնոյն նման, բայց որու քով պզտիկ չէնք մը կը գտնուի, տեսակ մը տաղաւար է այն, և անոր բացումն տեղի ունեցաւ այս տարի (1884) Յովհաննա Տը լա Լիժէլին տօնին օրն, այսինքն Յունիս 24 ին։

Լաստենիքի – քաղաքն ամեն բան նորէն կարգի մտաւ։ Հիմայ միայն կան լաւ գործաւորներ, ընտանիքի բարի հայրեր, բաց, անկեղծ, մարդավար պատանիներ, ժպտուն կիներ, ուրախ զուարթ մանկիկներ։

Լաստենիքի – Տունն ուրիշ փոփոխութիւն մը կայ։ Ժիւլիէդ միշտ չատ փափուկ է, սակայն բուժութեան ճամբուն մէջ կը գտնուի, քիչ առնէն բոլորովին պիտի քալէ։ Ֆլորանս գրեթէ խելքը է։

Պարոն Ժէրալտ հայր իր եղբօրմէն գրեթէ միշտ անբաժան է, և Հիւպէրի ու Ռըմի իր կրցածին չափ երես կ'տայ, Հիւպէրին մանաւանդ որ «կոչէ՞ մը» է։

Շիրինեանց ընտանիքն ուրիշ ընտանիքի մը միութեամբ աւելցաւ։ Տիկին Տը լա Լիժէլ և իր փոքր զաւակներն, Ատրիէն, Գէմանս և պզտիկ Կիւլիոմ եկան տաւուն անցնել իրենց աղջկան, սիրելի քրոջ մօտ, այս է Յովհաննայի, որ որդիական ու եղբայրական սիրոյ, անկեղծ բարեկամութեան և անձնուիրութեան տիպար մ'է։

Ամեն տարի տաւուն հոն պիտի անցնեն, տաղաւարին տակն որ իրենց համար չինուեցաւ, վասն զի Յովհաննա, թէև հիմայ հարուստ, իր որդեգրական ընտանեաց մէջ պիտի մնայ։ Սակայն ինչպէ՞ս կրնայ Ժիւլիէդը թողուլ, Ժիւլիէդ՝ որու օգտակար լինիլն կ'զգայ, Ժիւլիէդ՝ որ կարելի է մեռնէր եթէ իր բարեկամուհին իրմէ բաժնուէր։

Եւ ամենն ալ գայն կը սիրեն, Լաստենիքի այս տան մէջ ուր այնքա՜ն երջանիկ է. և մինչև անգամ Պարոն Շիրինեան տ'Էվրի չատ մեծ համակրութիւն կ'զգայ այդ սքանչելի աղջկան համար որ իր կենաց մէջ միայն մէկ մտմտուք կ'ներսի ունենալ, այս է ուրիշներուն հոգածել և ինքզինքը մոռնալ։

Հիւպէր ու Ռըմի զանի իրրև բարեկամուհի ընդունեցին։ Ֆլորանս զանի իրրև օրինակ առաւ, և միտքը դրաւ մինչև անգամ անոր նմանելու (քիչ չատ մատ ժամանակի մէջ։) Ժիւլիէդ անոր համար անսահման սէր մ'ունի, և չի կրնար անոքմէ զրկուիլ։ Բարի օրիորդ Մագ Նէյլն իր անսահման հիացման մէջ կ'երթայ ստէպ Պարոն Ժէրալտին կրկնել.

— Ա՜հ, Պարոն, այս աղջիկն հրեշտակ մ'է։

Պարոն Ժէրալտ բան մը չըսեր, այլ Յովհաննային վրայ խորուն՝ կ, այլայլուն ու երախտագէտ ակնարկ մը կը նետէ. անոր շնորհիւ է որ Ժիւլիէդ կ'ապրի, անոր շնորհիւ է որ պիտի բժիշկ՞ի։ Իսկ Պարոն Ժէրալտ հայր, յայտնեց որ Յովհաննա իր անդրանիկ թոռն է և աչերը խոշոր խոշոր բանալով անոր հրամայեց որ զինք մեծ հայրիկ կոչէ։

— Մեծ հայրիկ, ըսաւ անոր մեր նորատի դիւցազնուհին, օր մը, Յուլիս ամսուան մէջ, մեծ հայրիկ, կառքերը պատրաստ են, միայն ձեզ կ'սպասենք։

— Ահա կուգամ, պզտիկ աղջիկ, պատասխանեց ծերունին իր գլխարկն առնլով։ Ա՜հ, կ'երևի թէ այսօր շատ կը շտապիս։ Բայց անհոգ եղիր, կառախումբն Ռոպեագ պիտի հասնինք։

Այս խօսքերն արտասանելով, Պարոն Ժէրալտ հայր իր սենեկէն դուրս կ'ելնէր։ Քիչ մ'ետք բակէն կ'անցնէր ու դէ անդին վրայ կ'երևէր։

Երկու կառք դրանդին առջև կ'սպասէին, ընտանեկան հանրակառն և քառանիւ կառք մը։

Հանրակառն արդէն լեցուեր էր։ Հոն, ներսը կը գտնուէին Տիկին Տը լա Լիժէլ, Ժիւլիէդ, Աորիէն, Գլէմանս և օրիորդ Մագ Նէյլ, այս վերջինն գիրկն առեր էր փոքրիկ Կիւլիոմը։ Միայն, բաց դռնակին առջև կանգնած կը նայէր թէ իր սիրելի նորատի տիրուհին, որ հիմայ կրնար իր մեծատուն խնամց պէտք չունենալ, բանէ մը զուրկ չի մնաց։ Վերնայարկին բազմոցին վրայ և Ժէրոմ կառապանին հրամայեան տակ, կը գտնուէին Հիւպէր, Ռըմի և Ֆլորան։

Յովհաննա, ըստ կարգին, հանրակառին մէջ մըտաւ ուր Ժիւլիէդ իր մօտ տեղ մը պատրաստեր էր։ Իսկ գալով Պարոն Ժէրալտ հօր, եկաւ և նստաւ քառանիւ կառքին մէջ։ Անոնց դիմաց նստաւ Պարոն Ժէրալտ։

Այն ատեն երկու կառքերը դղրդեցան։ Քառանիւն առաջ մեկնեցաւ, մնացեալն հետևեցաւ հանրակառը զոր Պէպէ ու Դոգո կը քաշէին։

Այսպէս Լատանենքի – բազաքէն անցան։ Տղայք դպրոց կ'երթային, կանգ առին, բարևեցին ու նայեցան։

— Բարի լոյս, փոքրիկներ, պրոպոս անոնց Ֆլորան հանրակառին վրայ նստած տեղէն։ Շատ խելօք կեցէք և վազն արմակուրդ պիտի ունենաք։

Տղայք իրենց աչերը մեծ մեծ բացին։

— Ի պատիւ տրո՞ւն։ հարցուց անոնցմէ մին երբ կառքը կը հեռանար։

— Դրաւ կը դնեմ թէ (գուշակեցի, գուշեց Փըդի – Բիկր) որ կը գտնուէր մանչերէն կազմուած խումբին մէջ։ Ի պատիւ է մեծ Պարոնին զոր կ'երթան կայարանէն առնու։

Ուղևորութիւնն ուրախ զուարթ կատարուեցաւ, Լատանենքէն մինչև Ռոպեագ։ Հոն, ամենն ալ վար իջան։

Կայարանին պետը մօտեցաւ և բարևեց Պարոնայք Շիրինեան, օրիորդ Մագ Նէյլ ու Տիկին Տը լա Լիժէլ։

— Պարոն, հարցուց անոր Ֆլորան, միթէ Դուլօնէն գալիք կառախումբն ուշացա՞։

— Բայց բնաւ, օրիորդ, պատասխանեց կայարանին պետն, գուք էք որ կանուխ եկաք։

— Նա՛յէ, այդ չէ՞ կարծեր։ Ա՜հ, որչա՞փ առաղ-
կալի է սպասելն, ըսաւ փոքր աղջիկն։

Ապա, Ատրիէն Տը լա Լիժէլին կողմը դառնալով
հարցուց.

— Ձեր բարի բարեկամն մեծ կարմիր մօրուք մը
չունի՞։

— Այո, պատասխանեց Ատրիէն։

— Եւ ինքը, միթէ մե՞ծ է։

— Այո՛, մեծ ու գէր է։

— Մեծ հայրիկի՞ն չափ։

— Ո՜հ, բայց ոչ, այնքա՜ն գէր չէ։

— Միթէ ծովային սպայի հագուստ ունի՞։

— Ո՛չ, հայրիկիդ պէս հագուած է։

— Փոյթ չէ, անշուշտ գանի պիտի ճանչնամ։

Կառախումբն այս միջոցին կայարանը կը հասնի։
Ամեն մարդ կը յառաջանայ, ամեն մարդ կը փու-
թայ։

Առաջին կարգին շոգեկառքի մը դռնակը բա-
ցուեցաւ, մարդ մ՚անկից վար իջաւ։ Մեծ է, քիչ մը
գէր, արևակէզ դիմք, իսկ իր մօրուքին գալով, եր-
կայն ու կարմիր է։ Ամենապարզ հագուստ մ՚ունի,
այս է կապտագոյն զգեստ մը, բայց իր դէմքէն, իր
կերպերէն կը դուշակուի առանց դժուարութեան
որ հասարակ մարդ մը չէ։

Ահա՛ նաւապետն, գոչեց այն ատեն Ֆլորանս։

Եւ Ատրիէնի, Գլէմանսի ու փոքր Սիւլիոմի հետ
կը նետուի անոնց պէս այդ մարդուն թեւերուն մէջ։

Իրօք, Մաքսիմ նաւապետն էր, Ֆլորանս չի սխա-
լեցաւ։ Անցեալ օրը, Դօնգինէն հասաւ և նորէն
մեկնելէն առաջ, վասն զի քիչ ժամանակէ վերջ նո-

րէն նաւը պիտի մտնէ, եկաւ քանի մ՚օր Լաստենի-
քը անցնել։

Յովհաննա ալ հոն է, իր ընտանիքին բարեկամին
մօտ, իր կարգին սպասելով, քաջուելով, իր մօր տեղ
բանալու համար։ Նաւապետն գանի իր թեւերուն
մէջ կը քաշէ, անոր կուտայ իր ամենէ լաւ համբոյրն,
իր ամենէ զորովալի գգուանքն։ Ապա, Տը լա Լիժէլ
տեղակալին այրոյն երկու ձեռներն բռնելով, և
գեղմամբ իրեններուն մէջ սեղմելով, ժպտելով
հարցուց.

— Լա՛ւ ուրեմն, Տիկին։

— Ա՜հ, բարեկամ իմ, պատասխանեց Տիկին Տը
լա Լիժէլ, արտասուալի աչօք ու Յովհաննային վրայ
ակնարկ մը նետելով, երջանիկ եմ։ Ձեր շնորհիւ է
այդ, և ձեզմէ սրտագին շնորհակալ եմ։

— Սիրելի Տիկին, ըսաւ նաւապետն, ձեր երջան-
կութիւնն ամենէ մեծ վարձատրութիւնն է։

Ապա, Պարոնայք Շիրինեանց երթալով և անոնց
կողմն իր ձեռքն երկնցնելով, ըսաւ.

— Ներեցէք, բայց նախ Ֆ՚ ընտանիքիս մտածեցի։

Ապա, կը բարևէ օրիորդ Մագ Նէյլ, անորմէ
սրտաշարժ խօսքերով շնորհակալ կ՚լինի այն խնա-
մոց համար զոր Յովհաննային շռայլեր էր, և կը հա-
մբուրէ Ժիւլիէդն, որ կանգուն իր բարեկամուհւոյն
թեւին վրայ կրթնած է։

Այն ատեն, ամենն ալ կը պատրաստուին Լաս-
տենիքը վերադառնալու և կառքերուն մէջ կը մտ-
նեն, հոն, պզտիկ դէպք մը կը պատահի։

Պարոն Ժէրալա, որ Տիկին Տը լա Լիժէլին խնդը-
րած էր քառանիւ կառքին մէջ նստիլ, Մաքսիմ նա-

սպանեն ու Պարոնայք Շիրինեանց հետ (երկու եղբարք) կ'ուզէ կառավարին քով ելնել, նստիլ։

Քառանիւ կառքն միայն չորս անձ կրնայ պարունակել։ Իր հայրն իսկոյն կը դիմադրէ։

— Հոս, դու ես ալրը, կ'ըսէ, նաւապետը պատուասիրէ, ես պիտի . . . ։

— Անդուան, բայց դու, կառապանին քով պիտի չելնես նստելու կարծեմ, ընդմիջեց իր եղբայրն խնդալով։

— Է՜հ, է՜հ, ոչ այդ չեմ ուզեր ընել, վասն զի վերջապէս . . . քիչ մը գէր եմ, ըսաւ Պարոն Ժէրալտ հայր։

— Հայր իմ, ձեզ կ'աղաչեմ, քառանիւ կառքին մէջ մտէք, պնդեց Պարոն Ժէրալտ։

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Պարոն Ժէրալտ հայրը, տղոց մօտ կ'երթամ։ Կ'երևակայեմ թէ չ'պիտի դանդատին։

— Ո՜հ ոչ, չի դանդատեցան բնաւ։ Բոլորովին երջանիկ եղան սիրելի ծերունին իրենց մօտ ունենալով։

Ցը, վերնայարկէն իսկոյն վար իջաւ, և հոն, Հիւպէրն ու Ռիմին առանձին թողլով՝ իր մեծ հօր ծնկան վրայ եկաւ նստաւ։ Պզտիկ Կիւլիօմն ալ միշտ օրիորդ Մագ Նէյլին գիրկն էր։

Կը տաքնան, իրաւ է, քիչ մ'ալ կը խղդուին, բայց, ոչ ոք կը մտածէ դանդատելու, վասն զի ամենքն ալ ուրախ են։

Յովհաննա յանկարծ յուզուեցաւ։ Գլուխը դռնակէն դուրս ծռած, որու մօտ կը գտնուէր, կը նայի կայարանն, կը նայի այն ճամբան որմէ կ'ընթանայ,

նոյնպէս բոլորտիքը գտնուող ուղիներն։ Իր աչերն արտասուք լցան, և կարծես թէ բան մը կը փնտռեն։

Պարոն Ժէրալտ հայր նորատի աղջկան երաշուն կերպը դիտեց։

— Լաւ ուրեմն հարցուց, ի՞նչ ունիս, պզտիկ աղջիկ։

Բայց Յովհաննա, իր յիշատակներով համակուած պատասխան չ'տուաւ։ Յանկարծ յիշեր էր այն օրն, ուր Ռոպեազի կայարանն եկաւ, այն օրն ուր Լաստենիքը հասաւ։ Այն օրը սաստիկ կ'անձրևէր, և այս սարսափելի անձրևին տակ, կը քալէր պզտիկ, խորշոմուած ծերուկ մ'որ գորշ կրկնոցի մէջ փաթթուած, ճգամբ կը յառաջանար, և ծրարներ կը կրէր։ — Յովհաննա այս օր, ի զուր կը փնտռէ այս ծերունին, զոր իր հայրն ատենօք ազատեր էր, այն ծերունին որ երախտագիտութեամբ հարստութիւն մը թողուց իր մօտ։ Ո՜հ, զանի չ'մոռցաւ, խոյրաւոր մարդն, հայր Մէտարն, նոյնպէս սրտաշարժ խնդիրն որով իր կտակը կ'աւարտէր. ամեն օր իրեն համար կ'աղօթէ։

Վերջապէս Լաստենիքի – Ցունը կը հասնին։ Մաքսիմ Նաւապետն որ անխոնջ է, քիչ մը հանգչելէն ետք, կը յայտնէ թէ պատրաստ է գործատունն այցելելու։

Պարոն Ժէրալտ զանի հոն կը տանի։

Հոն, քանի մը վայրկենի չափ, Նաւապետն կը խօսակցի մեծ երիտասարդի մը հետ համարձակ շարժումներով, ուշիմ դիմօք, որ շատ շատ քսան ու հինգ տարեկան միայն լինելով, գործաւորներուն վրայ շատ մեծ իշխանութիւն մը կ'երևէր ունենալ։

Այն է Սամինիէն, հին գործավարն, Ժիւլիէդին ու Յովհաննային ազատիչն։ Ո՛չ միայն Լաստենիքի – բաղաքէն չի մեկնեցաւ, այլ իր լաւ վարմունքին, իր աշխատութեան, իր անձնուիրութեան շնորհիւ, Պարոն Ժէրալտին աջ թեւն եղաւ և գործարաններուն պետն։

Ճաշի ժամը մեր դիւցազուններն կը միացնէ։ Միայն Թէոտոր ու Մարի Տը լա Լիժէլ, Յովհաննային անդրանիկ եղբայրն ու քոյրն, այս ակմբէն կը պակսին, բայց իրենց հանգիստը Լաստենիքը պիտի անցնեն, և Մաքսիմ Նաւապետն խոստացաւ երթալ զանոնք համբուրել, մէկը Ֆէչը, միւսը Սէն-Տընի, իր մեկնելէն առաջ։

Ճաշն ուրախ զուարթ կ'ակսի, նոյնպէս կը լմննայ։ Նաւապետն որ հիւրերն ու հիւրընկալներն զմայլեցուց, հաւանեցաւ իր ճամբորդութիւններուն վրայ խօսիլ։ Այդ ըրաւ, ինչպէս որ ամէն բան կ'ընէ, այսինքն զուարճութեամբ, անկեղծութեամբ և քաջութեամբ։

— Ո՛հ, գոչեց Հիւպէրը, յանկարծ հիացած, ալ որսորդ չ'պիտի լինիմ։

— Իրաւունք ունիս, ըսաւ Ֆլորանս հաւանութեամբ, Բարի Բարեկոփն պէս պիտի լինիս։

— Ֆլորանս, ըսաւ Պարոն Ժէրալտ, քեզ ո՞վ թոյլ տուաւ որ . . . ։

— Զեզ կ'ազատիմ, ընդմիջեց Նաւապետը, թողուցէք որ սիրելի աղջիկն դիս այդպէս անուանէ։

— Այդ շատ ճիշտ է, դիտեց Ֆլորանս, որովհետև Յովհաննա մեծ հայրիկն, Ֆէֆ հայրիկ կը կոչէ։ Եւ դո՞ւ Ռիմի, յարեց նա, մինչ դո՞ւ ալ ծովային ըսպայ պիտի լինիս։

— Ո՛չ, պատասխանեց Ռիմի, Ժէրալտ հօրեղբօր պէս ճարտարագէտ պիտի լինիմ։

— Մինչ կը լսէ՞ք· դոչեց Պարոն Ժէրալտ հայր։ Բանէ կատակած չունին, այս կարիճներն։ Կ'ըսեն.

— Ես այս պիտի լինիմ, ես ալ այն պիտի լինիմ։ Մինչ կարծէք թէ առանց դժուարութեան կարելի է ծովային սպայ մը լինիլ, կամ գործատուն մը վարել։ Ժէրալտին հարցուցէք և Նաւապետին ալ հարցուցէք . . . ։

Ժէրալտ գրքերուն վրայ դժգունեցաւ· իսկ Նաւապետն վտահ եմ որ Պորտա դպրոց նաւուն վրայ ուրիշ բան ըրաւ քան թէ զնդիկ ու աչքկապուկ խաղալ։

— Բայց Լուի, շարունակեց ծերունին, խօսքն իր եղբօր ուղղելով, մինչ Ժէրալտին հետ որոշեցի՞ր այս տղան վարժարան յղել։

— Այո, եղբայր իմ, պատասխանեց Պարոն Շիրինեան տէրը։ Եւ ապա, Տիկին Տը լա Լիժէլ կը հաւանի, Բարիզ, թոռներուս հետ թղթակցիլ, և զանոնք արձակուրդի օրերն դուրս հանել։

— Եթէ այսպէս է, ամէն բան կարգի դրիր և ուրախ եմ, վրայ բերաւ Պարոն Ժէրալտ հայր։

Ապա, որովհետև Լուիզան բառը վիայն լսելով, Ֆլորանս սկսեր էր լալ։

— Մի լար Ֆլո, ըսաւ ծերունին, մի լար պզտիկ աղջիկ։ Զատիկին արձակուրդին սիրելի ընկերներդ պիտի գան, և եթէ ալ շատ խելօք լինիս, երկուքնիս միասին պ'տի երթանք (կը լսես, երկուքիս միասին) զանոնք կայանդին այցելել։

Իր մեծ հօր հետ ճամբորդութեան յոյս մը պզտիկ աղջկան արտասուքն անմիջապէս դադրեցուց։

— Լա՛ւ, շարունակեց Պարոն Ժէրալտ հայր այն ատեն։

— Իսկ դու, եղբայր իմ, յարեց նորէն Պարոն Շիրինեան տ'Էվրիին դառնալով, դու ալ խելք պիտի դնես, այնպէս չէ՞, և թուռերուդ բացակայութեան ժամանակ, միթէ չ'պիտի՞ դաս Լաստենիքը բնակիլ։

Պարոն Շիրինեան տ'Էվրի գլուխն օրօրեց։

— Ո՛չ, ըսաւ նա որքա՜ն որ առանձին եմ, հին դղեակը պիտի մնամ։ Սովորութիւններս ունիմ, ամեն բան ինձ երիտասարդութիւնս կը յիշեցնէ։

— Իրաւի, ատոնք շատ աղուոր պատճառներ են։ Եթէ ուրիշ պատճառ չունիս ինձ տալու . . . ։

— Մի պնդեր Անդուան, ընդմիջեց Պարոն Շիրինեան տ'Էվրի, մի պնդեր, քեզ կ'աղաչեմ, վասն զի պիտի ստիպուիմ նորէն մերժելու։

— Ծե՛ր կամակոր, գոչեց Պարոն Ժէրալտ հայր, սաստիկ կարմրելով, միթէ դու երբէք չ'պիտի հաւանիս . . . ։

— Լաւութիւն, եղբայր իմ, ընդմիջեց նորէն Պարոն Շիրինեան տ'Էվրի, նորէն կռուի չի բռնուինք։ Մեր կռիւներն կէս դարէ ի վեր կը տևեն, և վաղը եօթանասուն ու վեց տարեկան պիտի լինիմ։

— Ո՛չ, հարիւր տարի պիտի ապրինք, պատասխանեց Պարոն Ժէրալտ հայր ուրախ գուարթ։ Քանի որ այսչա՜փ լաւ կազմուած ենք և երջանիկ։ Միթէ պէտք չէ՞ ևս, յարեց, ցոյց տալով սեղանին բոլորտիքը հաւաքուած տղաքը, որ այս տղայքը մարդեր եղած տեսնենք, այս փոքր աղջիկները կիներ, և նաւապետն . . . Ծովակալ։

ՎԵՐՋ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

	Եր։
Բարի Բարեկամ	3
Ճամբորդութիւնն	14
Լաստենիք	24
Պարոնայք Ժէրալտ հայր ու որդի	36
Դպրոցներուն այցելութիւնն	49
Մէժ-Լա-Ժոլիին ջրվէժն	69
Այծարանն	87
Հին դղեակն	100
Վալ-Տորէի վանքն	117
Մեծ Սատանաներն	139
կնքամօր սնտուկն	152
Հրդեհը	173
Հին Այծարածն	185
Վերջաբան	120

[illegible]

Հայաստանի Ազգային գրադարան
NL0423513

6581